



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3385


Университет Уппсала

Институт

1872

82

U-58





100 100 100
1000 1000 1000



82

4-58

Հ. Բ. Ը. Մ, - Հայկալ Փոստարկղ 348

ՆԱԽՐԱՍՈՒ

Հարկաբեկ 28 JUN 2009

Ի Վ Ա Ն Օ Է

2 NOV 2009

ՀԵՂԻՆԱԿ

ՎՕԼԹՐ ՍԳՕԹ

ԹՆՐԳՄԱՆԵՅ ՅՍՆԿԼԻՍԿԱՆԷ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՀԱՏՈՐ Ա

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷՆԱՆ

Զմիշանիս

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷՆԱՆ

1872

31 JUL 2013

3385

(60483-uh)



6801-73

ՅԱՌԱԶԱԲԱՆ

Ահա ի մ'ընտրութեան մասին քանի մը բարեկամներու հետ խօսելու ատեն, անոնցմէ մին սա բացազանչութիւնն ըրաւ. « — Կ'երեւակայեմ որ թարգմանելու համար է, է՛հ, նորէն Խորհման-Ինն, վէպ, միշտ վէպ, և երբէք հեղինակութիւն մը. այս ի՞նչ մտքի սով է:

— Եւ մեր ազգն ե՞րբ ունեցած է բնիկ ազգային գրականութիւն մը, պատասխան տաւ երկրորդ մը: Եւ եթէ 'ի նախնեաց քանի մ'ընտիր մատեաններ կան՝ որոց առջև մամ կ'վառենք. և 'ի նորումս քանի մ'անգղյն և խրթին քերթուածներ, կարկտուն և ուռուցիկ վէպեր կան՝ զոր շէնք կարդար, ասկից կրնանք հեռեցնել թէ մենք ալ էապէս գրականութեան տէր ենք, 'ի բաց առեալ թարգմանութիւններն՝ որոց նիւթն ատեն մը կրօնական, այժմ վիպական է, և ըստ իս, բուն գրականութիւն չէ՛. համարելը, թէ և քիչ շատ ընթերցանութեան կ'գրգռեն և լեզուն կ'մշակեն:

— Կ'ընդունիմ, յարեցի ես ալ իմ կողմէս, որ՝ օտար գրականութեանց անհուն ովկիանու առջև՝ մերինը մանր կաթիլներ են, սակայն ո՞վ կրնայ ուրանալ որ այս կաթիլներուն մէջ մարդարիտներ և ակներ կան՝ որ մեր ազգութեան բնակից են. մեզի համար շնաշխարհիկ, աննման և անգին են մեր կրօնական հին երկերն. և թէ և համառօտ՝ մեր ազգային էութեան կենդանի և անկորնչելի արձաններ են մեր քանի մը պատմական երկերը: Իրաւ է որ, ինչպէս Յոյնք և Հռոմայեցիք, շունեցանք և շունինք տակաւին այնպիսի գլուխներ որ մեզի ուղղակի խնաստասիրութեան, քաղաքականութեան, այլ և այլ գիտութեանց ու դեղարուեստից ճաշակ մը տան, սակայն հին Հայաստանն ի՞նչ, և այժմեանն ի՞նչ է որ անորմէ Հոմեր մը, Թալէս մը, Արիստոթէլ մը, Պլատոն մը, Ովրատիոս մը, Կիկերոն մը, Տակիտ մը յուսանք: Հինն իր կրակովը կը տապէր կ'եփէր, նորն՝ ինչպէս որ կ'ըսեն ռամկօրէն, իր եղովը կ'տապկւի: Մեր նախնիքն՝ այն ինչ իրենց երկնային փրկութեան հոգն ունենալով՝ հոգեշահ նիւթերով պարապեցան, և շրջակայ խուժիկ դրացիներէ անջատելով և սրբւելով՝ հոգի քան մարմին եղան. մեր արդի արեւակիցներն ալ աստանդական ընկան լեռ ու ձոր, անցան գետ ու ծով՝ և օտար աշխարհներ՝ օտար օրինաց ներքև տարագէմ գաղթեցին և իրենց ասրուստին ետեէն եղան: Արդ՝ եթէ ազգի մը գրականութիւնն նոյնին մտքի ու վիճակի, բարքի ու վարքի, ըղձի ու վշտի հայլին է, ո՛հ, քանի՛ հաւատարիմ է ուրեմն մեր հին և նոր գրականութեան հայլին. ներքին և արտաքին պատճառներ կ'ներգործեն անոք վրայ և դրոյն՝ ինչպէս որ է՝ կ'ներկայեն մեզ:

— Երեքնիդ ալ իրարու համաժխտ էք, ըսաւ ուրիշ ունկնդիր մը, սյս ստար-
բերութեամբ որ անոնք վիշտ կ'յայտենն մեր գրականութեան ամլութեան վրայ,
դու այս ամլութիւնն կ'մեկնես, և աղդն անբասիր հանելով՝ սլարադաները կը
դատապարտես:

Բարեկամս այս հաշտարար լեզուն՝ թէև զիս զոհ կ'ընէր, այլ խնդիրը
չէր լուծեր, ուստի որչափ որ խօսքս կտրեցի, մտովին ըսի,

Ա.

« Եւ ի՞նչպէս կարելի է որ հայ գրականութիւնն մեծաւ մասամբ այս օտա-
րոտի կերպարանը շունենայ, ի՞նչպէս կարելի է որ յառաջագէմ աղգաց մտա-
ւոր գանձերուն ետեէն շվաղէ և ճարակ չփնտռէ, քանի որ ինքն իր բաղդին և
ողորագայից տէրը չլինելով՝ քաղաքական շրջանաւոր յեղաշրջումներու ենթար-
կեր, իր հնութեանց համբարները՝ քանի մը գրաւոր և անգիր նշխարներէ
զատ՝ այրեր քանդեր, մերթ Եսորի, մերթ Յոյն, մերթ Արապական աղբիւր-
ներու գիմեր է իր մատենագրութիւնն արդիւնաւորելու, քանի որ ներսէն վըր-
դով ու շփոթ, նախարարական պառակտումներ, դրսէն յարձակումներ՝ զինքն
անընդհատ յուզման մէջ պահեր, և ՚ի վերջէ հալածում կրելով՝ մերթ բուռն,
մերթ կամաւոր զազթականութեան մէջ դոյլ ու հանգիստ է դաւեր:

Միթէ այսպիսի ազգ մը կարող էր իր ազգային կեանքը մշակել, մնայուն
քաղաքական դիրք մը պահել, առտնին հաստատութիւններն ու օրէնքը ամ-
րապնդել, բարքն ու վարքը անեղծ պահել, և խաղաղութեան պտուղները
վայելել, որ միակ շաւիղ մ'է մտային և բարոյական զարգացման. հարկաւ ոչ,
հարկաւ շատ անգամ ուրիշին կամքովը պիտի դործէր, ուրիշին աչքովը պիտի
տեսնէր և դատէր, ուրիշին սրտովը պիտի զգար, և միշտ իր անկայուն և վտա-
րանդի էութեան պէս՝ գրականութիւնն ալ անկայուն և բազմադիմի պիտի
դառնար:

Արդ՝ զարմանք չեն՝ եթէ մեր աշխարհիկ գրականութիւնն ալ՝ մեր արդի
լեզւին պէս այլազան՝ եւրոպականին և մանաւանդ ֆրանսերէնին դրոշմը կ'ըն-
րէ իր մէջ: Ի՞նչպէս հնար էր որ Հայազգին ալ շկրեր այն գերագոյն մտային
և բարոյական ներգործութիւնն՝ որով ֆրանսա նոյն իսկ կորովամիտ և հզօր
աղգաց վրայ կ'իշխէր: Այս իշխանութիւնն՝ եթէ մասամբ՝ իր քաղաքական կա-
ցութեան՝ և ս առաւել՝ իր ընկերասէր, հպելի բնաւորութեան, պայծառ և
փայլուն հանճարին, և մանաւանդ յստակ, ճշգրիտ, պայծառ և հրապուրելի
լեզւին կ'պարտաւորէր:

Երբ ասկից քսան երսուն տարի առաջ՝ Թուրքիոյ ժողովուրդը քիչ մ'աչքը
բանալով՝ Հասթիսի օտարիւնները շատ սուղ, և միանգամայն թաղուն ծուղակ-
ներ գտաւ, քանի մը քայլ առաւ, կռնակը Միսիթարեան վանուց դարձուց և
Բարիզէն կրթութիւն սպասեց: Առ հասարակ մեծ ու պզտիկ՝ բարիզեան կեանքը,
սովորոյթը, նորաձեւութիւնը, մատենագիրներն օրինակել սկսան: Այն ատեն
ոչ միայն մեր արդն ու զարդը, տարազն ու կահոյքը ֆրանսաէն եկան, այլ և
ֆրանսան տուաւ մեզ մտքի սնունդ, սրտի զգացում, նոյնպէս մեր կրից ճա-
րակ և թեթեամտութեան նիւթ: Թուրքիոյ Հայն՝ սովորաբար ֆրանսերէն կը
խօսէր և կ'խօսի, կ'խորհէր, ֆրանսերէն կ'քալէ, կ'սլարէ, կ'կենսակցի, կ'գրէ,
և շատ անգամ ֆրանսայի ընտիր ձիրքերն անտես առնելով՝ լոկ անոր սնտախ,
անշահ և վատ իրերով կ'մոլի ու կ'մոլորի:

Այս յեղափոխութեան առ հարկի մեր գրականութիւնն ալ պիտի հաղորդ

դաճուէր, և ի՞նչ արդիւնք պիտի գոյանար յայտնի է: Պեղեցիկը աղեղին, Լաւր յոռիին, օդտակարը մնասակարին հետ մեր աղգային կենաց մէջ մուտ պիտի ունենար անխտիր, և ազդն իր բնիկ յատկութիւններէ փոքր առ փոքր պիտի հեռանար: Նա մանաւանդ՝ քանի որ օրինակել, հետևել, թարգմանել հելտին էր, մտածելու, ստեղծելու, հեղինակելու հոգ ու ճիգ ընողները՝ բացառիկ պարագայի և վիճակի մէջ գտնուող՝ շատ քիչ անձեր պիտի լինէին:

Բ.

Միտքս դատապարտել չէ օտար ազգերու ընտիր մտաց բերքը. ո՛չ: Ամենուն յայտնի է թէ որ և է ժողովրդեան մը գրականութիւնն ինքնին չծագիր, մանաւանդ շղարդանար. շատ անգամ օտարամուտ սկիզբ մը կամ տարր մը կ'ունենայ, սակայն հարկ է որ այս տարրն աննշմարելի դառնայ բնատուր հանգամանօք:

Հին Յունաստան Փիւնիկէէն և Եգիպտոսէն փոխ կ'առնու իր այբուբէնն, իր դիքն, իր կրթութիւնը, բայց իր վառվառն, ճարտար և հիանալի երևակայութեամբն ի՞նչպէս իր յատուկ դրոշմն անոնց կ'կոխէ: Հռոմ՝ Յունաստանի աշակերտը՝ չչատանար, Հոմեր, Թուլիախտէս, Քսէնօֆոն կարգալով ու թարգմանելով, ինքն ալ Վիրգիլիոսներ, Ովրատիոսներ, Պլիններ, Տակիտոսներ կ'ստեղծէ և իր ոգին բնիկ գրականութեան կ'հաղորդէ: Նոյնպէս վերջէն Իտալիա բոլոր հիւսիսային ազգերու նոր մտային մղում մը տալովը՝ Ֆրանսա, Անկլիա, Գերմանիա կուրօրէն անոր շհետևեցան, իրենց ազգային հանճարը չկորուսին, նա մանաւանդ անդրադարձ ներդրածեցին իրենց դրացիներուն վրայ, ինչպէս որ եւրոպական գրականութեան փոքր 'ի շատէ հմուտ լինողը կրնայ վկայել: Ուրեմն եւրոպական ազգերու գրականութիւնն իրարմով կ'գործեն ու կ'զարգանան, առանց իւրաքանչիւրն իր ազգային ոճը, ձևը, ոգին ու հակումը այլակերպելու: Երկար կ'լինի նշանակել աստանօք թէ ինչպէս մէն մի ազգ իր յատուկ հանճարներուն միջոցաւ նշանաւոր յեղաշրջումներ պատճառեց ոչ միայն իր, այլ և օտար երկիրներու մէջ՝ և ինչպէս իմաստասիրութեան, պատմութեան, երաժշտութեան, ճարտարապետութեան, նոյնպէս գրականութեան նոր թուական, նոր դպրոց, նոր ուղղութիւն բացաւ:

Գ.

Երանի թէ Հայերն ալ զգային թէ որչափ սքանչելի լինի օտարին գործը, որչափ դիւրին լինի զայն 'ի հայ շրջել, դարձեալ անհարազատ ծնունդ մը կ'համարուի, և չպարունակեր այն տոհմային հանգամանքն որով ազգի մը բուն մատենագրութիւնը կ'կազմուի: Օտարէն առնուին ինչ որ գիտութեանց և արհեստից սահմանին մէջ է, օտարէն առնուին ինչ որ դաբեր անբաւ ճիգ ու քիրտ թափելով ձեռք ձգուած է և դիւրապին, օտարէն քաղելն այն հանրական ճշմարտութիւններն՝ որ բոլոր մարդկային սեռի սեպհականութիւններ են՝ բնաւ մեղադրելի, մնասակար և անբնական գործ մը չէ, քանի որ մտային փաճառքը՝ փառք տպագրութեան և ազատութեան՝ արդելական օրինաց ներքև չեն գտնուիր, սակայն երբ ազգ մ'իւր էութիւնը կազմող կենսական տարրները պահպանել կամենայ, պարտաւոր է նոյնին մէջ փնտռել պահպանութեան միջոցները, իր ազգային դրոշմով կնքել իր ամէն մտային և բարոյական ստացումները, ապա թէ ոչ կապիկ կամ թուրքակի ընթացք մը բռնած, քնածին ճաշակով ամէն նոր բանի հետևած, և ազգին կենսատու սկզբունքն 'ի սպառնջած կ'լինի:

Եւ միթէ կ'պակասին մեզ ներքին ծիւթեր, հին և նոր արկածներ, տեսարաններ՝ որպէս զի անոնց վրայ հիմնենք մեր հեղինակութիւնները: Միթէ բանահիւսին համար օդ, երկին, աւերակ և գերեզման, ողբ և արտուրբ չկան Հայաստանի մէջ, միթէ ազգային երգիչներու համար սէր, ազատութիւն, խանդ ու եռանդ անհետ եղան, միթէ իմաստասիրին համար հին պատմութիւնն ու մեր արդի թշուառութեան պատճառները լեզու մը չունին, միթէ վիպագրին համար սրտաշարժ հառաչներ, անասելի ցաւեր, եղերական իրողութիւններ ձայն մը չունին, այո՛, ունին, և զգայուն ու բանիմաստ գրագետ մը բաւական է որ կամք ունենայ, և խկոյն ամէն իրողութիւն մարմին մը, ամէն մարմին շունչ, ամէն շունչ խորհուրդ մը կ'առնու իր գրչին ներքէ:

Ուրեմն ո՛ր է հայ Պերանժէն, հայ Պայրն, հայ Աեօթէն, հայ Հիւկօն, հայ Էօթէն—Սիւն և այլն: Բայց, աւաղ, ո՛վ պիտի սնուցանէ, քաջալերէ, մեծարէ նորածին կամ թաղուն հայ քերթողը, վիպասանը, իմաստասէրը, թշուառութեան, սարկութեան և բանութեան հողին վրայ. ո՛վ պիտի կերակրէ, պաշտպանէ ազատէ Արովեան մ'որ Հայաստանի վերեւ ցոյց տալու և ողբալու ատենը՝ անտեսանելի ձեռքէ յանդունդ կ'զլորի, Նալբանդեանց մ'որ «Վէզ ճանապարհը յայտնելուն» արծիւին ճիրանին տակ կ'ճնշի և ազգաբնիւն գոչելով հողին կ'փշէ, Պատկանեան մ'որ փլած սրտերու հայրենասիրութեան թելերը կ'թնդէ, այլ վարադուրի մ'եռեէն, Շանշեանց մ'որ՝ թէև քրիստոսի խաչն իբր ազատութեան և փրկութեան դրոշ կ'պարզէ հայոց, սուս կրօնաւորներէ կ'հալածուի, Ոսկանեան մ'որ՝ թէև մտային և գրական յեղաշրջում մը կ'տրամադրէր գործելու, բայց անհասկանալի կ'մնայ, Նարայեան մ'որ անշուշտ Յօն Ժողովի հեղինակին պիտի նմանէր եթէ վեղար շունեւար, Պէշիկթաշեան մ'որ հայ Պերանժէ մ'էր, և իր հողոյն գանձերը հազիւ թէ քանի մ'ընտիր բարեկամաց յայտնելու կ'իշխէր . . . : Հիասրեան մ'որ մեր արդի ընկերական տիպարը կ'ներկայէ իր Խորով ու Մարտիկոյն մէջ՝ և խրախոյս չընդունիր, Պրօշեանց մ'որ իր Սօս ու Արդիւններ ազգային վէպին մէջ՝ պարզ ու դողտրիկ ոճով Աշտարակի հայոց նախնի կեանքն ու սովորութիւնները կ'նկարագրէ, բայց հեռեող շունեւար . . . : Այո՛, կան, և թերևս շատ կան այնպիսի գլուխներ որ թիւ առնու համար ազատութեան օդ և դիւրակեցութիւն կ'խնդրեն, և այս օդն ու դիւրակեցութիւնը պակսելով՝ անտես և անյայտ կ'հեծեն, կ'տառապին և կ'մարին . . . :

Այս իրաւ է որ ռուսաբնակ հայերը՝ ի բաց առեալ իրենց անհեթեթ և խորթ շարագրութեան ձեւը՝ կ'նկրտին ազգային նոր դպրութիւն մը ստեղծել: Եթէ այս օդտաւետ ձգտման բնաստատճառը փնտռենք՝ շալտի գտնենք թարգմանութեանց շատութեան, լրագրաց առատութեան մէջ՝ այլ իրենց աւանդապահ բնաւորութեան, տոհմային բարուց և վարուց, դաստիարակութեան և Հայաստանի մօտաւորութեան մէջ: Ծանր լծի մը ներքէ՝ մարդիկ ստեպ կրօնից, ազգային հնութեանց և աւերակաց մէջ ազաւէն փնտռելով՝ սփոխում և ներքին ազատութիւն մը կ'գտնեն: Աովկասու հայն ալ, կ'իմանամ բարեկիրթը, իր տաճարին, իր խաչին, իր եկեղեցւոյն մէջ կ'որոնէ փրկութիւն մը, Սիպերիոյ սառնամանեաց դէմ պատուար մը, ըստ մեծի մասին զերմանական գրականութեամբ—որ քան կալիականն հաստատուն, խորիմաստ, հայկական բնութեան մտազոյն է, թէև ստեպ ճապաղ— կ'ներշնչուի, համալսարաններ կ'յաճախէ:

իբ հարց գերեզմաններուն փոշին և սահորտիբը կ'իսառնէ, անոնց տեղը կը վառի, իբ հայրենակիցներուն կեանքովը կ'ապրի և 'ի վերջէ՛ իբ մտաց արդիւնքը՝ եթէ երբէք 'ի լոյս հանէ՛ ոչ այս ոչ այն ազգին դրականութեան ընդօրինակութիւնն կամ հետեութիւնն է, այլ լոկ իբ հանճարին ծնունդը, իբ ազգային էութեան մասը, վերջապէս նոյն ինքն է և չէ թէ օտարական մը։ Միայն կարող ես նկատել որ՝ իբ գործին նիւթը, հիւսուածքն ու ոգին թէև հայկական, կիրթ ճաշակ մը, աննշմարելի արհեստ մը, բանիբուն գրիչ մը անօրիններ, յարդարեր է անոր յատակագիծն ու ոճը, և անոր պարզութեան մէջ կ'նշմարես ընտիր իմացականութեան մը հայկական տիպարը։ Ակայ են մեր ասութեան Սօս ու Արդիւնի, Ալեշիկթաշեանի, Սայեաթի և Պատկանեանի երգերը։

Մեր կողմերն ալ ամանք փորձ փորձեցին և կ'փորձեն զուտ ազգային վէպեր յօրինել։ Այս եռանդը զովելի է, սակայն՝ 'ի բաց առեալ հին լեզուով գըրուած դիցազնական քերթուածները՝ թէ արձակ, թէ ոտանաւոր, ըստ մեծի մասին թերի են և կցկտուր։ Նոյն իսկ Միսիթարեան հարց գրածները՝ որոց տեսարանն է հին պատմութիւնը, ստէպ ճօթ, հմտալից, այլ պաղ և անլի են, ըստ որում իրենց վանական մենութեան մէջ՝ ազգային գործնական կեանքէն հեռի, և բարուց անհաղորդ գտնելով՝ չեն կարող որչափ հմուտ, գիտուն և վսեմ լինին, կրօնական սահմանէն դուրս ելնել, և ժողովրդեան սիրտն ու միտքը յուզող, դրաւող երկասիրութիւն մ'արտադրել։ Ա՛գտնւին նաև քանի մը նորատիպ վէպեր՝ որ դժբաղդօրէն թէ նիւթի և թէ ոճի կողմէ չեն կրնար նոր արգիւնաւէտ ուղղութիւն մը տալ մեր արդի գրականութեան։ Սակայն այս դիտողութիւններն ընելով հանդերձ, կ'կրկնեմ նաև թէ՛ քանի որ տակաւին աներևոյթ են մեր մէջ այնպիսի հանճարներ որ՝ մեր աշխարհիկ լեզուին հիմնական կայան մը տալէն զատ՝ նոր նոր ինքնածին երկերով ազգը ճոխացնեն, մեզի պէս գրչակներ կ'ստիպուին թարգմանութիւններու ձեռնարկել . . . : Ասան զի, ինչպէս որ կ'ըսէ Ա. Գեմբլ, այն որ միշտ կ'թարգմանէ, երբէք բանաստեղծ չլինիր, ոչ օրինակողը պատկերհան մը, ոչ փամփուշտով լուզացողը լուղորդ մը . . . :

Ե.

Բայց միթէ թարգմանութեան մէջ ալ կարելի չէ՞ ընտրութիւն մ'ընել, միթէ յարմար կամ անյարմար ինչ որ մեր առջևը ելնէ թարգմանելով՝ հասարակութեան միտքը չ'մնասիր։ Միթէ չկա՞ն բարեկիրթ ազգեր որոց վէպերը մեր ազգին կացութեան, ոգւոյն աւելի պատկանին։ Ի հարկէ ամեն ազգի մէջ կան, և կ'մնայ միայն շատ մը յոռի, փտուն նիւթեր դուրս ձգելով՝ լաւագոյնն ու օգտակարը գտնել։ Ազգ մ'որ վէպերուն մէջ միայն խանդալիբ և մըտածին սէր, միայն բուռն կիրք, միայն սնտոխ պատրանք և խաղ կ'իմտուէ՛ շրջմովի լուսի մ'ետեէն վաղող ուղեորին կ'նմանի, որ 'ի վերջէ՛ յանդունդ կը գլորի։ Այսպիսի վէպեր իբ նախնի պարզութիւնն ու բարոյական ոյժը պահող ժողովրդեան մը համար մնասարեր են։ Մեզի յարմարագոյն կ'թուի այն վիպական պատմութիւններն՝ որ հռչակաւոր հեղինակներու գործ լինելէ զատ՝ մեր վիճակին, մեր կենաց գեթ անուղղակի նկարագիրն ընծայեն և 'ի լաւ անգրգիմելու մեզ գրգիռ և հրապոյր տան։

Քանի որ արդէն հայ ականջներ Ֆրանսայի անմահ և մերթ անշահ վիպասաններու գործերով լցւած են, քանի որ արդէն մեր միտքն ու սիրտը բաւական սնան և յիւրցան, երբեմն զերկեցիկ իմաստներով՝ ստէպ սիրայօդ անսպաս զրոյցներով՝ քանի որ Ա. Տիւմա, Ա. Հիւկօ, Է. Սիւ, ԸՄպպէ . . . քիչ շատ

հայացան և իրենց հնարագէտ, վեհ, նուրբ, ազատական հանճարին ճաշակը մեզ
տուն, թէև ուրիշ քանի մը կալիւթացի վիպասաններ՝ իրենց սճին հետ՝ ըն-
գածին յատկութիւնն ալ կորուսելով՝ Պայրնի ըսածին սէս՝ չէ թէ Ռարֆմ-
նիւ ալ այլ ծղրեալ կամ այլակերպ ներկայացան մեզ, ուստի հանդիսիս մէջ
հետզհետէ տպելու մտօք, արժան դատեցի այս անգամ ալ մերազնեից շատե-
րուն անունով ծանօթ, այլ գործով անձանօթ վիպասան մը թարգմանել, այս
է Վօլթր Սքօթ:

Վօլթր Սքօթ (1771—1832) լորտ Պայրնի ժամանակակից՝ նախ՝ իբր բա-
նահիւս, ապա իբր վիպասան իր անունովը բոլոր Եւրոպա լցուց, իր հնարագէտ
և բեղձնաւոր երևակայութեամբ ամէնքը հիացուց, և իր նախորդներուն հե-
տեւած զուտ սիրավիպային շաւիղն անգոսնելով՝ նշանաւոր յեղափոխութիւն
մը գործեց և պատմական վիպասանութեան դուռը բացաւ: Նկարագրական տե-
տակին մէջ մանաւանդ կ'տեսնուի իր հանճարին զօրութիւնը: Իր հայրենի եր-
կրին՝ Սկոտլանդ՝ և Անկլիոյ հնութեանց ներհուն՝ մանրազննին գրչով և կեն-
գանի լեզուով կ'պատմէ նախնեաց բարբը վարբը, կենցաղը. արձաններն ու շէն-
քերը, անտառներն ու անառիկ դղեակները կ'նկարագրէ, և կարծես թէ հմա-
յութեամբ մը մեռելներու շունչ, բարբառ, շարժում կ'հաղորդէ՝ միշտ ժո-
ղովրդեան իրաւանց սպաշտպան՝ և բռնակալութեան անհաշտ թշնամի կանգնե-
լով: Պատմական վիպասանութեան իբր հնարիչ՝ Վօլթր Սքօթ նմանը շունչի,
թէև շատեր իրեն հետեւեցան, ինչպէս Գուք յԱմերիկա, Տիւմա 'ի Ֆրանսա,
Պրատան յԱնկլիա և այլն:

Վօլթր Սքօթի բազմաթիւ վէպերէն ընտրեցի ԻՎԱՆՕԷ, իր հրաշա-
կերտը: Իվանօէ՝ վէպին դիւցազնը՝ միջին դարու մէջ կ'ապրի, խաւարին,
այլանդակ, ահարկու դար մ'ուր սուրն ու խարոյկը մէկ կողմէ հերետիկոսներ
կ'ընջեն կ'այրեն՝ իբր վհուկներ, ասպետական արիութիւնն ու վեհանձնու-
թիւնը միւս կողմէն բռնակալները կ'սարսեն: Իվանօէ՝ բնիկ Անկլօ—Սաքսօն,
անհաշտ թշնամութիւն մը կ'ուխտէ հայրենեաց բռնաւոր Նօրմաններուն դէմ,
որոց պետը՝ յաղթողն Վիլլէմ, Անկլիան իր նախարարաց մէջ բաժներ էր,
ինչպէս Արշակ Պարթևը՝ Հայաստանը: Այս Նօրմաններն՝ իբր անբան ստրուկ
կ'հարստահարէին, կ'հալածէին ժողովուրդը: Սպառազէն ասպետներ, նրբա-
միտ մոլի կրօնականներ, բռնասէր թագաւորներ և իշխաններ, ազատասէր Սաք-
սօն տանտերներ, անվեհեր և առաքինի կիներ իրենց յատուկ յատուկ զգես-
տով և զարդերով կ'երևին այս վէպին մէջ՝ կ'պայքարին, և 'ի վերջէ յաղ-
թանակն արդարին և արիին կ'մնայ:

Թէև այսպիսի վէպ մ'անկլիական բնագրէն 'ի հայ վոխել զժուարին՝ ոչ
այնչափ կարողութեանս, որչափ ուշիմ ընթերցողաց ներողամտութեան վստա-
հելով՝ անոր ձեռն արկի, և յուսամ որ սոյն ներողամտութիւնը շարաշար չեմ
գործածեր:

8 Յունվար, 1871
Զմիւռին

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ



Ի Վ Ա Ն Օ Է

(IVANHOE)

ԳԼՈՒԽ Ա.

Այսպէս խօսէին. մինչ դէպ 'ի ստորն բազ'
Երեկոյեան դէմ՝ խողըն պարարակ՝
Գառնար ակամայ՝ հանգչիլ 'ի խշտիս,
Անշահ հանելով՝ խանչիւն ահա ելիս:

ՈՒՍԱԿԱՆ

Հիս ատենները զուարթուն Անկլիոյ այն ախորժելի նա-
հանգին մէջ որ Տօն գետով կ'ոռոզէի՝ անտառ մը կար ընդ-
արձակ որ Շէֆֆիլտի և Տօնդաստրի գեղազուարճ քաղաքին մէջ
տեղ դանւող աղւոր բլուրներն ու հովիտները կ'ծածկէր: Սոյն
անտառին մէկ քանի մասերը գետ ևս կ'տեսնուին Վէնդվորթի,
Վարնդլիֆ ծառաստանի և Ռօթրհէմի կողմերը: Ահա այս տեղ
կ'թափառէր երբեմն Վօնալէի վիպական վիշապը, այս տեղ
մղէցան երկու Վարդից ըսւած քաղաքային պատերազմաց ժա-
մանակ շատ մ'ահեղ կռիւներ, նոյնպէս այս տեղ կ'ծաղկէին
'ի հնումն այն գունդ գունդ արի վտարակներն (outlaws) որոց
նախճիրներն անկլիական ժողովրդեան երգերու մէջ հռչակ առին:

Մեր վէպին գլխաւոր տեսարանն այս վայրս լինելով՝ անոր
 թուականը Ա. Ռիչարտի* իշխանութեան վախճանին կ'հասնի :
 Այս թագաւորին երկարատե ստրկութեան ատեն՝ իր հայրենի աշ-
 խարհը վերադարձը աւելի փափաքելի քան յուսալի իրողութիւն
 մ'էր իր յուսակտուր հպատակաց համար, որ նոյն պահուն պէս
 պէս բռնութեան ներքե կ'ճնշէին : Աղնուականք՝ որոց զօրութիւնը
 Ստեֆըն թագաւորին օրովը սաստկացեր էր՝ և հազիւ թէ Հէն-
 րի Բ. ին խոհականութեամբն արքունի թագին հպատակելու մի-
 տեր էին, նորէն իրենց հին անզուսպ բռնութիւնը ձեռք առեր,
 Անկլիոյ Պետական խորհրդին տկար միջամտութիւնը քամահեր՝
 և իրենց ամբողջները զօրացնելով, արբանեկաց խումբը ստուա-
 բելով՝ ամէն բնիկները ստրուկներու կարգն անցնելու կ'նկրտէին.
 միանգամայն ամէն ճիգ կ' թափէին զօրագնդեր պատրաստել՝ որ-
 պէս զի 'ի հարկին անոնց դուխն անցնելով՝ կարող լինին ազ-
 գային մօտալուտ փոթորիկներու մէջ մեծ դեր մը խաղալ :

Այն ատեն՝ Քրէյքլինս կոչւած ստորին կարգի մարդկան վի-
 ճակն՝ որոնք Անկլիոյ Սահմանադրութեան ողւայն համեմատ՝ ա-
 ւատական բռնութենէ զերծ մնալու իրաւունք ունէին՝ անսովոր
 վտանգի մէջ կ'գտնուէր : Եթէ, ինչպէս որ առ հասարակ կ'պա-
 տահէր՝ այս դասու մարդիկ՝ իրենց մօտաւոր փոքրիկ թագաւոր-
 ներու մէկուն պաշտպանութեան ներքե մտնէին, անոր տան մէջ
 պաշտօն վարէին՝ կամ բարեկամութեան փոխադարձ դաշամբ
 կապելով՝ անոր օգնական գտնուելու խօսք տային, կարելի է որ
 այն ատեն ժամանակաւոր հանգիստ մը վայելէին. բայց այս ան-
 դորրութիւնը ստանալու համար՝ ամէն անկլիացւոյ սրտին պաշ-
 տելի ազատութիւն մը զոհ ընել և պաշտպան պետին՝ փառա-
 սիրութենէ ձեռնարկած՝ ամէն յանդուգն արշաւանաց աջակից
 գտնուիլ հարկ էր : Միւս կողմէն մեծ Պարոններն այնքան բազ-
 մադիմի միջոցներ ունէին ժողովուրդը կեղեքելու և ճնշելու, որ
 միշտ պատրուակ և կամք չէին սրակսեր իրենց՝ բնաջինջ ընելու
 չափ՝ նեղել և հալածել տկարագոյն դրացիներ՝ որոնք թերեւս՝
 պետերու իշխանութենէ ազատելու փորձ փորձելով՝ կ'փափաքէին

* Ընդհանուր ընթերցողին վէպիս պատմական մասերն աւելի գիւրընթե-
 սելի բերելու համար՝ կ'առաջադրեմ՝ յաջորդ թիւով՝ Բրիտանիոյ պատմու-
 թեան իրստ համառօտ մէկ նկարագիրն ընել : Ծ. Թրգ.

իրենց անլեաս վարմունքին և երկրին օրինաց մէջ պաշտպանութիւն փնտռել վտանգալից ատեններ :

Ազնուականաց բռնութիւնն և ստորին մարդոց տառապանքն աւելցնող պարագայ մը եթէ կար՝ մանաւանդ Նորմանախոյ դուքս Ալիլէմի աշխարհակալութեան արդիւնքն էր : Չորս դարեր բաւական չէին եղեր Նորմաններուն և Անկլո-Սաքսօններու անհատ արիւնն իրարու հետ խառնել, կամ, լեզուի նոյնութեամբ և փոխադարձ շահերով երկու անհատելի ցեղեր միաւորել, քանի որ ասոնց մին իբր յաղթող ժողովուրդ տակաւին կ'խրոխտար, մինչդեռ միւսն իր պարտութեան հետեանքը հեծեծելով կ'տանէր : Հէսդինքսի ճակատամարտէն ետքն երկրին իշխանութիւնը շիովին նորմաններու ձեռք անցաւ, և ինչպէս որ պատմութիւնը կ'հաստատէ, յաղթականներն այս իշխանութիւնն անխնայ 'ի գործ դրին : Սաքսօնեան տոհմին բոլոր իշխաններն ու սուպաւնին անհետ եղան կամ հողազուրկ, քանի մը բացառութեամբ : Բնիկներուն մէջ աննշան հող ու կալուած ունեցողները շատ քիչ էր էին : Արքայական քաղաքականութիւնն ամէն օրինական և ապօրէն միջոցներով կ'աշխատէր 'ի վաղուց ջլատել բնիկ ժողովրդեան այն մասն որ իրաւամբ ոխերիմ հակակրութիւն ունէին բռնակալին դէմ : Նորմանեան ցեղին ամէն թագաւորներն ակն յայտնի իրենց Նորման հպատակները միայն կ'սիրէին : Արտորդական օրէնքներ՝ և սաքսօնեան Սահմանադրութեան անուշ և ազատ ողոյն անձանօթ ուրիշ շատ մը կանոններ նկուն բնակիչներուն դիտուն վրայ դրին՝ որպէս թէ աւելի ևս ամրապնդեն այն սուստական շղթաներն որով կաշկանդեր էին : Արքունի պալատն ու երեւելի ազնուականաց զղեակներն՝ ուր արքայական շուք ու հանդէս կ'պարզէին, լոկ Ֆրանքօ-Նորման լեզուն կ'խօսէին, դատարանները մի և նոյն լեզուով դատ ու վճիռ կ'արձակէին Համառօտ՝ պատուոյ, ասպետութեան և նոյն իսկ արդարութեան լեզուն Ֆրանսերէն լեզուն էր, մինչդեռ անկլո-սաքսօնեան առնի և ազդու բարբառը գեղջուկներու և շինականներու բերնին յարմար լեզու կ'դատէր, և ասոնք ալ ուրիշ լեզու չցիտէին : Սակայն դարձեալ լօրաւերն ու մշակներն՝ որ իբր անբան երկիրը կ'մշակէին՝ իրարու հետ առ հարկի յարաբերութեան մէջ դանդելով հետզհետէ նոր բարբառ մը շինելու հետ էին, որ կէս

Ֆրանսերէն և կէս անկլօ-սաքսօն լեզու մ'էր, և այս կերպով իրարու միաք կ'հասկնային: Այսպէս քիչ քիչ կերպարան առաւ մեր անկլիական լեզուն, որուն մէջ յաղթողներուն և յաղթեալներուն բարբառն վայելչութեամբ մ'իրարու հետ խառնուեցան, և այնուհետև դասական ու Եւրոպիոյ հարաւային երկիրներու լեզուներէն նոր նոր բառեր փոխ առնուելով՝ շատ ծաղկեցաւ:

Ընթերցողին ընդհանուր ծանօթութիւն մը տալու համար այս պատմական իրողութիւնները պատմել յարմար դատեցի. վասն զի կարելի է կ'մտնայ թէ՛ որչափ որ պատմային նշանաւոր դէպք մը, ինչպէս պատերազմ կամ յեղափոխութիւն՝ չցուցնէր թէ Բ. Ալիլէմի իշխանութենէ ետքը՝ անկլօ-սաքսօնեան ազգը՝ իբր զատ ժողովուրդ մը սեպւին, սակայն իրենց և բռնակալներու մէջ տիրած ազգային խտրութիւնները, իրենց նախնի անկախ կացութեան և արդի ստրկութեան յիշատակը՝ մինչև Կալարա Գ. ին օրովը կ'յարատեւէին, այնպէս որ բռնակալութեան ըրած վէրքերը միշտ անբուժելի կ'մնային, և յաղթող Նօրմաններու սերունդը յաղթեալ Սաքսօններէն 'ի սպառ կ'բաժնէր:

Այս գլխին սկիզբը յիշած անտառին ճոխ դալարի ցանցառին (glade) վրայ արդէն արևը կ'իջնէր: Հարիւրաւոր լայնկատար, հաստակոճղ, ուռճալի կաղնիներն՝ որոնք թերևս հռոմէական զօրաց սրանձալի հանդէսը տեսեր էին, իրենց հոծ ճիւղերը զմայլելի դալարավայրի մը խիտ գորդին վրայ կ'տարածէին: Տեղ տեղ փշալի դափնիներ (holly), մրտենիներ և փեկոններ՝ իրարու բոլորած՝ մարը մանող արփիին ճառագայթները կ'խափանէին. տեղ տեղ ալ՝ իրարմէ անջատուելով սփիւռ ծառուղիներ կ'յօրինէին, որոց շփոթ հեռանկարին հրճուանօք կ'նայի մարդուս աչքը, մինչդեռ երևակայութիւնը զանոնք իբր անտառային մենութեան աւելի ամայի տեսարաններու տանող շաւիղներ կ'նկատէ: Աստ՝ արևուն կարմիր նշոյլները ցիր ու նսեմ լոյս մը կ'արձակեն և ծառերու բեկեալ ոստերուն և լօռուա կոճղերուն վրայ ըստ մասին կ'սփռին, անդ՝ շողուն շառախղներով կ'լուսաւորեն դալարին այն մասերն ուր կ'ձգտին:

Ցանցառին միջևն՝ ահագին բաց վայր մը կար որ կ'երևի թէ քրմական ծէսերու նուիրած ատրուշան մ'էր, վասն զի բլրակին

կատարն՝ որ հարթութենէն արհեստական կ'թուէր՝ տակաւին անտաշ խոշոր քարերու բոլորակ մը կ'դնուէր : Այս քարերէն եօթը կանգուն էին , միւսները՝ թերևս նորադարձ և եռանդուն խաչապաշտի մը ձեռօք իրենց տեղէն խախտեր , մէկ քանին անշարժ մնացեր և մէկ քանին ալ բլրակին մէկ կողմը թաւալեր էին : Այն վէժ մը միայն մինչև վար գլորեր՝ և բլրին բոլորը մեղմիկ հոսող վտակի մ'ընթացքը կարելով թեթև կարկաչ մը հանելու առիթ տւեր էր այն յստակ և այլուր լռիկ վտակին :

Այս դաշտային տեսարանին վրայ լոկ երկու մարդիկ կ'տեսնուէին , երկուքն ալ հագուստով և տեսքով հին Եօրօքայրի մօտ Աէստ-Ռայտինի թաւուտ երկիրներուն կոշտ և զեղձուկ բնիկներուն կ'անմանէին : Երիցադոյնը՝ մթին , վայրենի և ժանտ տեսք մ'ունէր , իր հագուստը՝ ըստ կարի՝ պարզ ձև մ'ունէր , թեզնաւոր , նեղ , մորթէ վտաւակ մ'էր , որուն վրայ՝ թէև 'ի ըսկզբան մաղերը մնացեր՝ բայց վերջէն շատ մը տեղերէ թափած լինելով՝ դժուարին էր որոշել՝ քանի մը մաղոտ մասերէն՝ թէ որ կենդանիին օղիկն էր : Այս զղեսարը վզէն մինչև ծնկերը կը հասնէր և ամէն լաթի տեղ կ'բռնէր : Աղնակին (collar) կողմէն լոկ գլուխ անցնելու չափ ծակ մը կար՝ որմէ կ'խմացւէր թէ ուսերու վրայէն սահելով կ'հաղնուէր , նոր շապկի կամ հինօրեայ ճօշանի մը պէս : Խոզի փոկերէ շինած սանդալներ իր ոտները կ'պահպանէին , նօսր կաշի երիզներ սրունդները բոլորելով՝ մինչև թամբերը կ'եւնէին և՛ սկովտեան լեռնականացը պէս՝ ծունկերը մերկ կ'թողուին : Եւ որպէս զի վտաւակը լաւ մը մարմնը գրկէ՝ մէջքէն լայն կաշիէ կամարով մը սեղմեր և պղնձէ օղակով մը կապեր էր : Մէկ կողմէն տուրակ մը՝ միւս կողմէն փողով խոյի եղջիւր մը կախեր էր որ 'ի հարկին փչէ : Նոյն կամարէն անցուցեր էր նաև երկայն , լայն , սրածայր , երկսայրի դանակ մը՝ նոխաղի կոթով մը՝ որ այն ժամանակն անդամ Շէֆֆիլտի նշանը կ'կրէր* : Այս մարդը գլխուն վրայ խոյր չունէր , իր ոլորած գիտակը միայն կ'պահպանէր զայն , մաղերն արևուն տօթէն խանձեր՝ մութ կարմիր ժանդի դոյն առեր էին , այնպէս որ իր երկար մօրուսին հետ դիմապատկեր մը կ'ընծա-

* Մինչև այսօր Շէֆֆիլտ երևելի անուն ունի իր դանակներուն համար :

յէին , քանի որ մօրուքը գեղին կամ սաթի գոյն ունէր : Աւելորդ չէ նշանակել նաև հաղուստին այն մասն որ սղնձէ օղակ մ'էր , շան մը մանեկին նման , բայց ամենեին ճեղք մը չունէր , այլ վղին կուռ փակեր էր՝ շունչ առնլու չափ թոյլ , բայց այնքան նեղ որ անհնար էր զայն հանել առանց խարտոցի : Այս այլանդակ ճիտակին (gorget) վրայ՝ սաքսօն տառերով սա փորագիրը կար .

« — ԿԻՒՐԹ՝ ՈՐԴԻ ՊԻՎՈՒԼՖԻ , ՌՕԹԷՐՎՈՒՏ ԲՆԱԿՈՂ ՍԷՏՐԻԿԻՆ Ի ԾՆԷ ՍՏՐՈՒԿՆ Է (thrall) » :

Խողարածէն զատ , վասն զի Կիւրթի պաշտօնն այս էր , քըրմային ուրիշ ընկած քարի մը վրայ նստեր էր անձ մ'որ անորմէ շուրջ տաս տարի սղտիկ կ'երևէր , և իր զղեստը՝ թէև ձևով ընկերինին նման՝ նիւթը լաւագոյն և տեսքն աւելի այլանդակ էր : Իր շէկ վտաւակէն զատ՝ որուն վրայ անշահ նկարներ կային , կարճ վերարկու մ'ունէր՝ որ հազիւ մինչև զիստը կիսովին կը գոցէր . երեսը՝ թէև թերմաշ կարմիր չուխայ , պաստառը փայլուն գեղին կտաւ էր , և որովհետև կրնար այս վերարկուն մէկ ուսէն միւսը տանիլ , և ըստ հաճոյս մարմինն անոր մէջ սլլել , լայնքն աւելի մեծ էր քան երկայնքը՝ և հետևապէս անսովոր քան մը կ'երևէր : Արծաթէ նօսը բաղադրաններ ունէր նա , և նոյն մետաղէ մանեակ մը սա վերնագրով .

« — ՎԱՄՊԱ՝ ՈՐԴԻ ՎԻՏԼԷՍԻ , ՌՕԹԷՐՎՈՒՏ ԲՆԱԿՈՂ ՍԷՏՐԻԿԻՆ ՍՏՐՈՒԿՆ Է » :

Այս գերին ալ իր ընկերին պէս սանդալներ հաղեր էր , բայց՝ փոկի տեղ՝ իր սրունդը բարձրաններու մէջ աղուցեր էր , և մին կարմիր , միւսը գեղին էր : Ունէր նաև խոյր մ'որուն բոլորտիքը՝ բազէներու կապրածին նման՝ շատ բոժոժներ կախեր էին , այնպէս որ երբ զլուխը դէս ու դէն օրորէր՝ բոժոժները կ'հընչէին . և որովհետև մի և նոյն դրքին մէջ հազիւ թէ վայրկեան մը կ'նստէր՝ հնչիւնը զրեթէ անդու կ'լուէր : Սոյն խոյրին բոլորը կաշիէ կարծր կասկ մը կար՝ որ դէս 'ի կատարը կը լայնսար՝ թաղի ձև՝ մինչդեռ մէջ տեղէն երկար պարկ մ'երնելով՝ գիշերային գտակի կամ հիւսարի մը զլխազարդին պէս՝ մէկ ուսին վրայ ընկեր էր : Իր հաղուստին կերպը , բոժոժները , նոյնպէս քիչ մը խեղուկ , քիչ մ'ալ խորամանկ դէմքն ակն

յայտնի կ'ցուցնէին որ այս ստրուկը միմոս մը , խեղկատակ մ'էր ,
և այսպիսիներ մեծատուններու ապարանը կ'բնակին՝ որպէս զի
տաղտկալի երկար ժամեր զուարճութեամբ անցնելու անոնց օգ-
նեն : Այս ալ իր ընկերին պէս կամարէն կախած պարկ մը
կ'կրէր , այլ ոչ շեփոր ունէր և ոչ դանակ , թերևս անոր հա-
մար որ այս տեսակ մարդոց ձեռքը զէնք տալը վտանգաւոր կը
թուէր : Ուստի լոկ փայտէ թրով մը զինուեր էր , ինչպէս որ կը
զինուի մեր արդի թատրոններու մէջ խաղարկուն :

Այս երկու մարդոց կերպարանն այնքան տարորոշ չէր որչափ
իրենց նայուածքն ու վարմունքը : Ախր թ տխուր ու դժնեայ դէմք
մ'ունէր , ակնարկը խորին վհատութեամբ դետին կ'սեւերէր , և
թերևս այս վհատութիւնն անհոգութիւն համարուէր եթէ ատեն
ատեն իր հրալիր աչերէն ելած կայծը չյայտնէր թէ՛ իր վշտա-
հար յուսահատութեան ներքե՛ք բռնակրութեան զգացում մ'ու
գիմադրութեան իղձ մը պահած են : Իսկ Աւամսլա՛ աննպատակ
հետաքրքրութիւն , անդուլ անհամբերութեան հայուած մ'ունէր ,
ինչպէս որ իր դասու մարդիկ սովորաբար ունին , հանդարտ կե-
նալ չգիտէր , և իր վիճակէն ու տեսքէն սաստիկ գոհ կ'երևէր :

Այս երկու ընկերներն անկլօ-սաքսօն լեզուով կ'խօսակցէին
առանձին : — Ուր էր թէ սուրբ Ախթօլտի անէ՛ծքն այս դժո-
խային խոզերուն գլխին իջնէր — ըսաւ խոզպանը , իր շեփորը
փշելով ուժգին՝ որպէս զի ցիր ու ցան խոզերը հաւաքէ , և
թէ և ասոնք սոյն կոչումին ներդաշնակ ձայնով մը պատասխան
տւին , բայց բնառ չէին արատրար խողակի և բալուտի պարարտ
ինջոյքէն հեռանալու , կամ վտակին մօրուս ասիերը թողլու ,
ո՛ւր շատերը՝ կիսովին տղմի մէջ մտեր՝ հանդիսաւ ընկողմներ
էին՝ և իրենց պահնորդին ձայնին ականջ չէին կախեր : — Սուրբ
Ախթօլտի անէ՛ծքը թափի անոնց և իմ վրայ — կրկնեց Ախրթ
— եթէ մութը չկոխած գայլը մէկ քանի հաս չշորթէ չտանի ,
ես ալ մարդ չեմ : Արի , եկուր Փանկս , Փանկս — գոչեց նա
բոլոր ուժովը՝ ձայն տալով դժուծ գայլանման շան մը՝ կէս
գամբու , կէս բարակ՝ (greyhound) որ չորս դին ցասկրտելով
վազեց հետս խոզերը ժողվելու , թէ և իրօք ասդիս անդին ցրը-
ւեց , և տիրոջն օղնելու ատեղ՝ սղիտութենէ կամ նենդութենէ՛
գործն աւրեց : — Սատանան խորտակէ սա շան ակուաները — ը-

տաւ Աիւրթ — և կրակ թափի այն Արսորդապետին զլիսին որ մեր շուներուն ճիրանները կտրելուն՝ այսպէս անճարակ կ'մնան* : Աամսլա, ելիք քիչ մ'օղնէ ինձ, եթէ սիրտ ունիս, բլրակին չորս դին պտոյտ մ'ըրէ, խողերուն ճամբան կտրէ՝ և անոնց չափը տալէն ետև՝ առջևդ ձգէ ու զանոնք յառաջ քշէ հեղ դառնուկներու պէս :

— Իրան ըսիր, պատասխանեց Աամսլա, տեղէն չչարթելով — այս մասին ոտքիս խորհուրդ հարցուցի, և ինձ միաբերան ըսին որ իմ վեհապետական աստիճանիս անվայել գործ մ'է երթալ և սա սիրուն հանդերձս սղմին մէջ թաթխել : Աստի, կ'յորդորեմ քեզ, Աիւրթ, որ Փանկս շունդ կանչես, երամակդ իր զլիսին ձգես, և ուր որ երթան, որո՛ց ձեռքն որ ընկնին, թէ ղօրագնդի, թէ ելուղակի, թէ թափառիկ ուխտաւորի հանդիպին, ուրիշ բան չեն կրնար լինիլ՝ այլ միայն նօրմաններ, այսպէս դու ալ մեծ նեղութենէ մը կ'ազատիս և հանդիստ կը գտնես :

— Հանդիստ մի գտնեմ խողերը նօրման դառնալով — յարեց Աիւրթ : — Խնդրեմ այդ կէտը մեկնէ ինձ, Աամսլա, վասն զի գլուխս հասա է և միտքս շփոթ, չեմ կարող հանելուկ մը գտնել :

— Ան, ինչ անուն կ'տաս այն խանչող անասնոց որ չորս ոտքով կ'քալեն — հարցուց Աամսլա :

— Խո՛ղ, խող կ'անուանեմ, յիմար դու — պատասխան տաւ խողարածը — խենդն անդամ այս բանս գիտէ :

— Բայց խող կ'ըսուի բուն սաքսօն լեղևով — յարեց միմոտը — ըսէ ինձ թէ ինչպէս կ'կոչես այն վարազը զոր կ'մտրթեն, կը ջարդեն և ոտքերէն դառաճանի մը պէս կ'կախեն :

— Խողենի — պատասխանեց խողարածը :

— Ես ալ կ'կրկնեմ որ խենդն անդամ գիտէ — ըսաւ Աամսլա — թէ խողենի բառը նոյն իսկ Փրանքօ-նօրման է, այսինքն՝ երբ այս կենդանին կ'ապրի և բնիկ Սաքսօն ստրուկ մը զայն

* Այն ատենները՝ նօրմաններու աշխարհակալութեան արդիւնք՝ անտառային խիստ օրէնքներ կային, որով երեք տարին անդամ մը շանց ճանկերը կ'խլէին որպէս զի աւատական իշխաններու երէին ետևէն շվաղեն, այս կանոնին հակառակ վարուող բնիկն երեք շիլին աուդանք կ'վճարէր :

կ'արածէ Սաքսօն անուանովը կ'կոչուի, բայց 'նօրման կ'դառնաւ
և խողենի կ'անուանի երբ աղնուականաց սեղանը կ'մեծարուի.
Տիմակ ասոր ինչ կ'ըսես դու Աիւթ բարեկամս :

— Ճշմարիտ է խօսքդ, Աամսյա, բայց քու թեթև խելապա-
տակիդ մէջ ինչպէս ծնաւ այդ իմաստը :

— Է՛հ, ուրիշ շատ մ'օրինակներ ալ կրնամ մէջ բերել —
ըսաւ Աամսյա նոյն ձայնով. ահա քեզ ատենակալ Օ+ն (եզ)
որ քեզի պէս ստրուկ եղած ատեն իր հին սաքսօն մականունը
կ'պահէր, իսկ Պէֆ (կով), այսինքն կրակոտ Ֆրանսացի կ'դառ-
նայ՝ երբ իր մեծարելի կլափներուն առջև կ'երևի՝ որոնք զինքը
ծամելու և կլլելու պաշտօն ունին, նոյնպէս պարոն Ք+ֆ (որթ)
պարոն Աօ կ'դառնայ. մէկ խօսքով սաքսօն է երբ արդարու-
թիւն կ'պահանջէ, նօրմանի անունը կ'առնու երբ զւարձու-
թեան առարկայ մը կ'լինի :

— Սուրբ Տօստանի վրայ կ'երդնում — պատասխանեց Աիւրթ
— որ դու տխուր ճշմարտութիւններ կ'յայտնես : Մեր բռնաւոր-
ները լոկ շնչելու չափ օդ ձգեր են մեզ և այս ալ ակամայ շք-
նորհեր են որ մեր կռնակին վրայ դրած բռները կրելու ոյժ
ունենանք : Ամէն բանի ընտիրն ու պարարան իրենց մառանին
համար, ամէն բանի սիրունն իրենց մահճին համար է : Մեր
ամենէն քաջ ու լաւ տանտէրներն իրենց օտար իշխաններուն
զինւորներ կ'տան՝ որ ոսկորնին հեռաւոր երկիրներ կ'թողուն,
և այս տեղ շատ քիչ քաջեր մնալով՝ կամք կամ ոյժ չունին
ողորմելի սաքսօնները պաշտպանելու : Աստուած կեանք տայ մեր
Սէտրիկ վարպետին, որ արիաբար մեզ պաշտպան կ'կենայ :
Բայց կ'ըսեն թէ Րէժինալտ Քրօն-տը-Պէօ անձամբ մեր բնիկ
երկիրը պիտի գայ եղեր, և քիչէն պիտի հասկցուի թէ որչափ
անհոգ պիտի դիտէ Սէտրիկի նեղութիւնը : Եկէք, եկէք — գո-
չեց նա վերստին — հա՛, հա՛, կտրիճ Քանկս, քաջ է. խողերը
առջևդ ձգեցիր, հիմակ առաջ քշէ նայիմ :

— Աիւրթ — ըսաւ միմօսը — դիտեմ որ զիս խենդի աեղ դրեր
ես, կամ այնքան յանդուզն չես որ զլուխդ ճանկիս տակ բե-
րես : Եթէ Րէժինալտ Քրօն-տը-Պէօի, կամ Քիլիսի Մալվուա-
զէնի խօսք մը միայն ըսեմ և իմաց տամ որ դառածան մ'ես,
անմիջապէս բանդ կ'բուսնի, կ'վաճառիս և սա ծառերուն մէ-

Տեղուն վրայ կ'որորւիս իբրև ահարկու խրատիլակ մ'այն շարաս
խօս մարդոց որ նախարարները կ'բանբասեն :

— Շո՛ւն — գոչեց Ախրթ — չէս մատներ զիս անշուշտ , քա
նի որ բանբասանքի պատճառ տուողը դո՛ւ ես :

— Ե՛ս մատներմ քեզ — պատասխանեց միմոսը — , այսպիսի
խաղ մ'իմաստունը միայն դիտէ խաղալ , յիմար մ'այդ հաշիւը
չկր'նար ընել : Բայց լո՛ւռ , ո՞վ են եկողները — յարեց նա —
շատ մը ձիերու դափրը մտիկ ընելով , որ նոյն պահուն կ'լուէր :

— Ա՛վ որ կ'ուզէ թող լինի — պատասխանեց Ախրթ , որ
նոյն միջոցին երամակը գումարեր , և Փանկս շան օղնութեամբը՝
դէպ 'ի մեր նկարագրելու փորձած անտառին մութ մէկ վայրը
քշելու վրայ էր :

— Բայց անհնար բան , պէտք է որ եկուլ ձիաւորները տես
նեմ — պատասխանեց Աամպա — կարելի է որ ձիներու աշխար
հէն կ'դան և Օսլրօն թաղաւորին կողմէն դիր մը կ'բերեն :

— Շուտիկը տանի քեզ — վրայ բերաւ խողպանը — , ինչու
այդպէս կ'խօսիս , երբ քանի մը մղոն հեռու սոսկալի ամպրոպ
կ'լուի և շանթաձիգ փոթորիկ մը պիտի բրդի : Մտիկ ըրէ ,
ինչպէս երկինք կ'որոտայ , և ես՝ ամառը՝ տեսած չէի բնաւ այս
պիսի անձրևի խոշոր կաթիլներ որ շիփ շիտակ վար թափին ,
նոյն իսկ կաղնիներն՝ թէև հով չկայ՝ կ'հեծեն , կ'շաչեն իրենց
լայն ոստերով՝ և կարծես թէ մրրիկը կ'աւետեն : Եթէ ուզես
խելքդ զլուխդ կ'ժողվես , անդամ մ'ալ խօսքիս միտ դիր , և
տուն դառնանք փոթորիկը մեզ չառնած , վասն զի ահուելի պի
տի լինի դիշերս :

Աամպա այս խօսքերուն ոյժն զղաց , և իր ընկերին հետը
զնաց , այս ալ ճամբայ ելաւ խոտին վրայէն երկձայր խոշոր
բիր մ'առնլէն ետև : Այս երկրորդ Եւմէն արտորնօք անտա
ռին մէկ ուղիէն յառաջ քալեց , Փանկսի օղնութեամբը քշե
լով իր խորթաձայն երամակը :

ԳԼՈՒԽ Բ.

Կար մէկ մենակեաց՝ սարսափ իր թեմին,
 Չիաւոր որսորդ՝ սիրող երէին.
 Մարդ էր քաջասիրտ՝ Աբրայ ահաւոր
 Շատ ձիեր ընտիր ունէր նա յախոռ,
 Իսկ երբ կ'արշաւէր՝ դառնաշունչ հովին
 Իր նժոյզին սանձ հնչէր սուր ուժգին
 Չանդակի մը պէս՝ սրբատուշ մատուան
 Ուր սուրբըն այս հայր պահպանէր խորան,
ՉՕՍԸԸ

6801-923

ԹԻՒՊԷՏ խողպանն ատեն ատեն կ'յորդորէր և կ'սաստէր
 իր ընկերին որ յառաջ քալէ, սակայն Աւամպա՝ քանի կ'լսէր
 ձիերուն դափրն որ կ'մօտենար՝ ճամբուն վրայ աստ անդ կ'դե-
 գերէր ամէն առթիւ, և մերթ կաղնիէն դէզ մը տհաս կաղին-
 ներ կ'քաղէր, մերթ գլուխը դարձնելով՝ նոյն ճամբէն անցնող
 գեղացի աղջկան մը ծուռ ծուռ կ'նայէր (leer). ուստի շատ
 չանցաւ ձիաւորները վրայ հասան:

Ամէնքը տաս հոգի էին, ընդ յառաջ քալող երկուքը խիստ
 նշանաւոր անձեր կ'երևէին, իսկ միւսները հեաւերդներ: Դրժ-
 ւարին չէր անոնց մէկուն պաշտօնն ու վիճակը հասկնալ, ակ-
 ներև կ'սեսնէր որ բարձրագիւր եկեղեցական մ'էր. Ախտորեան*
 կարդի կրօնաւորի հաղուստ դրեր էր, թէև՝ սոյն կարդին կա-
 նոնէն դուրս՝ իր զգեստն ընտիր կերպասէ շինւած էր: Իր վե-
 րարկուն ու կնդուղը՝ որ Ֆլանտրի խիստ լաւ չուխայէ կտրւած
 էր՝ լայն՝ այլ շնորհալի ծալքով իր վայելչակազմ՝ թէև փոքր
 ինչ գիրուկ՝ անձը կ'պարուրէր: Անձնուրացութեան նշան մը
 չէր երևեր բնաւ այս կրօնաւորին դէմքին վրայ, և ոչ աշխար-
 հային փառաց արհամարհանք մ'իր ընթացքին մէջ. կարելի
 պիտի լինէր ըսել թէ իր երեսին գծերն աղւոր էին, եթէ իր

* Այս կարգի կրօնաւորները Աբ. Պէնէտիկոսոսի ուխտին մէկ ծիւղն էին
 (1109ին):



աչքին կամարին (pen-honse) ներքև չտահէր այն նենդալի ե-
 պիկուրեան քթիթն որ զգուշաւոր հեշտասիրի մը նշմայրն է :
 Սակայն իր պաշտօնին և կայութեան բերմունքը սորվեցուցեր էր
 իրեն ըստ հաճոյս իր կերպարանը կազմել և հանդիսաւոր երես
 մ'առնուլ, թէև ՚ի բնէ առ հմանս ներողամտութեան ողի մը կը
 ցուցնէր : Իր կարդին կանոնաց, նոյնպէս պապերու և ժողովներ-
 րու հրովարտակներուն հակառակ՝ այս եկեղեցական իշխանին թե-
 ղանիքը աստառ ունէին և մուշտակապատ դարձած էին, վե-
 րարկուն վզին կողմէն ոսկի կոճակով մը դոցեր էր, իսկ իր ըզ-
 դեսանն միւս մասերն այնքան քնքուշ էին ու զարդարուն, որչափ
 են այժմու Գո-է-բո-հիէ* մը (գողգոջոտ) արդն ու զարդը, վասն
 զի գուէքրուհի մ'իւր աղանդին հաղուստը պահելով հանդերձ՝
 անոր պարզութեան այնպիսի փարեւի հրապոյր մը կ'տայ, թէ
 կերպասի ընտրութեան և թէ ձևին կողմէն՝ որ աշխարհային սնու-
 տեաց գրոշմն ակն յայտնի կ'ցուցնէ :

Այս արժանի եկեղեցականը հեծեր էր լաւասուն սիղաքայլ
 ջորի մ'որուն կազմածը չափէ դուրս զարդարուն՝ և՛ ժամանակին
 սովորութեան համեմատ՝ սանձն արծաթէ զանդակիկներ ունէր :
 Զորիին վրայ՝ քաջավարժ ձիաւորի մը յատուկ դիւրութիւն ու
 շնորհ կ'ցուցնէր քան վանականի մ'անձարակութիւնը : Ստուգիւ
 կ'երևէր թէ այս շնորհազարդ կրօնականը շիտակ ճամբաներէ
 ուղևորելու համար միայն այսպիսի ստորին հեծանելի մը կ'գոր-
 ծածէր, թէև լաւ վիճակի մէջ՝ և հանդիստ քալած մ'ունէր :
 Իր հեռւորդներուն մէջ՝ փոքրաւոր մը կար՝ որ՝ ուրիշ պարա-
 դայի համար՝ Անտալուղիա մարզւած՝ ընտիր նժոյգ մը հեան ա-
 ուեր էր, որոցմէ վաճառականներն Անկլիա կ'բերէին այն ժա-
 մանակ մեծ գծուարութեամբ և ծախսով՝ որպէս զի մեծաշուք ան-
 ձերու ծախեն : Այս փառաւոր երիւլարին թամբն ու ծածկոյթը
 երկար կապերաւով մը ծածկւած էր, որ զրեթէ մինչև գետինը
 կ'հասնէր և որուն վրայ թաղեր, խաչեր և ուրիշ կրօնական նը-

* Այսպէս կ'կոչւին՝ յԱնկլիա և յԱմերիկա՝ տեսակ մ'աղանդաւորներ որ
 անդադար կ'դրուէին Աստուծոյ դատաստանէն, ամէն եկեղեցական խորհուրդ
 կ'մերժեն, երգում չեն ընէր, փեղոյր չեն հաներ որ և է մարդու առջև, պա-
 կտերազմի չեն երթար, պարզ կ'ապրին և ամէն Գո-է-բո անխտիր, մարդ ու
 կին, կրնայ քարոզել իրենց ժողովարաններու մէջ, ժ.օրժ Փօքս՝ 1650ին հիմ-
 նեց այս աղանդը :
 Ծ. Թրդ.

շանախներ ոսկեթել բաներ էին : Ուրիշ փոքրաւոր մ'ալ բեռնակիր ջորի մը կ'քաշէր , որ անշուշտ իր մեծաւորին հանդերձանքը կ'կրէր . նոյն ուխտէն երկու ուրիշ ստորնադոյն կրօնաւորներ ետեէն կ'գային 'ի միասին , իրարու հետ խօսակցելով և ծիծաղելով և առանց իրենց միւս ընկերներուն ուշ գնելու :

Այս գերաստիճան կրօնականին ընկերը քառսուն տարեկանէն աւելի՝ վտիտ , ուժեղ , բարձր ու ջլուտ մարդ մ'էր . ըմբշային անձ մ'որուն յարատե հողերն ու կրթութիւնները մարդկային մասերէն ուրիշ բան չէին թողած վրան՝ այլ միայն մկանունք , ոսկր , ջիլ , որոնք հազար տեսակ նեղութիւն կրեր և նորէն կրելու պատրաստ էին : Իր գլխին վրայ կարմիր չուխայէ խոյր մը կար մուշտակապատ՝ այն տեսակէն զոր դաղղիացիք (mortier) կ'անուանեն՝ շրջեալ անկանի նմանելուն համար : Ուստի իր դէմքը բոլորովին բաց էր և անոր երևոյթը՝ եթէ ոչ երկիւղ՝ օտարներուն տեսակ մ'ակնածական ահ կ'աղղէր : Իր վէսերեսը՝ որ հուժկու և յետին ծայր աղգու էր՝ շարունակ արևագարձի տակ մնալէն՝ այրեր և դրեթէ խափշկի մը սևութիւնն առեր էր , այնպէս որ արդի վիճակին մէջ՝ կարելի է ըսել թէ՛ հանդարտ էր կրից փոթորիկն անցնելուն , սակայն իր ճակտին ուռուցիկ երակներուն ձեւէն՝ ամենաթեթև այլայլութեամբ իր վերին շուրթն ու խիտ պեխերն արագ շարժելէն՝ գիւրին կ'ընշակել որ իր ներքին մըրիկը կրնայ հեշտիւ նորէն դրդուիլ : Իր սուր , թափանցիկ սև աչերը՝ ամէն անգամ որ ակնարկ մը նետէին՝ կ'յայտնէին թէ քանի քանի սրտուարներ տապալեր , վտանդներու գիմադրաւեր էին , և կարծես թէ նոր նոր խոչընդոտներ իր իղձերուն դէմ առ դէմ կանդուն տեսնելու կ'փափաքէին՝ որ զանոնք իր ճամբուն վրայէն աւլեն սրբեն արիութեան և անվեհերութեան փորձ մը նորէն ցոյց տալու համար : Իր յօնքին վրայ տեսնւած մէկ խոր սալին՝ կերպարանին նոր դաժանութիւն և մէկ աչքին շարագոյժ երևոյթ մը կ'տար , վասն զի այս աչքը նոյն առթիւ թեթև մը վերաւորւեր՝ և տեսողութիւնը՝ թէև կատարեալ , անոր զիծը մասնակի թիւրեր էր :

Այս անձին հաղուստին վերի մասը՝ ձեւին կողմէն՝ իր ընկերինին կ'նմանէր՝ և վանակահ երկար վերարկու մ'էր . իր կարմիր գոյնէն կ'իմացէր որ կրօնաւորաց չորս ուխտէն և ոչ մէ-

կուն միարանն էր : Աերարկուին աջ ուսին վրայ մասնաւոր ձեւով կտրւած սպիտակ շուխայէ խաչ մը կար : Նոյն զղեւորը տարածեալ շապիկ մը , այս է վերտ զրահ մը ծածկեր էր՝ որ նոյն կերպ թեղնիք և թաթպան ունէր , և այնպէս սքանչելի ոլորւած և հիւսած որ մարմնոյ գիւրակոր էր , ինչպէս են աւելի լաւ նիւթերէ բանւած արդի մեքենադործ գուլպաները : Եր ազդրներուն առջի կողմը՝ որ վերարկուին ծալքերէն զոցւած չէին , նոյնպէս վերտով ծածկւած էր . իր ծնկերն ու ոտները շերտով կամ իրարու վրայ դրւած՝ բարակ սրողովատիկ պահարանակներով պահարաններ էին . իսկ վերտ զանկասկան մ'ոտից կոճէն մինչև ծունդը հասնելով՝ սրունդը կ'պաշտպանէր ամրապէս և այս ձիաւորին պատերազմական զէն ու զարդը կ'ամբողջացնէր : Երկար երկսայրի դաշոյն մը մէջքէն կախեր էր և այս էր միայն իր յարձակողական զէնքը :

Եր ընկերին պէս՝ այս ալ ջորիի վրայ չէր հեծեր , այլ ճամբու համար տոկուն գրաստ մը , որպէս զի իր ամենի մարտիկ երիվարը խնայէ , զոր ձիասկան մ'ետեէն կ'բերէր , թէև արդէն կաղժ էր ՚ի պայքար , և զլուխն անցուցած էր կռածոյ գլխակէրը (chamfron) և ճակտէն կարճ սլաք մը կ'ցցէր : Թամբին մէկ կողմէն կախուեր էր ոսկեկու սապար մը , միւս կողմէն ձիաւորին փետրազարդ սաղաւարան ու վերտ կնդուղը , երկթաթ թրով մը , զոր այն ատենի ասպետները կ'զործածէին : Երկրորդ ձիասկան մ'ալ իր մեծաւորին նիզակը բարձր բուներ էր , և որուն ծայրէն գրոշակ մը կ'ծածանէր , և իր վերարկուին վրայի խաչին նման խաչ մ'անոր վրայ կ'տեսնուէր : Նոյն ձիասկանը կ'կրէր նաև իր տիրոջը փոքրիկ եռանկխանաձև զրահն՝ որ վերի կողմը լայնիկ էր լանջ սրահարանելու չափ և անկից վար կ'նեղնար սրամէտ : Այս զրահը ծիրանի շուխայով մը ծածկւած՝ և հետեւապէս նշանաբանը տեսնել անհնար էր :

Այս երկու ձիասկաններուն կ'հետեւէին ուրիշ երկու սպասաւորներ , որոց սեռկ զէմքը՝ սպիտակ սպարոշն ու իրենց հազուստին արևելեան ձևը կ'ցուցնէին թէ Արևելքի հեռաւոր երկրի մը բնակիչներն են : Այս մարտիկին և հետևորդներուն տեսքը վայրագ էր և այլաճակ , իր ձիասկաններուն հաղուստը շքեղ , և սարակինացի սպասաւորներն ալ արծաթէ մանեակներ ունէին .

իսկ իրենց սեւթոյր մերկ բազուկներուն և սրուզներուն վրայ ալ նոյն մետաղէն բազայաններ : Հազուսանին մետաքսով բանաձէր , իրենց տիրոջ ճոխութիւնն ու կարևորութիւնը կ'յայտնէին , և անոր զինուորական պարզութեան հետ նշանաւոր հակապատկեր մը կ'ընծայէին : Աոր սուրեր կախեր էին՝ որ ոսկեդրուագ դաստակ և կամար ունէին , և իրենց պերճ և գեղաշէն օսմանեան դաշոյններն աւելի գերազանց էին : Ամէն մէկը թամբի աղեղին չորս ոտք երկայն սլաքներու կապոց մ'անցուցեր էր , որ պողովատիկ սուր ծայրեր ունէին , զէնք մ'որ շատ կ'գործածուի սարակինացւոց մէջ , և որուն անունը տակաւին կ'յիշուի էլ-ճէրի* ըսւած գուպարին մէջ՝ որ արևելեան երկիրներու յատուկ մարզանք մ'է :

Այս սպասաւորներուն երիվարներն իրենց պէս օտար էին : Սարակինոսեան ծագում , հետևապէս արապական ցեղէ էին , և իրենց քնքուշ անդամները , փոքրիկ դարշասլարի մազերը , նօսր բաշը , թեթև առձիգ շարժումները , երևելի հակապատակեր մ'ունէին այն լայն , յօդապինդ և ծանր ձիերուն հետ , որոց ցեղն այն ժամանակ Ֆլանտրի և Նօրմանտիաի մէջ կ'մշակէին , որպէս զի կուածոյ և վերտ զբահներ հազնող մարտիկները հեծնեն . եթէ այս ձիերն արևելեան նժոյզներու մօտ դուէին՝ պիտի կարծուէր թէ կոշտ մարմինը ստուերի քով դուեր է :

Այս հրօսին տարօրինակ երևոյթն ոչ միայն Աամպաի հետաքրքրութիւնը շարժեց , այլ և իր ծանրազուխ ընկերինը : Ախրթ կրօնականը տեսնելուն անմիջապէս հասկցաւ որ ծօրվօ վանքին վանահայրն էր , և բոլոր շրջակայ բնիկները գիտէին որ որսի , խնջոյքի , և եթէ անունին արատ չցար՝ նոյն իսկ իր ուխտին անվայել աշխարհիկ զուարճութիւններու սիրահար էր :

Սակայն այն ժամանակները՝ մարդիկ կղերին վարոյց վրայ այնպիսի թոյլ կարծիքներ ունէին որ Էյմէր վանահայրն իր մեհաստանին շրջակաները պանծալի անուն մը կ'վայելէր : Եր ազատ և զուարթ բնաւորութեամբն և ամէն սովորական մեղաց ներելու յօժարամտութեամբը թէ աղնուական և թէ աղատանի մարդկան աչքի լոյսը դարձեր էր , որոցմէ շատերուն արենակից կ'գտնուէր՝ ինքն ալ նշանաւոր նօրման գերդաստանէ մը սերած լինելուն : Ի մասնաւորի կիները տրամադիր չէին այս մարդուն

բարբն ու վարքը մանր քննել, քանի որ զեղեցիկ սեռին ակնե-
րև հողի կ'տար և սովորաբար հին աւատական զղեակներու սը-
րահներն ու հովանոցները սպրդող տաղտուկը փարատելու շատ
մը հնարներ դիտէր : Եյմէր վանահայրը՝ որսական զբօսանաց
չափէն աւելի հետամուտ լինելով՝ ներելի էր իրեն քաջավարժ
բազէներ, սրնթաց բարակներ ունենալ 'ի Նօրթ Ռայտին, և այս
ձիրքովն ազնուական երիտասարդութեան շատ մեծարելի կ'դառ-
նար : Իսկ պառաւներուն հետ՝ 'ի հարկին՝ ուրիշ դեր մը կ'խա-
ղար և արժանաւոր կերպով կ'կատարէր : Թէև դրոց հմտութիւնը
հարեանցի, սակայն իր կարծեցեալ զխտութեան մասին աղէտ-
ներու պատկառանք ազդելու չափ յաջողակ էր, իսկ միւս կող-
մէն այնպիսի ծանր վարմունք ու լեզու կ'բռնէր, և քահանա-
յութեան իշխանութեան վրայ ճառելու ատեն այնպիսի մեծաաստ
ձայնով մը կ'քարոզէր որ ամէնքը զանի սուրբի տեղ կ'դասէին :
Նոյն իսկ գուհիկ ժողովուրդը՝ որ իրմէ վեր եղող անձերուն ա-
մենէն անաչառ դատաքննիչն է, Եյմէր վանահօր յիմար գոր-
ծերուն արդահատութեամբ աչք կ'դոցէր : Եյմէր աւատասիրտ
էր, և ինչպէս որ յայտնի է ողորմասիրութիւնը շատ մը մեղ-
քեր կ'պարտկէ, թէև սուրբ զիրքն ուրիշ մարքով նոյնն ընել
կ'պատուիրէ : Ղանքին եկամուտները՝ որոց մեծ մասն իր ձեռքն
էր՝ իր յատուկ անբաւ ծախուց կ'վասնէր՝ զեղացիներուն ալ
պարդեներ տալով և շատ անգամ թշուառներ մխիթարելով կը
գործածէր : Եթէ Եյմէր վանահայրն որսին ետեւէն սրարշառ վա-
զէր՝ կամ հացկերոյթին շատ նստէր, եթէ Եյմէր վանահայրը՝
գիշերան ժամեր յատուկ ժամադրութեան տեղ մ'անցնելէն ե-
տե՛ այգուն դէպ 'ի տուն դառնար և վանքին ետեւի դռնակէն
ներս սահիլը տեսնէր, տեսնողներն իրենց ուսերը միայն կը
թօթվէին և անոր անկանոն ընթացքին հաշտ աչօք կ'նայէին,
մտածելով որ շատ վանականներ նոյնպէս կ'վարւին, թէև իրենց
վարմունքն անբասիր հանելու համար փոխարէն ընտիր յատկու-
թիւն մը չունին : Հետեապէս Եյմէր՝ իր բնաւորութեամբը մեր
Սաքսօն ստրուկներուն քաջածանօթ էր, որոնք կոշտ խոնարհու-
թիւն մ'ըրին և փոխարէն անոր « օրհնեալ լէրոս + , որդիներս » ըն-
դունեցան :

Բայց իր ընկերին և հետեւորդներուն տարօրինակ կերպարանը

խողարածին և Աամսրաին ուշադրութիւնն ու զարմանքը դրաւելով՝ հաղիւ թէ ասոնք Այսմէր վանահօր խօսքին միտ դրին՝ երբ սա հարց ու փորձ ըրաւ թէ՛ մօտ տեղւանք օթեան մը կայ արդեօք, այնքան հիացեր մնացեր էին սեաղէմ օտարականին կէս վանական կէս զինուորական դէմքին՝ և անոր արեւելցի սպասաւորներուն անհետեթ հաղուստին վրայ : Հաւանական է նաև՝ որ տրւած օրհնութեան ոճն ու խնդրւած տեղեկութիւնն իրենց ականջին խորթ հնչեց, թէ և սաքսօնեան ականջներ վարժ էին այն ձայնին :

— Չաւակներս, ձեզի հարցի — ըսաւ վանահայրը, իր ձայնը բարձրացնելով — եթէ այս կողմերը կ'դտնէ՞ արդեօք բարեսէր մարդ մ'որ՝ 'ի սէր Աստուծոյ և 'ի շնորհս մեր մայր եկեղեցւոյ՝ անոր երկու ամենախոնարհ սլաշտօնեաներուն և իրենց ծառաներուն մէկ զիշերի հասնար ասպնջականութիւն և ուտեստ շնորհէ :

Այս խնդիրն այնպիսի իրազէտ կարեւորութեամբ մ'արտասանեց որ անյարմար էին լիովին իր գործածած մեղմիկ ոճին հետ :

— Մայր եկեղեցւոյ երկու ամենախոնարհ սլաշտօնեաներ — կրկնեց Աամսրա մտովի, բայց որչափ որ յիմար էր՝ իր միաքը յայտնելու զղուշանալով — կ'փափաքէի տեսնել թէ ո՞յք են այն եկեղեցւոյն տան հաղարապետները, մառանապետներն և զլիսաւոր սպասաւորները :

Աամսրա՛ վանահօր խօսքին վրայ այս դիտողութիւնը լռիկ ընելէն ետև՝ աչերը վեր առաւ և եղած հարցումին այսպէս պատասխանեց .

— Աերապատուելի հայրեր, եթէ աղւոր կերակուր և կակուղ անկողին կ'ուզէք, կրնաք՝ քանի մը մղոն ևս յառաջ քշելով՝ Պրինքսօրթի վանատունը հասնիլ, և ձեր կարգին վայել ընդունելութիւն մը տեսնել, իսկ եթէ այս զիշեր ասպաշխարութեամբ անցնել լաւագոյն կ'համարիք, կրնաք՝ վարը՝ սա վայրի պուրակին կողմը զտրնել՝ և անկից շիտակ Վօքմանհուրսի մենարանը հասնիլ ուր սրբակրօն ձգնաւոր մը ձեզ իր տնակին ու ազօթից մտանակից պիտի ընէ այս զիշեր :

Ամնահայրն այս երկու առաջարկութիւնները լսելով՝ զլուխն օրեց ու ըսաւ .

— Բարեմիտ մարդ, եթէ բոժոժներուդ ձայնէն խելքէ թնտած

չլինէր, պիտի դիմնայիր որ clericus clericum non decimat. այսինքն, մենք եկեղեցականքս իրարմէ ասանջականութիւն չենք խնդրեր, այլ աշխարհականներէն, որով առիթ կ'ունենան ծառայել Աստուծոյ, անոր յատուկ պաշտօնեաները պատուելով և միտիթարելով:

— Իրաւ է, պատասխանեց Աամպա — որ ես որչափ որ աւանակ եմ՝ պատիւ ունիմ ձեր սրբութեան ջորիին պէս բոժոժներ կրել. բայց ես կարծէի թէ նախ մեր մայր եկեղեցին և իր պաշտօնեաները պարտաւոր են սղորմասիրութեան օրինակ տալ:

— Ապիրատ, լրբութիւնը մէկդի թող — ըսաւ սպառազէն զինւորականը՝ բարձր ու դաժան ձայնով մը միմասին խօսքը կտրելով — և ցցուր մեզ, եթէ դիտես, այն ճամբան որ . . . ինչ անուն ունի այն Ֆրանքլինդ, վանահայր իմ:

— Սէտրիկ — պատասխանեց վանահայրը — Սէտրիկ սպքսօնը. հիմա ըսէ ինձ, կարիճս, արդեօք անոր սունը մօտ է, և ճամբան կրնամ մեզի ցոյց տալ:

— Գժուարին է ճամբան դտնել — պատասխանեց Աիւրթ, որ առաջին անգամ բերանը բացաւ — և Սէտրիկի ընտանիքը շատ կանուխ կ'պառկի:

— Անչ, ինչ չնչին պատճառ է այդ, անպիտան — ըսաւ զինեալ ձիաւորը. — շատ դիւրին է անոնց արթննալ և մեզի պէս ճամբորդներու պիտոյքը հողալ, քանի որ չենք խոնարհիր մուրալ հիւրընկալութիւն մը զոր պահանջելու իրաւունք ունինք:

— Չդիտեմ — ըսաւ Աիւրթ խոժոռ դիմօք — եթէ պէտք է ցուցնել իմ տիրոջս սունն այն մարդոց, որ իբր իրաւունք կ'պահանջեն պատսպարան մը զոր ուրիշներն իբր շնորհ կ'հայցեն:

— Արդեօք ինձի հետ վիճաբանիլ կ'ուզես, դու սարսուկդ — ըսաւ սևադէմ զինւորը և իր երիվարին մտրակ տալով Աիւրթին կիսաշրջան մ'ընելու ստիպեց, նոյն պահուն ձեռքի փայտը վերցուց դեղջուկին լրբութիւնը պատժելու մտօք:

Աիւրթ վայրագ ու քինախնդիր ակնարկ մը շեշտեց անոր վրայ և դժնդակ այլ տատամտու շարժումով մը ձեռքը դանակին կանթին վրայ (hast) դրաւ. բայց Էյմէր վանահայրն իր ընկերին և խոզպանին մէջ ջորին քշելով կուռին առաջն առաւ:

— Կամայ, եղբայր Պրայն, սուրբ կոյս վկայ, քու կարծես

Թէ տակաւին Պաղեստին կ'դառնա, հեթանոս Թրքաց ու անհաւատ Սարակիստաց հետ կ'մաքաւիս : Մենք կղզեցիքս հարուածներ չենք սիրեր, սուրբ եկեղեցւոյ հարուածներէն զատ, ուրով իր սիրելիները կ'պատժէ : — Ասէ ինձ, բարեմիտ մարդ, — հարցուց Աւամպին դառնալով և իր խօսքին արծաթ դրամ մը միացնելով — ըսէ ինձ, ո՞ր է սաքսօն Սէտրիկի բնակարանը, անտարակոյս պիտի դիմնաս, և քու պարսաք է ուղևորի մը ճամբան ցոյց տալ, եթէ մեր հուիրական կարգն անդամ չունենայ :

— Իրաւ որ, պատակաւելի հայր — սրատասխանեց միմօսը — ձեր ընկերին սարակիստսեան զլուխն խմինէս վանեց ուղիւ ճամբան, և չեմ գիտեր թէ այս գիշեր ինչպէս պիտի դառնե՞ք մեր տան դուռը :

— Ա՛յշ — ըսաւ վանահայրը — եթէ կամք ընես կրնաս ցոյց տալ : Այս մեր վերապատուելի եղբայրը՝ սուրբ տեղեաց աղատութեան համար բոլոր կեանքը Սարակիստաց հետ կուռելով անցուց . Բէ՛ջը (տաճարական) ասպետներուն կարգէն է, ինչպէս որ լսած պիտի լինիս, ինքը կէս վանական, կէս գիւնոր է :

— Եթէ կէս վանական է — յարեց միմօսը — պէտք չէ որ ճամբուն վրայ հանդիպող մարդոց հետ այսպէս անվայել կերպով վարուի, երբ ասոնք իրենց չվերաբերող հարցումներու պատասխան տալու անդամ անփոյթ կենան :

— Նենգամտութեանդ կ'ներեմ — սրատասխանեց վանահայրը — օտա պայմանաւ որ Սէտրիկի բնակարանն ինձ ցույնես :

— Ատ ուրեմն — սրատասխանեց Աւամպա — այս ճամբան բռնեցէք զայէք, սուրբ հայրեր, մինչև որ տնկած խաչի մը հասնիք որ գեանէն կանդունի չափ բարձր է . ապա ձախ կողմը զարկէք, վասն զի այն խաչին մօտ չորս ճամբայ կայ, և յուսամ որ փոթորիկը չբրդած սրատսպարան դանէք :

Վանահայրն իր խմաստուն ուղեցոյցին շնորհակալ եղաւ, և հետևորդները ձիերնին մարակելով յառաջ անցան՝ որպէս զի փոթորիկը վրայ չհասած իջեան մը դառնեն : Մինչդեռ երիվարներուն դափրը կ'հեռանար, Աիւրթ իր ընկերին ըսաւ .

— Եթէ մեր վերապատուելի հայրերը ցոյց տուած շախիզ բռնեն այս գիշեր Ռօթէրվուտ չպիտի հասնին :

— Անշուշտ — սրատասխանեց կատակարանը ծիծաղելով — բայց

կրնան Շէֆֆիլտ հասնիլ՝ եթէ բազդ ունին, և այն քաղաքը շատ յարմար է իրենց համար: Մի կարծեր թէ այնպիսի անձարակ երէորդ մը (woodsman) լինիմ որ այժեմին սլահած վայրը շան ցոյց տամ, եթէ չեմ ուզեր որ զայն որս ընէ:

— Իրաւունք ունիս — ըսաւ Աիւրթ — վատ բան մը կ'լինէր եթէ Էյմէր՝ Բօվէնա տիկինը տեսնէր, և աւելի վատ՝ եթէ Սէտրիկ այն զինուոր քահանային հետ կուռի բռնէր, ինչպէս որ շատ հաւանական էր. բայց լաւ սպասաւորներու պէս կ'վայլէ մեզ մտիկ ընել, տեսնել և բան մը չըսել:

Հիմակ դառնանք ձիաւորներուն, ասոնք ստրուկներէն շուտով կ'հեռանան և Ֆրանքօ-նօրման լեզուով հետևեալ խօսակցութիւնը կ'շարունակեն.

— Ի՞նչ ըսել կ'ուզեն այն ստրուկներն իրենց անձուռնի լըրբութեամբը — հարցուց տաճարականն Էյմէր վանահօր — և ինչո՞ւ համար չթողեր որ զանոնք պատժեմ:

— Իրաւ որ, եղբայր Արայն — սլատասխանեց վանահայրը — դժուարին է ինձ սլատձառ մը մէջ բերել անոնցմէ մէկուն համար. յիմար մ'է նա, որ խելքին փչածը կ'խօսի, իսկ միւս գեղջուկը՝ այն վայրենի, դաժան և անհաշտելի ցեղէն կ'իջնէ, որոց մէկ քանին, ինչպէս որ ստէպ քեզի ըսեր եմ, նկուն սաքսօններու սերունդին մէջ կ'գտնուին, և որոց գերազոյն զուարճութիւնն է ամէն կարելի միջոցներով իրենց ասելութիւնը յայտնել յաղթողներուն դէմ:

— Լաւ մը ծեծ տալով՝ անոր քաղաքավարութիւն կ'սորվեցնէի — յարեց Արայն. — այս տեսակ ստամբակներու հետ վարելու վարժ եմ, մերք թուրք կալանաւորները Օտինի չափ վայրագ և անվարելի են, սակայն երկու ամիս միայն իմ գերապետիս հսկողութեան ներքե անցնելէն ետե՛ւ ամէնքն ալ դառնուկի պէս հեղ, հլու, պաշտօնասէր և հնազանդ դարձան: Հաւտա, վերասպատուելի, որ թոյնէ և դաշոյնէ զոյշ կենալ պէտք է, վասն զի երկուքն ալ ազատօրէն կ'գործածեն եթէ չնչին առիթ մը տաս:

— Իրաւ է — սլատասխան տաւ Էյմէր վանահայրը — բայց ամէն երկիր իր յատուկ սովորոյթն ունի, ոչ միայն Սէտրիկի նատ ճամբան չէինք իմանար զանոնք ծեծելով՝ այլ և ձեր մէջ

Մեծ կռիւ մը պիտի ծաղէր եթէ ճամբան ալ դանկինք : Ատ
յիշէ արդէն ըսածս . այն հարուստ Ֆրէնքլինը հպարտ , վէս ,
նախանձոտ և ցասկոտ է . մանաւանդ՝ աղնուականաց և նոյն իսկ՝
Ֆիլիպ Մալվուադէնի և Տէժինալտ Ֆրօն-ար-Պէօի պէս՝ դրա-
ցիներուն ոտխն է . իր տոհմին արտօնութիւններն այնչափ վէ-
սօրէն կ'սրաշտպանէ , և այնքան կ'սրարծի շիրվարտ՝ Նօթնապե-
տութեան այս անուանի ախոյեանէն շիտակ սերելուն՝ որ ամէն
մարդ զինքը Սաքսօն Սէտրիկ կ'անուանէ : Սէտրիկ սրարծանք կը
սեպէ որ ինքն այնպիսի ժողովրդեան մը զաւակն է որուն նախ-
նիքը շատեր կ'ուրանան՝ վախճալով որ սարուկներուն բաժին
ընկած խստութիւններուն մասնակից չլինին :

— Էյմէր — ըսաւ տաճարականը — դու փաղաքշուտ (gallant)
դեղադէտ , և սիրոյ խնդիրներու մէջ դուսանի մը չափ փորձա-
ռու մարդ մ'ես . բայց պէտք է որ այն անուանի Քօվէնան հրա-
շաղեղ կին մը լինի որպէս զի սրահելիք շափաւորութիւնս ու
համեստութիւնս փոխարինէ , եթէ հարկ է իր Սէտրիկ՝ ըմբոստ
հօրը պէս զեղջուկի մը սիրտը վաստկիլ :

— Սէտրիկ իր հայրը չէ — պատասխանեց վանահայրը — այլ
հեռաւոր աղղական մը . Քօվէնա՝ սրարծուկ Սէտրիկէն աւելի տոհ-
միկ դերդաստանէ մը կ'իջնէ , և մինակ թեթև արեւակցութիւն
մ'ունի անոր հետ : Բայց և այնպէս՝ Սէտրիկ անոր խնամակալն
է , մի միայն իր յատուկ ընտրութեամբը կարծեմ . սակայն իր
սանուհին աղջկանը պէս կ'սիրէ . անոր դեղեցկութիւնը քիչէն
դու ինքնին պիտի դատես , և եթէ իր գոյնին յատակութիւնը ,
և իր վսեմ , այլ անուշ կապոյտ աչերուն սպաւորութիւնը՝ չվա-
նեն յիշողութենէդ Պաղեստինի սեահեր օրիորդները , նոյնպէս
Մէհէմմէտի դրախտին հիւրէնները , ես ալ թող անհաւատ՝ և չէ
թէ եկեղեցոյ մէկ հարազատ զաւակը սեպիմ :

— Եթէ այդ պանծալի դեղեցկութիւնը նժարին մէջ կշուի և
չծուի , դիտես արդէն թէ մեր դրան ինչ է :

— Գրաւ դրինք — պատասխանեց վանահայրը — իմ ոսկի մա-
նեակս՝ տաս տակառ կիպրոսի զինիիդ հետ . այս տակառներն
իմս են անշուշտ , և որպէս թէ արդէն վանքին շտեմարանն ու
մեր ծերուկ Տընի մատակարարին բանալիին տակ լինէին :

— Սակայն ես պիտի լինիմ դատաւորը — ըսաւ տաճարակա-

նը — և ևս համարելով պիտի վկայեմ որ նախորդ Հոգեգալութեան տօնէն վեր անոր պէս դեղատէմ օրիորդ մը չեմ տեսած . մի՞թէ մեր գրաւն այս չէ : Աւանասայր , մանեակդ վտանգի մէջ է և Աշտի-ար-լա-Չուշի ձիարշախն մէջ այն ալ վզնակէս պիտի անցունեմ :

— Առաջ չէն շնորհ վաստիկէ — ըսաւ վանասայրը — և ապա ուղած իդ պէս գործածէ . քու անատ տրտասխանիդ կ'վտասահիմ , և իբր ասպետ և եկեղեցական ճշմարիտը կ'խոստովանիս անշուշտ : Սակայն , եղբայր , խօսքս մաիկ ըրէ , քիչ մը լեզուդ մարդավարութեամբ շարժէ , և մինչև այսօր անհաւատ կալանաւորի և արեւելեան դերիներու հետ ունեցած սովորական վարմունքդ մէկդի ձգէ : Այժմէ Յէտրիկ սաքսօնը թշնամանես , և քաջ գիտցիր որ թշնամանք մ'իսկոյն կ'զղայ , այնպիսի մարդ մ'է որ , ոչ քու ասպետութեանդ , և իմ բարձր սրաշտօնիս , և ոչ իսկ մեր սուրբ կարգին նայելով՝ երկուքնիս ալ իր տունէն կ'վճնակէ , և կէս գիշեր անգամ լինի , մեզ արտատաներուն հետ բնակելու կ'զրկէ : Վանաւանդ՝ զգուշաւոր եղիր Տօվէնան գիտելու ատենդ , վասն զի Յէտրիկ նախանձաղին սիրով կ'սիրէ զանի , և ե՞թէ թեթեւ կասկած մ'առնու , մեր բանը կ'լմնայ : Արսեն թէ իր միակ որդին հօրենական տունէն ձամբեր է գորավային աշօք այն աղջկան նայելուն , և կ'երեւի թէ հետուէն զանի սրաշտել , և Տիրամօր խորանին առջև ինչ խորհրդով որ կ'մտանաւնք՝ նոյնպէս անոր մօտիլ ներեւի է միայն :

— Շատ լաւ , բաւական է — ըսաւ տաճարականը — մէկ գիշերուան համար պէտք եղած զգուշութիւնը պիտի գործածեմ և նորատի օրիորդի մը պէս հեղիկ պիտի վարուիմ . իսկ մեզ՝ Համիտին և Աղսուլասին հետ՝ տունէն վճնակելու վտանգին գալով՝ վտասահ էր որ այդպիսի անսպասեհատութիւն մը տեղի չունենար , և մեր կայանը բռնելու համար բաւական ուժով եմք :

— Այնք չէ գործն այն աստիճանի բերել — պատասխանեց վանասայրը . — բայց ասա միմտին նշանակած գեանատունի խաւը , մինակ այս գիշեր այնքան մտած է որ մեր բռնելիք ձամբան դժուարաւ պիտի գանենք : Ասրժեմ թէ ձախ կողմէն զարնել պէտք է ըսաւ :

— Աջ կողմէն — ըսաւ Արայն — ե՞թէ լաւ կ'լիչեմ

— Ա՛չ, ձախ կողմն, անշուշտ ձախ կողմն է. կ'յիշեմ որ իր փայտէ սրովն սյնակէս ցցուց :

— Ճիշտ է. բայց սուրը ձախ ձեռքը բռնեք էր — ըստ տաճարակաւոր — և ուսին վրայէն ճամբան նշանակեց :

Երկուքն ալ իրենց կարծիքին վրայ կամակորու թեամբ կ'աճեցին, և ինչպէս որ կ'ապաստանէր այսպիսի սարսղայի մէջ՝ սպասաւորները կանչեցին և հարցուցին, բայց ասոնք ալ Աւամարին մօտ չդանակելով՝ ցոյց տւած ուղղութիւնը չէին տեսած : Ե վերջէ Պրայն բան մը դիտեց՝ զոր նախ մթին չէր տեսած, և ըստ.

— Ահա ասիկ խաչին ոտքը մարդ մը կայ որ կ'քնանայ կամ մեռած է. Հիւկօ, նիզակովդ շարժէ անդամ մը :

Այն ինչ շարժեց որ մարդն ոտք ելաւ քաջ Ֆրանսերէն գոչելով.

— Գու ս'ի որ ես, անվայել է քեզ իմ մամտութս վրդովել :

— Մինակ կ'ուղէինք հարցնել քեզի — ըստ վանահայրը — Ռօթէրվուտի ճամբան և Սէտրիկ սաքսօնին բնակարանը :

— Ես ալ այն կողմը պիտի երթամ — պատասխանեց օտարակաւոր — և եթէ ձի մ'ուներայի ձեր առաջնորդը կ'լինէի. վասն զի ճամբան տաժանելի, թէև ինձի քաջայայտ է :

— Մեր շնորհակալիքն ու վարձք պիտի ընդունիս, բարեկամ — ըստ վանահայրը — եթէ Սէտրիկին տունը տանիս մեզ անվտանգ :

Ուստի իր սպասաւորին մէկուն հրամայեց որ հետևակ ձին հեծնէ և իրն օտարակաւինն սայ, որպէս զի զիրենք առաջնորդէ :

Սակայն այս ուղեցոյցը՝ մնորեւզ գիտմամբ Աւամարին ցոյց տւած ճամբուն հակառակ ճամբայ մը բռնեց, որով անտառին աւելի խորերը մտան, քանի մը վտակէ անցան, թէև վտանգաւոր էին ձախձախուտ տեղերէ սահելուն, բայց օտարակաւոր՝ իբր բնազգումով հաստատ հողերն և ապահով կողմերը քաջ կ'ձանչէր. յետին զգուշութիւններ ընելով՝ առաջիններէն աւելի լայն ծառուղի մը բերաւ հասուց փոքրիկ խումբը՝ և միւս ծայրը երկցող ցած ու տձև շէնք մը ցոյց տալով վանահօր ըստ.

— Ահա այն է Ռօթէրվուտ, սաքսօն Սէտրիկին բնակարանը :

Այս լուրն Եյմէրին սիրտը բացաւ, վասն զի տոկուն մարմին մը չունէր և շատ նեղութիւն ու տազնայ կրեր էր վտանգ

դալի ճահիճներէն անցնելու ատեն, այնպէս որ իր ուղեցոյցին
և ոչ հարցում մ'ընելու հետաքրքիր եղեր էր: Բայց այժմ
սիրտը հանդարտ և պատասխարանն ալ մօտ դանւելուն, իր հե-
տաքրքրութիւնն սկսաւ գրգռիլ և ուղեցոյցին հարցուց թէ ո՞վ է:

— Ես ուխտաւոր մ'եմ և շիտակ Երուսաղէմէն կ'դառնամ —
պատասխանեց օտարականը:

— Աւելի աղէկ կ'ընէիր եթէ անդ մնալով սուրբ դերեզմանին
ազատութեան համար պատերազմէիր — ըսաւ տաճարականը:

— Իրաւ է, վերապատուելի ասպետ — պատասխանեց ուխտա-
ւորը, որուն շատ ծանօթ կ'երևէր տաճարականին կերպարանը, —
բայց երբ անոնք որ երգմամբ ուխտ ըրեր էին սուրբ քաղաքն
ազատելու, իրենց պարտքը չեն կատարեր և շատ հեռուն կ'թա-
փառին, ինչո՞ւ կ'զարմանաս եթէ ինձի պէս ստորին դեղացի մը
անոնց լքած պաշտօնէն կ'հրաժարի:

Տաճարականը ծանր պատասխան մը տալու վրայ էր, բայց
վանահայրը չթողուց և զարմանալով ըսաւ թէ ինչպէս իրենց
ուղեցոյցն երկար տարակայութենէ մ'ետքը, անտառին բոլոր
խորշերը միտքը պահած լինի:

— Ես այս կողմերը ծնած եմ — պատասխանեց ուղեցոյցը, և
այս պատասխանը տալու ատեն Սէտրիկին տան առջևը հասան:
Այս շէնքը՝ ցած և անկանոն՝ շատ մը բակեր ունէր և ահագին
տեղ մը բռներ էր. որչափ որ մեծութենէ կ'խմացւէր որ տան
տէրը հարուստ մարդ մ'է, սակայն դարձեալ բոլորովին տար-
բեր էր այն աշտարակաւոր զղեակներէն՝ ուր նօրման ազնուա-
կանները կ'բնակէին և որոց ձևը բոլոր Անկլիոյ ճարտարապե-
տութեան ոճը դարձաւ:

Սակայն Ռօթէրլուտ անպաշտպան չէր. այն վրդովալի ա-
տենները չկար բնակութիւն մ'որ իր ամբողջը չունենար, ապա
թէ ոչ հետևեալ օրը յաւար և 'ի հուր կ'մատնաւէր: Խորունկ
փոս մը բոլոր շէնքը կ'պատէր և մետակայ վտակէ մը ջրով կը
լեցւէր: Մօտաւոր անտառէն կտրւած սրածայր դերաններով
խրամատին ներքին և արտաքին եզրին վրայ պատնէշներ շին-
ւած էին: Արևմտեան կողմէն արտաքին պատնէշին վրայ դուռ
մը կար, որ ներքին պատնէշին դրան հետ շարժական կամրջ-
ջով մը հաղորդակցութիւն ունէր: Նոյնպէս առ զդուշութեան

այս դռները յից անկիւններու սրաշտպանութեան ներքեւ դուեր էին, որպէս զի ՚ի հարկին անոնց վրայ նետաձիգ և սարսաւոր մարտիկներ կեցնեն :

Այն դրան առջև՝ տաճարականն իր շեփորն ուժգին հնչեց, վասն զի անձրևն որ երկար ատենէ վեր կ'սպառնար, նոյն միջոցին սկսաւ բռնութեամբ վազել :

ԳԼՈՒԽ Գ.

Այն ատեն (տխուր սփոփանք) Գերմանիոյ ձովու Մանչուներ լսող ցրտաշունչ եղերքէն
Գեղնահեր, կապուտակն հասաւ սաքսօնն հուժկու :
ԹՕՄՍՕՆԻ — զարմարիւն :

ՉԱՓԷ դուրս երկար ու լայն՝ այլ շատ ցած սրահի մը մէջ կաղնիէ սեղան մը կար. այս սեղանն անտառէն կտրուած անտաշ և գրեթէ անողորկ փայտէ շինուած էր, և վրան սաքսօն Սէտրիկին երեկոյեան կերակուրը սպասրասա կ'կենար : Սրահն երկնից կամարէն զատող հեծանէ և դերանէ առաստաղը տախտակներով և յարդով միայն ծածկուած էր. ամէն մէկ անկիւն մեծ կրակ մը կ'վառէր, և որովհետև կրակարանները խիստ կոշտ կերպով շինուած էին, որչափ ծխահանէն՝ նոյնչափ ևս սրահէն մուխը դուրս կ'ելնէր : Այսպէս շարունակ ծխտակէն՝ դերանները մրտաեր և սև փայլ մ'առեր էին : Սրահին միւս երկու կողմերը ռազմական գէնքեր կախուած էին և իւրաքանչիւր անկեան մէջ երկթև գռներ կային որ այն ընդարձակ շէնքին միւս մասերուն կ'տանէին :

Իսկ այս բնակարանին միւս կտորները սաքսօնեան ժամանակին մի և նոյն կոշտ պարզութիւնն ունէին, պարզութիւն մը զոր Սէտրիկ անեղծ պահելու հող կ'տանէր : Գեափնը հող ու կիրով շաղւած և կոխուելով քարացած էր, ճիշտ մեր արդի ցորենի կաշերուն սալակապին պէս : Սրահին գրեթէ մէկ քառորդը գետնէն աստիճանով մը բարձր էր, և այս միջոցը՝ որ գար (platform) կ'կոչւէր, դերդաստանին և նշանաւոր այցելուներու յատկացած տեղ մ'էր : Այս նստատեղաւ կարմիր չուխայով պերճօ-

րէն ծածկւած սեղան մ'առ 'ի շեղ դուր էր դարին վրայ, և ասոր մէջ տեղէն աւելի երկար ու ցած սեղան մը կ'երկննար մինչև սրահին խորը, ուր սպասաւորներ և ստորին կարգի մարդիկ կերակուր կ'ուտէին, այս ամէնը Մի ձեն ունէր, կամ հինօրեայ ճաշի սեղաններու կ'նմանէր, որոց տեսակը տակաւին կը տեսնուին Օքսֆորտի և Քէմպրիձի վաղեմի դպրոցներուն մէջ: Քանդակաշէն կաղնիէ հոծ աթոռներ և բաղմոցներ նոյն դարատափին վրայ շարեր էին, և ասոնց ու բարձր սեղանին վերերը չուխայէ ամպհովանի մը կախւած էր որ նոյն պատուաւոր կայանը նստող մեծամեծները գէշ օղէն և մանաւանդ անձրեւէն կ'պահպանէր, վասն զի խարխուլ տանիստանին քանի մը տեղերէն ջուրը ստէպ կ'վազէր:

Սրահին այս վերի կողմի պատերը՝ դարին տարածութեամբ՝ օթոցներով և վարագոյրներով ծածկւած էին, դետինը դորգ կար, այս ամէնը փալփլուն, մանաւանդ շողշողուն գոյներով բանելու փորձ մ'ըրեր էին: Ստոր սեղանին վերերը՝ առաստաղը ծածկոյթ չունէր, անհարթ ծեփւած պատերը մերկ էին և դերբուկ հողն անդորդ, սեղանին վրայ փուոց չկար և անտաշ նստարաններ աթոռի տեղ կ'բռնէին:

Վերի սեղանին մէջ տեղը՝ միւսներէն բարձր՝ երկու աթոռ տեղաւորեր էին, մին տանտիրոջ և միւսը աիրուհիին համար՝ որ հիւրընկալ հացկերոյթին կ'նախադասէին, և այսպէս ընելով հաց քաշողներ կ'ըսէին, տիտղոս մ'որ սաքսօններու մէջ շատ պատուաւոր էր:

Ամէն մէկ աթոռի մօտ աթոռակ մը կար որ հետաքննին կերպով քանդակւած և փղոսկրով դրուաղած էին, մեծութեան նըշան մ'որ մինակ տանտէրներու յատուկ էր: Նոյն պահուն այս աթոռներէն մէկուն վրայ սաքսօն Սէտրիկ նստեր էր, որ թէև աստիճանով քնէն (գիւղապետ) կամ, ինչպէս որ նօրմանները կ'անուանէին Ֆրէնչիէն էր, սակայն ընթրիքին ուշանալուն վրայ այնպիսի ցասում մը կ'զգար որ նոր կամ հին ատենակալի մը թերևս վայելէր:

Տան տիրոջ դէմքէն կ'երևէր որ անկեղծ այլ բուն ու ցասկոտ մարդ մ'էր: Հասակը միջակ, բայց թիկնեղ, մեծաբազուկ և սնդակաղմ, և պատերազմի ու որսի նեղութիւններու տոկա-

ցող անձի մը պէս : Լայն երես , խոշոր կապոյտ աչեր , բաց
ու անսրատիր դժադրութիւն , աղւոր աղուաներ և դեղաձև դը-
լուխ մ'ունէր , և այս ամէնը կերպ մը զուարթութիւն կ'յայտ-
նէին որ ստէպ կրակոտ և խրոխտ մարդկան յատուկ է : Եր ա-
չաց մէջ հարարութիւն և կասկածոտութիւն կային , վասն զի
իր օրերն անցուցեր էր անդադար բռնութեան ենթակայ եղող
իրաւունքներ պաշտպանելու , և իր ժիր , վէս ու անվեհեր բնա-
ւորութիւնը միշտ արթուն կ'մնար իր վիճակին բերմունքէն : Եր
երկար դեղձան մաղերը՝ որ հաւասար բաժնւեր էին զլիսին դա-
գաթէն՝ երկուստէք ուսերուն վրայ կ'թափէին . դեռ ճերմակ չէր
ընկած անոնց մէջ , թէև Սէտրիկ վաթսունին մանելու մօտ էր :

Եր զգեստը կանաչ պարեգօտէ մը կ'բաղկանար՝ որուն օձիչն
ու թեղանիքը սպիտակ մաշկէ էին , այս է տեսակ մ'աքիսենիէ
վար մուշտակ մ'որ՝ ըստ երևոյթին՝ մխրազոյն սկիւրի օղիկէն
յառաջ կ'դայ : Այս պարեգօտն անկոճակ կ'երկննար բաձկոնա-
կի մը վրայէն որ մարմինն ամրապէս կը գրկէր . մի և նոյն կեր-
պասէ վարտիք հաղեր էր , որ հազիւ մինչև աղդըր կ'իջնէր և
ծունկերը մերկ կ'մնային : Գեղացիներուն պէս սանդալներ գրեր
էր , որ առջևէն ոսկի կոճակներով կասրած էին : Թւերն՝ ոս-
կեղէն ապարանջաններ , և նոյն մետաղէն հաստ մանեակ մը
վզին բոլորն ունէր . մէջքէն բևեռակապ սերձ դօտի մը կապեր
էր , որմէ կարձ , երկսայրի , սրածայր թուր մը կ'կախէր , այն-
պէս որ քովընտի շիտակ կ'կենար : Աթոռին ետևը մուշտակա-
սրատ ծիրանի չուխայէ վերարկու մը , և ոսկեհոռ սաղաւարտ մը
կախուեր էին . այս ամէնը հարուստ հողատէրին հազուստը կը
կազմէին՝ երբ դուրս ելնելու հարկ տեսնէր : Աարձ վարաղի տեղ
մ'որուն ծայրը լայն էր և փայլուն պողոպատիկ՝ աթոռին կոնա-
կը կռթներ էր . երբ տունէն դուրս ելնէր տանտէրն այս տեղը
կ'գործածէր՝ երբեմն դաւաղանի , երբեմն զէնքի տեղ , ինչպէս
որ դիպուածը բերէր :

Շատ մը սպասաւորներ , որոց հազուստը պէս պէս աստիճան-
ներ կ'ներկայէին տանտիրոջ կապուստին ճոխութեան և Ախրթ
խողարածին սրբղ և կոշտ հանդերձին մէջ , սաքսօն մեծատու-
նին աչքին մէջ կ'նայէին և անոր հրամաններուն կ'սպասէին :
Մէկ երկու բարձրագիւր ուղաներ՝ իրենց տիրոջ ետևը՝ ամպհո-

վանիին ներքե կեցեր էին, իսկ միւսները սրահին վարի կողմերը՝
Ուրիշ տեսակ ծառաներ ալ կային, ինչպէս երկու երեք խոշոր
և թաւ որսական բարակներ, եղջերու և զայլ որսալու տեսա-
կէն, նոյնչափ ալ տակուն ու ոսկրուտ շուներ՝ որ հաստ վիզ,
լայն գլուխ և երկար ականջներ ունէին. ասկէ զատ՝ մէկ կամ
երկու մանր շուներ որ այժմ կարճոտն շնիկներ (terrier) կ'կոչ-
ւին, անհամբեր կ'սպասէին կերակուրին. բայց շնական ցեղին
յասուկ դիմադիտութեամբ այս անասուններն իրենց տիրոջ մթին
լուծիւնը վրդովելու չէին յանդգներ, թերևս վախնալով Սէտ-
րիկի պնակին մօտ դրուած փոքրիկ սպիտակ դաւազանէն որ այս
չորքոտանիներուն ժպրհութիւնը պատժելու կ'ծառայէր: Միայն
ծեր և ալէզարդ զայլաշուն մը՝ մտերմի ազատութեամբ՝ զահին
մօտ դացեր նստեր էր և ատեն ատեն տիրոջն ուշը դրաւելու կը
յանդգնէր իր մազոտ գլուխն անոր ծնկաց վրայ դնելով կամ
ցուկն անոր ձեռքին մէջ մղելով. բայց Սէտրիկ այս շունն ան-
զամ վանեց սաստիւ. — Աւր Պօլար, վար իջիւր, քեզի հետ
խաղալու ախորժակ չունիմ՝:

Իրաւի, Սէտրիկ, ինչպէս որ արդէն ըսինք, նոյն միջոցին
շատ խնդումերես չէր: Օրիորդ Բովէնան՝ որ դուրս ելեր և հեռա-
ւոր եկեղեցի մը դացեր էր երեկոյեան ժամերգութիւնը լսելու՝
դառնալով անձրևէն թրջած զգեստը փոխելու կ'զբաղէր: Տա-
կաւին լուր չէին առեր Ալուրթի և երամակին վրայ, որոնք մին-
չև այն ատեն անտառէն դարձած սլիտի լինէին. իսկ այն ժա-
մանակներն ասպահովութիւն չլինելուն՝ վախ կար թէ արդեօք
անտառները թափառող ելուզակներու երեսէն այսպէս կ'ուշա-
նան, կամ դրացի Պետի մը բռնաբարութենէն որ իր ուժին
վրայ վստահելով՝ սեպհականութեան իրաւունքն առ ոտն կ'կո-
խէր: Ծանր էր այս խնդիրը, վասն զի Սաքսօն հողատէրնե-
րու առտնին դոյից մեծ մասը շատ մը խողի երամակներ էին,
որոնք մօտաւոր անտառները կ'երթային առատ ճարակ գտնելու:

Ասկէ զատ՝ սաքսօն գեղապետն՝ իր մտերիմ Աամպա միմոսին
ներկայութիւնը կ'ուզէր, որուն կատակներն անլի կամ աղի,
խմած դարեջրի և դինիի բաժակներուն պէս՝ իր երեկոյեան ըն-
թրիքը համեմելու կ'օգնէին: Պէտք է նաև յիշել որ Սէտրիկ
կէսօրէն վեր ծով էր և սովորական ընթրիքի ժամը բաւական

անցեր էր, և այս ալ բարկութեան առիթ մ'էր ոչ միայն հին, այլ և նոր տանտէրներու: Իր դժգոհութիւնը կ'յայտնէր Սէտրիկ կիսկաուր խօսքերով, երբեմն քթին տակէն կ'մրմուար, երբեմն իր չորս դին կեցող սպասաւորներուն՝ և մանաւանդ մատուակին կ'դառնար, և այս ալ՝ իբր հաշտարար միջոց մը, դիտելի արծաթէ թակոյկ մը կ'մեծարէր անոր:

— Բայց ինչո՞ւ համար օրիորդ Բովէնան կ'ուշանայ:

— Հաղուստը փոխելու վրայ է — պատասխան տուաւ սպասուհի մ'այնպիսի վստահութեամբ, ինչպէս կ'պատասխանէ մտերիմ սենեկասրանուհի մը մեր օրուան տանտիրոջ մը խօսելով.

— « Չես կամիր անշուշտ որ օրիորդն իր դդակովն ու լօղիկով սեղան նստի և բոլոր նահանգիս մէջ չկայ կին մ'որ իր վրան զլուխը տիրուհւոյս չափ շուտ շակէ »:

Այս անժխտելի առարկութեան սաքսօն տանտէրը հը՞ մ'ըրաւ հաւանութեամբ և յարեց. — Յուսամ որ քու բարեպաշտ տիրուհիդ աւելի աղւոր օդ մը կ'ընտրէ ուրիշ անգամ Ս. Յովհաննու եկեղեցին երթալու համար: Բայց ինչո՞ւ համար — շարունակեց նա, մատուակին դառնալով և ձայնը բարձրացնելով, այնպէս որ դո՛հ կ'երևէր իր բարկութիւնն անոր զլխին վրայ անսանձ թափելու, — ինչո՞ւ համար, յանուն տաս սատանայից, Աիւրթ այսչափ ատեն անտառները կ'ուշանայ, կարծեմ թէ երամակին փորձանք մ'եկած է, սակայն հաւատարիմ և խոհեմ սպասաւոր մը կ'երևէր այն թշուառականն և միտք ունէի զանի աւելի լաւ պաշտօնի մը հասցնելու, կարելի է որ իմ պահապաններուս կորդն անցընէի:

Օսվալտ մատուակն ակնարկեց թէ կրակաթաղն զանգակը զարնելէն վեր հաղիւ ժամ մ'անցեր էր, և այս ալ անպատեհ պատճառ մ'էր, քանի որ սաքսօն ականջներու շատ խորթ կ'հնչէր այս խնդիրը:

— Սատանան տանի — դոչեց Սէտրիկ, կրակաթաղը, զայն հաստատող բռնաւոր շնորդին, նոյնպէս անսիրտ ստրուկն որ սաքսօն լեղուով սաքսօն ականջի մը կ'զրուցէ: Արակաթաղը մի — կրկնեց նա — կրակաթաղն որ պարկեշտ մարդիկը կ'բռնադատէ իրենց լոյսը մարելու, որպէս զի դող ու աւազակ մթին դործեն, այո՛, կրակաթաղը, Բէժինալտ Ֆրօն-տը-Պէօ և Ֆի-

լիալ Մալվուադէն կրակաթաղին օղուտը քաղել զիտէին, Շնորդի Վիլյէմին պէս, կամ Հէսդինքսի ճակատամարտին պատերազմող որ և է բազդախնդիր զինուորի մը պէս: Քիչէն պիտի իմանամ կարծեմ, որ իմ արջառներս կողոպտեր են, որպէս զի սովալը լուկ ելուզակները կշտայնեն քանի որ իրենց տէրերը լուկ առ ու աւարով կարող են զանոնք կերակրելու: Անտարակոյս իմ հաւատարիմ ստրուկս սպաննած և երամակս իբր որս տարած են: Իսկ Աամսյա, ուր է Աամսյա, միթէ քիչ մ'առաջ չըսին ինձ որ Աիւրթին հետ դուրս ելեր է:

Օսովալտ հաստատական կերպով պատասխանելուն,

— Ա՛հ, բարի, եղ կապէ, սաքսօն մորոսն ալ յափշտակած են նօրման նախարարին ծառայելու համար: Բայց, իրաւի, ամենքս ալ մորոս, և մեր բռնաւորներու կողմէն քամահեղի և ծաղր ու ծանակ լինելու արժանի ենք, քանի որ կ'ծառայենք իբր թէ կէս խելքով ծնած ենք: Բայց վրէժս պիտի լուծեմ — յարեց նա իր աթոռէն ցատկելով անհամբեր՝ այս նախատինքը կասկածելուն վրայ, և իր տէգը ձեռք առաւ. — երթամ պիտի դանդաաթիմ բարձր ատեանին առջև: Բարեկամներ, կողմնակիցներ ունիմ և նօրմանը դէմ առ դէմ 'ի պայքար պիտի հրաւիրեմ: Թող դիմացս ելնէ նա իր զրահով ու վերտով, և վատութեան առնական գոյն տուող ինչ որ ունի թող հաղնի, այս ձեռքի տէգիս պէս տէգ մը՝ անոնց ռազմական վահանէն եռասրատիկ ամուր պատուարէ մը թափ անցուցի: Աարելի է կարծեն թէ ծեր եմ, բայց պիտի տեսնես որ, թէև մինակ եմ և անզաւակ, դեռ Հիրվօրտի արիւնը Սէտրիկի երակներուն մէջ կ'եռայ: Ա՛հ, Աիլֆրիտ, Աիլֆրիտ — դռչեց նա աւելի մեղմ ձայնով մը, եթէ անխորհուրդ սէրդ զսպելու կարող լինէիր, հայրդ այս ալևոր հասակին մէջ չէր մնար մենաւոր կաղնիին պէս՝ որուն բեկեալ և աննեցուկ ճիւղերն բռնաշունչ հովին ձգուած կ'տատանին: Աարծես թէ այս խորհրդածութեամբ Սէտրիկի զայրագին զգացումները տրտմութեան դարձան, ուստի իր տէգը տեղը դնելով՝ աթոռը նստաւ ակնկոր և կ'երևէր թէ մըթին մտմտութի մէջ կ'ծփար:

Սէտրիկ յանկարծակի ուշաբրեցաւ շեփորի մ'որոտալիւր ձայնէն, որուն պատասխան տուին՝ սրահին՝ նոյնպէս շէնքին այլ և

այլ կողմերը ցրուած բոլոր շուներուն աղմկալի հաջումները :
Հարկ եղաւ ճերմակ դաւազանին և սպասաւորաց օղնութեամբը
այս շնային դուռ ու դռչումը դադրեցնել :

— Գո՛ւրս ելէք, անպիտաններ — ըսաւ սաքսօնը յանկարծ,
երբ աղմուկը դադրելով սպաներն իր ձայնը լսելու կարող ե-
ղան : — Նայեցէք սա շեփօրն ինչ լուր կ'բերէ, շատ հաւանա-
կան է որ դողեր հողերս կոխած են, և կապուտ ու կողոպուտի
դոյժ մը պիտի իմանամ :

Պահապան մ'երեք վայրկենէ դառնալով իմացուց, & թէ
Թօրլօի Էյմէր վանահայրը, նոյնպէս Տաճարական ասպետաց ա-
րիասիրտ և պատկառելի կարգին հրամանատար՝ Պրայն տը Պուա-
Աիլպէր բարի ասպետը՝ քանի մը հետևորդներու հետ՝ մէկ զի-
շերուան համար ասպնջականութիւն և պատսպարան մը կ'խըն-
դրեն, վասն զի երկրորդ օրը Էշպի-տը-լա-Ջուշի մօտ լինե-
լիք նիզակամարտ հանդիսին ներկայ դտնուելու համար ճամբայ
ելեր են :

— Էյմէր, Էյմէր վանահայրը, Պրայն տը Պուա-Աիլպէր, —
մրմուաց Սէտրիկ — երկուքնին ալ նօրման են, բայց ինչ որ լի-
նին, նօրման կամ սաքսօն, Ռօթէրլուտի ասպնջականութիւնն
անբասիր պիտի դտնուի, և քանի որ այս օթեանն ընտրեր են,
բարի առաքեցան, սակայն առելի բարի կ'լինէր եթէ իրենց ճամ-
բան շարունակէին : Բայց անվայել բան է մէկ զիշերուան օթե-
ւանի և կերակուրի համար դանդաաիլ, քանի որ՝ իբր հիւր՝ նօր-
մաններն անգամ իրենց լայրշութիւնը զսպելու պարտաւոր են,
դնա՛, Հընդպէրդ — յարեց նա, տեսակ մը տնտեսի՛ որ իր ե-
տեր կեցեր էր ճերմակ բիր մ'ի ձեռին — դնա՛ վեց սպասաւոր
առ է օտարականները հիւրանոցը հրամցուր : Թող անոնց ձիերն
ու ջորիները խնամեն և հետևորդներուն պակասը հողան : Եթէ
պէտք ունին՝ թող փոխուելու համար լաթ տան անոնց, նոյն-
պէս կրակ, ջուր լուացուելու համար, դինի և դարեջուր : Հրա-
ման տուր նաև խոհակերին որ բան մ'առելցնէ մեր երեկոյեան
ճաշին, և բերէ սեղանին վրայ դնէ երբ նորեկ հիւրերը մեզի
հետ ճաշելու պատրաստ դտնուին : Հընդպէրդ, իմ կողմէս ըսէ
նորեկ հիւրերուն որ ես ինքս անձամբ պիտի դայի զանոնք ըն-
դունելու, բայց ուխտ ըրած եմ ամսհոյժանիէս երեք քայլէն ա-

ւելի յառաջ չանցնիլ որ և է մէկը դիմաւորելու՝ եթէ սաքսօնեան թաղաւորական ցեղէն չլինի : Հիմակ գնահատել որ ամէն խնամք տանին անոնց , որպէս զի գոռոզարար չըսեն թէ անոպայ սաքսօնն իր աղահաւթիւնն ու չքաւորութիւնը ցցուց :

Տնտեսը բազմաթիւ սպասաւորներով դուրս ելաւ . որպէս զի տան տիրոջ հրամանները կատարէ : — Եւ յմէր վանահայրը — կրկնեց Սէտրիկ Օսվալտին նայելով — եթէ չեմ սխալիր , Միտլհէմի տէր՝ Վայլս Մօլվըրրիի եղբայրն է :

Օսվալտ հաւանութեան յարդական նշան մ'ըրաւ : — Իր եղբայրն անոր տեղը կ'նստի և լաւագոյն տոհմի մը ժառանգութիւնը կ'դրաւէ , այս է Միտլհէմի Իւֆկարի տոհմը . բայց ո՞ր նօրման իշխանը նոյնը չպիտի ընէր : Ա'ըսեն թէ այս վանահայրն ազատախօս և զուարթ քահանայ մ'է , որ գինիի բաժակն ու շեփորն աւելի կ'սիրէ քան եկեղեցւոյ զանդակն ու աղօթագիրքը . լաւ , թո՛ղ հրամէ , բարի եկեր է : Բայց տաճարականին անունն ի՞նչ էր :

— Պրայն տը Պուա-Վիլպէր :

— Պուա-Վիլպէր — ըսաւ Սէտրիկ , շարունակ մտմտալով և իւրովի խօսելով , սովորութիւն մը զոր կ'դործածէր իրմէ ստորին կարգի մարդոց հետ սալրելուն , և որով այնպիսի անձի մը կ'նմանէր որ ինքն իրեն կ'խօսի քան թէ չորս գին զանուորներուն հետ : — Պուա-Վիլպէր , այս անունը հռչակ առած է թէ լաւութեան և թէ չարութեան կողմէ : Ա'ըսեն թէ իր ուխտին քաջաց քաջադոյնն է , բայց անոր սովորական մոլութիւններու արասն ունի , այսինքն է դուռը , ամբարտաւան , անդուծ , հեղդասէր , քարսիրտ մարդ մ'որ ոչ երկրիս վրայ երկիւղ գիտէ և ոչ երկնի ահը : Այսպէս կ'սրատմեն Պաղեստինէն դարձող քանի մը մարտիկներ : Փոյթ չէ , գիշեր մը միայն պիտի մնայ մեզի հետ , անոր ալ բարի եկար պիտի ըսեմ : Օսվալտ , պէտք է որ խիստ հին գինիին տակաւը բանաս , ամենէն լաւ մեղրմպելին , (mead) զօրաւոր դարեջուրը , համեղ Բիւշար-իլ , (morat) փրփրալի մրդողին , և հոտուէտ համեմագինին (pigments) մեծարես . խիստ խոշոր դաւաթներ լեցուր , տաճարականներն ու արբաները ալ ուր գինին ու աղւոր ծամոցը կ'սիրեն : Ելթիթա , գնահատելով Տովէնաի իմաց տուր որ այս իրկուն իրեն չպիտի սպասեմ սրահը՝ եթէ դալու փափաք չունի :

— Բայց կարծեմ թէ մեծ փափաք ունի — պատասխանեց Էլժիթա շտապաւ — վասն զի խիստ հետաքրքիր է Պաղեստինի լուրերն իմանալ :

Սէտրիկ այս ժպիրհ սպասուհւոյն զայրազին ակնարկ մը նետեց , բայց Բովէնան և իր ամէն պարագաները Սէտրիկի բարկութենէ ազատ էին : Ուստի տանտէրը պատասխանեց միայն — Ա՛հա կեցիր , աղջիկ , լեզուդ խելքէդ մեծ է : Գու գնա՛ իմ պատուէրս տիրուհւոյդ յայտնէ , և ինքն ինչպէս որ կ'ուզէ այնպէս ընէ : Գոնէ այս տան մէջ թաղուհւոյ պէս կ'տիրէ Ալֆրէտէն իջնող օրիորդ մը » : Էլժիթա սրահէն դուրս ելաւ :

— Պաղեստին . կրկնեց Սէտրիկ — Պաղեստին , քանի՛ քանի մարդիկ ականջ կ'կախեն այն վէպերուն զոր վատշուէր խաչակիրներ , կամ կեղծաւոր ուխտաւորներ այն աղէտաբեր երկրէն կ'բերեն : Ես անդամ թերևս հարց ու փորձ ընեմ , ես անդամ թերևս սիրտ 'ի թունտ մտիկ ընեմ այն առասպելները՝ զոր նենգամիտ թափառականներ կ'հնարեն որպէս զի մեր տան մէջ հիւրընկալ օթեան մը ձեռք ձգեն , բայց ո՛չ , իմ հետս որդիս , այլ ևս չէ իմ որդիս , անոր ճակատադրին անտարբեր եմ , ինչպէս որ անդգայ եմ միլիոնաւոր ելուզակաց յետնադուհին համար՝ որոնք իրենց ուսին վրայ խաչ մը դրին , անհնարին ջարդ ու կոտորած տուին , և ասով Աստուծոյ կամքը կ'կատարենք ըսին :

Եւ Սէտրիկ իր ճակատը խորշոմեց , և պահ մ'իր աչերը գետին սևերեց : Երբ վեր նայեցաւ , սրահին ծայրը գտնուած դուռը կռնակի վրայ բացուեցաւ , և նոյն երեկոտեան հիւրերը ներս մըտան , տնտեսին ու չորս ջահակիր սպասաւորներու առաջնորդութեամբը :



ԳԼՈՒԽ Գ.

Ոչխար, թաւ այծ կ'մորթէին և խոզեր,
 Գիրուկ մոզի՞ղետին տապաստ կ'արիւնէր.
 Առ էր խարոյկ, կ'եփէր խորտիկ մաս առ մաս
 Գինի վարդոյն կ'բոլորէր ամենալիթ թաս:

 Ինքն Ողիս հեռի նստած կ'ուտէր ճաշ.
 Սեղան շնչին և ակթուակ իսկ անտաշ,
 Կ'տար անոր Տէլէմար

ՈՂԻՍԱԿԱՆ, Հ-ՔԵՐ. Ի.

ԷՅՄԷՐ վանահայրը պատեհ առիթ գտնելով իր ձիաւորի պարեգօտը փոխեր և պերճագոյն մը հագեր էր, իսկ ուսերուն վրայ ասեղնակերտ լօշիկ մը կ'կրէր: Իր կրօնական աստիճանին յայտարար ոսկեձոյլ մասնիէն զատ՝ մատերը մեծադին գոհարներով զարդարեր էր՝ իր ուխտին հակառակ, իր սանդալները Սպանիոյ գերազնիւ կաշիէ յօրինուած էին, իր կարդին ներածին չափ մօրուսը կարեր, և իր կուլակն ընտիր բանուած ծիրանի խոյրով մը ծածկեր էր:

Տաճարական ասպետին կերպարանն ալ փոխուեր էր. թէև անոր չափ ուշադիր չէր զարդարուած, սակայն դարձեալ իր հագուստը նոյնպէս ճոխ և տեպն իր ընկերէն աւելի ահեղ էր: Իր վերտ շապիկը հաներ և մուշտակապատ մութ ծիրանի մետաքսէ բաճկոն մը դրեր էր, որուն վրայ իր բազմաձայլ և ձիւնի պէս սպիտակ երկար պարեգօտը կ'ծածանէր: Իր ուխտին եօթնածայր խաչը սև թաւիշէ շինուած էր վերարկուն ուսին վրայ: Իր երկար զգակն այլ ևս չէր ծածկեր ճակատը, զոր սևաթոյր ու խիտ դուռղ մաղերը կ'բոլորէին և իր սևուկ երեսին կ'յարմարէին: Իրաւի իր քալուածն ու կերպերը շնորհալի և վսեմ սխտի երեւէին, եթէ տիրական դուռղութեան դրոշմը չկրէին, զոր անդիմադրելի իշխանութիւն մը վարելով ստացեր էր:

Այս երկու մեծաշուք անձերուն կ'հետևէին իրենց յատուկ ըստապատուորները, իսկ իրենց ուղեցոյցն երկչոտութեամբ ետև մնացեր էր և իր կերպարանին նշանաւոր դրոշմն էր մի միայն ուխտաւորի մը սովորական վերարկուն: Բոլոր մարմինը հաստ սև բրէ գրգլիով մը ծածկեր էր: Այս գրգլիին ձևը դրեթէ ար-

դի հիւսարի մը թիկնոցին կ'նմանէր, թեւերը դոյելու համար մի և նոյն դրօշներն (flap) ունէր և Ս+լուվճեան վերարկու կ'կոչուէր: Իսկ իր հազուատին միւս մասերն էին, մերկ ոտիցը վրայ լարերով կցուած կոշտ սանդալներ, լայն և հովանուտ գլխարկ մ'որուն բոլորաիքը խեցիներ կարեր էր, և երկար բիր մ'երկաթակուռ՝ որուն վերի ծայրն արմաւենիի ոտտ մը կապեր էր: Ամենէն ետքը սրահ մտնելով՝ ուխտաւորը գիտեց որ ստոր սեղանին աթոռները հազիւ թէ Սէտրիկի և հիւրերուն սպայից կը բաւէին, ուստի դնաց մեծ կրակարանին մօտ՝ և դրեթէ վերեր գրուած նստոց մը՝ և կարծես թէ իր լաթերը չորցնելու կ'ըրադէր, մինչև որ սեղանին մէկ աթոռը պարաս մնայ և կամ հիւրասէր տնտեսը դայ իր նստած տեղն իրեն քիչ մ'ուտելիք բերէ:

Սէտրիկ ոտք ելաւ իր հիւրերն արժանապէս ընդունելու, և դարէն վար իջնելով՝ երեք քայլ առաւ դէպ յառաջ և անոնց դալստեան սպասեց:

— Պատուարժան հայր, կ'ցաւիմ, ըսաւ Սէտրիկ, որ իմ ըրած ուխտս չներեր ինձ այս իմ նախահարցս սալայատակին վրայ քանի մը քայլ ևս առնլու՝ նոյն իսկ քեզի և Ս. Տաճարին այս ասպետին պէս հիւրեր հիւրընկալելու համար: Բայց իմ տանս տնտեսը բացատրած է ձեզ անշուշտ իմ այս ակամայ անմարդավարութիւնս: Նաև կ'աղաչեմ ձեզ ներել ինձ որ իմ մայրենի լեզուս կ'խօսիմ, և կ'հրաւիրեմ ձեզ որ՝ եթէ գիտէք՝ նոյն լեզուս պատասխան տայիք, ապա թէ ոչ, նօրման բարբառը բաւական հասկնալուս կարող եմ ձեր միտքն ըմբռնել:

— Արժանի Քրէնքլին, կամ ներէ ինձ ըսելու, արժանի Տըհէյն, թէ և այս տիտղոսը շատ հին է, ամէն ուխտ անլոյծ պէտք է մնայ: Ուխտ մը մեզ երկնից հետ կապող զօրն է, լարեր են որով զոհը խորանին կ'կապեն, և հետեապէս, ինչպէս որ արդէն ըսի, հարկ է որ ուխտդ անդրժեղի պահես և կատարես, միայն թէ մեր եկեղեցին հակառակ վճիռ չ'արձակէ: Իսկ լեզուի դալով՝ յօժարակամ կ'խօսիմ այն լեզուն որով իմ արդոց հանիս, Հիլտա Միտլհէմ կ'խօսէր, որ սրբուհիի մը պէս մեռաւ և դրեթէ իրեն համանուն բարեյիշատակ Ս. Հիլտա Ա. թիթային կ'նմանէր. Աստուած լուսաւորէ իր հոգին:

Երբ վանահայրն իր խօսքն՝ զոր հաշտարար յորդորակ մը կը

համարէ՞ր, աւարտեց, իր ընկերն համառօտ և խրոխտ կերպով մ'ըսաւ. — Ես միշտ դադղիւարէն կ'իսօսիմ, Տիչարտ թագաւորին և իր ազնուականաց լեզուն, բայց անկլիւարէն ալ բաւական հասկնալուս՝ երկրիս բնիկներուն հետ կարող եմ նոյն լեզուով բանակցիլ:

Սէտրիկ իր խօսակցին այնպիսի արագ և զայրադին ակնարկ մը նետեց որ երկու նախանձորդ ազգերու մէջ ստէպ հակառակութեան ողբոյն արդիւնքն էր. սակայն հիւրընկալութեան պարտիքը յիշելով, իր քէնը ծածկեց և ձեռքի շարժումով մը հրամայեց իր հիւրերն որ դահէն քիչ մը վար՝ բայց իր երկու կողմը դրուած ուրիշ երկու աթոռներու վրայ բազմին, և երեկոյեան ընթրիքը բերելու նշմայր մ'ըրաւ:

Երբ սպասաւորները Սէտրիկի հրամանը կատարելու կ'շտապէին, հեռուէն խողարած Աիւրթը նշմարեց, որ իր Աամսպա ընկերին հետ նոր կ'մանէր սրահէն ներս: — Սա թափառիկ ապիրասաներն ինձի զրկեցէ՛ք — ըսաւ սաքսօն Սէտրիկն անհամբեր »: Եւ երբ յանցաւորներն իր առջևն ելան: — Ի՞նչ պատճառաւ, դո՛ւք, անպիտան անզղամներ, այսչափ ուշ դարձաք: Արդեօք երամակդ տուն բերի՞ր, վարպետ Աիւրթ, թէ ոչ աւազակներուն ճարակ եղաւ:

— Շնորհ, ըսաւ Աիւրթ, երամակն ողջ առողջ է:

— Բայց անշնորհ բան մ'է, թշուառական, — ըսաւ Սէտրիկ — որ քու պատճառաւ երկու ժամ ուրիշ կասկածներու մէջ մտայ և այս տեղ նստած վրէժ տունլու հնարք մտածեցի դրացիներու դէմ՝ կարծելով թէ մեղապարտ են: Ահա իմաց կ'տամ քեզ որ եթէ ուրիշ անդամ այսպիսի բան մը պատահի շղթայակապ բանաւ պիտի նետեմ քեզ:

Աիւրթ իր տիրոջ ցասկոտ բնաւորութիւնը դիտնալով՝ ինքզինքն արդարելու չելաւ. բայց միմօսն՝ իբր յիմար արտօնութիւններ ունենալուն՝ կրնար Սէտրիկի ներումը ստանալ, ուստի Աիւրթին և իրեն համար սրատասխանեց, — Իբաւի, տանտէր Սէտրիկ, այս իրկուն կրակ ու բոց կ'թափի բերնէդ:

— Ինչպէս, պարոն — ըսաւ տանտէրը — եթէ դու ալ խենդ ու խելառ թափես, քեզ դձնապահին քովը պիտի զրկեմ որ լաւ մը լուայ:

— Նախ, դու իմաստութեամբդ դատէ — ըսաւ Աւանդա — արդար և օրինաւոր է արդեօք ուրիշի մը յանցանքին համար մարդ մը պատժել :

— Հարկաւ արդար չէ, յիմար — սրտասխանեց Սէտրիկ :

— Ուրեմն, ինչո՞ւ համար խեղճ Ախրթը պիտի կապկպես իր Ֆանկս շան յանցանքին համար. վասն զի կ'երդնում որ ճամբան վայրկեան մը շկեցանք մեր խողերը ժողվելէն ետև, թէև Ֆանկս տակաւին ժողովելու չէր յաջողած երբ երեկոյեան զանգակը կ'զարնէր :

— Ուրեմն Ֆանկսը կախեցէք — ըսաւ Սէտրիկ, յանկարծ խողարածին դառնալով — քանի որ յանցանքն անորն է, և դու ուրիշ շուն մը դտիր :

— Շնորհ ըրէ, տէր իմ, — ըսաւ միմոսը — հիմակ ալ արդարութեան քովէն կ'անցնիս. վասն զի ինչ ընէ Ֆանկսը՝ եթէ կաղ է և խողերը չէ կարող շուտով ժողվել. բուն յանցանքն անոր առջևի ոտքին երկու ճանկերը կտրողինն է. անտարակոյս այս դործողութեան չէր հաւաներ խեղճ կենդանին թէ որ իրեն կարծիքը հարցնէին :

— Բայց որ յանդուզն մարդն իմ ստրուկիս շունն այսպէս հաշմեց — սրտաց սաքսօնը բարկութենէ բորբոքած :

— Միթէ կ'հարցնես, այն մարդը Հիւպէրդն է — ըսաւ Աւանդա. — Քիլիպ Մալվուազէնի անլէորդը : Մինչդեռ Ֆանկս անտառը կ'չրջէր, բռնեց զայն, և ըսելով թէ եղջերու կ'որսայ իր աիրոջը հողերուն վրայ, անոր ճանկերը խլեց :

— Սատանան տանի Մալվուազէնն և անդէորդն ալ միասին — սրտասխանեց Սէտրիկ, — ես անոնց պիտի իմացնեմ որ՝ անտառային դաշանց ուժովը՝ այն պուրակներն ազատ են : Բայց թողունք առ այժմ խնդիրը մէկզի : Գնա՛, ասլիրատ, տեղդ դնա՛, իսկ դու, Ախրթ, ուրիշ շուն մը դտիր, և եթէ որսասլահն անոր դպելու յանդդնի, չափը պիտի տամ, վատի տեղ անցնիմ եթէ անոր աջ ձեռքին բթամատը չկտրեմ, այնպէս որ ուրիշ անդամ աղեղը լարելու անկարող լինի : Բայց ներում կ'իմնդրեմ ձեզնէ, արժանի հիւրերս. կ'սեսնես, աղնիւ ասպետ, չորս կողմն այնպիսի դրացիներ ունիմ որ Ս. տեղեաց անհաւատներէն վար չեն մնար : Սակայն ահա մեր սարդ կերակուրը սե-

զանին վրայ է, հրամայէք և թող հիւրասիրութիւնս անհամ ընթրիքիս պակասը լեցնէ :

Սակայն սեղանին վրայ դրած համադամները տանախրոջ կողմէ դովեստի կարօս չէին : Այլ և այլ կերպով եփած խոզի միսեր սեղանին ստոր կողմը կ'երևէին, իսկ վերի կողմը՝ հաւ, եղջերու, այծ, ճագար, պէս պէս ձուկեր, նոյնպէս ասագին հիւաններ, գրտակ և զանազան պտուղներէ շինած քաքարներ : Իսկ մանր մունր որսի հաւերը, որ առատ էին, պնակներով չէին մեծարեր, այլ սպասաւորները շամփուրներու վրայ բերելով՝ հեա զհետէ հիւրերուն կ'ներկայէին և ասոնք ալ ուզածնուն չափ կը կտրէին կ'ուտէին : Ամէն նշանաւոր անձի մօտ արծաթէ թակոյկ ո՞ր դրուած էր. իսկ վարի սեղանին վրայ՝ բաժակի տեղ մեծ եղջիւրներ շարեր էին :

Այն միջոցին որ կերակուր ուտելու պիտի սկսէին, տնտեսը՝ յանկարծ դաւազանը բռնաւորով՝ բարձր ձայնով ըսաւ. — «Ներեցէք, տիրուհի Տովէնան կ'ղայ, տեղ բացէք» : Սրահին վերի ծայրը՝ սեղանին ետեւն կողմնակի դուռ մը բացուեցաւ անմիջապէս, և Տովէնա՝ հետն ունենալով չորս սպասուհիներ՝ ներս մտաւ : Սէտրիկ թէև զարմացաւ և նոյն միջոցին իր սանուհւոյն երևիլը թերևս անհաճոյ երևցաւ իրեն, սակայն զանի դիմաւորելու փութաց և ակնածելի քաղաքավարութեամբ տարաւ նրստեցուց տան տիրուհւոյն յատկացած աջ կողմի աթոռին վրայ : Ամենքն ուք ելան տան տիկինն ընդունելու, և այս ալ հիւրերուն մարդավարութեամբ անձայն բարև մը տալով սրատասխանելէն ետև՝ շնորհալի կերպով յառաջ անցաւ սեղանին մօտ իր աթոռը նստելու : Բայց տակաւին այս գործողութիւնը չ'լմընցած՝ Տաճարականը վանասօր ականջին փափաաց : — Անայիմ որ գուպարին մէջ քու ոսկի մանեակդ չպիտի կրեմ, և Գիոսի դինին վասակեցար :

— Ես քեզի չըսի՞ — պատասխանեց վանահայրը — բայց մեզմէ հիացումդ, Գրէնքլինը քեզ կ'ղիտէ :

Պրայն տը Պուա-Վիլպէր՝ վանահօր այս ազգարարութիւնը բանի տեղ չդրաւ, և մի միայն իր կրից դրդման հետևելով սաքսօն օրիորդին վրայ աչերը սևերեց, որուն դեղնցկութիւնն իր երևակայութեան այնքան հրասպառելի կ'երևէր՝ որքան որ ա-

րևելեան սուլթանուհիներուն ազդորութենէ չափազանց կ'ստար-
բերէր :

Գովէնա իր սեռին ամէն ձիրքը պահելով՝ բարձր՝ սակայն աչ-
քի զարնելու չափ չէր հասակը : Երեսին գոյնն էր ընտիր սպի-
տակ . բայց իր դժագրութեան և դլխին աղնիւ տիպարը չունէր
բնաւին այն անհամութիւնն որ սովորաբար ճերմակ գիւմաց յա-
տուկ է , իր բաց կապոյտ աչերն որ , շնորհազեղ խարտեշ ուն-
քերուն ներքե՛ բաւական նշմարելի էին իր ճակտին աղնուութիւն
մը զրոշմելու , սէր ու մորմոք , նոյնպէս ակնածութիւն և դութ
ազդելու կարող կ'երևէին : Թէև իր գէմքին բնական երևոյթն
անուշութիւնն էր , սակայն ակն յայտնի կ'երևէր թէ այս պա-
րազայիս մէջ՝ նորատի սաքսօնուհին անդադար տան մէջ իշխե-
լուն և ամենուն կողմէն մեծարանք ընդունելուն՝ իր բնաձիր բնա-
ւորութիւնը փոխեր և աւելի վէս կերպարան մը ստացեր էր :
Իր առատ մազերն որ ոչ թուխ էին և ոչ դեղձան , քմածին
և շնորհալի գանգուրներով տրոհեր էր , և արհեստը բնութեան
օղնած էր անշուշտ : Այս գանգրալի մազերն՝ սփռու ազամանդ-
ներով զարդարուն՝ վերէն վար թափեր էր հերարձակ , և որմէ
օրիորդին տոհմիկ ծնունդն ու անկախ կացութիւնը կ'յայտնուէր :
Ոսկի օղակ մ'որմէ նոյն մետաղէն մասունք մը կախուած էր՝ իր
վզին բոլորը կ'երևէր : Ապարանջաններ ունէր թևերն որ մերկ
էին : Իր հազոպսան էր ծավաղոյն բաց կանաչ մետաքսէ պարե-
գօտ մ'որուն վրայէն մինչև գետինը հասնուլ երկար շրջազգեստ
մը հազեր էր և լայն թևեր ունէր , որոնք հազիւ մինչև ար-
մուկները կ'իջնէին : Այս շրջազգեստը ծիրանի և ամենընտիր
ասուէ շինուած էր . ոսկեթել մետաքսեայ քօղ մ'անոր վերի կող-
մէն կապուեր էր , և ստանիական սովորութեան համեմատ՝ կա-
րելի էր անով երեսն ու կուրծքը ծածկել , կամ զարդի սէս ու-
սերուն վրայ դնել :

Երբ Գովէնա դիտեց որ տաճարական ասպետին աչքերն իր
վրայ յառեր էին այնպիսի եռանդով մ'որ կարծես թէ հրա-
փայլ ածուխներու կ'նմանէին իրենց մթին կամարին մէջ իսկոյն
քօղով երեսը ծածկեց համեստութեամբ և այսպէս հասկցուց տա-
ճարականին որ իր ժպիրհ ակնարկն անախտրժ կ'դտնէ : Սէտրիկ
Գովէնաի միտքն ըմբռնեց և ըսաւ , — Քաջի ասպետ , մեր սար-

սօն օրիորդներուն այսերն այնչափ արև չեն տեսած որպէս զի խաչակրի մ'ակնասպիշ նայուածքը կարենան տանելու :

— Եթէ ըրածս անքաղաքավարութիւն է — պատասխանեց Պըրայն — ձեզնէ, այսինքն օրիորդ Տովէնաէն ներում կ'խնդրեմ, վասն թղի ասկէ աւելի չեմ կրնար խոնարհիլ :

— Օրիորդ Տովէնան — յարեց վանահայրը — մեզ ամենքնիս ալ պատժեց, իմ բարեկամիս յանդդնութիւնը պատժելով. յուսալի է որ այսչափ անդուծ չդտնուիր այն շքեղ ժողովին մէջ, որ նիզակամարտին առթիւ պիտի դումարուի :

— Մեր այն գուպարին երթալն անստոյգ է — ըսաւ Սէտրիկ : — Չսիրեմ այսպիսի նանիր բաներ որ մեր նախնեաց անձանօթ էին՝ երբ Անկլիա ազատ էր :

— Սակայն յուսանք — ըսաւ վանահայրը — որ մեր ընկերութեան սիրոյն համար միտքդ կ'փոխես և կ'զաս, քանի որ ճամբաները վտանգաւոր են՝ Պըրայն տը Պուա-Նիլպէր ասպետին ուղեկցութիւնն անդոսնելի չէ :

— Պատուարժան հայր — ըսաւ սաքսօնը — մինչև այսօր ամէն ուր որ գացի տեսայ որ իմ սրիս և սպասաւորներուս օղնութենէ զատ քանի մը կարօտ չեմ. եթէ այս անգամ իրօք Էշտի-տը-լա-Չուշ ուղևորիմ՝ բաւական կ'սեպեմ Գօնինկսպըրիկի Աթէլսդէն՝ իմ ազնիւ հայրենակից դրացիս և քանի մը սպաներ հետս առնուլ՝ ելուզակներ և աւաստական թշնամիներ վանելու համար : Այս բաժակը, պատուարժան հայր, քու կենդանութեանդ կ'խմեմ, յուսամ որ զինիս ճաշակիդ յարմար կ'զտնես, և շնորհակալ եմ մարդավարութենէդ : Սակայն եթէ վանական ժուժկալութիւնը խստիւ պահել ուղես — յարեց նա — և թթու կաթդ զինիէս վեր կ'զասես, կ'աղաչեմ ինքզինքդ մի նեղեր և կամքդ կատարէ :

— Ո՛չ — ըսաւ վանականը խնդալով — մինակ մեր մենարանը Բիւն-Կի կ'վայելենք, երբ մարդկան հետ կ'կենակցինք անոնց սովորութիւններու կ'յարմարինք, ուստի, այս աղւոր զինիով կը պատասխանեմ քեզ, և այն թեթեւիկ ըմպելին աշխարհիկ եղբօրս կ'թողում :

— Իսկ ես — ըսաւ ասպետը դաւաթը լնլով — գեղանի Տովէնաի կենաց պիտի ըմպեմ, վասն զի իր համանուն կինն Անկ-

լիա իր անունը բերնելէն վեր՝ բնաւ չէ դա՛նուած էակ մ'որ իրմէ աւելի այս նուէրին արժանի լինի : Արդարեւ արամադիր եմ ներելու անբաղդ Աօրդիժէրնի, իր սլասիւն ու տէրութիւնը 'ի կորուստ մատնելուն՝ եթէ միայն մեր նկատած էակին պէս էակ մը կ'իսովին գրդիու տուած է :

— Քաջդ ասպետ — ըսաւ վեհանձնօրէն Տօվէնա առանց քողը հանելու — մարդավարութիւնդ չարաչար չպիտի դործածեմ, կամ լաւ ևս ըսեմ, քեզ ծանրութիւն պիտի տամ Պաղեստինի վրայ լուրեր հարցնելով, և այս նիւթը մեր ականջներուն աւելի ախորժելի է քան թէ զաղղիական քաղաքավարութեանդ քեզ ուսուցած գովեստները :

— Աարևոր բաներ չունիմ հաղորդելու, օրիորդ — պատասխանեց Պրայն տը Պուա-Աիլպէր. — այս միայն գիտեմ որ զինադուլը խաչակրաց և Սալատինի մէջ ստուգուած է :

Աամպա անոր խօսքն ընդմիջեց, երբ եկաւ իրեն յատուկ տեղը նստաւ աթուռի մը վրայ որ իշու երկու ականջներով զարդարուած՝ և իր տիրոջը զահէն երկու քայլ հեռու՝ ետևի կողմը դրուած էր : Տանտէրն՝ ատեն ատեն՝ իր պնակէն անոր կերակուր կ'տար, և այս շնորհը՝ մեր արդէն յիշած շատ մը շուներու հետ՝ խեղճ միմոսը կ'վայելէր : Աամպա այսպէս նստեր էր, իր առջևը փոքրիկ սեղան մ'ունէր, և իր կրուկներն աթուռին ձողերուն վրայ դրեր էր. իր այտերը փոսելովը՝ ծնօտին զոյգ մ'ընկուզաբեկի (nut-crackers) ձև տուեր էր, և իր աչերը՝ թէև կէս դոյ՝ անդուլ կ'դիտէր որ առիթ մը գտնէ իր ծաղրածու տաղանդը դործածելու :

— Այս զինադուլներն անհաւաստից հետ — դոչեց Աամպա, առանց գիտելու թէ ինչպէս վէս ասպետին խօսակցութիւնը խրոխտաբար կ'ընդհատէ — իս ծերացուցին :

— Ի՛նչպէս, ասպիրատ — դոչեց Սէտրիկ, որուն զուարթ գէմքէն կ'իմացուէր որ այս կատակէն կ'ախորժէր :

— Արովհետև — պատասխան տուաւ Աամպա — իմ կենդանութեանս ատեն արդէն երեք զինադուլ կ'յիշեմ, որոց ամէն մէկը յիսուն տարի պիտի տևէր, այնպէս որ հաշիւ ընելով կը նայիմ որ հիմակ՝ հարիւր յիսուն տարու պէտք էի որ լինիմ :

— Ասպահովեմ որ ծեր չպիտի մեռնիս — ըսաւ տաճարա-

կանը , որ նոյն պահուն գիտեց թէ խօսողը անսասին մէջ հան-
գիպած բարեկամն է : Հա՛ , ստոյգ եղիւր որ բուն մահով պիտի
մեռնիս եթէ այս իրկուն վանահօր և ինձ տուած տեղեկութիւն-
ներուդ պէս տեղեկութիւններ տաս ուղեորներուն :

— Ինչպէ՞ս — ըսաւ Սէտրիկ — ուղեորներուն ծովն ճամբայ կը
ցուցնէ : Խարազանը կ'սպասէ քեզ , որովհետեւ որչափ յիմար
նոյնքան անզգամ էս :

— Ա՛ղաչեմ քեզ , տէր իմ — պատասխանեց միմօսը — թող
մի անդամ յիմարութիւնս նենդութեանս օղնէ : Մինակ աջ ու
ձախ ձեռքիս մէջ սխալմունք մ'ըրի . և յիմար մը խորհրդա-
սուի տեղ առնողը պէտք է որ աւելի ծանր յանցանքի մը նե-
րողամիտ լինի :

Այս տեղ արտաքին պահապան մը ներս մտնելով խօսակցու-
թիւնն ընդմիջեց , և յայտնեց թէ օտարական մը դրան առջև
կեցեր հիւրընկալութիւն կ'հայցէ :

« Ներս հրամցուր — ըսաւ Սէտրիկ — ո՞վ որ կ'ուզէ թող լի-
նի . այսպիսի մըրկալի գիշեր մը՝ վայրի կենդանիներն անդամ
ընտանի անասուններու մօտ ապաւէն մը՝ և մարդն իսկ , անհաշտ
թշնամիէն պաշտպանութիւն կ'խնդրէ տարերայ կատողութե՛նէ
ազատելու համար : Նորեկ հիւրին ամէն խնամք տուէք . հող
տար դու , Օսվալտ :

Եւ տնտեսը սեղանատունէն դուրս ելաւ տանտիրոջ հրամանա-
ներն ՚ի դործ գնելու :



ՔԼՈՒԽ Ե.

Միթէ հրէայ մի աչք շունի. միթէ ձեռք, գործարաններ,
ղզայարանք, յօծարութիւն և կիրք շունի. միթէ մի և նոյն սը-
նունդով չ'անանիր, մի և նոյն դէնքով չ'վիրաւորիր, մի և նոյն
հիւանդութիւններու ենթակայ չէ, մի և նոյն միջոցներով չ'դար-
մանուիր. միթէ մի և նոյն ձմեռէն և ամառէն չ'մտիք և չ'տաք-
նար ճիշտ մի քրիստոնէի պէս:

ՎԵՆԵՏԿԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

ՕՍՎԱԼՏ ետ դառնալով՝ իր տիրոջն ակաւջին փափասցի.
— Նորեկ հիւրը հրէայ մ'է, որ ինքզինքն Եօրք քաղքի բնիկ
Իսահակ կ'կոչէ. միթէ կ'վայլէ որ զանի սրահը հրամցնեմ:

— Թո՛ղ այդ պաշտօնը Վիւրթ կատարէ, Օսվալտ — ըսաւ
Վամսլա իր սովորական լրբութեամբը — հրէին յարմար կարա-
պետ մը՝ խողպանը կրնայ լինիլ:

— Սուրբ կոցս — ըսաւ վանահայրը խաչ հանելով — ինչ
անհաւատ հրէայ մը մեր առջև պիտի ներկայանայ:

— Շուն հրէայ մը — ձայնեց տաճարականը — ինչպէս Սուրբ
գերեզմանին պաշտպանի մը պիտի մօտենայ:

— Իրաւի — ըսաւ Վամսլա — կ'երևի թէ տաճարականներն
աւելի կ'սիրեն հրէից ժառանգութիւնը քան ընկերութիւնը:

— Մի այլայլեք, իմ արժանի հիւրերս — ըսաւ Սէտրիկ —
չեմ կարող իմ հիւրասիրութեանս շափ դնել ձեր ատելութեան
պատճառաւ: Եթէ Աստուած այն կամակոր և թերահաւատ ազ-
գին շատ տարիներ հաշտ աչօք նայեցաւ, մեղք ինչո՞ւ համար
հրէի մը ներկայութեան մի քանի ժամ չհանդուրժենք: Բայց
չեմ ստիպեր մէկն որ անոր հետ խօսի կամ կերակուր ուտէ.
Թող անոր սեղանը զատ տեղ մը դնեն, միայն թէ — յարեց նա
ժպտելով — եթէ կամին՝ չեմ օրդիւղեր որ այս ապարօշ հաշնող
օտարականներն անոր հետ ընկերակցին:

— Պարո՛ն Սէտրիկ — պատասխան տուաւ տաճարականը —
իմ սարակինացի դերիներս ճշմարիտ մահմէտական են, և քրիս-
տոնէի շափ կ'խորշին հրէի հետ տեսակցութիւն ընելու:

— Ճշմարիտը կ'ըսեմ — յարեց Վամսլա — որ չեմ հասկնալի

Թէ ինչպէս Մէհմետի ու Տէրմականդի պաշտօնարկուներն երբեմն յԱստուծոյ ընտրեալ ժողովուրդէ մը դերազանց լինին :

— Հրէան քու քովդ պիտի նստի , Աամսլա — ըսաւ Սէտրիկ — յիմարն ու խարեբան իրար պիտի դանեն այս կերպով :

— Յիմարը — պատասխան տուաւ Աամսլա՝ ճարպի մը կտոր ցոյց տալով — խարեբային դէմ պատուար մը կանգնելու միջոցը պիտի գտնէ :

— Առուծիւն — ըսաւ Սէտրիկ — վասն զի ահա ներս կ'մտնէ նոր հիւրը :

Բարձրահասակ ծեր ու նիհար մարդ մ'որ իր բնական երկայնուծիւնը կորուսեր էր ստէպ ծուլէն , ներս մտաւ , պաղ ընդունելու թիւն մը դտաւ , շատ մը բարեններ ուղղեց , ահով և վարանմամբ յառաջ անցաւ և դնաց ստորին սեղանին մէկ ծայրը նստաւ : Իր դէմքին կանոնաւոր և բարակ դծերը , արծուի քիթը , իր սուր սև աչերը , իր լայն ու խորշումած ճակատը , ալէզարդ երկար մաղերն ու մօրուսը թերևս աղւոր երեւէին , եթէ այնպիսի ցեղի մը յատուկ նշանները չլինէին , որ՝ այն խաւարին դարերուն մէջ , միօրինակ ատելի էր դիւրահաւան ուսմկին , և ընչասէր աղնուականներու կողմէ կ'հալածուէր , և կարելի է նոյն իսկ այս ատելութեան և հալածանքին պատճառաւ ազգային յատուկ դրոշմ մ'առեր էր , որով առելի ծանր խօսք մը չըսէնք , խիստ անարդ և նողկալի կ'երևէր :

Հրէին հաղուստն որ՝ ըստ երևոյթին՝ փոթորկէն շատ աղտոտեր էր , բաղմածալ պարզ վերարկու մ'էր որ մթաղոյն ծիրանի բաճկոնակ մը կ'ծածկէր : Մուշտակապատ լայն կոշիկներ հագեր և մէջքէն գօտի մը կապեր էր , որուն վրայ փոքրիկ դանակ մ'ու գրելու գործիներ կային՝ առանց զէնքի : Երկար , քառակուսի դեղին գտակ մը դրեր էր մասնաւոր ձեով մը շինուած՝ որպէս զի հրէաները քրիստոնէից դասէն զանազանին , և սրահին դռնէն ներս մտնելուն նոյն զլխանոցը խոնարհութեամբ հանեց :

Իսրայէլի ամենէն անհաշտ թշնամին զոհ պիտի լինէր անշուշտ տեսնելով թէ ինչ ընդունելութիւն կ'ստանայ նորեկ հրէայ հիւրը Սէտրիկի սրահը մտնելուն : Նոյն իսկ տանտէրը պաղ կերպով մը զլուսն օրեց 'ի պատասխան հրէին կրկնակի ողջոյններուն և նշան ըրաւ որ սեղանին ստորին ծայրը նստի ,

Թէ՛ւ ոչ ոք կ'շարժէր անոր տեղ բանալու . ընդ հակառակն՝ կոչնականներուն կարգէն անցնելու ատեն՝ վարի կողմը նստողներուն աղերսալի և վեհերոտ նայուած մը կ'նետէր , սակայն սաքսօն սպասաւորներն իրենց ուսերը կ'լայնէին և առանց նորեկ հիւրին հոգ տանելու իրենց ճաշն անընդհատ կ'լափէին : Աննահօր սպասաւորները խաչ կ'հանէին՝ բարեպաշտական կերպարան մ'առնելով , և նոյն իսկ սարակինացի ծառաները՝ Իսահակը մօտենալուն՝ իրենց դաշոյնը քաշեցին՝ իբր թէ ծայրայեղ միջոցներով անոր հաղորդակցութեան ազտէն ազատելու պատրաստ էին :

Հաւանական էր որ Սէտրիկ ինչ հիւրասէր ոգւով որ իր տունն այն ընկեցիկ ժողովրդեան մէկ զաւկին բացեր էր , նոյն ոգւով պիտի սլատուիրէր իր սպասաւորներուն զանի աւելի մարդավարութեամբ ընդունելու , և թէ՛ նոյն պահուն՝ վանահայրը նշանաւոր խօսակցութիւն մը սկսած չլինէր անոր որսական շուներուն բնութեան և հոգատարութեան վրայ . խօսակցութիւն մ'որ բնաւ չէր ուղեր ընդհատել աւելի ծանր խնդիրներու համար անգամ , թող թէ հրէին անօթի անկողին երթալը :

Մինչդեռ այսպէս Իսահակ նոյն ընկերութեան մէջ իբր տարագիր կ'մնար , ինչպէս որ է իր ճօշովուրդը միւս ազգերու մէջ , 'ի զուր բարև մը կամ հանգստեան տեղ մը փնտուելով , կրակարանին մօտ նստող ուխտաւորը զթաց անոր վրայ , և իր տեղն անոր տուաւ համառօտ ըսելով . — Ծեր մարդ , իմ լաթերս չորցան , փորս կշտացաւ , իսկ քու վրադ թաց է և անշուշտ անօթի ես » : Այս ըսելով կրակարանին ցիր ու ցան խարոյկները ժողվեց և կրակն արծարծեց . վերջը մեծ սեղանէն քիչ մը թան և խաշած այծ առաւ , և դնելով այն սեղանին վրայ ուր ինքն ևս ընթրեր էր՝ սրահին միւս կողմն անցաւ առանց հրէին շնորհակալութեան սպասելու , թերևս սա պատճառաւ որ չէր ուզեր իր բարեսրտութեան առարկայ եղող անձին հետ աւելի խօսակցիլ , կամ թէ վերի սեղանին մօտենալու փափաք ունէր :

Եթէ այն ժամանակները քաջ պատկերհաններ զտնուէին , անտարակոյս ձմեռուան կենդանի սլատկերը պիտի ընծայէր այն հրէայն որ կորակոր մարմնովը՝ ցրտահար ու երերուն ձեռքերն երկնցած՝ կրակին վրայ կը ծռէր : Քիչ մը տաքնալէն ետև՝ հը-

բէայն իր առջև կեցած շողելի ճաշին դարձաւ անկշտօրէն և այնպէս արստորնօք և հաճութեամբ կերաւ որմէ կ'իմացուէր թէ երկար արեան կերակուրէ զուրկ մնացեր էր :

Նոյն միջոցին վանահայրն ու Սէտրիկ իրենց խօսակցութիւնը կ'շարունակէին որսի վրայ . բովէնան իր սպասուհիներէն մէկուն հետ խօսքի բռնուեր էր , իսկ վէս տաճարականը՝ որ իր աչքը հրէին վրայէն գէպ 'ի սաքսօն օրիորդին կ'ածէր անդադար , կարծես թէ գլխին մէջ խիստ կարևոր խորհուրդներ կ'գարձնէր :

— Ա'զարմանամ , արդոյ Սէտրիկ — ըսաւ վանահայրը խօսքը շարունակելով — որ՝ թէև սաստիկ կ'սիրես քու առնական լեզուդ , շես գործածեր գէթ որսի և անտառային բառերու համար Ֆրանքօ-նօրման բարբառը : Իրաւի շկայ լեզու մ'որ դաշտային հրահանգի մասին այնչափ ճօխ բացատրութիւններ ունենայ , կամ անդէորդին այնքան միջոցներ ընծայէ իր զուարթ արհեստը բացատրելու համար :

— Բարեի հայր Էյմէր — ըսաւ սաքսօնը — քաջ գիտցիր որ անդր-ծովեան նրբութիւններն աչքիս ստակ մը շեն արծեր , և առանց անոնց կրնամ իմ գործս տեսնել անտառներուն մէջ : Արող եմ իմ փողս հնչել , թէ և ոչ recheate և կամ ոչ morte կ'անուանեմ գոչիւնը : Արող եմ շուներս որսի գրգռել , կարող եմ կենդանին քերծել և չորս կտոր ընել առանց գործածելու սապիսի գռեհիկ բառեր , curée, arbor, nombles, և բոլոր զբարան Թրիստեմին բարբանջը :

— Գաղղիարէն լեզուն — ըսաւ տաճարականը՝ ձայնը բարձրացնելով և այնպիսի խրոխտ ու իշխանական կերպով մ'որ ամէն առթիւ կ'գործածէր — ոչ միայն որսորդութեան բնական լեզուն է , այլ նաև սիրոյ և սպաներազմի . լեզու մ'զրով կիները կը հրապուրենք և թշնամիներ կ'նուաճենք :

— Ասպետդ տաճարական , ձեռքդ բաժակ մ'ան լեցուր — ըսաւ Սէտրիկ — և վանահօր ալ տուր , մինչդեռ ես սպասմութիւն մ'ըսելու համար կենացս վերջին երսուն տարուան միջոցն աչքէ պիտի անցնեմ : Այն ատեն սաքսօն Սէտրիկն ինչ որ էր , իր պարզ անկլիական սպասմութիւնը գաղղիական վիպասաններու վայլէն պէտք չունէր կանանց հաճելի դառնալու համար , և նորթմայէրաւն՝ սպաներազմի դաշտը՝ նախրական դրոշակը պար-

գումար օրը, կրնայ վկայել թէ՛ սաքսօնեան դուր աղաղակը չթլսուեցաւ սկովտիական բանակին մէջ՝ ամենէն յանդուգն նօրման սեպուհի մ'աղաղակին չափ: Հիւրերս, այն կռուին մէջ պատերազմող քաջերուն յիշատակին կ'առաջարկեմ այս բաժակս: Այս ըսելով բաժակը սարսպեց և իր խօսքը շարունակեց աւելի ջերմադին: — Այո՛, այն օրը քանի՛ քանի աստարներ բեկան, երբ հարիւրի չափ դրոշակներ քաջերուն գլխին վրայ ընկան, երբ ջրի պէս պրիւն վաղեցաւ, և մահ նախադաս համարեցաւ քան փախուստը: Սաքսօն վիպասան մը՝ սուրերու խնջոյք մը, որսին բոլորաբեր արծիւներու գումարում պիտի անուանէր այս պայքարը, վահաններու և սաղաւարտներու թնդիւնը, պատերազմի գոռ ու բոմբիւնը՝ հարսանեաց ցնծութեան ձայներէն աւելի զուարթուն: Սակայն մեր վիպասանները մեռան — ըսաւ նայ — մեր գործերն ուրիշ ցեղի մը գործերուն մէջ կորսուեր են, մեր լեզուն՝ նոյն իսկ մեր անունն օր քան զօր աներևոյթ լինելու վրայ է, և մինակ ինձի պէս մենաուր ծերունի մ'այս աղէտքը տեսնելով խոր սուգի մէջ կ'համակուի: Մասուռա՛կ անզգամ, լեցուր բաժակները: Տաճարական, այս բաժակը պիտի ըմպենք քաջազէն մարտիկներու համար, թող ինչ ցեղէ կ'ուզեն լինին, այն կտրիճներուն համար որ Պաղեստինի մէջ Խաչին ախոյեան կ'կանգնին անվեհեր:

— Այն նշանը կրողին չընկնիր պատասխանելը — ըսաւ Պրայնտը Պուա-Կիլպէր — սակայն Խաչին ախոյեաններու մէջ ո՛յք աւելի արժանի են այդ պատուին եթէ ոչ անոնք որ Սուրբ գերեզմանին երդուեալ ախոյեաններն են:

— Հիւրասէր ասպետներուն արժանի է — ըսաւ վանահայրը — անոնց կարգին մէջ եղբայր մ'ունիմ:

— Անոնց համբարը չեմ անարգեր — ըսաւ տաճարականը — սակայն . . . :

— Սէտրիկ բարեկամ, ինձ կ'երևի որ — ըսաւ Վամպա կրօնաւոր զինուորին խօսքը կտրելով — եթէ Առիւծասիրտ Բիշարաբառական իմաստուն լինէր խենդի մը խորհրդին հետեւելու, իր զուարթ անկլիպացոյց հետ տեղը կ'նստէր՝ երուսաղէմի աղաաումը թողլով այն ասպետներուն որ այս դործին մէջ շահ ունէին:

— Եւ միթէ անկլիպական բանակին մէջ չկար անձ մ'որուն ա-

հունը տաճարական և Ս. Յովհաննու ասպետներուն հետ յիշուելու արժանի լինի . . . — ըսաւ օրիորդ Տօվէնա :

— Ներէ ինձ , օրիորդ — պատասխան տուաւ Պուա-Աիլպէր — իրաւ է որ Անկլիոյ թագաւորն իր հետը քաջասիրտ մարտիկներու բանակ մը բերեր էր 'ի Պաղեստին , որ արիութեան կողմէն նոյն օրհնեալ երկրին անասան պատուարն եղող քաջերուն երկրորդ կարգը կ'բռնէին :

— Ա՛յ , ամենէն ՔԵՐԱԶԱՆՑՆ էին — գոչեց ուխտաւորը , որ բաւական մօտ եկեր էր անոնց խօսքը լսելու համար , և այս խօսակցութիւնն ակներբե անհամբերութեամբ մտիկ ըրեր էր :

Ամենուն աչքը այս անակնկալ վկայութիւնը տուող անձին կողմը դարձան : « Այո՛ , նորէն կ'ըսեմ — կրկնեց ուխտաւորը հաստատ և ուժղին ձայնով մը — թէ անկլիոցի ասպետները ՔԵՐԱԶԱՆՑ էին այն ամէն մարտիկներէն որ Ս. Տեղեաց սլաշտպանութեան համար զէնք առին : Ա'ըսեմ նաև , քանի որ աչօքս տեսայ , որ նոյն իսկ Տիչարտ թագաւորը՝ ու իր ասպետներէն հինգ հոգի՝ Ա. քիաի բերդն առնլէն ետև՝ նիզակախաղ դուպար մ'ըրին և որ և է քաջի հետ մենամարտելու հրաւէր տուին : Ա'պնդեմ թէ նոյն օրը , մէն մի ասպետ երեք անգամ 'ի վէզ ելաւ և երեք ոսոխ գետին տասպալեց : Ա'յաւելում նաև , որ այն ոսոխներէն եօթ հոգի տաճարական ասպետներ էին և Պրայն տը Պուա-Աիլպէր այս ըսածիս ճշմարտութեան կրնայ վկայել :

Անհնար է լեզուաւ նկարագրել տաճարականին կատողութիւնն որով իր սև դէմքն աւելի ևս սևցաւ . իր ատելութեան և շփոթութեան չափն անցնելով՝ իր գողգոջուն մատերը դէպ իր սրին դաստապանին տարաւ , ապա թողուց , և թերևս զգաց որ կարելի չէր բռնութեան գործ մ'ընել ապահովութեամբ այն տեղ ներկայ գտնուողներուն առջև : Սէտրիկ՝ որուն զգացումները միշտ ուղիղ էին և անկեղծ՝ չէր կրնար շատ բաներու մէկէն ուշ դնել , ուստի այնքան բերկրութիւն զգաց իր հայրենակիցներուն փառքն ու արիութեան գովեստը լսելով՝ որ չղիտեց իր հիւրին զայրալիր շփոթութիւնը :

— Ոսկի ապարանջանը յօժարակամ պիտի պարզեմ քեզ , ուխտաւոր — ըսաւ նա — եթէ ըսես ինձ այն ասպետներուն անուններն որ զուարթուն Անկլիոյ համբաւն արիարար պահպանեցին :

— Ամենայն սիրով խնդիրդ պիտի կատարեմ — պատասխանեց ուխտաւորը — առանց վարձ մ'ընդունելու, վասն զի իմ երգումս, զեռ. քիչ մ'ատենուան համար, ոսկիի դպելու կ'արգելէ զիս :

— Ասարանջանն ես քու տեղդ կ'առնում, եթէ կ'հաճիս, աղչիւ ուխտաւոր — ըսաւ Աւսպա :

— Պատուոյ և արիութեան, նոյնպէս համբաւի և պաշտօնի կողմէ առաջինն էր — ըսաւ ուխտաւորը — արին Տիշարտ, Անկլիոյ թագաւորը :

— Կ'ներեմ — ըսաւ Սէտրիկ — կ'ներեմ անոր՝ Ախլէմ բընակալ զքսէն սերելուն :

— Երկրորդն էր Լիսէսգրի կոմսը — շարունակեց ուխտաւորը. — Կիսլէնտի Թումաս Միւլդըն երրորդն էր :

— Գոնէ այս վերջինը սաքսօնեան տոհմէ կ'սերի — ըսաւ Սէտրիկ եռանդազին :

— Չորրորդն էր Փուլք Տուայլի սեպուհը — շարունակեց ուխտաւորը :

— Այս ևս սաքսօն է գէթ մօրը կողմէն — յարեց Սէտրիկ, որ ուշադիր մտիկ կ'ընէր, և ըստ մասին կ'մտնար իր ոխն նօրման ցեղին դէմ, Անկլիոյ թագաւորին և իր կողեցիներուն արիութեան հռչակն իմանալուն : — Եւ ո՞վ էր հինգերորդը — հարցուց նա :

— Հինգերորդն էր Թըրնհէմ Էտվին սեպուհը :

— Բուն սաքսօն մը, Հէնթիստի հողին վկայ — գոչեց Սէտրիկ : — Հասրա վեցերորդը — շարունակեց նա շտապաւ — ինչ է վեցերորդին անունը :

— Աւեցերորդը — ըսաւ ուխտաւորը պահ մը կայ առնլէն ետեւ, որպէս թէ անունը յիշելու կ'ջանար — նորատի ասպետ մ'էր, որ աւելի քիչ համբաւ և ստորին աստիճան մ'ունէր, և այն պատուաւոր գնդին յարած էր ոչ այնչափ աջակից գտնուելու՝ որչափ անոր թիւը լեցնելու համար, իր անունը միտքէս ելեր է :

— Պարոն ուխտաւոր — ըսաւ Պրայն քամահական ձայնով մը — այնչափ բաներ յիշելէն ետեւ՝ վերջնոյն անունը կամովին կը մոռնաս և քու նպատակիդ շիս կընար հասնիլ : Ես ինքնին պի-

տի ըսեմ՝ այն ասպետին անունն՝ որուն նիզակին առջև՝ բաղդն
ու իմ երիվարիս յանցանքն անկմանս սլատձառ եղան, այն աս-
պետն էր Իվանօէ, և այն վեց անձերուն մէջ՝ թէև նորատի,
իրմէ աւելի նշանաւոր մարտիկ մը չկար: Սակայն այս ևս կը
փութամ ըսելու, որ եթէ այն ասպետը հիմակ Անկլիա դանուէր
և այս շաբթուան լինելիք նիզակամարտին մէջ ինձի հետ՝ այս-
պէս սպառազէն չափուիլ և Ա. քիտի մենամարտը կրկնել կա-
մենար՝ զինուց առաւելութիւնն անոր կ'ընծայէի և հետը նորէն
'ի վէզ կ'ելնէի:

— Եթէ ոսոխդ քովդ լինէր — պատասխանեց ուխտաւորը —
իսկոյն կ'ընդունէր այդ մենամարտդ (challenge): Սակայն քա-
նի որ ներկայ չէ նա, մի վրդովեր քու պարծուկ խօսքերովդ
այս տան անդորրութիւնն՝ այն մենամարտին ելքին վրայ, քանի
որ գիտես թէ չկրնար տեղի ունենալ: Եթէ երբէք Իվանօէ Պա-
ղեստինէն դառնայ, կ'ապահովեմ որ քեզի հետ չափուելու չպի-
տի վարանի:

— Աղւոր ապահովութիւն — պատասխանեց տաճարական աս-
պետը — ապա ինչ դրաւ կ'դնես այս բանիս համար:

— Սա մասունքը — ըսաւ ուխտաւորը, և իր ծոցէն փղոսկրէ
փոքրիկ տուփ մը հանեց, խաչակնքեց — որ կարմնլեան լեռնէն
բերուած ճշմարտին խաչի մաս մը կ'սլարունակէ:

Ժօրվօյի վանահայրն ևս խաչ հանեց և հայր մեր մ'ըսաւ,
որուն ամենքը միացան, 'ի բաց առեալ հրէսոյն, մահմէտական-
ներն և տաճարականը, որ առանց գտակն հանելու կամ ակ-
նարկեալ մասունքին սրբութենէ ակնածելու, վրէն ոսկի շղթայ
մը հանեց և սեղանին վրայ նետելով ըսաւ: — Թող Էյմէր վա-
նահայրն՝ իմ և այս անանուն թափառականին դրաւն առնու պա-
հէ, իբր 'ի հաստատութիւն որ երբ Իվանօէ ասպետը չորս ծո-
վերը պատող Բրիտանիոյ կղզին ոտք կոխէ, Պրայն տը Պուա-
Նիլպէրի մենամարտը սլիտի ընդունի, և եթէ զայն մերթէ՛ բո-
լոր Եւրոպայի տաճարականներու դարսլասին մէջ իբր վատ պի-
տի հռչակեմ զանի:

— Այդ բանն ընելու պէտք չպիտի լինի — ըսաւ Բովէնա՝
իր լռութիւնը՝ զոր ցայն վայր պահեր էր՝ խղելով: — Եթէ այս
սրահին մէջ տարակայ Իվանօէն պաշտպանող ձայն մը չկայ:

իմն հարկաւ պիտի լսուի : Ա՛հաւաստեմ՝ որ նա պատրաստ պիտի դոնուի ամէն սրատուաւոր մենամարտի արիաբար սրատասխանել : Եթէ իմ տկար երաշխաւորութիւնս սոյն բարեպաշտ ուխտաւորին անդին գրաւին արժէքը կարող է աւելցնել, անունս և պատիւս գրաւ կ'դնեմ՝ ստոյգ լինելով որ Բվանօէ այս դոռող ասպետին հետ պիտի մենամարտի :

Ա՛երևէր թէ նոյն պահուն իրարու ներհակ զղացումներ Սէտրիկի սիրտը սրաշարած լինելով՝ չէր կրնար խօսիլ սոյն վիճաբանութեան ժամանակ : Գոհունակ հպարտութեան, քինու և շրփոթութեան նշաններն իր լայն և կայտառ ճակտին վրայ իրարու կ'յաջորդէին, ցորենի արտի վրայ անցնող ամպերու ստուերի նման, մինչդեռ իր սպասաւորները, որոց վրայ վեցերորդ ասպետին անունը դրեթէ գիւթական ներդործութիւն մ'ունէր, իրենց տիրոջ կ'նայէին ակնապիշ : Սակայն երբ օրիորդ Բովէնան խօսեցաւ, անոր ձայնին հնչիւնը կարծես թէ Սէտրիկի թմբութիւնը փարատեց :

— Օրիորդ — ըսաւ Սէտրիկ — այդ խօսքը քեզի չվայլեր : Եթէ ուրիշ գրաւ մը պէտք լինէր, ես ինքս որ իրաւի նախատւած եմ, Բվանօէին համար իմ պատիւս գրաւի կ'դնէի : Բայց մարտին գրաւը կատարեալ է, նոյն իսկ նօրմանեան ասպետութեան այլանդակ կանոններու համեմատ : Միթէ ըսածս ճիշտ չէ՞, հայր Եյմէր :

— Ճիշտ է — սրատասխան տուաւ վանահայրը : — Եւ ես այս օրհնեալ մասունքն ու ճոխ շղթան մեր վանքին զանձատան մէջ ասպահովապէս պիտի պահեմ, մինչև որ մենամարտութեան արդիւնքը տեսնուի :

Այսպէս խօսելով վանահայրը կրկին ու կրկին խաչ հանեց և շատ մը ծունր դնելէն և աղօթք ընելէն ետև՝ մասունքն իրեն սպասաւորող եղբայր Ամփրոսիոսի տուաւ, մինչդեռ նուազ յարգանօք, թէև նոյնչափ սրտի գոհունակութեամբ ոսկի շղթան առաւ և իր թևին ներքև դոնուած կաշիասլատ փոքրիկ գրպանին մէջ գրաւ : — Արդ, արդոյ Սէտրիկ — ըսաւ նա — քանի որ ակնջներս զանդակի պէս կ'խօսին ձեր ընտիր գիւնիին շնորհիւր, ներեցէք մեզ օրիորդ Բովէնասի կենդանութեան բաժակ մ'ևս պարպել, և ասպա հրաման տուէք մեզ հանդատանալու երթալ :

— Արօնհոլմի խնայք վկայ — ըստ սաքսօնը — քու համբաւիդ մեծ պատիւ մը չես բերեր, պատուարժան վանահայր: Ջուարթ եկեղեցականի մ'անունն ունիս, և կ'ըսեն թէ ժամկոչը դալէն առաջ բաժակդ ձեռքէ չես թողուր, ասոր համար՝ թէ և ձեր եմ, կ'վախնայի որ քեզի հետ դլուխ չպիտի ելնեմ: Բայց, իրաւի, տասն երկու տարու սաքսօն պատանեակ մ'իմ ժամանակս այդչափ շուտով զինիի բաժակը մէկդի չէր թողուր:

Սակայն վանահայրն իր ընտրած ժուժկալութեան դրութեան հետեւելու պատճառներ ունէր: Ոչ միայն 'ի պաշտօնէ հաշտարար էր, այլ 'ի փորձ կ'ատէր ամէն տեսակ կռիւներ և վէճեր: Եւ այս ընթացքը չէ թէ անձնասիրութենէ կամ մարդասիրութենէ կ'բռնէր, այլ այս պարադայիս մէջ սաքսօնին խրոխտ բընութիւնը կ'ճանչէր և կ'վախնար որ իր ընկերին աննկուն և աննապաստան ողին՝ որուն փորձերն արդէն ստէպ տեսեր էր, նոյն ընկերութեան մէջ փոթորիկ մը չհանէ: Ուստի մեղմօրէն հասկցուց որ անհնար է որ և է օտար բնակչի մը՝ յանդուգն ու սնդադլուխ սաքսօններու հետ մրցիլ այս մասին. նոյնպէս կամայուկ մ'իր նուիրական պաշտօնին վրայ քանի մը խօսք մըմըռայ, և խօսքն աւարտեց ներում ինդրելով որ հանդստանալու երթան:

Հետեւապէս վերջին բաժակը լցին, և հիւրերը տանտիրոջ և օրիորդ Բօվէնաին յարգական խոնարհութիւն մ'ընելէն ետե՛ դաւաթները պարսկեցին, յետոյ իրարու խառնուեցան, մինչդեռ տան մեծերն իրենց սպասաւորներու հետ այլ և այլ դռներէ դուրս կ'ելնէին:

— Անհաւատ շուն — ըստ տաճարականը հրէայ Իսահակին, այն միջոցին որ ամբոխին հետ իր քովէն կ'անցնէր — արդեօք դո՛ւ ալ դուպարը տեսնելու պիտի երթաս:

— Այդ միտքն ունիմ — պատասխան տուաւ Իսահակ խոնարհութեամբ ծռելով — եթէ ձեր արժանապատիւ քաջութեան անհաճոյ չթուիր:

— Այո՛ — ըստ ասպետը — որպէս զի մեր ազնուականներուն արիւնը քամես վաշխառութեամբ, և կիներն ու պատանիները իարեւս քու դոհարներով և խաղալիկներովդ: Գրաւ կ'զնեմ որ սա պարկիդ մէջ անբաւ ոսկի կայ:

— Ա՛չ ոսկի , ոչ գահեկան և ոչ իսկ թանկ մ՛ունիմ . Արբա-
համու Աստուածն օղնէ ինձ — ըսաւ հրէայն ձեռները պրկելով :
Սոյն հանդիսին պիտի երթամ որ իմ ազգակից եղբայրներէս նը-
պաստ խնդրեմ որպէս զի հրէից Գանձապետին իմ վրայ դրած
հարկը վճարեմ . Յակոր նահապետ պահպանէ զիս . աղքատ
թշուառ մ՛եմ , նոյն իսկ հաղած վերարկուս Թատկաստրի Ռու-
բէնինն է :

Տաճարականն այս պատասխանին վրայ քթին տակէն խնդաց .
— Նղովից արմատը , նայէ ինչ չարասիրտ ստախօս մ՛է — ը-
սաւ տաճարականն և յառաջ անցաւ , որպէս թէ հրէին հետ
խօսքն երկարելու կ՛անդոսնէր , և ներկայ դանուողներուն ան-
ժանօթ լեզուով մը սարակինացի դերիններուն բան մ՛ըսաւ : Հէք
խորայէլացին մարտիկ կրօնաւորին յանդիմանական ձայնէն այն-
քան շուարեր էր որ տաճարականը սրահին միւս ծայրը հասնե-
լէն ետև միայն՝ սիրտ ըրաւ այն իր նուաստ դիրքը թողլով զը-
լուխը վերցնելու՝ որ տեսնէ թէ դուրս ելնելու ժամանակը հա-
սաւ թէ ոչ : Երբ վերջապէս չորս դին նայելու ելաւ , այնպէս
ապշած էր որ կարծես թէ իր առջևը կայծակ մ՛իջեր էր և ա-
նոր որոտալիը ձայնը դեռ իր ականջին մէջ կ՛հնչէր :

Տաճարականն ու վանահայրն անմիջապէս իրենց ննջարանը
մտան տնտեսին և մատուակին առաջնորդութեամբ , ամէն մէկն
երկու ջահակիր և երկու սպասաւոր առեր էր իր հետը , որոնք
դինի և ուտելիք կ՛տանէին , մինչդեռ ստորնազոյն ծառաներ ա-
նոնց հետևորդներուն և միւս հիւրերուն պառկելու համար յա-
տուկ յատուկ տեղեր կ՛ցուցնէին :

ԳԼՈՒԽ Զ.

Եր շնորհքը դանկելու, խմ սիրտս կ'տամ.
Եթէ ընդունի, լաւ, թէ ոչ, մնաս բարե,
Եւ, խմ սիրտս համար, խնդրեմ ինձ մի վնասեր.

ՎԵՆԵՏԿԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

Երբ ուխտաւորն՝ որուն առջևէն ջահակիր մը կ'երթար, այս ընդարձակ և անկանոն տան սրտտ 'ի սրտտ սենեակներէն կ'անցնէր, ետևէն եկող մատուակն անոր ականջին փափսաց որ՝ եթէ հաճի իր խոցը դալ և բաժակ մը մեղրբմպելի ընպել, շատ մը սպասաւորներ կան որ անձկանօք պիտի լսեն Երուսաղէմէն բերած լուրերը, մանաւանդ Բվանօէ ասպետին վերաբերեալ զրոյցները: Նոյն սրահուն Վամնդա վրայ հասաւ և նոյն խնդիրը կրկնեց, յայտնելով որ կէս դիշերէն ետքը բաժակ մը մեղրբմպելի աւելի մեծ արժէք ունի քան կրակաթաղէն առաջ: Այսպիսի ծանր սրասդամի մէջ բերած առածին գէմ առարկել աւելորդ սեպելով ուխտաւորը շնորհակալ եղաւ անոնց մարդավարութեան, բայց սա կէտը հասկցուց որ իր կրօնական ուխտին հետ սրարտաւորութիւն մ'առած է իր վրայ, այսինքն, տիրոջ սրահին մէջ արդիլեալ բաներուն վրայ բնաւ չխօսիլ խոհանոցը: — Ահա ասիկ ուխտ մը — ըսաւ Վամնդա մատուակին — որ ըստ սպասաւորի մը բնաւ չյարմարիր:

Մատուակը դժկամակելով ուսերը վեր վերցուց: — Ես այս ուխտաւորին լաւ սենեակ մը տալու միտք ունէի — ըսաւ. — բայց քանի որ սրալ կ'վարտի քրիստոնէից հետ, ես ալ զանի Բսահակ հրէին կից սենեակը պիտի գնեմ: Ննվճլտ — յարեց նա ջահակիր ծառային դառնալով — սա ուխտաւորը հարաւային խղիկը տար: Գիշեր բարի քեզ, արդոյ ուխտաւոր, քիչ մարդավարութեան թեթեւ շնորհակալութիւն կ'վայլէ:

— Քեզ լոյս բարի, և տիրամայրը քեզ օրհնէ — ըսաւ ուխտաւորը հանդարտ և իր առաջնորդին հետևելով:

Այն ինչ նեղ նախասենեակ մը մտան որ շատ դռներ ունէր

և երկաթէ կանթեղով մը լուսաւորած էր, Տօվէնաի սպասուհիներէն մին իրենց առջև ելաւ, որ իշխանական ձայնով մ'ըսաւ թէ իր ախրուհին ուխտաւորին հետ խօսիլ կ'ուզէ. ուստի Կն՝վօլտին ձեռքէն ջահն առաւ, ապապրեց անոր որ վերադարձին սպասէ և ուխտաւորին նշան ըրաւ որ ետեւէն երթայ :

Ա՛րեւի թէ ուխտաւորը յարմար չդատեց այս հրաւերը մերժելու, ինչպէս որ մատուակինը մերժեր էր, վասն զի թէև կերպերէն կ'իմացուէր որ զարմանք կ'զգայ, անխօս և անմտնչ սպասուհիին հետևեցաւ :

Նրբադաւթէ մ'անցնելով՝ եօթ աստիճանով տանդղէ մը վեր ելան, որոց խրաքանչիւրը հասա կաղնի դերանէ շինուած էր, և օրիորդ Տօվէնաի սենեակը հասա, որուն շքեղութիւնը կ'համարատասխանէր տանախրոջ անոր ցոյց տուած յարգանաց: Պատերն ոսկեթել մետաքսէ վարադոյրներով ծածկուած էին և դարուս տարած ամէն արհեստը թափեր էին որպէս զի պոյնզոյն որսորդութեան և բաղէի տեսարաններ ներկայեն : Մահիճը նոյն ճոխութեամբ զարդարուն՝ և ծիրանի վարադոյրներով շրջապատուած էր, աթոռներն ալ գունաւոր կերպասով ծածկուած էին, և անոնց մին որ մուսներէն աւելի բարձր էր՝ վարի կողմը դըրուած ճարտարութեամբ քանդակուած փղոսկրէ աթոռակ մ'ունէր :

Չորս հասարկածաթէ աշտանակներ՝ մեծ մամկրով սենեակը կը լուսաւորէին : Սակայն պէտք չէ որ մեր արդի գեղանի կիները սաքսօն իշխանուհոյ մը շքեղութեան նախանձին : Սենեկին սպատերն այնպէս թերահատար և ձերպալի էին որ պերճ սրահակները հովէն կ'շարժէին, թէև տեսակ մը հովանեակ (screen) դրեր էին հովէն սրահակներու համար. ջահերուն բոցն օդին մէջ տադին անդին կ'տատանէր հրամանատարի մը դրոշակին պէս : Շքեղութիւնը կ'ախրէր նոյն սենեկին մէջ, վայելչութեան հասնելու փորձեր կ'տեսնուէին, սակայն դիւրաստարութիւն դրեթէ չկար, և որովհետև այս բանս չէին գիտեր, անոր կարօտութիւնը չէին զգար :

Օրիորդ Տօվէնան մեր արդէն յիշած դահին վրայ նստեր էր, իր շորս դին երեք նաժիշաներ առեր մաղերը կ'սանաթէին անկողին մտնելէն առաջ, և կարծես թէ ամենուն ակնածութիւնը դրաւելու բնածին ձիրք մ'ունէր : Աւխտաւորն այս ակնածական

յարգանքը մատոյց անոր խորին ծնրադրութիւն մ'ընելով :

— Ատք ելիր , ուխտաւոր — ըսաւ անոր շնորհալի կերպով մը — բացակայից սրաշտպանն իրաւունք ունի սիրով ընդունուելու այն ամէն անձերէն որ ճշմարտութիւնը կ'սիրեն և արիութիւնը կ'սրատուն — : Այն ատեն իր նաժիշաներուն ըսաւ . — Գացէք , դու միայն կեցիր , Ալժիթա , այս սրբակրօն ուխտաւորին հետ քիչ մը սլիախի խօսիմ :

Սպասուհիները սենեկէն դուրս չելնելով՝ հեռաւոր անկիւն մը քաշուեցան և սրտին կից բազմոցի մը վրայ նստան՝ իբր քարէ արձաններ , թէև այն հեռաւորութենէ իրենց փախուքը չէր կրնար վրդովել տան տիրութեան խօսակցութիւնը :

— Աւխտաւոր — ըսաւ Բօվէնա՝ սրահ մը լուռ կենալէն ետև , վասն զի կ'սորհէր թէ ինչ կերպով խօսքն ուղղէ օտարականին — այս իրկուն դու անուն մը յիշեցիր , այսինքն — յարեց նա ճիգ մ'ընելով — Իվանօէի անունն՝ որուն հնչիւնն ազգակցութեան և բնութեան շնորհիւր սրարտ էր աւելի շարժէր մեր սիրտերը , սակայն՝ ճակատագիրն այնքան անիրաւ է որ այն սրբաբերուն մէջ՝ ես միայն կ'իշխեմ հարցնելու քեզ թէ ո՞ր և ինչ աստիճանի մէջ թողեր այն ակնարկած անձդ : Իմացանք որ իր առողջութիւնը կազդուրելու համար Պաղեստին մնալու ստիպուած լինելով անկլիական բանակին մեկնելէն ետև՝ դադղիացի զօրաց երեսէն հալածանք կրեր է , որոց , ինչպէս որ յայտնի է , տաճարականները յարած են :

— Շատ բան չգիտեմ Իվանօէ ասպետին վրայ — սրատասխանեց ուխտաւորը՝ այլայլած ձայնով մը : — Ա'փափաքէի լաւ ևս ճանչել զանի , քանի որ դու , օրիորդ , անոր վիճակին մեծ հող կ'տանիս : Կարծեմ թէ իր թշնամիներուն ճանկէն հեռացաւ և Պաղեստինէն Անկլիա դառնալու կ'սրատրատուէր , և դու , տիրութիւն , սէտք է որ իզնէ քաջ գիտնաս թէ ինչ երջանկութիւն կ'սպասէ իրեն :

Օրիորդ Բօվէնա խորին հառաչեց , և յատկապէս հարցուց թէ արդեօք Իվանօէ ասպետն երբ սլիախի դառնայ իր հայրենի երկիրն և թէ ճամբան վտանգի կրնայ հանդիպիլ : Առաջին կէտին նկատմամբ՝ ուխտաւորն իր տղիտութիւնը յայտնեց , երկրորդ հարցման վրայ՝ ըսաւ թէ Անկլիա և ճէնովաի ճամբով

նապահովի կրնայ Ֆրանսա և անկից Անկլիա անցնիլ : — Իվանօէ — ըսաւ նա — այնքան հմուտ է Ֆրանսայի լեզուն և բարուց որ սոյն ճամբորդութեանը մէջ փորձանքի մը հանդիպելու վախ չը կրնար ունենալ :

— Երանի թէ — ըսաւ օրիորդ Տովէնա — անվտանգ իր բընիկ երկիրը հասնէր , և կարող լինէր մօտալուտ նիզակամարտին մէջ պայքարիլ , քանի որ տեղոյս բոլոր ասպետներն իրենց արիութիւնը պիտի ցոյց տան այն տեղ : Եթէ Գօնիկս պըրիկի Աթէլսթէյնը մրցանակը տանի , թերևս Անկլիա հասնելուն Իվանօէ տխուր լուրեր պիտի լսէ : Օտարական , վերջին անգամ զանի տեսնելուդ ինչպէս գտար : Միթէ հիւանդութիւնն անոր ոյժն ու վայելչութիւնը սաստիկ խանդարե՞ր էր թէ ոչ :

— Աւելի թուխ և նիհար երես մ'առեր էր — ըսաւ ուխտաւորը — քան թէ երբ Առիւծասիրտ Քիչարտին հետ Աիպրոս կըղզիէն դարձաւ , և կարծես թէ ճակատին վրայ անձկութիւն մը կը տիրէր , բայց ես անոր մօտ չգացի , որովհետև հետը յարաբերութիւն չունիմ :

— Ա'վախնամ որ իր բնիկ երկրին մէջ — ըսաւ Տովէնա — այնչափ սիտիանք չպիտի դանէ իր արտմութեան մնայլը փարատելու : Շնորհակալ եմ , բարեսիրտ ուխտաւոր , որ իմ մանկութեանս ընկերին վրայ այդ տեղեկութիւնները հաղորդեցիր ինձ : Աղջիկներ — յարեց նա — մօտեցէք և երեկոյեան բաժակը մատուցէք այս սուրբ մարդուն , որուն թոյլ պիտի տամ որ երթայ հանդիստ ընէ :

Սպասուհի մ'արծաթէ բաժակ մը ներկայեց որ ընտիր համեմուտ ըմպելի մը կ'պարունակէր : Տովէնա նոյն բաժակը միայն շրթերուն դպուց և ասպա ուխտաւորին տունն զայն , և այս ալ թեթև խոնարհութիւն մ'ընելէն ետև՝ քանի մը կաթիլ ըմպեց :

— Ընդունէ այս ողորմութիւնը , բարեկամ — յարեց Տովէնա ոսկի մ'ընծայելով — իբր վարձ քու տաժանելի աշխատութեան , և Սուրբ վայրեր այցի գնալուդ համար :

Ուխտաւորը նորէն թեթև մը ծռելով ընդունեց այն պարզ և սենեկէն դուրս ելաւ Ելծիթաի ետևէն երթալով :

Նախասենեկին մէջ Կնվօլտ սպասաւորը գտաւ , որ նորատի աղջկան ձեռքէն ջահն առնլէն ետև՝ շտապաւ քան մարդավա՞

բութեամբ շէնքին մէկ հեռաւոր և զազրալի կողմը տարաւ ձղեց զանի, ուր շատ մը փոքրիկ խուցեր կամ խղիկներ կային, որոնք ստորին ծառաներուն և միջին կարգի հիւրերու համար ննջարաններ էին :

— Այս խուցերէն որուն մէջ կ'սլառկի հրէայն — հարցուց ուխտաւորը :

— Այն անհաւատ շունը — սլառասխանեց Էնվօլտ — քու սրբութեանդ կից խցին մէջ կ'սառկի : Յանուն Ս, Տոնստանի, ինչպէս պիտի քերթենք և սրբենք այն խուցն որպէս զի քրիստոնէի մը յարմար լինի :

— Հապա խողարած Աիւրթն ո՞ւր կ'սլառկի — ըսաւ օտարականը :

— Աիւրթ — սլառասխան տուաւ ստրուկը — աջ կողմի խուցը կ'քնանայ, ինչպէս որ հրէայն ձախ կողմից կ'դանուի, դու պիտի զատես թլփատեալ մարդը իր ցեղին ատելութեան առարկայ եղող անձէն : Եթէ Օսլալտի հրաւերն ընդունէիր աւելի սլառաւոր սենեակ մը պիտի ննջէիր :

— Այսպէս աղէկ է — ըսաւ ուխտաւորը — հրէի մ'ընկերութիւնը կաղնի փայտէ միջնորմի մը մէջէն շկրնար տարափոխիկ լինիլ :

Այս ըսելով իրեն յատկացած խուցը մտաւ, և սալասաւորին ձեռքէն ջահն առնլով անոր շնորհակալ եղաւ և գիշեր բարի ըսաւ. իր խցին դուռը դոցելով փայտէ աշտանակի մը վրայ դրաւ ջահը և իր ննջարանին բոլորտիքը գիտեց, որուն կահոյքը շատ սարդ էր : Մինակ փայտէ կոշտ աթոռակէ, և աւելի զըծուծ յարդալի անկողնէ մը կ'բաղկանար, որուն վրայ քանի մը ոչխարի օղիկներ նետեր էին վերմակի տեղ :

Ուխտաւորը՝ ջահը մարելէն ետեւ՝ հազուած այն կարծր մահճին վրայ ընկաւ և քնացաւ, կամ լաւ ևս այնպէս սլառկած մընաց մինչև որ արևուն առաջին նշոյլներն վանդակաւոր սղտիկ սլառուհանէ մը ներս մտան, սլառուհան մ'որմէ այս զազիր խուցն օդ ու լոյս կ'թափանցէին : Այն ատեն ուխտաւորն սաք ելաւ, իր առաւօտեան աղօթքն ըսաւ, վրան զլուսը շտկեց և դուրս ելնելով Իսահակին խղիկը մտաւ դռնակը կրցածին չափ մեղմիկ վերցնելով :

Հրէայն՝ ուխտաւորին խշտեկին նման խշտեկի մը վրայ սրտեր
էր և վրդովեալ քուն մը կ'քաշէր: Առջի իրկուն հանած զղեստ-
ներն իր չորս դին սրտեր էր այնպէս որ քնանալու ատենը չառ-
նուն չտանին: Իր ճակատին վրայ հողեվարքի նման շիթ մը կ'տես-
նուէր: Իր ձեռներն ու թևերը ջլածից կ'շարժէին՝ որպէս թէ ճի-
ւաղի մը դէմ կ'մաքառէր:

Երբայցի լեզուաւ շատ մը բացաղանջութիւններ ընելէն զատ՝
հետեւեալ խօսքերը անկլօ-նօրման լեզուաւ բացորոշ արտասանեց.
« Ի սէր Աստուծոյն Աբրահամա՛ խնայէ հէք ձերունի մարդ մը .
աղքատ եմ, ստակ մը չունիմ, եթէ երբէք երկաթովդ իմ անդամ-
ներս ջախջախես, դարձեալ չսխտի կարենամ քեզ դո՛հ ընել:

Ուխտաւորը հրէին երազը մինչև վերջը մտիկ ընել չուզեց, իր
դաւազանով անոր դայաւ: Այս դպումն կ'միանար անշուշտ իր ե-
րազին ահաւելի մէկ առարկային հետ, վասն զի ձերունին ընդօստ
կանդ առաւ, իր սպիտակ մազերը գրեթէ դլխին վրայ անկուեցան
և իր հողուստին մէկ մասովը ինքզինքը շուտ մը ծածկելով, մինչ-
դեռ քաղէի մը անդութեամբ միւս մասերը բռներ կեցեր էր, ուխ-
տաւորին վրայ իր սև ու սուր աչերը սևերեց որ վայրագ զարմացում
և ջլուտ երկչոտութիւն կ'յայտնէին:

— Իսահակ, իզնէ մի՛ վախնար — ըսաւ ուխտաւորը — ես իբր
բարեկամ քու քովդ կ'դամ:

— Թո՛ղ Իսրայէլի Աստուածը վարձատրէ քեզ — դո՛չեց հը-
րէայն շունչ առնելով — երազ մը կ'տեսնէի. բայց դովեալ լինի
հայր Աբրահամ, մինակ երազ մ'էր:

Յետոյ՝ պահ մը խորհելով՝ իր սովորական ձայնովը յարեց.
— Բայց այնպէս առաւ կանուխ ի՞նչ ունիս ըսելու խեղճ հը-
րէի մը:

— Սա կուզեմ յայտնել — ըսաւ ուխտաւորը — որ եթէ այս
սունէն անմիջապէս չելնես և ձամբող չշարունակես, շատ հա-
ւանական է որ մեծ փորձանքի մը հանդիպես:

— Սո՛ւրբ Աստուած — ըսաւ հրէայն — ինձի պէս հէք մար-
դու մը վնաս հասցնելով ինչ օղուտ կրնայ ծագիլ:

— Գու իզնէ աւելի լաւ կրնաս դու շակել թշնամիներուդ խոր-
հուրդը — ըսաւ ուխտաւորը, բայց հաւաստի եղիբ տա սրարա-
դային վրայ որ երբ երեկ իրկուն տաճարականը սրահէն անցաւ
իր մահմէտական սպասաւորներուն արայերէն քանի մը խօսք

ըսաւ, աստպրեց որ ուղևորութիւնդ լրտեսեն այս առտու, այս տունէն բաւական հեռու տեղ մը քեզ ձերբակալ ընեն, և Քիլիսայ տը Մալվուաղէնի կամ Բէժինալտ Ֆրօն-տը-Պէօի գըղեակը տանին քեզ:

Կարելի չէ բացատրել թէ ի՞նչ անհնարին սարսափ պաշարեց հրէայն երբ այս լուրն առաւ. կարծես թէ լիովին ուժաթափ մնաց. ձեռներն երկու կողմէն կախեց, դուխը կուրծքին վրայ ընկաւ, ծունկերը դայթեցան, իր մարմնոյն մէն մի ջիղն ոլոր ոլոր դարձաւ և ուխտաւորին ոտքն ընկաւ. չէ թէ մարդու մը պէս որ կամովին կ'ծռի, ծունր կ'դնէ կամ դուժ շարժելու մտօք երկիր կ'պագնէ, այլ այնպիսի մէկու մը պէս որ անտեսանելի զօրութենէ մղեալ՝ դետին կ'տասրալի անկար և անդիմադիր:

—Սուրբն Աստուած Աբրահամու— գոչեց նա իր խորշոմած և գոց ձեռները վեր վերցնելով՝ առանց իր ալէզարդ դուխը դետնէն բառնալու. —ո՛ սուրբ Մովսէս, ո՛ օրհնեալ Ահարոն, երազս անհիմն չէր, և անուրջ մ'ընդունայն չպաշարեր մեզ: Արդէն կ'զգամ որ անոնց սուրն իմ նեարդս կ'պատուեն, կ'զգամ որ մարմինս տանջանքի կ'մատնեն ինչպէս որ Հռաբայի մարդոց և Ամիննի որդւոց վրայ սղոցներ և կացիներ կանցնէին:

—Առք ելիր, Իսահակ և ինձ միտ դիր— ըսաւ ուխտաւորը, որ արհամարհանօք խառն արդահատութեամբ մը կ'դիտէր հրէին այս ծայրայեղ տաղնասլը: —Ահուգողգ իրաւացի է, քանի որ իշխաններ և ազնուականներ միշտ կ'չարչարեն հայրենակիցներդ անոնց ինչքն ու գոյքը կողոստելու համար: Բայց ողբալու ատեն չէ, ոտք ելիր ըսի, և պիտի ցոյց տամ քեզ խոյս տալու միջոց մը: Իսկոյն ելիր դնա այս տունէն՝ մինչդեռ ամէն անեցիք առջի դիշերուան խնջոյքէն ետքը կ'հանդիսին: Ես քեզ անտառին ծածուկ ուղիներէն պիտի առաջնորդեմ, պահնորդին չափ դիտեմ անոնք, և մինչև որ նիզակախաղ հանդիսին դայող աղատանի մը ասպհով պահպանութեան չյանձնեմ քեզ՝ քովէդ չպիտի հեռանամ. դու այնուհետև պաշտպանիդ բարեսիրութիւնը շահելու հնարը կ'դտնես:»

Քանի որ Իսահակ կ'լսէր այս աղատումի միջոցը՝ սկսաւ քիչ քիչ դետնէն վեր ելնել մինչև որ ծունկի վրայ եկաւ. յետոյ իր երկար ալէխառն մազերն ու մօրուսն ետին ձգեց և ուխտաւորին երեսը նայեցաւ իր սուր սև աչերով՝ որոց ակնաբկը թէ

յոյս և թէ երկիւղ կը յայտնէր և լիովին կասկածէ զերժ չէր : Սակայն երբ ուխտաւորին վերջին խօսքը լսեց, կարծես թէ իր նախորդ սարսափն աւելի ուժղին սիրտը զրաւեց և երեսն 'ի վայր դետին ընկնելով՝ պոռաց .

— Ինչպէս ես կրնամ ուրիշի մը բարեսիրութիւնը շահիլ, աւա՛ղ, ի՛նչպէս, միակ միջոց մը կայ քրիստոնէի մը սիրտը վաստակելու, և ողորմելի հրէայ մ'ի՛նչպէս կարող պիտի լինի այս միջոցը դտնել, քանի որ հարստահարութիւններն զինքը Ղազարու չքաւորութեան դուռը հասուցած են : Յետոյ որպէս թէ կասկածը միւս բոլոր զղացումներուն տիրած լինէր, հրէայն յանկարծ դռչեց : — Ի սէր Աստուծոյ, պատանի, զիս մի՛ մատներ . յանուն Արարչին՝ որ մեզ ստեղծեց, թէ հրէայն, թէ հեթանոսը, թէ իսրայելացին և թէ իսմայելացին, մի՛ մատներ զիս : Ես մուրացիկ քրիստոնէի մը սիրտը շահելու միջոցը չունիմ, եթէ այս միջոցը բէ՛նէ մ'անդամ լինի : » Այս խօսքերն ըսելով՝ հրէայն ոտք ելաւ և աղերսալի նայուածքով մ'ուխտաւորին վերարկուն բռնեց : Ուխտաւորն անոր ձեռքէն հեռացաւ, որպէս թէ տարափոխիկ աղտ մ'ունէր անոր շօշափումը :

— Եթէ ազդիդ բոլոր դանձերովն անդամ բեռնաւորուած լինէիր— ըսաւ ուխտաւորը — ես ինչ օղուտ պիտի ունենամ քեզ մնասելովս : Այս հաղուստովս ինքզինքս աղքատութեան ուխտած եմ, և զայն ուրիշ բանի հետ չպիտի փոխեմ այլ միայն ձիումը և վերտ զրահի մը հետ : Սակայն մի՛ կարծեր բնաւ որ քու ընկերութենէդ կ'ախորժիմ կամ քեզնէ շահ մը կ'սպասեմ, եթէ կ'ուզես այս տեղ կեցիր : Սաքսօն Սէտրիկը թերևս քեզ պաշտպանէ :

— Ափսո՛ս— ըսաւ հրէայն— չպիտի հանդուրժէ որ իր հետեւորդներուն միանամ, թէ սաքսօն և թէ նօրման՝ ամօթ պիտի սեպեն խեղճ իսրայելացին ուղեկից առնլու, և սակայն ի՛նչպէս կարելի է ինձ Մալվուաղէնի և Քրօն-տը-Պէօի հողերէն անցնիլ . . . : Քաջ պատանի, քեզի հետ ճամբայ պիտի ելնեմ : Շուտ ընենք, դօտեպինդ պատրաստուինք և խոյս տանք : Ահա դաւաղանդ, ինչո՞ւ համար կը դանդաղիս :

— Չեմ դանդաղիր— պատասխան տուաւ ուխտաւորը իր ընկերին հետ արտորալով . — բայց պէտք է փախչելու միջոցը մը աածել, ետևէս եկուր :

Ռւխտաւորն առաջ անցաւ և մօտակայ խղիկը գնաց, ուր խազարած Ախրթ կ'հանգչէր, ինչպէս որ ընթերցողը գիտէ :— Ալիք, Ախրթ— ըսաւ ուխտաւորը — շուտ ոտք ելիք : Գաղանի դուռը բաց, և թող տուր որ հրէայն և ես դուրս ելնենք :

Ախրթ որուն սրաշածնն թէև այժմ շատ անարդ կերևի մեղ, Սաքսօնեան Անկլիոյ մէջ այնչափ կարևորութիւն կ'ընծայէր իրեն որչափ որ նոյնն ունէր Աւմէ Բթակէի մէջ, Ախրթ կըսեմ, ուխտաւորին դործածած ընտանեկան և մեծասասա լեզուն շատ ծանր դատա : — Ի՞նչ, միթէ հրէայն Ռօթրվուտէն պիտի մեկնի— ըսաւ նա արմկին վրայ յենլով, և առանց խշտիկը թողլու՝ անոր երեսն դուռը բարձր նայելով — և որ մեծն է՝ ուխտաւորին հետ պիտի ուղեկցի' . . . :

— Այսպիսի բան մը չէի կրնար երազել անգամ — ըսաւ Աւամսրա որ նոյն սրահուն սենեակը մտաւ — ինչպէս որ կարելի չէ երևակայել որ հրէայն կտոր մը խողի ասրուխտ գողնայ տանի :

— Սակայն— ըսաւ Ախրթ իրեն բարձի տեղ ծառայող կոճղին վրայ ընկնելով — երկուքնիդ ալ սարտաւոր էք սպասել որ մեծ դուռը բացուի :

— Սակայն— ըսաւ ուխտաւորը՝ հրամայական ձայնով մը — յուսամ որ այս շնորհը չպիտի մերժես ինձ :

Այս ըսելով դանդաղ խողպանին խշտեկին վրայ ծռեցաւ և սաքսօն լեզուով քանի մը բառ փափսաց անոր ականջին : Ախրթ իբր ելեկարական զօրութենէ մը շարժեալ՝ ոտք ելաւ : Այն ատեն ուխտաւորը՝ մասը բերնին վրայ գնելով՝ որպէս թէ զգոյշ լինիլ կը սրատուիրէր անոր, յարեց. — Ախրթ, աչքի բաց, դու սովորաբար խոհեմ ես : Քեզ կըսեմ որ գաղանի դուռը բանաս, վերջէն գործն աւելի աղէկ պիտի հասկնաս :

Ախրթ եռանդաղին փութաց ուխտաւորին կամքը կատարելու՝ մինչդեռ հրէայն և Աւամսրա՝ խողարածին յանկարծասաս փոփոխութեան վրայ զարմացած՝ անոնց կ'հեռուէին :

— Զորի՛ս, ջորի՛ս ո՛ւր է, — ըսաւ հրէայն, երբ գոնէն դուրս դտաւ ինքզինքը :

— Բերէք սա մարդուն ջորին— ըսաւ ուխտաւորը — եւ ինձ մտիկ ըրէ, ուրիշ ջորի մ'եւս բեր ինձ որպէս զի անոր ընկերանամ և այս սահմաններէն ղենքը հեռու տանիմ : Սէտրիկի փարդոյ տալով նոյն ջորին եւս կ'զարձնեմ ասրահովապէս, իսկ

գու — յարեց նա, ու խօսքը Աիւրթին ականջին փսփսալով անարտեց :

— Ամենայն սիրով — ըստ Աիւրթ — ամենայն սիրով, խնդիրդ իսկոյն պիտի կատարեմ : Ն առանձնապէս դնաց ուխտաւորին հրամանն ՚ի գործ գնելու :

— Ար փափաքէի դիտնալ — ըստ Աւամայա երբ իր ընկերը կունակը դարձուց — թէ ձեզի պէս ուխտաւորներ ինչ կ'սովորին Ս. Երուսաղէմի մէջ :

— Մեր մաղթանքն ընել, միմո'ս գու — սրատասխանեց ուխտաւորը — մեր մեղաց թողութիւն խնդրել, և ծովագահութեամբ, հսկումներով և երկայն աշօթքներով զօրանալ :

— Այդ բաներէն աւելի ազգու բաներ կ'սովորիք — սրատասխանեց միմոսը . — վասն զի ինչպէս կարելի է որ աղօթքն ու սպաշաւը կարենան յորդորել Աիւրթը մարդավար լինելու, կամ ծով ու հսկումը՝ ձեզի ջորի մը տալու զինքը մղեն : Եթէ այդպէս լինէր, ստոյգ եմ որ նոյն մարդավարական սրատասխանը պիտի ստանայիր անոր սիրական սև խողէն քու աղօթից և հսկումներու շնորհիւր :

— Աորի՛ր — ըստ ուխտաւորը — դու սաքսօն միմոս մ'ես :

— Իրաւունք ունիս — սրատասխանեց միմոսը — եթէ նօրման ծնած լինէի ինչպէս որ դու ես կարծեմ, ես իրաւունք պիտի ունենայի և խնաստունի կարողը անցնէի :

Նոյն սրահուն Աիւրթ փոսին միւս կողմն երեցաւ ջորիներով : Ճամբորդներն երկու տախտակէ լայն շարժուն կամրջէ մ'անցան, այս կամուրջը ծածուկ դրան հետ հաղորդակցութիւն ունէր և փոքրիկ դունակ մը կար արտաքին պատնէշին վրայ, որմէ անտաւը կ'մտնուէր : Այն ինչ ջորիներուն մօտեցան որ հրէայն դողդոջուն ձեռօք վերարկուին տակէն կապոյտ կտաւէ ծրար մը հանեց և թամբին ետքը տեղաւորեց, իր խօսքին նայելով նոյն ծրարը « փոխնորդ լաթերն, մինակ փոխնորդ լաթերը » կ'պարտնակէր : Այն ատեն իր տարիքէն չսպասուած շտապով և արագութեամբ ջորին հեծնելով՝ իր վերարկուին ծալքերն այնպէս որ դրաւ որ դաւակին վրայի ծրարը բոլորովին ծածկեց :

Ուխտաւորն աւելի ծանր կերպով հեծաւ իր ջորին և մեկնելու ատեն Աիւրթին երկնցուց ձեռքն զոր յետին ակնածութեամբ պաղտ նստ : Խողարանն ուղեւորներուն ետեւն կ'նայէր մինչև որ

անասալին խորերն աներեւոյթ եղան , երբ Աւանդոյին ձայնէն խորին մտածութենէն սթափեցաւ :

— Ախտե՛ն արդեօք , իմ բարեմիտ բարեկամն Ախրթ — ըստ միմտար , — որ այս ամառուան օրս սալորականէն աւելի քաղաքավար և բարեօրաշտ կ'երեխս : Ա՛փափաքէի բոկոսն ուխտաւոր մը կամ սեօղէմ՝ վանահայր մը լինել այդ անասլոր եռանդէդ և մարդավարութենէդ օգուտ քաղելու համար : Երասի լոկ համբոյր մը քաղելով դո՛հ չպիտի լինէի :

— Այս անդամ խելացի խօսք մ'ըսիր , Աւանդա — սրտաստանեց Ախրթ — թէ և լոկ արտաքին երեւոյթի վրայ կ'դատես , և ամենէն խնայտունն ասկէ աւելի շղթնար ընել : Բայց երամակին վրայ հսկելու ասե՛նն եկա :

Այս բնելով՝ դէպ 'ի տուն դարձաւ , միմտին ուղեկցութեամբը : 'Այն սրահուն ուղեորները՝ մանասանդ հրէին զգացած սաստիկ երկիւղէն գրգեալ՝ իրենց ճամբան արագօրէն կ'շարունակէին , վասն զի այն հասակի տէր մարդիկ ուր ուրեմն բուն շարժումներ կ'սիրեն : Ախտաւորն՝ որ կարծես թէ անասալին ամեն ծակ ու ծուկը գիտէր , արտուղի ճամբաներէ քաղելով առջեւն կ'երթար , որով հրէին կասկածները նորէն գրգռեցան , այնպէս որ կ'երեւա՛հայէր թէ պիտի մատնուի և թշնամիներուն ծուղակը պիտի ընկնի :

Արդարեւ՝ իր կասկածները ներելի էին , վասն զի՝ 'ի բաց աւելալ թերեւ թեաւոր հուկերը , երկրի , ծովու և օդին մէջ շկարցեղ մ'որ նոյն ժամանակի հրէից պէս՝ անդուլ , ընդհանուր և անհաշտ հալածանաց ենթակոյ լինի : Ամենամեթե և անհիմն բարուր մը , զուր և անտեղի ամբաստանութիւն մը բաւական էին իրենց անձն ու գոյքը ժողովրդեան կատաղութեան մասնելու , վասն զի՝ 'Նօրման , Սաքսն , 'Վանեցի և Բրիտան՝ թէ և իրարու ներհակ ցեղեր էին , կարծես թէ այս ժողովրդեան ամեն շարիք հասցնելու կ'մրցէին , և կրօնական սրբաւ կ'սեօղէին զայն աստուծոյ , անդոսնելու , կողոպտելու և հալածելու : 'Նօրմանեան թագաւորները և անկախ ազնուականներն՝ որ ամէն բանական գործերու մէջ՝ անոնց օրինակին կ'հետեւին՝ այս բարեօրաշտ ժողովրդեան դէմ՝ աւելի կրնանաւոր և շահապետ հալածանք մը կը շարունակէին : Ծօհն թուղաւորին համար կ'օրտովեն , և այս սրտամաթիւնը շատերը գիտեն , թէ իր արքայական մէկ գղեկին մէջ հարուստ հրէոյ մը բանաստիկելով՝ ամէն օր անոր բերնէն

ակուսյ մը հանել կ'սոց եղեր, սյնալէս որ՝ երբ խեղճ խորայե-
լացիին ակուսները կ'խառնեն աւեր դարձան՝ յանձն առաւ մեծ-
կակ գումար մը վճարելու, և այս գումարը կորցելու համար
բանասորը շարշարեր էր դանի, Երկրին մէջ գանուած պատ-
րաստ գրամը սոյն հաշվածական ժողովրդեան ձեռքն էր, և ազ-
նուականներն՝ իրենց վեհապետին օրինակին հետեւելու շէին վա-
րաներ՝ ամէն տեսակ հարստահարութեամբ և նոյն իսկ մարմնա-
կան տանջանքս զոյն շորթելու համար, Սակայն շահամուտ թեան
ազգած կրտսրական արխութիւնն կ'յորդորէր հրեաներն ամէն
վերահաս շարեաց տակալու, Անկիկոյ նման բնապէս հարուստ
երկրի մը մէջ իրենց բրած անբաւ վաստակին սիրոյն համար,
Ամէն տեսակ վճատական գործերու, նոյն իսկ մեր արդէն յի-
շած յատակ տրոց հակառակ՝ որ հրէից վրոց կ'ծանրանային՝
իբր հրէական հարկ, մինակ զանոնք կեղեքելու և կողոպտելու
համար հաստատուած էր, դարձեալ հրէաները կը շաանային,
ահապին գումարներ կ'դիզէին, որ փոխանակադիրներու միջո-
ցաւ ձեռքէ ձեռք կ'անցնէին — գիտ մ'որուն համար կ'ըստի
թէ վաճառականութիւնն անոնց պարստաոր է, և այս միջոցա-
կարող կ'լինէին իրենց գոյքը քաղքէ քաղաք փոխադրել, սյն-
ալէս որ եթէ այս երկրին մէջ հարստահարութեամբ նեղուէին,
տրիշի մը մէջ իրենց ինչքն սպահով գանուին:

Այսպէս հրէից ժլատութիւնն ու յամառութիւնը կերպով մը
իրենց տիրապետներուն կրօնամուտ թեան և բանակալութեաններ-
հակ դալով՝ իրենց կրած անդուտ հաշվածանաց համեմատ կ'ա-
ւելնային, իսկ առաւտուրի մէջ սովորաբար իրենց հաւաքած
հարստութիւնն արշափ որ սակայ վտանգ կ'սպառնար, ասին ա-
տեն ալ իրենց ազգեցաութիւնը ստարածելու կ'օգնէր և տեսակ մը
պաշտպանութիւն կ'սպահովէր: Ահա այս վեհակին մէջ կ'ստորէին
հրէաներն, և իրենց բնասորութիւնն՝ միշտ բնասարարեալ՝ ար-
թուն, կասկածաւ և վեհերոտ էր, նոյնապէս կամակար, անբա-
րեակէր և սպառնալից վտանգներէ խոյս տալու յաջողակ:

Արբ ուղեորներն շատ մը խտտորնակ շախիղներէ շոյս բնդ
փոյթ անցան, տխրատորբ բերանը բացաւ և ըսաւ:

— Այս քոյքոյտն կազնին Գրօն-ար-Պեօի հողերուն սահ-
մանը կ'յայտնէ, արդէն Վարվուսպէնի կալուածներէն շատանց
հեռացած ենք: Այստեհեան անոնց հետադուտ թեան վախնա-
լու բան մը չունիս:

— Աշրանի թէ անտնոց կառքերուն անխնեցիկ խորտակին— ըստ հրէան — Փարաւոնի հրտակներուն պէս, որ ծանր ծանր յառաջ քալեն: Բայց մի թողութիւն զիս, բարեօրրառ ուխտաւոր: Միայն թեր անդամ մ'այն վէս և վայրայ տաճարականն ու իր տարակինացի գերիներն, որ շին յարդեր ոչ երկիր, ոչ սուն, ոչ աւատական հայ:

— Մեր ուղեկցութիւնն այս անգ և՛ վերջանայ— ըստ ուխտաւորը — և պէտք է որ բամբակիք, վասն զի իմ և քու կարգի մարդերու շվայլեր ասկէ աւելի ուղեկից դանտիլ: Ասկէ զաս' ինչ օղնութիւն կրնաս սպասել ինձի պէս խաղաղասէր ուխտաւորէ մը՝ երկու սարսաղէն հեթանոսներու դէմ:

— Ա՛ քաջ սրտանի— ըստ հրէայն — դու կարող ես սաշտօղանել զիս, և զիտեմ որ կամք ունիս: Թէև արքայաւեմ, քեզ պիտի վարձատրեմ, չէ թէ դրամով, վասն զի դրամ չունիմ, վկայ է հոյր Արրահամ, այլ . . . :

— Կրամ և վարձք քեզնէ չեմ խնդրեր— ընդմիջեց ուխտաւորն — ինչպէս որ արդէն ըսի: Քեզ առաջնորդել կարող եմ, թերևս ՚ի հարկին սաշտօղանեմ նաև քեզ, վասն զի հրէայ մը սարակինացիի մը դէմ սաշտօղանելը քրիստոսնէի մ'անվայել գործ չեմ համարիր: Աստի, հրէայ, և՛ փափաքիմ քեզ ստահով սաշտօղաններու ձեռք յանձնել: Այս միջոցիս Շէֆֆիլտ քաղաքէն հեռու շնք, և այն անգ կարող ես ազդակիցներ և անտնոց մօտ սպառէն մը դանել:

— Յակորաց օրհնութիւնը քու վրայ իջնէ, քաջ սրտանի . . . — ըստ հրէայն: Շէֆֆիլտի մէջ իրօք Չարկեթ ազդականիս հետ կրնամ բնակիլ, և իմ ուղևորութիւնս անվտանգ շարունակելու հնար մը գտնել:

— Ըստ լուս — սրտախտանեց ուխտաւորը — ուրեմն Շէֆֆիլտն և՛ բամբակիք և և՛ թէ կէս ժամ ևս առաջ քշենք նոյն քաղաքին ստջեր և՛ հասնինք:

Այս կէս ժամն երկու ուղևորները լուս ու մունջ անցուցին, կարելի է որ մէկ կողմն ուխտաւորը կ'անդամէր հրէին խօսք ազգելու, և թէ անհրաժեշտ հարկ չլինէր, միևս կողմն հրէայն չէր իշխեր խօսակցութեան յորդարել անձ մ'որուն ուղևորութիւնը՝ Ա. Պերեզման ՚ի սրբութեան գրոշմ կ'ընծայէր անոր բնաւորութեան: Աւերջապէս բլրակի մը գաղաթը կանկ ստին և

ուխտաւորը՝ Շէֆֆիլտ քաղաքը ցոյց տալով՝ որ իրենց սարկիս
ներքե կ'աւրածուէր, սա խօսքերը կրկնեց. — ուրեմն այս տեղ
իրարմէ բաժնախնք պիտի :

— Բայց խեղճ հրէի մը շնորհակալութիւնը չ'ընդունա՞ծ կու-
ղես մեկնիլ — ըստ Կասահի . — վասն զի շեմ համարձակիր
առաջարկել քեզ որ Չարեթ աղգակա՛նիս սուներ դաս, կարելի
է առած ծանրութիւնդ վարձատրելու միջոց մը սոյ կ'ընձ :

— Արդէն ըսի քեզ — սրաասխանեց ուխտաւորը — որ վարձ
շեմ ուղեր քեզնէ : Սակայն եթէ քու սրարաւարաններուդ երկայն
ցանկին մէջ, հաճիս՝ իմ սիրոյս համար՝ ճանկիդ ներքե գրա-
նուղ քանի մը դժբաղդ քրիստոնեաներ բանակ և շղթայէ ա-
զատ սրահել, այս առատ քեզ ըրած ծառայութեանս փոխարէնը
լիովին ստացած պիտի լինիմ :

— Աեցի՛ր, կեցի՛ր — ըստ հրէայն՝ ուխտաւորին վերաբերուն
բռնելով. — այդ ըսածէդ ետել բան մը կուղեմ ընել, քեզի հա-
մար ընել : Աստուած գիտէ որ հրէայն աղքատ է, այո՛, Կաս-
հի իր աղգակիցներուն մէջ մտրացկան մ'է : Բայց ներէ ինձ
եթէ գուշակեմ քեզ թէ այս սրահուս ամենէն աւելի ինչ բա-
նի կարօտ ես :

— Եթէ ճիշտ գուշակես — ըստ ուխտաւորը — դարձեալ այն-
պիսի բան մ'է իմ խնդրածս որ շպիտի կարենաս ինձ տալ,
եթէ ըսածիդ պէս որչափ աղքատ՝ նոյնչափ հարուստ լինէիր :

— Ըսածի՛ս պէս մի — ձայնեց հրէայն : — Ա՛հ, հաւտախօս-
քիս, բուն ճշմարտութիւն մ'է ըսածս, կողոսպեալ, սրարտքի
տակ ճնշուած, թշուառ մարդ մ'եմ ես : Ախր իմ մարդիկ իմ
ձեռքէս առին խլեցին իմ ստակս, նաւերս և բոլոր գոյքս :
Սակայն կրնամ ըսել թէ ինչ բանի պէտք ունիս գու, և թե-
րևս նոյնը ճարեմ : Այժմ քու միակ փափաքդ է երիվար մ'ու-
ղրահ մ'ունենալ :

Ուխտաւորը գող մ'ղգաց և յանկարծ հրէին գառնալով ըստ
արտորնօր . — Ա՛ր սաստանան թեւաղբեց քեզ այդ գուշակութիւ-
նը :

— Ի՞նչ փոյթ է — ըստ հրէայն ժողտելով — բաւական է որ
ճշմարիտ լինի, և ինչպէս որ փափաքդ գուշակեցի, կարողեմ
նաև դայն լնուլ :

— Բայց նկատէ անդամ մ'իմ կարգս, իմ հողատուս, իմ

ուխտան — ըստ ուխտաւորը :

— Ես քրիստոնեաները քաջ կ'ճանչեմ — պատասխանեց Տրեայն . — ձեզնէ ամենէն մեծն ու ազատանին ստեպ դաւադան 'ի ձեռին սնապաշտական ապաշխարհանք կրելու կելնէ և բոկոսան մեռելներու դերեզմանը այցի կ'երթայ :

— Մի' հայհոյեր , հրէ'այ — ըստ ուխտաւորը վէսօրէն :

— Ներէ ինձ — ըստ հրէայն — անդդուածեամբ խօսեցայ : Սակայն երեկ իրկուն և այս առտու բերնէդ քանի մը խօսքեր ելան՝ որ կայծքարէն ցայտող նշոյլներու պէս՝ ներքին մետաղը մատնեցին . և ուխտաւորի այս հաղուստիդ ներքև ասպետի մը ոսկի շղթան և մտրակները պահուած են : Երբ այս առտու իմ անկողնիս վրայ ծռեցար՝ անոնք աչքիս զարկին :

Ուխտաւորն իր ժպիտը չկրցաւ բռնել : — Իսահակ , — ըստ նա — եթէ հանդերձդ նոյնպիսի հետազնին աչք մը քննէր , արդեօք ինչ բաներ պիտի գտներ :

— Մի խօսիր այդ կիտին վրայ — ըստ հրէայն դոյնը նետելով . ասդ իր կաղամարն ու թուղթ հանեց շտապաւ , իբր թէ խօսակցութեան վերջ տալ կ'ուզէր , և սկսաւ դրել թուղթը իր ցեղապետին ուղղեալ , առանց ջորիէն վար իջնելու : Երբ դիրն աւարտեց , տոմսակն որ եբրայերէն էր , ուխտաւորին տուաւ ըսելով . — Լիտիսդրի քաղքին մէջ ամէն մարդ կ'ճանչէ Լոմպարտացի Աիրկադ ճէյրամ հրէայն , այս տոմսակն անոր տուր . վեց հատ Միլանի գրահ ունի ծախու . ամենէն գէշը թագակիր գլխի մ'անդամ կ'վայլէ . տասը հատ ընտիր նժոյգ , որոց ամենէն վատը իր աթոռին համար պատերազմող թագաւորի արժանի է : Ասոնցմէ ընտրածդ քեզ պիտի տայ՝ նոյնպէս դուպարին համար ինչ որ պէտք ունիս . երբ դուպարը վերջանայ՝ առջի վիճակին մէջ զանոնք տիրոջը կը գարձնես եթէ ծախու առնու համար պէտք եղած դումարը չունենաս :

— Բայց , Իսահակ — ըստ ուխտաւորը ժպտելով — միթէ չըդիտես որ այս տեղակ խաղերու մէջ յաղթահարեալ ասպետին գէնքն ու երիւկարը յաղթողին կ'արուին իբր մրցանակ : Աարելի է որ ես յաղթուիմ , և հետեասպէս կորուսեմ ինչ որ չեմ կրնար ոչ վճարել և ոչ տեղը լեցնել : »

Հրէայն այս ենթադրութեան վրայ փոքր ինչ շուարեցաւ , բայց արիտ թեամբ զինուելով՝ շուտ մը պատասխանեց . — Հայր Աբրա-

համու օրհնէնքը քու վրայ պիտի լինի , քու նիզակդ Մովսէսի դաւազանին պէս զօրաւոր պիտի լինի :

Այս ըսելով՝ իր ջորիին զլուսը դարձուց որ ճամբայ ելնէ , երբ ուխտաւորը՝ ըստ կարգի՝ անոր վերարկուն բռնեց և ըսաւ . — Սակայն՝ Իսահակ , դու չես գիտեր թէ որչափ մեծ է վտանգը : Շատ կարելի է որ երիվարն սպաննուի և զրահը խանդարի , վասն զի միտքս դրեր եմ չինայել ոչ ձի և ոչ մարդ . ասկէ զատ քու ցեղակիցներդ ընդ ունայն ոչ ինչ չեն տար մարդու , պէտք է որ փոխարէն մը տրուի իմ կողմէս :

Հրէայն ոլորեցաւ իր քուռակին վրայ , փորի ցաւէ բռնուած մարդու մը պէս , սակայն իր լաւազոյն զգացումները զսպեցին իրեն յատուկ ժլատութիւնն , ուստի ըսաւ . փոյթս չէ , փոյթս չէ , թող որ երթամ : Եթէ ինձ մնաս մը պատահի , դու չպիտի տուժես . եթէ բան մը վճարել հարկ լինի Աիրկաս ճէյրամ կրնայ ներել քեզ իր Իսահակ աղբականին սիրոյն համար : Մնաս բարե , բայց ուս խօսքս մտիկ ըրէ , քաջ պատանի , — դոչեց նա ետ դառնալով . — մի՛ խիզախէր չափէն աւելի այն խառնազանձ կռուին մէջ . այս յորդորս ոչ երիվարին և ոչ զրահին համար կ'տամ , այլ պարզապէս քու կեանքիդ և մարմնոյդ համար :

— Շնորհակալ եմ շատ — ըսաւ ուխտաւորը նորէն ժպտելով . — քու մարդասիրական զգացումդ չպիտի մոռնամ , և եթէ՝ փոխարէնը չհատուցանեմ՝ ըսել է թէ բազդը չէ յաջողեր ինձ :

Այնուհետեւ իրարմէ հեռացան և տարբեր ճամբով Շէֆֆիլտ քաղաքը մտան :

ԳԼՈՒԽ Ե .

Շարք անհամար սպայից՝ հետևորդ ասպետաց՝
 Պերձ՝ ՚ի զէն՝ ժիր ՚ի զարդ՝ դային հուս ընդ յառաջ՝
 Մին պնդէր սաղաւարտ , մի ուրիշ տէգ ածէր ,
 Երրորդ մի փողփողուն վահան մի ճոխ վարէր .
 Ոսնովն անձանձիր զարնէր դափը երիվար ,
 Ծամէր սանձ ոսկեղէն՝ և վրնջելով փրփրար՝
 Նժոյզներու հեծած՝ զինադործ և դարփին
 Խարտոցներ ՚ի ձեռին՝ մուրճեր կախ ՚ի կողին՝
 Թոյլ վեղարդից դամեր՝ ասարբի փակ տային :
 Գեղացիք փողոցներ բռներ էին գունդ գունդ
 Ծաղրածուներ դային բիրերով սիրա ՚ի Թունդ :

ՊԱԼԱՄՈՆ ԵՒ ԱՐԿԻՏ

Մնկլիական աղջին վիճակն այն ժամանակը բառական թշուառ էր : Տիչարտ թաղաւորը տարակայ և Աւստրիոյ նենդաւոր և անգութ դքսին իշխանութեան ներքե զերի կ'մնար . նոյն իսկ իր դերութեան վայրն անցայտ էր , և իր հպատակներէն շատերն որ նոյն պահուն՝ ամէն տեսակ բռնութեանց ենթակայ էին , վեր ՚ի վերոյ զխտէին իրենց վեհասպետին ճակատագիրը :

Ճօհն իշխանը՝ Առիւծասիրտ Տիչարտի անհաշտ թշնամի՝ Փրանսայի թաղաւորին հետ միացած՝ իր բոլոր աղղեցութիւնը կը գործածէր Աւստրիոյ դքսին վրայ՝ որպէս զի իր եղբօրը դերութիւնը երկարէ , թէև ասորմէ շատ բարիք տեսեր էր : Նոյնպէս իր կուսակցութիւնը զօրացնելու կ'աշխատէր տէրութեան մէջ՝ որպէս զի՝ եթէ թաղաւորը մեռնի՝ ինքը աթոռն էլնէ՝ դահածառանդ իշխանին տեղ՝ որ էր Բլանդաժընէ Ժէօֆֆրէյի որդի՝ Բրիտանիոյ դուքս Արթիւրն՝ Տիչարտի կրտսեր եղբայրն , այլ Ճօհնէն մեծը : Ինչպէս որ յայտնի է՝ վերջէն այս յափշտակութիւնը ՚ի կատար հանեց : Երթեթև , շուայտ և նենդածէտ բնաւորութեամբը Ճօհն դիւրաւ շահեցաւ ոչ միայն այն անձերն որ իրենց մեղապարտ դաւերուն համար Տիչարտի բարկութենէ վախնալու իրաւունք ունէին՝ այլ նաև այն «անօրէն քաջերուն» դասն՝ որ խաչակրութենէ դարձեր էին և Արևելքի մոլութեանց մէջ շաղուելով՝ իրենց կալուածքը սպառեր , բնաւորութիւնը կարծրացեր էր և քաղաքային խռովութիւններու մէջ ճարակ դասելու կ'յուսային :

Հասարակայ թշուառութեան և երկտառակութեան այս որոմներուն՝ հարկ է յաւելուլ նաև այն անհամար վտարակներն՝ որ աւա-

տական իշխաններու բռնութենէ և անտառային օրինաց խտու-
թենէ յուսահատութեան մէջ ընկնելով՝ զատ զատ դունդեր կազ-
մեր՝ դաշնակցեր և անտառներ ու դաշտեր դրաւելով՝ դիմադրաւ
կ'կենային երկրին օրինաց և արդարութեան ատեաններու դէմ :
Նոյն իսկ ազնուականներն՝ իրենց դղեակներուն մէջ ամրացած՝ իբր
ինքնագլուխ մանր իշխաններ՝ կ'տիրէին իրենց հողերուն վրայ՝ և ու-
րիշ խումբերու գլուխը կ'անցնէին, որ միւս վտարանդի վտարակնե-
րուն չափ անօրէն էին և բռնաւոր : Այս զօրքերը պահելու, նոյն-
պէս՝ ամբարտաւանութենէ յառաջ եկած շռայլութեան և ճո-
խութեան ծախսերն հողալու համար՝ ազնուականները ծանր վաշ-
խով ահագին գումարներ հրէաներէն փոխ կ'առնուին, գումարներ
որ՝ իբր քաղցիկը՝ իրենց կալուածքը կ'կրծէին, և անբուժելի կը
դառնար՝ եթէ աններելի բռնութեամբ իրենց պարտաաէրներէն ա-
զատելու առիթ մը չպատահէր :

Իրաց այս դժբաղդ վիճակէն՝ Մնկլիոյ ժողովուրդը ծանր հար-
կերու տակ կ'ընկճէր, ներկային մէջ սաստիկ կ'տառապէր, և ա-
պաղային մէջ աւելի սոսկալի տառապանք կրելու կ'երկնչէր :
Այս թշուառութեանց չափը լցաւ՝ տարափոխիկ ախտ մ'էս վրայ
գալով՝ որ շատ վտանգաւոր էր և երկրին չորս դին կ'ճարակէր
անհնարին կոտորած ընելով ստորին կարգի մարդոց մէջ, որ անշահ
սնունդ և աղտեղի բնակարաններ ունէին, թէև ասոնց բազմնա-
ւելի նախանձելի էր ապրողներուն՝ քանի որ կ'աղատէին այն չա-
րիքներէն զոր ապաղան կ'սպառնար :

Սակայն այս դառնադառն աղէտից մէջ՝ աղքատ և հարուստ,
ուամիկ ու ազնուական՝ մեծ հետաքրքրութեամբ կ'վառէին նիղա-
կախաղ դուպարի մ'առթիւ որ այն դարուն ամենէն երևելի տեսա-
րանն էր, ճիշտ այն հետաքրքրութեան նման որով կ'վառի Մաս-
րիտի սովալուկ քաղաքային՝ որ՝ թէև թանկ մը չունի իր ընտան-
եաց ուտելիքն հողալու՝ բայց ցուլամարտին կ'վաղէ : Այս պար-
տաւորութիւն, և ոչ ծերութիւն արդելք չեն լինիր Սպանիացոց
այս տեսակ տեսարաններ յաճախելու :

Ինչպէս որ այն ժամանակը կրսէին՝ Ջինուց հանդէսն Եշպի քա-
ղաքը՝ Լիսիադրի նահանգին մէջ տեղի պիտի ունենար, փասն զի
ամենէն հուշակաւոր ախոյաններն՝ նոյն իսկ Ճօհն թաղաւորին ներ-
կայութեան՝ ասպարէզ պիտի իջնէին, և ինքն անձամբ այս հան-
դէսը պատուելու փափաքեր էր : Աւստի այս դուպարն առ հասա-

քակ ամենուն ուշադրութիւնը դրաւ եր , և ամեն դասու մարդկան անհամար բազմութիւն մ'որոշեալ առաու մրցարանին տեղը եկեր հասեր էին :

Այս տեսարանս վիպային երևոյթ մ'ունէր : Եշպի քաղքէն մղոն մը հեռի անտառ մը կար՝ որուն եզրը կ'տարածուէր լայնացիր և դալարադեղ մարդագետին մը . սոյն մարդին մէկ կողմէն կ'սլատէր սլուրակը , միւս կողմէն առանձին կաղնիներ՝ որոց մէկ քանին յաղթ էին և ստուար : Գետինն՝ որ կարծես թէ զինական մարզից համար յատկապէս յարդարուեր էր՝ ամէն կողմէն զառ ՚ի թափ կ'սահէր կ'իջնէր մինչև հարթ վայր մ'ուր հաստատուն սլատնէշներու միջոցաւ ցանկ շրջապատեր էին , և որ քառորդ մղոնի չափ երկար և շուրջ կէս մղոն լայն էր : Մրցարանին հարաւային և հիւսիսային կողմերը՝ մարտիկներու մուտ տալու համար փայտէ դռներ կային՝ ուսկից երկու ձիաւորներ կարող էին քովէ քով անցնիլ : Իւրաքանչիւր դրան մօտ երկու սուրահանդակ կեցեր էին , վեց փողարներու և նոյնչափ քարոզներու հետ , նոյնպէս դունդ մը զինակիր սլահասլաններ՝ որպէս զի կարդ կանոն սլահեն և այս զինուորական գուպարին մասնակից գտնուելու համար ներկայացող աստեաներու հանգամանքը ստուգեն :

Հարաւային դռնէն անդին՝ հողին բնական բարձրութեամբ յօրինուած հողաբլրի մը վրայ՝ հինգ փառաւոր վրաններ կ'տեսնուէին կարմիր ու սև դրոշակներով զարդարուած՝ որ հինգ մենամարտիկ ասպետներու ընտրած դոյներն էին : Արաններուն լարերն էին նոյնադոյն : Մէն մի վրանի առջև կախեր էին մարտիկ ասպետին վահանը՝ որուն մօտ կեցեր էր զինակիրն՝ այլանդակ կերպով ծպտեալ՝ այս է իբր վայրենի կամ շահապետ , կամ իբր ուրիշ մտածին էակ մը՝ ինչպէս որ վերջապէս իր տիրոջը ճաշակը և գուպարին ժամանակ խաղալիք դերը կ'սլահանջէր :

Կեդրոնին տաղաւարը՝ իբր սլատոյ վայր՝ յատկացած էր Պրայն տը Պուա Աիլպերի՝ որուն համբաւն՝ ամէն ասպետական խաղերու մէջ՝ նոյնպէս սոյն գուպարին մասնակցող ձիաւորներու հետ ունեցած յարաբերութիւնը՝ այնպէս բերեր էին որ հետամուտներու դնդին մէջ եռանդազին ընդունուեր էր և մինչև անգամ իրենց սլատն ու առաջնորդը հռչակեր էին զանի , թէև տակաւին նոր տեսնուեր էին անոր հետ :

Իր տաղաւարին մէկ կողմը կանգներ էին Տէժինալտ Քրօն : տը

Պէօի և Ֆիլիպ տը Մալվուազէնի վրանը , և միւս կողմը՝ Հիւկ տը Արէնդմէսնիլ՝ դրացի՝ ազնիւ պարոնի մը , որուն նախահայրն՝ Աիլ-յէմ յաղթողին և իր որդւոյն Աիլ-յէմ Տըֆըսի օրօվը արքունի մատակարար էր . իսկ Ռալֆ տը Աայբըն՝ որ Ս. Երուսաղէմի կարգին ասպետ մ'էր , և Էշայի-տը-լա Ջուշի մօտ՝ Հիւտէր կոչուած տեղը քանի մը հին կալուածներ ունէր , հինգերորդ վրանին բնիկն էր : Մրցարանին մուտքը՝ վեց կանդուն լայն անցք մը թեթեւ զառ 'ի թափով մը դէպ 'ի հողաբլուրը կ'տանէր՝ որուն վրայ վրաններ կանդներ էին : Այս անցքն երկու կողմէն ամուր պատնէշներ ունէր , նոյնպէս և վրաններուն առջևի դաշտավայրը , և այս ամէնը զև նակիրներ կ'պահպանէին :

Մրցարանին հիւսիսային կողմի դուռն ալ նոյն մուտքն ունէր՝ երսուն ոտք լայն , որուն ծայրը ընդարձակ միջոց մը կար ցանկապատ՝ այն ասպետներուն համար որ ախոյաններու դէմ 'ի սրայքար ելնելու տրամադիր էին . նոյն ցանկապատէն հեռու վրաններ կային՝ որոց մէջ ամէն տեսակ սրաշար և ուտեստ դրեր էին , նոյնպէս զինագործներ , պաշտօնատարներ և ուրիշ շատ մը սպասաւորներ , որպէս զի 'ի հարկին պատրաստ գտնուին պէտք եղածը հողալու :

Մրցարանին արտաքին կողմն առ ժամանակեայ սրատշղամներ կային , օթոցներով և դորդերով ծածկուած՝ և հանդիսատես կանանց և ազնուականներու համար բարձերով զարդարեր էին : Այս սրատշղամներու և մրցարանին միջևը տեղ մը պահուած էր զեղացի զինուորականներու և ստորին կարգէն աւելի բարձր անձերու . այս միջավայրը թատրի մը ստորավայրին (pit) կ'նմանէր : Խառն 'ի խուռն խուժանը՝ յատկապէս պատրաստուած դալարուտ բլրակներու վրայ կ'դադարէր և՛ այս բնական բարձրութենէ՛ կարող էր սրատշղամներուն վրայ տիրել և մրցարանին տեքքը վայելել աւնարդել : Այս կայաններու շատութիւնը բաւական չսեպելով՝ հարիւրաւոր հանդիսատեսներ մարդաղետինը շրջապատող ծառերուն վրայ ելեր դադարեր էին , և նոյն իսկ շինական մօտաւոր եկեղեցւոյ մը զանդակատունը խոններ էին :

Այս ընդհանուր կարդադրութիւններէն ետև՝ կ'մնայ մեզ յիշատակել մրցարանին արևելեան կողմը , և նոյն իսկ կեդրոնատեղին կանդնած սրատշղամն , որ՝ հետևապէս՝ ճիշդ այն վայրին դիմացը կ'ընկնէր՝ ուր մարտիկներն իրարու սխախ զարնուէին : Այս սրատշ

դամը միւսներէն աւելի բարձր էր , աւելի շքեղ և զարդարուն և
տեսակ մը դահ ունէր ամպհովանիով՝ որուն վրայ արքունի զինա-
դրոշմներ կ'փայլէին : Զինակիրներ , սպաներ , թիկնապահ զին-
ւորներ հաղուած շքուած այն պատշգամին բոլորը շարուեր էին ,
որ ճօհն իշխանին և հետևորդներուն սահմանուած էր : Մրցարա-
նին արեւմտեան կողմը՝ սոյն պատշգամին զիմացն նոյն բարձրու-
թեամբ ուրիշ պատշգամ մը կ'տեսնուէր որ աւելի սքանազարդ էր
քան ճօհն իշխանինը : Ամենազեղանի պատանիներու և օրիորդնե-
րու խումբ մը՝ որ կանաչ ու վարդագոյն քմածին զգեստով զար-
դարուեր էին՝ համազոյն աթոռ մը կ'բոլորէին : Գրօշներու և
նարօտներու մէջ՝ որոց վրայ նշմարելի էին վիրաւոր սիրտեր , հը-
րատապ սիրտեր , արիւնալի սիրտեր , աղեղներ և կապարճներ ,
մէկ խօսքով Աուպիտոնի յաղթանակին նուիրուած ամէն դուհիկնը-
շանակները , շողշողուն արձանաղիբ մը կ'տեսնուէր՝ որմէ հանդի-
սականները կ'հասկնային թէ այն պատուոյ դահը Գեղեցիութեան և
սիրոյ Բարոհոյն յատկացած է :

Սակայն ո՞ր տիկինը պիտի ներկայէր Գեղեցիութեան թաղուհին
այս պարագայիս մէջ՝ ոչ որ կարող էր դուշակել :

Նոյն միջոցին ամէն դասէ դունդ դունդ հանդիսականներ յառաջ
կ'անցնէին որ իրենց յատուկ կայանները նստին , թէև որոշ տե-
ղերու համար կռիւր պակաս չէր : Քանի մը պահապան զինուոր-
ներ առանց դժուարութեան շատ մը վէճեր դադրեցուցին , և իրենց
տապարներու կոթերն , և թուրերու դաստակներն՝ իբր հզօր փաս-
տեր՝ դորժ տեսան ըմբօսաներն զգաստութեան բերելու համար :
Գարձեալ բարձրադոյն և հակառակ դասի մարդկան վէճերու ալ
վերջ տրուեցաւ սուրհանդակներու՝ կամ Աիլիմ տը Աիվիլ և
Ստէֆըն տը Մարվիվալ՝ հանդիսին վերակացուներու ձեռօք , որ
ոտքէն ցղլուխ զինեալ՝ վեր վար մրցարանին ամէն կողմերը կ'վա-
զէին որպէս զի հանդիսականները կարդի բերեն :

Տակաւ առ տակաւ քաղաքային հաղուստով եկող որեարն ու
ասպետները պատշգամները լցան՝ որոց պերճագոյն վերարկուները
կանանց զուարթաղին և շքնաղ զգեստներու հետ հակասրատիկեր մը
կ'ընծայէին : Այս կիներն որ մարդկան դասէն աւելի շատուր է-
ին՝ վաղեր եկեր էին որպէս զի վայելեն այնպիսի տեսարան մ'որ
թերևս իրենց ախորժելի շերեէր խիստ վասնդաւոր և արիւնահեղ
լինելուն :

...աններ և երևելի անձեր, նյութա այնպիսի
 ...ական մարդիկ որ համեստութենէ, աղքատութենէ, կամ
 անհիմն փողոսներ ունենալով չէին կրնար աւելի բարձր տեղնստիլ,
 եկան ու մրցարանին միջավայրը բռնեցին: Մանաւանդ այս վերջիններ
 ռու մէջ նախագաստութեան վէճերը շատցան:

— Անհաւատ շուն — ըսաւ ծերունի մ'որուն մաշած պարեգօտէն
 իր աղքատութիւնը կ'յայտնուէր, իսկ իր սուրը, դաշոյնն և ոսկի
 շղթան կ'ցուցնէին որ ազնուականի տեղ կ'ուզէր անցնիլ — դայլի կո-
 րիւն, ինչպէս կ'յանդգնիս քրիստոնեայ մը, ինձի պէս Մծնտիտէի ա-
 րենակից նօրման ազնուական մը հրել:

Ծերունին այս բիրտ կշտամբանքը կ'ուղղէր մեզի ծանօթ Իսահա-
 կին, որ պերճօրէն, մանաւանդ շքեղօրէն հազեր էր նարօտազարդ և
 մուշտակապատ թիկնոց մը, և սրաշղամին վրայ տեղ բանալու կ'ըն-
 նար իր Ռեպեկա դեղանի աղջկան, որ Էշտի եկեր էր հայրը դանե-
 լու, և այն միջոցին անոր թեկն յենած՝ կ'ստակար ժողովրդեան բար-
 կութենէն՝ որուն պատճառ սուեր էր իր հօրը յանդգնութիւնը: Սա-
 կայն Իսահակ որ՝ ինչպէս ուրիշ առթիւ տեսանք, երկշտ կ'երեւէր,
 քաջ կ'զգար որ նոյն պահուն վախնալու բան մը չունէր: Ժլատ և շա-
 րասէր ազնուականներ չէին կրնար այն բաղմամբօխ վայրերն՝ ուր իրենց
 աստիճանակից անձեր կային, դիմքը թշնամանել: Այս տեսակ դումա-
 րութեան առեն՝ հրէաներն ընդհանուր օրինաց սրաշտպանութեան
 ներքե էին, և եթէ այս երաշխաւորութիւնն ալ բաւական չլինէր,
 շատ անգամ այնպէս կ'պատահէր որ նոյն հանդէսներուն մէջ քանի մը
 սարսններ կ'զանուէին որ՝ անձնական շահու համար՝ պատրաստ էին
 անոնց սրաշտպան կանդնելու: Այս սրաղայիս մէջ՝ Իսահակ սովորա-
 կանէն աւելի վատահ էր, վասն զի քաջ դիտէր որ ճօհն իշխանն նոյն
 միջոցին Եօրբի հրէաներէն ահաղին փոխառութիւն մ'ընելու կ'բանակ-
 ցէր՝ քանի մը դոհարներ և կալուածներ աւանդ տալով: Այս փոխա-
 րութեան մէջ Իսահակ մեծ մաս մ'ունէր, և քաջ դիտէր նաև որ իշ-
 խանն այս գործողութիւնն 'ի կատար հանելու կ'փափարէր և՛ իր ներ-
 կայ գժուարին վիճակին մէջ՝ աղքայական սրաշտպանութեան պիտի ար-
 ժանանար:

Այս նկատումներով սիրտ առած՝ հրէայն իր նպատակին դիմեց, և
 առանց նօրման քրիստոնէին նախնիքը, աստիճանն ու կրօնը յարգելու՝
 հրեց անդին անցաւ: Սակայն ծերունիին արտունջները հանդիտակա-
 նաց զայրոյթը դրդուեցին: Ասոնցմէ մին՝ կորուլի և յաղթ շինական մը,
 11

որ Աինքոնի կանաչ շուխայէ հաղուստ հաղս
 նետ անցուցեր, արծաթեայ դրոշմ մ'ու կամար մ'ու
 ոտք լայն աղեղ մ'ի ձեռին, յանկարծ զլուխը դարձուց, և մինչդեռ
 իր դէմքն՝ որ կաղնի գոյն առեր էր անդադար բաց օդին մնալուն՝ աւե-
 լի ևս կ'մթանար բարկութենէն՝ հրէին ապսպրեց յիշելու թէ թշուառ
 մարդիկներու արիւնը ծծելով զիզած հարստութիւնները զինքը սարդի
 պէս ուռեր են, այլ սարգն որչափ իր սորին մէջ նստի անտես կ'մնայ,
 բայց երբ լոյսին երևի կ'ճզմուի: Այս սղառնալիքը՝ հաստատ ձայնով
 և խոժոռ դէմքով արտասանեց ծերունին և հրէին սիրտը թունտ հա-
 նելով յետս ընկրկեց, և անտարակոյս այս վտանգաւոր դրայիէն պիտի
 հեռանար՝ եթէ ճօճն իշխանն յանկարծ երևելով՝ ամենուն աչքն իր
 վրայ շհրաւիրէր. այս իշխանն նոյն պահուն հանդիսարանը կ'մանէր,
 և իր ետեէն կ'երթային բազմաթիւ զուարթերես հետևորդներ, որոց-
 մէ ոմանք աշխարհական, ոմանք կրօնական էին, և իրենց ուղեկից-
 ներու պէս զղեստով թեթև և կերպարանօք խնդաղին էին: Արօնա-
 կաններու մէջ թօրվօի վանահայրն ևս կ'դանուէր այնպէս պերճօրէն
 հաղուած շքուած՝ որով հազիւ թէ եկեղեցւոյ բարձր պաշտօնեայ մը
 կ'համարձակի երևիլ: Մուշտակն ու ոսկին չէր խնայած իր հանդեր-
 ձին համար. և իր կօշիկներուն ծայրերն՝ ժամանակին ծաղրելի նորա-
 ձևութիւնը չափազանցելով՝ այնքան վեր դարձեր էին որ զանոնք չէ
 թէ պարզապէս իր ծնկերուն՝ այլ իր գօտիին կապելու ստիպուեր էր և
 այսպէս իր ոտներն ասպատանէն անցնելու կ'արդիլէին: Սակայն այս
 բանս արիասիրտ վանահօր համար թեթև անպատեհութիւն մ'էր, ո-
 ռովհետև՝ կարելի է կ'հրճուէր որ՝ տկար ձիաւորներու գործածած
 սոյն նեցուկները զանց ընելով՝ պիտի կարենար իր ձիավարժութիւնն
 ցոյց տալ այնչափ հանդիսականներու, մանաւանդ իդական սեռին առ-
 ջև: Ճօճն իշխանին միւս ուղեկիցներն էին՝ իր վարձկան զօրաց զլխա-
 ւոր զօրապետները, քանի մ'ասպատակ պարոններ, վառչուէր պալա-
 տականներ և շատ մը Տաճարի և Ս. Յովհաննէսի ասպետներ:

Պէտք է յիշել աստանօր որ այս երկու ուխտերուն ասպետները Տի-
 շարտ թաղաւորին հակակիր էին, վասն զի՝ Պալէստինի մէջ՝ Առիւ-
 ծասիրտ Տիշարտի և Ֆրանսայի Ֆիլիպ թաղաւորին ունեցած երկարա-
 տև կռիւներուն ատենն՝ այս վերջնոյն կողմը բռներ էին: Ամենուն
 յայտնի էր թէ այս երկպառակութեան պատճառաւ Տիշարտի կրկնակի
 յաղթութիւններն ասպարդիւն մնացեր էին, թէ երուսաղէմը պաշա-
 րելու համար ըրած ասպետական քաջութիւններն ՚ի դերև ելեր և թէ

իր շահած բոլոր փաստքն ուրիշ արդիւնք մը չէր ունեցեր այլ միայն սուլթան Սալատտինի հետ տարտամ զինադուլ մ'ընել : Ինչ քաղաքականութեամբ որ սուրբ Տեղեաց մէջ իրենց եղբայրները վարուեր էին՝ նոյն քաղաքականութեամբ Անկլիոյ և Նօրմանտիոյ Տաճարական և Հիւրասէր* ասպետները ճօհն իշխանին կողմն անցեր էին, և բնաւ չէին փափաքեր որ Նիշարտ Անկլիա դառնայ, կամ անոր օրինաւոր ժառանգն Արթիւր գահն ելնէ : Իսկ ասոր հակառակ՝ ճօհն իշխանը կ'ատէր և կ'անգոսնէր Անկլիոյ սակաւաթիւ նշանաւոր սաքսօն ընտանիքներն, և առիթ մը չէր մոռնար զանոնք վիրաւորելու և թշնամանելու, քաջ գիտնալով որ իր անձն ու պահանջումներն անհաճոյ էին անոնց, ինչպէս նաև անկլիացի ժողովրդեան մեծազոյն մասին՝ որ կը վախնար թէ իր իրաւանց և ազատութեան փնաս մը չպատահի ճօհնի պէս վատշուէր և բռնասէր իշխանի մը կողմէն :

Իսկ ճօհն իշխանն՝ որ ծիրանի և ոսկեթել զգեստներ հագած՝ իր ձեռքը բազէ մը բռնէր, զլուխն անդամանդէ շրջանակով զարդարուն ճոխ մուշտակ գդակ մը դրեր էր, որմէ իր գանգուր գիսակն առատօրէն թափելով ուսերուն վրայ կ'ծածանէր, ճարտուկ հրալիր երիվար մը կ'աշտանակէր, իր զուարթերես խմբին գլուխն անցած՝ հանդիսարանը մտաւ ճախրելով, բարձրաձայն կ'ծիծաղէր իր հետևորդներուն հետ, և թագաւորական յանդիմութեամբ կ'քննէր այն դեղանի կիներն որ բարձր պատշգամներու վրայ կ'փայլէին :

Անոնք որ ճօհն իշխանին կերպարանին վրայ շուայտ ժպրհութեան հետ վէս անտարբերութիւն մը կ'նշմարէին ուրիշներու զգացումներու դէմ, չէին կարող սակայն ուրանալ որ անկեղծ գէմքի յատուկ վայելչութիւն մ'ունէր, գէմք մը զոր բնութիւնը լաւ կերտեր և արհեստն մարդավարութեան ամէն ձևերու յարմարեր էր, բայց դարձեալ այնպիսի անկեղծութիւն և բարեկրութիւն մ'ունէր որ հոգւոյ շարժումները թագունս պահելու իբր թէ չէր խոնարհեր : Այս տեսակ ելեւոյթ մը ստէպ արիական անկեղծութիւն մը կ'համարուի, թէև իրօք պակշտ բնաւորութեան մը անհողութենէ, իր ծննդեան, հարստութեան, կամ որ և է պատահական առաւելութեան մը դերաղանցութիւնն զգացող սրտէ մը կ'ծաղի, որոնք ամենեւին յարաբերութիւն մը չունին անձնական արժանիքի հետ : Իսկ՝ անոնք որ խորունկ չէին մտածեր, և մեծազոյն մասն էին իբր հարիւրին իննսուն ինն, եռանդաղին կ'գուլէին

* Այս անուամբ կը յիշուէին քանի մը գիւնարական՝ նա մանաւանդ կրօնական միաբանութիւններ միջին դարու մէջ :

Ճօճն իշխանին ճոխ հուշածն (այս է մուշտակէ վզի վարշամակը) մեծապիսն արխանիով պատած պերճ վերարկուն, սեկեայ կօշիկներն և ոսկի մտրակները, նոյնպէս այն շնորհալի ձևերն որով կ'վարէր իր նժոյզը :

Մինչդեռ ճօճն իշխանը մրցարանին բոլորը կ'ճախրէր՝ իր ուշագրութիւնը դարձուց այն շփոթութեան որուն առիթ տուեր էր Նասահակին բարձր սեղ մը դրաւելու փառասէր փափաքն և տակաւին չէր դադարեր : Իշխանն իր սրատես աչքով իսկոյն հրէայն ճանչեց, սակայն Սիօնի գեղանի օրիորդին տեսիլն աւելի մեծ և ախորժելի տալաւորութիւն մ'ըրաւ իր վրայ, երբ նա՝ աղմկէն ահ ու դողի ելած՝ իր ալեոր հօրը թեին փարեր էր :

Արդարեւ՝ Ռեպեկայի գեղութիւնը կարելի էր բաղդատել Անկլիոյ ամենէն գեղաշուք կիներու հետ, եթէ ճօճն իշխանին պէս խորազնին դիտակ մը լինէր անդամ դատողը : Ռեպեկայի մարմնոյն ձևը դողարիկ համեմատութիւն մ'ունէր, և՛ իր աղղին սովորութեան համաձայն՝ հաղած արևելեան հազուատն իրեն շատ կ'վայլէր : Իր գեղին մետաքսէ ապարօշը քաջ կ'յարմարէր իր թխաղոյն կերպարանին հետ : Իր աչերուն փայլն, իր կամարաձև շքեղ ունքն, իր աղւոր արծուի քիթն, իր մարդարտի պէս սպիտակ ալուաներն, և իր սև առատ առատ մազերն, որ դանդրաձև ոլորած՝ ազնուատիպ վզին և կուրծքին վրայ գեղածուփ կ'ծփային, իր հաղած պարսիկ նուրբ մետաքսէ պարեգօսն՝ որ բնական զոյնզոյն ծաղիկներով ծիրանի երեսի վրայ բանուած՝ իր կուրծքն ու վիզը բաց կ'թողուր, ահա այս ամէն գեղն ու շնորհն այնպիսի վայելչութիւն մը կ'ստային Ռեպեկային որով իր բոլորը կեցող ամէն գեղեցիկ օրիորդները կ'գերազանցէր :

Իրաւ է որ վզէն մինչև մէջքը դոյող չփակին (vest) մարդարտազարդ ոսկի ճարմանդներէն երեք հատը վերէն չէր կոճկած՝ օդը տաք լինելուն, որով մեր ակնարկած տեսիլն աւելի հրասլուրելի կ'գառնար : Մի և նոյն պատճառաւ իր ականակուռ մանեակն անդին օղերուն հետ աւելի աչքի կ'ղարնէր : Անդամանդեայ ճարմանդով մ'ապարօշին կցած ջայլեամի փետուր մը նոր փայլ մը կ'յաւելուր գեղանի հրէայ օրիորդին, որ իրմէ վեր նստող հարարտ կանանց կողմէն ծաղր ու ծանակ կ'լինէր թէև, բայց նոյն իսկ ասոնք որ քամահել կ'կեղծէին՝ իր վրայ դաղտնի կ'նախանձէին :

— Արրահամու ճաղատ դիտին վրայ կ'երդնում — ըսաւ ճօճն իշխանն — որ սա վարի հրէայ օրիորդը գեղեցիկութեան այն կատարուն նկարը պէտք է լինի, որուն գեղն ու շնորհն ամենէն խնայաւորութեամբ

դաւորին խելքը թոյուցին : Կ'նչ է քու կարծիքդ , Եյմեր վանահայր :
Վկայ այն իմաստուն թաղաւորին տաճարը՝ զոր մեր իմաստնադոյն Քի-
չարտ եղբայրը չկրցաւ աղաատել , այս պիտի լինի անշուշտ Երդ երդո-
ցին նշանածը :

— Սաարսնի վարդն ու հովտի շուշանը . . . — պատասխանեց վա-
նահայրը ունդային ձայնով մը — բայց թող ձեր Վսեմութիւնը նկատէ
անդամ մ'որ այն օրիորդը հրէութի մ'է :

— Այո՛ — յարեց Ճօհն իշխանն՝ առանց անոր ըսածին միտ դնելու
— այո՛ , նոյն ինքն անօրէնտ թեան Մամոնն , մարկերու (գրամ) մարքի-
զը , դահեկաններու պարոնն է , որ տեղ մը գտնելու համար անարժամ
շուներու հետ կ'ողորի , որ մաշած զղեստներ ունին , և ոչ իսկ թանկ
մը : Ս . Մարկոս վկայ , իմ սեղանաւոր իշխանս իր սիրուն հրէայ կնկան
հետ սկտք է որ սլատշղամին վրայ աթոռ մ'ունենայ : — Ո՛վ է այս
հրէութիւն , Կսահակ — հարցուց Ճօհն իշխանը — կլինդ է թէ աղ-
ջիկդ այս արեւելեան հո-րէն զոր թեխդ տակ սեղմեր ես իբր ստակի
սնտուկ մը :

— Իմ Ռէպեկա աղջիկս է , տէր իմ — սլատասխան տուաւ Կսա-
հակ խորին բարե մը տալով , առանց իշխանին ողջունէն երկիւղ յայտ-
նելու , թէ և անոր ողջոյնը հեզնալի էր և միանդամայն մարդավարա-
կան :

— Գու ամենէն խելացի մարդն ես — ըսաւ Ճօհն իշխանը քահ-
քահ մը ձգելով , որուն ձայնակից եղան և իր հեռեօրդներն երեսպաշ-
տու թեամբ : — Բայց թէ աղջիկդ և թէ կլինդ լինի այս հրէութիւն ,
սկտք է իր գեղեցկութեան և քու արժանեաց համեմատ զանի սլա-
տուել : Ո՛վ նստեր է վերը — յարեց իշխանն աչքը դէսլ 'ի սլատշղամը
վերջնելով : — Է՛հ , սաքսոն գեղջուկներ են որ երկար բարակ լա-
բուեր նստեր են : Գուրս ելիք : Թող քիչ մը նեղ նստին և տեղ բանան
իմ վաշխառուներու իշխանիս և իր սիրուն աղջկան . այս գեղջուկնե-
րուն պիտի զղայնեմ որ սկտք է ժողովանոցին մէջ բաղմին այն անձե-
րուն հետ որ իրօք ժողովանոցին տէրն են :

Սակայն սլատշղամին վրայ դանուող անձերն՝ որոց ուղղեց Ճօհն իշ-
խանն իր նախատալի և կոպիտ խօսքերը , սաքսոն Սէտրիկի ընտանի-
քը , նոյնպէս իր դաշնակից և սղղական Գոնինասպրիկի Աթէլսդէյնի
գերդաստանն էին : Այս անձն՝ Անկլիոյ վերջին թաղաւորներէն սե-
րելուն մեծ յարդ ունէր հիւսիսարեւակ ժողովրդեան մէջ , բայց նա ար-
քունի հին արեան հետ ժառանգեր էր նաև անոնց թերութիւնները :

Այելուչ կերպարան , ուժեղ և կորովի մարմին , ծաղիկ հասակ մ'ու-
նէր Աթէլսդէյն , սակայն զծաղրութիւնն անկենդան , աչերն անլոյս և
յօնքը թանձր , շարժումները յոյլ և դանդաղ էին , և այնքան ուշ բան
մը կ'որոշէր որ իր նախահարց մէկուն մակդիրը տուին անոր և սովոր
էին Գանդաղկոսն Աթէլսդէյն , կոչել զանի : Իր բարեկամներն՝ որ
շատ էին և Սէտրիկին պէս սերտ կապուեր էին իրեն , կ'այնդէին թէ
անոր այս հեղգ բնաւորութիւնն անարիութեան նշան չէ , այլ սլարզա-
պէս տատամսութեան . ոմանք կ'ըսէին թէ զինեմուտութեան ժառանգա-
կան ախտն իր միտքը խանդարէր է , թէև արդէն շատ փայլուն չէր , և
թէ իր հլու քաջութիւնն ու անուշ բարեսիրութիւնն ուրիշ բան չէին
այլ միայն բնաւորութեան մը դիրտն որ թերևս գովեստի արժանի լի-
նէր , սակայն անոր ամէն մեծարելի մասունքը ցնդեր զացեր էին երկա-
րատե կոշտ ցոփութեան մը պատճառաւ :

Ահա այս մեր նկարագրած անձին էր որ Ճօհն իշխանն իր մեծա-
սաստ հրամանը տուաւ որպէս զի Իսահակին և Ռեպեկային տեղ բա-
նայ : Աթէլսդէյն՝ ժամանակին սովորոյթն ու պաշարումները խիստ նա-
խատական ընող այս հրամանին վրայ ապուշ կրթած՝ չուզեց հնազան-
դիլ , սակայն դիմադրելու մասին անստոյգ մնալով՝ մի միայն Ճօհն իշ-
խանին հրամանին առջև անկենդան մարմին մ'երեցաւ . և առանց շար-
ժելու կամ հնազանդութեան թեթև նշան մը ցոյց տալու՝ իր գորշա-
չերը լայն լայն բացաւ և իշխանին նայեցաւ այնպիսի ապուշ կերպով մը
որ շատ ծիծաղելի էր : Բայց անհամբերն Ճօհն տարբեր կերպով մեկ-
նեց այս նայուածն :

— Այս սաքսօն խողարածը — վրայ բերաւ նա — կամ քուն է ,
կամ խօսքիս անմտադիր . Պրէսի , նիզակովդ մշտէ անոր — յարեց նա իր
մօտ դտնուող ասպետի մ'որ Ազատ ընկերները ըսուած գնդին հրամա-
նատարն էր , այսինքն և ոչ ազգի մը պատկանող վարձկաններ՝ որ առ-
ժամանակեայ կերպով իրենց վարձ տուող իշխանին կ'ծառայէին : Ճօհն
իշխանին հետևորդներուն մէջ անգամ տրտունջ մ'ելաւ , բայց Պրէսի ,
որ իր պաշտօնին բերմունքէն ամէն խղճի խայթէ աղատ էր , իր երկայն
նիզակը՝ մրցարանը պատշգամէն զատող միջոցին վրայէն՝ երկնցուց և
իշխանին հրամանը պիտի կատարէր՝ դանդաղ Աթէլսդէյն ուշաբերելով
զէնքէն իր անձն պահպանելէն առաջ՝ եթէ Սէտրիկ՝ որ իր թոյլ ըն-
կերին հակառակ՝ թեթևաշարժ էր , կայծակի պէս իր կարճ թուրը
չհանէր պատենէն և մէկ հարուածով Պրէսիի նիզակը կտարելով բու-
նէն չզատէր :

Ճօճն իշխանին արիւնն երեսին զարկաւ . սոսկալի լուտանք մ'արձա-
կեց և նոյնչափ բուռն սպառնալիք մ'ևս պիտի արտասանէր՝ երբ իր
միտքը փոխեց՝ մասամբ մ'իր սպայից յորդորանօքն , որոնք անոր չորս
դին առին և աղաչեցին որ համբերէ , մասամբ մը ժողովրդեան ընդ-
հանուր աղաղակէն , որ Սէտրիկի արիական ընթացքին ծափ կ'զարնէր :
Իշխանն իր աչերը դարձուց զայրագին , որպէս թէ աւելի ապահով և
դիւրին որս մը կ'փնտռէր և պատահմամբ արդէն տեսած աղեղնաւորն
աչքին զարնելով՝ որ շարունակ կ'ծափահարէր՝ իշխանին իր վրայ սեւե-
րած մթին ակնարկին անուշադիր , անոր հարցուց թէ ի՞նչ պատճա-
ռաւ այնքան աղմուկ կ'հանէ :

— Ես միշտ կեցցէ կ'պոռամ — ըսաւ գեղացի զօրականն — երբ ա-
րիապէս տրուած հարուած մը կ'տեսնեմ :

— Իրա՞ն կ'ըսես — պատասխան տուաւ իշխանն : — Ուրեմն դու ևս
քաջ նշան առնող պիտի լինիս կարծեմ :

— Անտառի որսորդի մը դրած նշանը կրնամ զարնել . բաւական է
որ լաւ հեռաորութիւն մ'ունենայ — ըսաւ զօրականը :

— Նոյն իսկ Աւդ-Թիրէլի նշանը հարիւր կանգուն հեռուէն
կրնամ զարնել — ըսաւ ձայն մ'ամբոխին մէջէն : Սակայն ոչ ոք կարող
եղաւ հասկնալ թէ ո՞ւսկից ելաւ այն ձայնը :

Իր ազդական Աիլյէմ Տըֆըսի (աշխէտ) մահուան եղած այս ակն-
արկութիւնը սաստիկ զրգռեց և շփոթեց ճօճն իշխանը : Սակայն սա
զոհունակութիւնը միայն ունեցաւ որ իր սպահապան զինւորներուն
հրամայեց այն պարծենկոտ աղեղնաւորն աչքէ չհեռացնել , և գեղա-
ցի զօրականը ցցուց :

— Ս. Արիզէլ վկայ — յարեց իշխանը — սա մարդուն ճարպիկու-
թիւնը պիտի փորձեմ , քանի որ այնքան շուտով ուրիշներուն գործոց
վրայ կարծիք կ'յայտնէ :

— Այդ փորձը յօժարակամ պիտի ընդունիմ — ըսաւ գեղացի զին-
ւորն իր վարմունքին վրայ տեսնուած հանդարտութեամբը :

— Իսկ դուք , Պ. սաքսօններ , ոտք ելիք — ըսաւ վէս իշխանը —
վասն զի , թող վկայ լինի երկնից լոյսը , հրէան ձեր մէջ տեղ մը պիտի
ունենայ , այս է իմ կամքս :

— Աչերբէք , շնորհ ըրէ , Ասեմափայլ իշխան , ոչ . մենք անարժան
ենք հողատէրներու հետ խառնուիլ — ըսաւ հրէան , որ թէև փառա-
սիրութենէ շարժեալ բարձր տեղ մը բռնելու ելեր և Մօնափախէի
ցեղին հէք և աղքատ ժառանգներու հետ կուտեր էր , սակայն բնաւ

չէր փափաքեր մինչև հարուստ սաքսօններու պատշգամն արշաւել և բազմիլ :

— Ոտք ելիր , թերահաւատ շուն , երբ քեզ կ'հրամայեմ — ըսաւ ճօհն իշխանը — թէ ոչ այդ սև մորթի քերծել տալով չորցնել և նծոյղիս թամբ մը շինել պիտի տամ :

Այս բուն հրամանին վրայ՝ հրէայն՝ պատշգամին տանող նեղ և բարձր սանդղին աստիճաններէն սկսաւ ելնել :

— Նայինք հիմակ ո՞վ պիտի յանդգնի հրէին դիմադրել — ըսաւ իշխանն իր աչքը Սէտրիկին վրայ անկելով , որուն դիւբը կ'ցուցնէր թէ միտք ունի հրէայն գլուխն 'ի վայր դետին գլորել :

Այս դժբաղդու թեան առաջն առաւ Աւամպա միմոսն՝ որ իր տիրոջ և Իսահակին մէջ նետուելով՝ իշխանին սպառնալիքին պատասխան տալով գոչեց .

— Իրաւ որ ես պիտի դիմադրեմ — և հրէին մօրուքին երկնցուց խողի ապուխտի կտոր մը , զոր թիկնոցին տակէն հանեց , վասն զի վախնալով որ հանդէսը կ'երկարի և իր ստամոքսին տարածէն աւելի ծով պահելու կ'ստիպուի՝ այն ապուխտն առեր պահեր էր անշուշտ : Հրէայն դիտելով որ իր ամենէն դարշած բանը քթին կ'խօթեն , մինչդեռ նոյն պահուն միմոսը փայտէ թուրն իր գլխին վերևը կ'տատանէր , ետ ետ քաշուելով սահեցաւ և սանդղէն վար գլորեցաւ . այս ալ աղոր կատակ մ'էր հանդիսատեսներուն համար որ ահադին քրքիջ մ'արձակեցին , որոց սրտադին միացան նաև ճօհն իշխանն ու իր հետևորդները :

— Մրցանակն ինձի տուր նայիմ , բարեկամ իշխան — ըսաւ Աւամպա — ես իմ հակառակորդիս օրինաւոր կերպով յաղթեցի սրով և վահանով — յարեց նա մէկ ձեռքով փայտէ սուրն ու միւս ձեռքով խողի ապուխտը շարժելով :

— Գու ո՞վ ես , ի՞նչ կ'ընես , արիասիրտ ախոյեան — հարցուց ճօհն իշխանը ծիծաղելով անդուլ :

— Ժառանգական իրաւունքով խենդ մ'եմ — պատասխանեց միմոսը : — Ես Աւամպան եմ , Աիթլէսի որդին , որ Աէտրբարէնի որդին , որ Ելտրմէնի (գատաւոր) որդին էր :

— Թող տեղ բանան հրէին ստորին շրջանակին առջևի կողմն — ըսաւ ճօհն իշխանն՝ որ թերևս զոհ էր այս առթիւ իր առաջին դիտաւորութենէն ետ կենալ — վասն զի ասպետական օրինաց ներհակ է յաղթեալները յաղթողներու հետ բազմել տալ :

— Նենդոտ վաշխառուն խենդի մը մօտ դնելն աւելի վատ բան է —
պատասխանեց միմօր — մանաւանդ հրէայ մը խողի ասյուխտին հետ :

— Շնորհակալ եմ, լաւ տղայ — դուչեց ճօհն իշխանն — աչքս
մտար : Նայինք, Իսահակ, ափ մ'ոսկի տուր ինձ :

Որովհետեւ հրէայն այս խնդրոյն վրայ ասլշած կ'մնար, թէ և չէր
կրնար մերժել, և հաւանիլ ալ չուղելով իր մէջքէն կախուած մուշտա-
կէ պարկին մէջ կ'խառնէր ձեռքովն և թերեւ կ'հաշուէր թէ արդեօք
որչափ ոսկի կրնայ տղիլ ափի մը մէջ՝ իշխանն իր նժոյզին վրին վրայ
ծռեցաւ և Իսահակին վարանման վերջ տուաւ նոյն խկ սլաղը բռնե-
լով, և անոր սրբունակած քանի մ'ոսկին Պամուսին նետեց. յետոյ
մրցարանին մէջ իր ճամբան շարունակեց, և հրէայն իր շորս կողմը
դանուող անձերուն ծաղր ու ծանակ թողլով, մինչդեռ ինքը ծափ ու
դովեստ կ'ընդունէր որպէս թէ խիստ ընտիր և պատուաւոր դորձ մը
կատարեց :

Ք Լ Ո Ւ Խ Ը

Ընդ այս կօշ ախոջեան՝ վեսօրէն դամարաւ
Փող կը հնչէ ուժգին՝ տայ ոսոխ պատասխան,
Գաշան գոշմամբ՝ երկին 'ի դանդիւն կը թնդան,
Պատրաստ կան իրենց տէղք՝ պահնալիւք լլած վար,
Կամ շեշտ 'ի սաղաւարտ՝ կամ յենած 'ի կատար
Պատնէշէն կ'անհետին՝ սրարշաւ կ'արշաւեն
Մարակեն իրենց ձիան՝ ասօպրէզ հատանեն :

Գ Ե Լ Ե Մ Օ Ն և Ե Ր Կ Ի Տ

Ճօհն իշխանն իր հեծելոց մէջ տեղը յանկարծ կանկ առաւ և ծօր-
վօի վանասօր ձայն տարով յայտնեց թէ նոյն օրուան նշանաւոր դորձը
մտցուեր էր :

— Ս. Տիրամայր — ըստ նա — մտցանք, պատուարժան վանա-
հայր, Սիրոյ և Գեղութեան վեհապետուհին անուանելու, որ իր սախ-
տակ ձեռօք յողթութեան սրակը պիտի բաշխէ : Այս մասին նախա-
սրաշարու՛մ չունիմ, և իմ ձայնս յօժարամիտ պիտի տամ սեւակն Անսլե-
կաին :

— Սուրբ Այս — սրատասխանեց վանահայրն ու աչերը սոսկալով
վեր առաւ — հրէուհի մը, տարակոյս չկայ որ հանդիսարանէս յար-
կածելով դուրս կ'վաճառեն մեզ, և տակաւին բաւական ծեր չեմ նահա-

տակ լինելու : Ասկէ զատ՝ իմ պաշտօնական սուրբիս վրայ կ'երգնուի՝ որ
հրէայ օրիորդը սիրանուշ սաքսօն Բովէնայէն շատ վար է գեղեցկու-
թեան կողմէն :

— Սաքսօն կամ հրէայ , շուն կամ խող , ի՞նչ փոյթ է — պատաս-
խանեց իշխանը : — Գու Ռեպելկան անուանէ , կ'ըսեմ , դո՞նէ սա
սաքսօն գեղջուկները զայրացնելու համար :

Իշխանին հետևորդներուն մէջ դժգոհութեան շշուշ մ'ելաւ :

— Տէր իմ , այդ ըսածդ կատակի սահմանէն անդին կ'անցնի — ը-
սաւ Պրէսի — և ոչ ասպետ մ'իր նիզակն 'ի պայքար կ'ստատրաստէ ե-
թէ այսպիսի նախատինք մ'ընդունի :

— Անպէտ նախատինք մ'է այս — ըսաւ Ճօհն իշխանին ամենէն
ծեր հետևորդներէն մին Աօլտմար Ֆիցրու և եթէ Չեր վսեմութիւնն
այս փորձն ընէ , ձեր խորհուրդները վեր 'ի վայր կ'տասպալին :

— Պարոն — ըսաւ Ճօհն յանկարծ իր նժոյզը կեցնելով — ես քեզ
իմ ճառայութեանս առի մի միայն իբր սպասաւոր և չէ թէ իբր խոր-
հրդական :

— Չեր վսեմութեան բռնած ճամբուն մէջ ձեզ հետևողներն — ը-
սաւ Աօլտմար մեղմ ձայնով մը — խորհրդականի իրաւունք կ'ստանան -
վանն զի ձեր շահն ու ասպատակութիւնն որչափ որ իրասկէս այս
խնդրոյն մէջն են , նոյնչափ են և իրենցը :

Այս յանդիմանութեան ըսուած կերպէն Ճօհն իշխանը հառանե-
լու սախալուեցաւ : — Իմ միտքս կատակ ընել էր — ըսաւ նա — և ա-
մէնքնիդ ալ թի պէս վրաս կ'յարձակէք : Ա՛վ որ կ'ուզէք անուանեցէք
հանգիսիս թաղուհի , առ ու կրողին , և դո՛հ եղիք :

— Ա՛չ , ոչ — ըսաւ Պրէսի — մինչև որ յաղթողը յայտնուի , հարկ
է թաղուհւոյն դահը թափուր ձգել , թող ինքն իրեն ընտրէ արժանա-
ւոր դահակալուհին : Այս բանս իր յաղթանակին նոր շնորհ մի սխալի
յաւելու , և մեր գեղանի կլիններն ասով մեր արիասիրտ ասպետներուն
սիրոյ յարդը պիտի խմանան , քանի որ այսպիսի պատուոյ մը սխալի զա-
նոնք բարձրացնեն :

— Եթէ Պրոյն տը Պուա-Աիլպէր մրցանակը տանի — ըսաւ վա-
նահայրն — իմ վարդարանս զրաւ կ'դնեմ որ ես սխալի անուանեմ սիրոյ
և գեղեցկութեան թաղուհին :

-- Պուա-Աիլպէր — պատասխանեց Պրէսի — լաւ նիզակ մ'է ,
բայց , պատուարժան վանահայր , այս մրցարանիս մէջ կան այնպիսի
մարդիկներ որ անոր հետ չափուելու չսխալի վարանին :

— Առութիւն , պարոններ — ըսաւ Աօլտմար — և թող իշխանն իր գահն ելնէ նստի : Ասպետները նոյնպէս հանդիսականներն անհամբեր են : Ժամերը կ'անցնին և հարկ է որ գուպարն սկսի :

Թէև ճօհն իշխանը տակաւին թագաւոր չէր , սակայն արդէն Աօլտմարն իբր մտերիմ պաշտօնեայ մը զինքը կ'նեղէր . վասն զի երբ իր վեհապետին կ'ծառայէ իր գիտցածը կ'ուզէ ընել : Սակայն իշխանը գիմադրելու անդամ փորձ չփորձեց , թէև շնչին բաներու մէջ 'ի բնէ կամակոր էր . ուստի իր գահը նստաւ , որ ստաներով շրջապատեալ էր , և նշան ըրաւ հերոսներուն որ նիզակախաղ դուպարին օրէնքը հռչակեն , որոց բովանդակութիւնն է այս :

Ա. Հինգ հանդիսադիր ախոյեաններ պարտաւոր էին 'ի վէզ գալա՝ մէն նորեկ մենամարտի հետ :

Բ. Ամէն նորեկ մենամարտ՝ եթէ կամէր՝ կարող էր ախոյեաններէն մին հակառակորդ ընտրել , անոր վահանին դպելով : Եթէ իր նիզակին ճարմանդովը դպէր՝ գուպարն՝ ինչպէս որ այն ատեն կ'ըսէին՝ անժնաս զէնքով կ'կատարուէր , այսինքն այնպիսի տէգեր կ'գործածէին որոց ծայրը կը որ ու տափակ փայտ մը մխուած էր , և վտանգ չէր ծագեր՝ բայց միայն եթէ երխլարներն և ձիաւորներն ուժղին բաղխէին իրարու : Սակայն եթէ վահանը նիզակին ծայրով դպէին՝ այն ատեն կ'իմաստուէր որ գուպարը սատարիկ պիտի մղեն , այսինքն ասպետները սայրասուր զէնքով պիտի մաքրառին իբր ճակատամարտի մէջ :

Գ. Երբ ներկայ ախոյեաններն իրենց ուխտը կատարէին հինգ նիզակ խորտակելով՝ իշխանը պատրաստ էր առաջին օրուան նիզակախաղին յաղթողը հռչակել , որ իբր մրցանակ՝ ամենընտիր և անման պատերազմի ձի մը պիտի ստանար . և այս վարձքէն զատ՝ նոյն օրն ազդ ըրին որ յաղթողը սիրոյ և դեղեցկութեան թագուհին պիտի անուանէ և անոր ձեռքէն պիտի ընդունի հետևեալ օրն իր մրցանակը :

Դ. Ապարարութիւն ըրին նաև որ երկրորդ օրն ընդհանուր գուպար մը պիտի լինի , որուն կընային մասնակցիլ փառք ստանալու փափաքող ամեն ներկայ ասպետներն , որոնք երկու հաւասար գունդ բաժնուելով կարող էին արիաբար գուպարիլ , մինչև որ իշխանը մարտին վերջ տալու համար նշան ընէ : Այն ատեն սիրոյ և դեղեցկութեան ընտրեալ թագուհին՝ դավնիի ձեով շինուած բարակ ոսկի պսակ մը պիտի դնէր այն ասպետին գլուխն՝ որ երկրորդ օրն՝ ըստ վկայութեան իշխանին՝ ամենէն շատ երևելի հանդիսացած պիտի լինէր : Նոյն երկրորդ օրը վերջ պիտի տրուէր ասպետական խաղերուն . իսկ երրորդ օրը նետաձգու-

Թեան, ցլամարտութեան և ժողովրդեան զբօսանաց համար ուրիշխա-
ղեր պիտի սկսէին: Ահա այս կերպով կ'ընար ճօհն իշխանը ժողո-
վրդասիրութիւնը հաստատել, թէ և նոյնը ստէպ կ'ընջէր ժողովրդեան
յարդելի սովորութեանց և նախասպաշարմանց դէմ անխորհուրդ և
քմածին բռնութեան դործ մը գործելով:

Նոյն պահուն հանդիսարանը շքեղաւոր տեսարան մը կ'ընծայէր:
Անկլիոյ հիւսիսային և հարաւային երկիրներուն ամենէն ազնիւ, մեծ,
ճոխ, գեղանի բնիկներ զառ ՚ի թափ պատշգամներու մէջ խոներ էին
և բարձրագիւր հանդիսատեսներու այլազան զգեստներէն շէն և պերճ
կերպարան մը կ'առնուր այն տեսարանը, մինչդեռ ներքին և սառը շրջա-
փակը՝ զուարթուն Անկլիոյ ունեւոր ոստանիկներ և շինականներ բռներ
նստեր էին և իրենց պարզ զարդերով տեսակ մը մութ ծուկ կամ շրջանակ
կ'յօրինէին ասղնեղործ փափուկ հանդերձներու բոլորափքն և անոնց
շքեղութիւնն աւելի ևս երևան կ'հանէին:

Հերոսներն իրենց աղգարարութիւնը լմնցուցին սա սովորական աղա-
ղակն արձակելով. Առաքու՛եա՛ն, առաքու՛եա՛ն եղի՛, որի առեւտներ:
Եւ իսկոյն ոսկի և արծաթ դրամներ տեղացին անոց վրայ պատշգամ-
ներէն, վասն զի պատուոյ խնդիր մ'էր ասպետութեան մէջ առատա-
ձեռն լինիլ այն անձերու նկատմամբ, զոր նոյն դարն իր փառաւոր
ատենագրիներու ու սրամարանները կ'նկատէր: Հանդիսականներուն
վիհանձնութիւնն այս սովորական խօսքերով հռչակուեցաւ. Աէր ա-
հանայս, ման ախոյեաններու, պատիւ զքրտղեաներու, փառք քրտու՛ն:

Այս աղաղակներուն ՚ի պատասխան ստորնաղոյն հանդիսատեսները
բբիւն (acclamation) մ'արձակեցին, և շատ մը փողարներ իրենց
մարտիկ նուագարանները հնչեցուցին: Երբ այս գոռ ու գոչումը դադ-
րեցաւ, պատուամատուրները թափօրով դուրս ելան մրցարանէն առօք
փառօք և անդ մնացին միայն մարաջախաններն որ՝ յոտից ցղլուխ գի-
նեալ՝ ձիերու վրայ անշարժ արձանի պէս կանգնեցին գիմացէ գիմաց
մրցարանին երկու ծայրը: Նոյն միջոցին մրցարանին հիւսիսային կողմը՝
թէ և ընդարձակ՝ անհամար ասպետներ եկան լցան, որոնք ախոյեան-
ներու դէմ մաքառելու կ'փափաքէին: Պատշգամներէն դիտողներուն
համար սոյն վայրէ ալե՛ծուփ փետուրներու ծով մը կ'երևէր, շողշողուն
սաղաւարտներու և երկայն գեղարդներու հետ խառն, որոց ծայրը թի-
զի շափ լայն դրօշներ կ'տեսնուէին, որ քամիէն յօդս ծածանելով՝
մշտաշարժ դարդմանակներուն հետ կ'աատանէին և նոյն տեսարանին
նոր կենդանութիւն մը կ'տային:

Աերջապէս փակարանները (barrier) բացին, և վիճակաւ ընտրեալ հինգ ասպետներ ծանրաբայլ ասպարէզ մտան : Մենամարտներն մին ընդ առաջ կ'քալէր և միւսները զոյգ զոյգ անոր կ'հետեւէին : Ա. մէնքն ալ շքեղօրէն զինուեր էին, և իմ սաքսօն հեղինակս (Աարտո ըի ձեռագրին մէջ) մանր կ'սկարագրէ անոնց նշանաբանը, գոյներն և երկփարներուն նկարակերտ ասպազէնը : Սակայն աւելորդ է այս մասին երկայնապատում լինելը : Ժամանակակից քերթողէ մ'որ շատ քիչ բան գրած է, մինակ սա քանի մը տողերը պիտի յիշենք .

Փոշի եւն արդ այն ասպետներ,

Իրենց շաւ սրերն եւն ժանգոտեր,

Յուսանք որ որբերու հետ եւն իրենց սրտեր :

Իրենց վահանները կորան զղեակներու սրտերու վրայ . իրենց զղեակներն իսկ խոտերու կոյտ և փոշելի փլատակներ են միայն : Այն վայրէջն ուր երբեմն կ'ընակէին՝ այլ ևս չեն ճանչեր զանոնք, մանաւանդ՝ քանի քանի զարմեր՝ իրենցմէ ետքը՝ հատան, անյուշ ընկան ճիշտ այն տեղերն ուր իբր աւատական իշխան և աէր կ'իշխէին անսրտակառ : Արեւմն՝ ինչ օգուտ ունի յիշատակել անոնց անունները կամ մարտական ատտիճանի վաղամեթիկ նշանակները :

Սակայն նոյն պահուն չկասկածելով անգամ որ իրենց անուններն տարարքը մտացման պիտի մատնուին, մենամարտները մըցարանին մէջ յառաջ անցան, իրենց ամեն ինչ ոյգները զսպելով, ծանր ծանր քոյլելու կ'տախպէին, և միանգամայն ճախր կ'առնուին որպէս զի ձիաւորներուն վայելչութիւնն ու յաջողակութիւնը յայանեն : Այն միջոցին որ ձիաւորները մրցարանը մտան՝ ախոյեաններու վրանին ետեւն՝ ուր նուազածունները պահուեր էին, խուժային և վայրագ երած շտու թեան մը ձայնը լսելի եղաւ : Այս երած շտու թիւնն արեւելեան ծագում մ'ունէր՝ սուրբ երկրէն եկած լինելով . իսկ ծնծղաներու և բոժոժներու խառն շփնչը կարծես թէ յառաջընթաց ասպետներուն դատասանու միանգամայն կորուստը կ'ընտրհաւորէին : Մինչդեռ անհամար հանդիսականներ հինգ ասպետներու վրայ տկնապիշ կ'նայէին, ասոնք հասան մինչև այն հողարլուրն ուր ախոյեաններուն սաղաւարները կանդներ էին, յետոյ իրարմէ զատուելով՝ ամէն մէկն իր նիզակին կոթովն իրեն հակառակորդ ընտրած ախոյեանին վահանին զարկաւ : Առ հասարակ տոտրին, նոյնպէս շատ մը վերին կարգի հանդիսականներ, մինչև անգամ կանայք փոքր ինչ դժկամակեցան, կ'ըսեն, որ մենամարտներն անվնաս զէնքով մրցելու միտք ունէին . փասն զի նոյն տեսակ անձինք՝ որ

այսօր իսկ եռանդադին կ'ծափահարեն արիւնհասեղ եղերներն , այն ա-
տենն ալ որչափ աւելի ախոյեանները վտանդի ենթարկէին նոյնչափ
հաճոյք կ'զգային :

Մենամարաներն այսպէս իրենց անմնաս խորհուրդը յայտնելէն ետեւ՝
նորէն մրցարանին մէկ ծայրը քաշուեցան և նոյն գծի վրայ կարգաւ
կեցան , մինչդեռ ախոյեաններն իրենց յատուկ վրանէն ելնելով՝ ձի
հեծան և Պրայն տը Պուա-Վիլպէր անոնց գլուխն անցնելով՝ հողա-
բլրէն վար իջան , և մէն մին իրեն վահանին զարնող հակառակորդին
ճակատեցաւ :

Սրինգներու և փողերու ձայնին՝ սրարշաւ յարձակեցան իրարու
դէմ , և ախոյեաններն այնքան արիութիւն կամ յաջող բաղդ ունեցան
որ Պուա-Վիլպէրի , Մալվուազէնի և Ֆրօն-տը-Պէօի դիմակալները
տապաւոր գիտինն ընկան : Արանմէզնիլի դիմակալը՝ փոխանակ իր նի-
զակին ծայրը թշնամոյն սաղաւարտին կամ ասպարին ուղղելու , այն-
քան հեռացուց նշանէն որ իր հակառակորդին մարմնոյն վրայ եկաւ
խորտակեցաւ , պարազայ մ'որ ձիէն վար ընկնելէն աւելի անշնորհ կը
սեպուէր . վառն զի անկումը դիպուածով կրնար պատահիլ , մինչդեռ
միւսը՝ զէնք ու ձի վարելու անվարժութեան նշան էր . հինգերորդ մե-
նամարտը միայն կարող եղաւ իր գնդին պատիւը պահել և Ս. Յովհանն-
նէսի տսպետին հետ մրցելով՝ երկու քին նիզակն ալ բեկաւ առանց մինե-
միւսին վրայ առաւելութիւն մը ստանալու :

Բազմութեան աղաղակները , նոյնպէս հերոսներուն բբիւնն և փողե-
րուն գոչումը յաղթողներուն յաղթանակն ու պարտեալներուն պարտու-
թիւնն իմացուցին :

Առաջիններն իրենց տաղաւարները կ'մտնէին , և միւսներն որչափ
որ կարող եղան ոտք ելնելով՝ մրցարանէն հեռացան ամօթահար ու
նկուն , որպէս զի յաղթողներուն հետ իրենց զինուց և ձիերուն փո-
խարէնը հատուցանելու համար բանակցին , քանի որ՝ նիզակախաղի օ-
րինաց համեմատ՝ անոնք յաղթողներուն պիտի տրուէին : Հինգերորդ
մենամարտը միայն բաւական ժամանակ մրցարանին մէջ կեցաւ որպէս
զի հանդիսականներուն ծափահարութիւններն ընդունի , որոց ձայնին
քաշուեցաւ գնաց , և այսպէս իր ընկերներուն պարտութեան զայրոյթն
աւելի զրգուեց անշուշտ :

Երկրորդ և երրորդ անգամ ևս ասպետներու խմբեր ասպարէզ ի-
ջան , և թէպէտ ուր ուրեմն յաջող՝ վերջապէս յաղթանակն ախոյեան-
ներուն մնաց , որոց և ոչ մէկն իր թամբին վրայ չընկաւ կամ նպատա-

էն չվրիպեցու, ձախորդութիւն մը զոր ամէն մէկ հանդիպումին հա-
կառակորդ կողմի քանի մ'ասպետներ կրեցին. ուստի այս անընդհատ
յաջողութեւէ կարծես թէ դիմակալներն իրենց արիութիւնը կորուսին:
Միայն երեք ասպետներ չորրորդ մրցման ատեն երևան եկան, որոնք
Պուա-Վիլպէրի և Քրօն-տը-Պէօի վահաններուն չղայելով՝ բաւական
սեպեցին մինակ միւս երեք ախոյեաններն 'ի մարտ հրաւիրել, վասն զի
միւսներուն չափ զօրութեան և քաջութեան նշաններ չէին յայտնած:

Այս խոհական ընտրութիւնը բաղդին անիւր չղարձուց. ախոյեան-
ները միշտ յաղթական կ'հանդիսանային. իրենց դիմակալներէն մին
վար տապալ ընկաւ, իսկ միւս երկուքը չկրցան հարուած տալ, այս-
ինքն իրենց հակառակորդներուն սաղաւարտին կամ վահանին հաստուն
և ուժգին ձեռքով մը զարնելու վրիպեցան, նիզակն 'ի պատրաստի,
այնպէս որ նիզակը կտարի կամ հակառակորդը վար թաւալի:

Այս չորրորդ մրցումէն ետքն՝ երկարատե հանդիստ մը տղի ունե-
ցաւ, և հաւանական չէր երևեր որ կռիւր շարունակելու համար ու-
րիշ ախոյեաններ մրցարանը գան ներկայանան: Հանդիսականներն սկսան
տրսնջալ, վասն զի յաղթական մենամարտներուն մէջ՝ Մալվուզէն և
Քրօն-տը-Պէօ իրենց բռնութեամբը ժողովրդեան ատելի եղեր էին,
և միւսները՝ Արանմէզնիլէն զատ՝ յարգ չունէին իբր օտարականներ:

Բայց ոչ ոք այս ընդհանուր դժգոհութեան աւելի սրտաղին մասնա-
կից կ'երևէր որչափ սաքսօն Սէտրիկն՝ որ նօրման ախոյեաններու տա-
րած ամէն մէկ յաղթանակին մէջ Անկլիոյ պատուոյն հարուած մը կը
տեսնէր. դժբաղդարար՝ ասպետական մարզերուն անխարժ մնացեր էր
իր դաստիարակութեամբը, թէև իր սաքսօնեան նախնեաց զէնքովը
չատ պարագաներու մէջ քաջարի և անվեհեր գինուր մ'երեցեր էր.
Սէտրիկ անձկանօք նայեցաւ Աթէլստէյնի՝ որ այն դարու կրթութեանց
հմուտ էր, որպէս թէ յորդորէ զանի անձնական ճիգ մ'ընել և տաճա-
րականին և անոր ընկերներուն ստացած յաղթութիւնը կորզել: Բայց՝
թէև սրտով կորովի և մարմնով հուժկու՝ Աթէլստէյն՝ շատ ծանրա-
շարժ էր և անփառասէր, և հետեապէս Սէտրիկի ակնկալած կռուի-
մասնակից գանուելու տրամադիր չէր երևեր:

— Բաղդն Անկլիոյ դէմ է, տէր իմ — ըսաւ Սէտրիկ յատուկ դիտ-
մամբ — միթէ նիզակ խաղալու փափաք մը չունիս:

— Վաղը պիտի կռուիմ — պատասխան տուաւ Աթէլստէյն խառ-
տուրդին (melee) մէջ — այսօր զինուելու հարկ չկայ:

Այս խօսքերուն մէջ Սէտրիկ երկու անախորժ բան գտաւ, նօրման

Տըլէ՛ բառը լսեց (ընդհանուր պայքար բացատրելու մտօք) և միանդամայն իր հայրենի երկրին անտարբերութիւն մը . բայց ի՛նչ օղուտ խօսողն Աթէլստէյն էր , և զանի այնքան կ'յարդէր , որ շհամարձակեցաւ անոր ներքին պատճառը կամ տկարութիւնը քննելու : «Նա մանաւանդ՝ դիտողութիւն մ'ընելու ժամանակ շունեցաւ , վասն զի Աամսլա մէջ մտաւ և դիտեց թէ՛ լուսադոյն է , թէև աւելի դիւրին , հարիւր մարդու մէջ ամենալաւ մարդ մը լինիլ քան թէ երկու մարդու մէջ :

Աթէլստէյն այս դիտողութիւնն իբր արժանի գովեստ մ'ընդունեց , իսկ Սէտրիկ՝ որ միմոտին միաքն աւելի քաջ կ'ըմբռնէր՝ դաժան և սպառնալից ակնարկ մը շեշտեց անոր , և Աամսլա բաղդաւոր դանուեցաւ որ նոյն ժամանակն ու տեղն արդելք եղան՝ իր տիրոջ ցասման աւելի զգալի նշաններն ընդունելու , իր պաշտօնին և ծառայութեան չնայելով :

Նիղակախաղին դադարը դեռ ևս կ'շարունակուէր , միայն տտեն ատեն պատպամաւորներուն ձայները լսելի կ'լինէին . «Սէր առ կանայս , կոտրեցէք ձեր նիղակները : Քաջ ասպետներ երևեցէք , դեղեցիկ աչքեր ձեր շահաասիտ թիւնները կ'նկատեն : »

Յաղթական ասպետներուն երաժշտութիւնը մերթ ընդ մերթ որոտալով կ'աւետէին յաղթութիւն և մենամարտ , մինչդեռ դեղջուկները կ'ցաւէին որ նոյն հանդիսաւոր օրն անդորժութեամբ կ'անցնէր . իսկ ձեր ասպետներ և աղնուականներ կ'ողբային փախալով պատերազմական ոյւոյն անկումն . իրենց երիտասարդութեան յաղթանակները կ'յիշէին և կ'խոստովանէին որ հայրենիքը շունէր այլ ևս այն հրաշաղեղ կիներն որ 'ի հնումն ախոյեաններու եռանդն ու խանդը կ'զրդուէին : Ճօհն իշխանն սկսաւ իր հետևորդներուն խօսիլ խնջոյքի պատրաստութեան և մրցանակը Արայն տը Աուա-Վիլպէրի նտ իրելու մասին , որ լսկ աէգով մը երկու հակառակորդ ասպետներ տասպալեր և երրորդ մը հալածական վաներ էր :

Աերջասլէս սարակիճնտեան երաժշտութիւնն այն ինչ երկայն և որոտընդոտաւ զոչմամբ կ'աւարտէր և մրցարանին խորին լուսթիւնը տտէպ խանդարեր էր , և ահա հիւսիսային կողմէն մենաւոր փողի ձայն մ'երբաւ որ մենամարտութեան շունչ կ'բուրէր : Ամենուն աչերն իսկոյն դարձան փողարին աւետող ախոյեանին կողմն , և հաղիւ թէ՛ փակարանը քացուեցաւ որ սիդասպանձ ընդ առաջ մրցարանը ճեմեց նա :

Որչափ որ հնարին է դատել սպառազէն մարդ մը, նորեկ ասպետը հազիւ թէ միջին հասակէ բարձր էր, և նիհար քանկորովի կ'երևէր: Իր սրողովատիկ զէնն ու զարդն ոսկեգրուաղ էր, և իր աստարինն նշանաբանն էր սրմատախիլ կաղնի մը սպանիական desdichado բառով՝ որ կ'նշանակէ խառանգազուրկ: Փառաւոր սև ձի մը հեծեր էր, և մրցարանէն անցնելու ատեն՝ իշխանն ու տիկինները բարևեց շնորհալի՝ իր նիզակը խոնարհելով: Այնպիսի ճարտարութեամբ կ'վարէր իր երիվարն և ձևերուն մէջ այնպիսի անտիական շնորհ կ'երևէր՝ որ ամէն հանդիսասիանաց համարումն իսկոյն դրաւեց, և այս զգացումը յայտնելու համար քանի մը զիւղացիներ զոչեցին: — Ռալֆ տը Վիբօնի վահանին զարկ, հիւրասէրին վահանին զարկ, իր ձիուն վրայ ամենէն անկայունը նա է, անոր հետ միայն կարող պիտի լինիս դիւրաւ գլուխ ելնել:

Նորեկ ասոյեանն՝ այս բարեսէր ցոյցերուն մէջ՝ յառաջ անցաւ մրցարանէն անցնելով, զառ ՚ի թափ շաւիղը բռնեց որ հողաբլուրը կ'տանէր, և երբ վեր ելաւ՝ շիտակ կեդրոնական տաղաւարին կողմը դիմեց՝ ՚ի զարմացումն բոլոր հանդիսականաց, և նիզակին սուր ծայրովը Պրայն տը Պուա-Աիլպէրի ասպարին զարկաւ և զայն հնչեցուց: Այս յանդգնութեան վրայ ամէնքը հիացան մնացին, մանաւանդ ասարկու ասպետն՝ որ այսպէս մահազոյժ դուպարի մը հրաւէր կ'ընդունէր, թէ և այսպիսի անակնկալ մենամարտի մը շապասելով՝ անհոգս կանդներ էր տաղաւարին դուռը:

— Ե՛ղբայր, միթէ այսօր խոստովանանք եղա՞ր — ըսաւ տաճարականն — և պատարագի դացի՞ր այս առտու, քանի որ այսպէս կեանքդ վտանգի մէջ նեւելու կ'յանդգնիս:

— Ե՛ս աւելի պատրաստ եմ մահուան քան թէ դու — պատասխան տուաւ ժառանգազուրկ ասպետը. վասն զի օտարականը նիզակախաղի տումարին մէջ այս անունը գրել տուաւ:

— Ուրեմն դնա տեղդ բռնէ մրցարանին մէջ — ըսաւ Պուա-Աիլպէր — և վերջին անգամ արևը նայէ, վասն զի այս դիշեր արքայութեան մէջ պիտի ննջես:

— Շնորհակալ եմ՝ քաղաքավարութեանդ — պատասխանեց ժառանգազուրկ ասպետն — և խօսքդ կատարելու համար, կ'յորդորեմ քեզ անխոնջ ձի և նոր նիզակ մ'առնուլ, վասն զի, սլաւուոյս վրայ կ'ըսեմ, որ երկու քէն ալ պէտք պիտի ունենաս:

Այսպէս վստահութեամբ խօսելէն ետև՝ իր ելած զառ ՚ի վայրէն ձին վար իջեցուց ետ ետ քշելով դէպ ՚ի մրցարանը՝ մինչև որ հիւսի-

սակողը հասաւ և այն տեղն անշարժ սպասեց իր հակառակորդ մենա-
մարտին : Չիաւարժութեան այս նոր փորձը բոլոր բազմութեան ծա-
փահարութիւնը գրգռեց :

Թէև Պրայն տը Պուա-Աիլպէր՝ իր հակառակորդին տուած խոր-
հրդէն զայրացեր էր՝ զայն շանդոսնեց , վասն զի իր պատիւը մեծասէս
կ'վտանդէր եթէ իր ժպիրհ հակամարտին վրայ յաղթանակը տանելու
համար ամէն միջոց ՚ի գործ չդնէր : Աւստի իր երիվարը փոխեց և ու-
րիշ մ'առաւ աւելի փորձ , առոյց , աշխոյժ և ուժեղ . կարծր փայտէ
նոր նիզակ մ'ընտրեց՝ վախնալով որ նախորդ կոխնեբուն մէջ իր ունե-
ցածը վնասուած չլինի : Ա.երջասպէս՝ վահանն ալ մէկդի գրաւ և ձիա-
պաններուն ձեռքէն ուրիշ մ'ընդունեց : Աս աջին վահանը միայն ձիա-
ւորին ընդհանուր նշանարանը կ'կրէր , այսինքն նոյն ձիուն վրայ երկու
ասպետ հեծեալ կ'ներկայէր , նշանակ մ'որ տաճարականաց նախնի խո-
նարհութիւնն ու աղքատութիւնը կ'յայտնէր՝ մինչդեռ այնուհետև սոյն
հանդամանքը թողլով ամբարտաւանութեան և հարստութեան ետեւէ
ընկեր՝ և ասով իրենց ուխտին կործանումը պատրաստեր էին : Պուա-
Աիլպէրի նոր վահանը յուլաթև ազուաւ մը կ'ներկայէր , որ իր ճանկին
մէջ պանկ մը բուներ էր և սա նշանարանն ունէր . Չգոյշ կոց ագասաւէն :

Երբ երկու մենամարտիկ մրցարանին ծայրը դէմ աւ դէմ կանգ ա-
ռին՝ հանդիսականաց ուշադրութիւնը յետին աստիճան սաստիկացաւ :
Շատերը կ'երևակայէին թէ այս դուպարը աղէտաբեր պիտի լինի ժա-
ռանդազուրկ ասպետին , թէև իր արիութիւնն ու մարտավարութիւնն
ամենուրեք սիրան ու միտքը գրաւեր էին :

Հազիւ թէ փողարները նշան տուին որ ախոյեանները փայրակի շու-
տութեամբ իրենց տեղէն աներևոյթ եղան և մրցարանին կեդրոնն իրա-
րու բաղխեցան՝ ինչպէս կ'բաղխին երկու շանթեր : Նիզակները մինչև
գաստակը կտոր կտոր եղան , և վայրկեան մ'այնպէս երեցաւ որ երկու
ձիաւորները դետին տասրալած են , վասն զի երկու երիվարները բուն
ընդհարումէն ծունր կրկնելու ստիպուեր էին : Սակայն ձիաւորներուն
ճարպիկութենէն երկու երիվարները սանձին և մտրակին զօրութեամբը
կանդնեցան , և ախոյեանները պահ մ'իրարու երես նայելէն ետև՝ այն-
պիտի աչքէրով որ կարծես թէ իրենց պահնակներու (VISOR) վանդա-
կին մէջն կրակ ու բոց կ'արձակէին՝ կիսաշրջան մ'ըրին և իւրաքան-
չիւրը մրցարանին մէկ ծայրը քաշուեցաւ և սպասուորներէն նոր նի-
զակ ընդունեց : Հանդիսականաց արձակած ահաղին մէկ աղաղակէն ,
ուսնոցներու և թաշկինակներու ծածանումէն և հանրական կայթիւնէն

յայտնի կ'երևէր թէ որչափ մտադիր են այս գուպարին, որ նոյն օրուան հանդիսին ամենէն հաւասար և ընտիր կերպով կատարուած մէկ կուխն էր. բայց այն ինչ երկու ասպետներն իրենց կայանը հասան կեցան, որ ծափահարութեան գոչիւնը դադարեցաւ և խորին լռութիւն մը տիրեց, այնպէս որ կարծես թէ բազմութիւնը շունչ առնլու անգամ կ'վախնար: Քանի մը վայրկեան հանդիստ սուին, որպէս զի մարտիկներն և ձիերը քիչ մը շունչ առնուն. յետոյ ճօհն իշխանն՝ իր գտազա ուլ նշան րրա փողարներուն որ յարձակումը հնչեն: Երկրորդ անգամ սրացան ախոյեաններն և նոյն արադութեամբ, նոյն արիութեամբ, նոյն ուժգնութեամբ մրցարանին կեդրոնը հանդիպեցան, բայց մի և նոյն բաղդը չո նեցան:

Այս երկրորդ գուպարին ատեն՝ տաճարականն իր ոսոխին ասպարին կեդրոնը նշան առաւ և այնքան ճիշտ և ուժգին զարկաւ որ իր նիզակը հատ ու կտոր թռաւ և ծառ անդադուրկ ասպետն իր թամբին վրայ երերաց: Միւս կողմէն այս ոսոխը կռուին սկիզբէն իր նիզակը Պուս-Ախիպէրի վահանին ուղղեր էր, բայց ընդհարման միջոցին իսկ իր նշանը փոխե ուլ նիզակը սաղաւարտին դարձուցեր էր, և թէ և աւելի դժուարին էր անոր նշան առնլու, բայց երբ դպէր՝ բաղխումն անդիմադրելի կը դառնար: Եւ իրա ի քաջապէս և լաւ զարկաւ նօրման ախոյեանին սրահնակին, որուն վանդակին մէջ իր նիզակին ծայրը կռուան գտաւ: Սակայն դարձեալ՝ այս վտանդալի պահուն՝ տաճարականն իր մեծ համբար պահեց, և եթէ իր թամբին վոկերը չքակուէին, երիվարէն թերևս վար չէր ընկներ: Այս իրաւ է որ թամբ, ձի և ձիաւոր թաւալզորը գետինն ընկան փոշելի ամպ մը հանելով:

Տաճարականն ակնթարթի մէջ վար ընկած ձիէն և ասպատաններէն աղատեցաւ, և հանդիսականաց կողմէն իր անկման վրայ լսած ցնծութեան աղաղակներէն խելացնոր դարձած՝ թուրը քաշեց և իր յաղթողն ի մենամարտ կոչելով՝ զայն օղին մէջ շողայուց: Ժառանգազուրկ ասպետն իր նժոյզէն վար ցատկեց և ինքն ևս սուրը քաշեց: Սակայն մարտին մարաջախտներն իրենց ձիովն անոնց մէջ տեղն ընկան և յայտնեցին թէ՛ այս պարագայիս մէջ՝ նիզակախաղ գուպարին կանոնները չեն ներեր այնպիսի մենամարտ մը:

— Յուսամ որ նորէն պիտի տեսնու ինք — ըսաւ տաճարականն՝ իր ոսոխին զայրալիւր ակնարկ մը նետելով — և այնպիսի վայր մ'ուր մարդ չպիտի գտնուի մեզ իրարմէ բաժնելու համար:

— Եթէ նորէն իրարու չհանդիպինք — ըսաւ ժառանգազուրկ աս-

պիտը — յանցանքն իմն չպիտի լինի : Հետի կամ ձիով, նիզակով, տա-
պարով, կամ սրով՝ միշտ կազմ՝ ու պատրաստ պիտի գտնես զիս քեզի
դէմ :

Այս երկու ախոյեաններն աւելի ծանր խօսքեր իրարու պիտի ուղ-
ղէին, եթէ մարաջախսները խաչաձև դնելով իրենց նիզակներն անոնց
մէջ, զատուելու չստիպէին : Թառանգազուրկ ասպետն իր նախորդ տե-
ղը դարձաւ, և Պուա-Աիլպէրն ալ իր վրանն, ուր բոլոր օրը յուսա-
հատութեան ճգնաժամի մէջ անցուց :

Յաղթողն՝ առանց իր ձիէն վար իջնելու՝ բաժակ մը զինի խնդրեց,
և երեսին պահնակը (beaver) բանելով՝ յայտնեց թէ այն բաժակը կը
խմէ . « Ի կենդանութիւն ճշմարիտ անկլիական սիրտերու և ՚ի կործա-
նումն օտար բռնակալաց : » Այն ատեն հրամայեց որ փող հնչեն՝ ախո-
յեաններ ՚ի մենամարտ կոչելու, և ասպարեց քարոզին ելծալ անոնց
իմաց տալու որ ընտրութիւն չպիտի ընէ, այլ կ'փափաքի անոնց դէմ
պայքարել ինչ կարգով որ կ'հաճին :

Հսկայաձև Ֆրօն-տը-Պէօ՝ սևաթոյր դէն ու զարդ հաղած՝ ամե-
նէն առաջ ասպարէզ իջաւ : Սպիտակ վահանին վրայ ցուլի մը սև դլու-
խը կ'տեսնուէր, որ կիսովին խանդարեր էր բազմաթիւ կռիւներու մէջ
և սա ամբարտաւան նշանաբանը կ'կրէր . cave, adsum. տես, աստեմ :
Թառանգազուրկ ասպետն այս նոր հակառակորդին վրայ՝ թէ և թեթեւ՝
այլ կատարեալ յաղթութիւն մը տարաւ : Երկու ասպետներն ալ իրենց
նիզակները կոտրեցին . բայց այս կռուին մէջ Ֆրօն-տը-Պէօ ասպա-
տան մը կորուսելուն՝ իր ընկերներուն պէս յաղթեալ հռչակուեցաւ :

Թառանգազուրկ ասպետը Արէնմէզնիլի հետ ունեցած շորբորդ դու-
պարին մէջ այնչափ մարդավարութիւն ցցուց որչափ որ արիութիւն և
ճարտարութիւն յայտնեց էր մինչ ցայն կէտ : Արէնմէզնիլի ձին՝ որ նո-
րահաս էր և աշխոյժ, իր ետևի ոտից վրայ կանկ առաւ ճախրելով,
այնպէս որ ձիաւորին նշանը վրիպեց . իսկ օտարականն այս պատահա-
րէն օգտիլ շուղելով՝ նիզակը վերուց և՛ առանց դպելու՝ ոտխին քովէն
անցնելով՝ անոր ձիուն կէս շրջան մ'ընել տուաւ, նորէն գնաց մրցա-
րանին մէջ իր առջի տեղը կեցաւ, և իր ոտխին քարոզ մը զրկեց՝ երկ-
րորդ անգամ՝ պայքարն սկսելու համար : Սակայն այս հրաւերը Արէն-
մէզնիլ մերժեց՝ ինքզինքը յաղթեալ համարելով իր հակառակորդին թէ
մարդավարութենէն և թէ հնարաղիտութենէն :

Ռալֆ տը Վիբօն եկաւ և օտարականին տարած յաղթութիւննե-
րուն ցանկն աւարտեց, վասն զի այնպէս ուժգին տասպատ գետինն ըն-

կաւ որ թէն բերնէն արիւն ժայթքեց և զինքը մարած իր վրանը տա-
րին :

Բիւրաւոր հանդիսականներ ծափահարութեամբ հռչակեցին իշխա-
նին և մարաջախտներուն որոշումն՝ որով նոյն օրուան մրցանակը թա-
ռանդազուկ ասպետին կ'ընծայէին :

Գ Լ Ո Ւ Խ Թ

... Մէջ տեղն էր 'ի տես
 Մի տիկին գիւօք քան զայլս վեհագոյն,
 Հասակաւ, գեղով անոնց էր գշխոյն,
 ...
 Իսկ շնորհօք քան սլարն էր նա զեր 'ի վեր,
 Գեր 'ի վեր և զարդ ունէր քան շատեր.
 Գարմրերանգ պսակ բոլոր 'ի ճակատ,
 Պարզ էր այլ շքեղ, ճիւխ, թէև անզարդ.
 Ողջախոհ ծառի մի ոստ 'ի ձեռին,
 Ունէր նա բարձր՝ նշան հրամանին :

ԾԱՂԻԿՆ ԵՒ ՏԵՐԵՒ

Ամենէն առաջ՝ Աիլյէմ տը Աիվիլ և Ստեֆան տը Մարտիվալ՝
 մարտին մարաջախտները՝ յաղթողին մատուցին իրենց շնորհակալու-
 թիւններն և նոյնպէս աղաչեցին որ իր սաղաւարտը հանեն կամ դէթ՝
 պահանակը վար առնու՝ օրուան հանդիսին մրցանակն ստանալու համար
 ճօհն իշխանին ներկայանալէն առաջ : Թառանդալուրկ ասպետն անոնց
 խնդիրը մերժեց՝ ասպետական մարդավարութեամբ, յայտնելով թէ չէ-
 կարող նոյն պահուն երեսը բանալ մրցարանը մանելու ատեն քարոզին
 ըսած պատճառներուն համար : Մարաջախտներն այս սրտասխանէն
 շատ զոհ եղան, վասն զի այն ատեններն՝ ասպիաները սովոր էին
 ստէպ քնածին ուխտեր ընել, և այս ուխտերուն մէջ ամենէն սովորա-
 կանն էր այն՝ որով կ'սլարտաւորէին քիչ մ'ատենուան համար, կամ
 մինչև մասնաւոր արկածի մը պատահումը՝ ծալտեալ մնալ : Հետեապէս
 մարաջախտները շփոթեցին թառանդալուրկ ասպետին զաղանխքն իմա-
 նալու, այլ ճօհն իշխանին յայտնելով թէ յաղթող ասպետն անձանօթ
 մնալ կ'ուզէ, հրաման խնդրեցին որ զանի նորին Շնորհափայլութեան
 առջևը բերեն, որպէս զի արիութեան մրցանակն ընդունի :

Սակայն օտարականին այս խորհրդաւոր ընթացքէն ճօճն իշխանին հետաքրքրութիւնը շարժեցաւ, և արդէն գուպարին ելից վրայ դժգոհ քանի որ իր սլաշտպանած ախոյեանները հետզհետէ յաղթուեր էին, մարաջախտներուն պատասխան տուաւ գոռողաբար .

— Մեր սուրբ Առսին լո սափայլ պսակին վրայ կ'երդնում, որ այս ասպետն՝ ինչպէս քաղաքավարութենէն, նոյնպէս իր երկիրներէն զուրկ մնացած պիտի լինի, քանի որ մեր առջևն երեւի կ'ուզէ առանց երեսը բանալու : Միթէ կրնա՞ք գուշակել, դու ք աւագորեարս — յարեց նա՝ իր մարդոց դառնալով — թէ ո՞վ է այս արի ասպետն որ այսպէս վեսօրէն կ'վարուի :

— Չեմ կարող գուշակել — պատասխանեց տը Պրէսի, և բնաւ չէի երեակայեր որ Մեծն Բրիտանիա պատող չորս ծովերուն մէջ գտնուի ախոյեան մ'որ մէկ օրուան մէջ չորս մենամարտիկ հետզհետէ յաղթահարէ : Հաւատս վկայ, երբէք չպիտի մոռնամ թէ ինչ զօրութեամբ Աիրօնը դետին զարկաւ : Ողորմելի Հիւրասէր ասպետը պարսատիկէն սրացող քարի մը պէս թամբին վրայէն վար ընկաւ :

— Շատ մի սլարծիր — ըսաւ Ս. Յովհաննու կարգի ասպետ մ'որ ներկայ էր — ձեր տաճարական ասպետն ալ նոյն փորձանքին հանդիպեցաւ : Ես՝ ձեր անյողդողդ նիզակը՝ Պուա-Աիլպէրն ալ տեսայ որ երեք անդամ ինքն իր վրայ շրջան մ'ըրաւ, և մէն մի շրջանին գետնէն լիտի աւաղ կ'առնուր :

Պրէսի՝ տաճարականաց կողմը յարած լինելուն՝ պիտի պատասխանէր, բայց ճօճն իշխանը մէջ մտաւ և ըսաւ .

— Լռութիւն, ասպետներ, ինչ սլարապ վէճ է ձերը :

— Յաղթողը՝ Ձեր վսեմութեան հրամանին դեռ կ'սպասէ — վրայ բերաւ Աիվիլ :

— Մեր հրամանն այս է — պատասխանեց ճօճն — որ սպասէ մինչև որ իմանան թէ արդեօք չկայ մարդ մ'որ անոր անունն և վիճակը գուշակէ : Եթէ մինչև երեկոյ անգամ սպասէ՝ դարձեալ մտելու վախ չունի իր կրած տաճանելի աշխատութենէ ետքը :

— Ձեր շնորհասփայլութիւնն — ըսաւ Աօլտմար Փիցուրս — յաղթողին պարտ ու պատշաճ պատիւը տուած չլինիր՝ եթէ զանի սպասելու պարտաւորէ մինչև որ յայտնենք ձեզ ինչ որ իրօք չգիտենք : Սակայն ուրիշ բան մը չեմ կրնար գուշակել եթէ ոչ ըսել որ Քիչարտ թագաւորին հետ Պաղեստին գացող նիզակներէն մին պիտի լինի նա, որոնք այժմ սուրբ Երկրէն հայրենիք վերադարձած են :

— Կարելի է որ Սէլզպրի կոմսն է — ըսաւ Պրէսի — գրեթէ նոյն հասակն ունի :

— Աւելի հաւանական է որ Կիսլէնտի ասպետ՝ Թոմաս Միւլդոն լինի — ըսաւ Ֆիցուրս . Սէլզպրիին աւելի խոշոր է : Ամբոխին մէջէն փախուք մ'ելաւ նոյն պահուն , սակայն ո՞վ հանեց այն շշուկն ոչ ոք իմացաւ : — Թերևս — կ'ըսէր այն ձայնը — թագաւորն է , թերևս նոյն ինքն Առիւծասիրտ Տիշարսն է :

— Աստուած մի արասցէ — ըսաւ Ճօհն իշխանը՝ նոյն պահուն ալկամայ մեռելի գոյն առնլով և իբր փայլակնահար դողդողալով — Աօլտմար , Պրէսի , արիասիրտ ասպետներս , յիշեցէք ձեր խոստումն և զիս մի թողուք :

— Ատանգ մը չկայ — ըսաւ Աօլտմար — միթէ շուտ մը մոռցարքու հօրդ որդւոյն հսկայակազմ մարմինն , և կրնաս երևակայել որ այն մարմինը կարելի լինի ամփոփել յաղթական ասպետին սպառազինութեան մէջ : Աիվիլ և Մարտիվալ՝ ձեր իշխանին մեծ ծառայութիւն մը ըրած կ'լինիք եթէ յաղթողն անոր դահին առջև բերէք որպէս զի վախճան տրուի այնպիսի վրիպակի մ'որ իր արիւնն այտերէն վանեց : Աւելի մօտէն դիտէ սա ասպետը — շարունակեց նա — Ասեմութիւնդ պիտի տեսնէ որ Տիշարտ թագաւորին հասակին հասնելու համար պէտք էր որ դեռ երեք բթամատ բարձր լինէր և վեց բթամատ լայնութիւն ունենային իր ուսերը : Նոյն իսկ հեծած ձին չպիտի կարենար Տիշարտ թագաւորին յաղթ մարմնոյն բեռը մէկ ձիարշաւի ասունն անդամ կրել :

Երբ այսպէս կ'իսուէր՝ մարաջախտները ժառանգազուրկ ասպետը բերեր էին այն փայտեայ աստիճաններուն մօտ , որ մրցարանէն դէպ 'ի Ճօհն իշխանին գահն ելնելու սանդուղը կ'յօրինէին : Ճօհն իշխանը դեռ ևս վրդոված կ'երևէր որ մի գուցէ իր եղբայրը՝ զոր թշուամաներ էր՝ թէև շատ երախտիք ունէր անոր , իր բնիկ երկիրը հասած լինի , ուստի իր երկիւղը չկրցաւ փարատել Ֆիցուրսի տուած մեկնութիւններէն , և մինչդեռ կարճ և շփոթ կերպով յաղթող ասպետը կը գովէր և իբր մրցանակ սլատերազմի երիվարն անոր ընծայել կ'հրամայէր , կ'դողար նաև առ ահի որ իր առջևը տեսած զրահափակ ասպետին գոց պահնակէն պատասխան մը չեինէ և նոյն սլատասխանին մէջ Առիւծասիրտ Տիշարտի ահուելի և հնչական ձայնը չլսէ :

Սակայն ժառանգազուրկ ասպետն իշխանին շնորհաւորութեան և ոչ իսկ բառ մ'ըսաւ 'ի պատասխան , այլ ակնածական խորին բարև մը տալով շնորհակալ եղաւ :

Երկու ձիապաններ՝ որ պերճօրէն հագուեր էին, նժոյզն առին և մրցարանը տարին: Նոյն իսկ կենդանին այնպիսի մարտիկ ասպազէն մ'ունէր, որ հաղիւ դիտակներու աչքին ազնիւ երիվարին արժէքը կ'աւելցնէր: Ասպետը թամբին գնդին վրայ դնելով իր ձեռքը՝ նժոյզը հեծաւ առանց ասպետանը գործածելու, և իր դեղարդը յօդս տատանելով՝ մրցարանին մէջ երկու անդամ պատոյտ ըրաւ՝ քաջավարժ ախոյեանի մը ճարպիկութեամբ իր ձիուն ընտիր ձիւքն երեւան հանելով: Այս գործողութեան մէջ թերևս սնուպարծութիւն երևէր՝ եթէ յաղթողը յարմար չդատէր բոլոր հանդիսականաց առջև՝ ընդունած իշխանական պարզէն՝ որով վարձատրուելու պատիւ ունեցեր էր, ցոյց տալու, և այսպէս ամենուն կողմէն խնդու թեան աղաղակներով ընդունուեցաւ:

Նոյն միջոցին Ժօրլօի անհանդարտ վանահայրն իշխանին ականջին փսփսաց և յայտնեց թէ՛ յաղթողին կ'վայելէր՝ արիութեան գործն աւարտելէն ետև՝ իր ընտիր դատողութեան մէկ նշանն ալ ցոյց տալ՝ պատշգամներուն մէջ փայլող գեղանի կանանց մէջէն՝ ընտրելով տիկին մ'որ գեղութեան և սիրոյ թաղուհին գահը բազմի և հեակեալ օրը գուպարին մրցանակը շնորհէ: Հետևապէս իշխանն իր գաւաղանով նշան մ'ըրաւ, երբ ասպետը մրցարանին մէջ իր երկրորդ շրջանը կ'ընէր: Ասպետն իսկոյն իշխանին դահուն կողմը դարձաւ, իր նիզակին ծայրը դետնէն մինչև մէկ ոտք բարձր բունեց և անշարժ մնաց, որսէս թէ իշխանին հրամանին կ'սպասէր. իսկ ամէն մարդ հիացաւ թէ ինչ ճարպիկութեամբ իր ամենի նժոյզին թափն ու զայրոյթը սանձեց իսկոյն՝ և արձանի պէս կայնեցոց:

— Ժառանգազուրկ ասպետ — ըսաւ ճօհն իշխանը — քանի որ այս անունով կ'կոչուիս, այժմ քու մէկ պարտքդ և միանգամայն արտօնութիւնդ է տիկին մը սահմանել՝ իբր գեղեցիկութեան և սիրոյ թաղուհի՝ որպէս զի վաղուան հանդիսին նախադասէ: Եթէ իբր օտարական մը մեր երկրին մէջ՝ քու ընտրութիւնդ ընելու համար ուրիշին օղնութեան կ'կարօտիս, այսչափ միայն կ'բանե՞ք որ Ալիսիա՝ մեր Աօլտմար արիասիրտ ասպետին գուստրն՝ ՚ի վաղուց անտի մեր արքունիքն՝ Էբրազնիւ և դեղանի՝ ծանօթ է ամենուն, բայց դարձեալ դու աղատես այս պսակը հաւնած անձիդ շնորհել, որով վաղուան թաղուհւոյն ընտրութիւնն ՚ի պաշտօնէ որոշուած պիտի լինի: Աւստի նիզակդ վերցուր:

Ասպետը հնազանդեցաւ, և ճօհն իշխանն անոր նիզակին սայրը գրաւ կանաչ թաւշէ պսակ մ'որուն բոլորտիքն ոսկի շրջանակ մը կար, և վերին ծայրը զարդարուած էր երկաթէ սլաքներով խառն ոստերով,

ինչպէս են դքսային պսակի մը վրայ մարդարիտներն ու ելակի տերեւները :

Ճօճն իշխանը Աօլտմարի դստեր մասին այս թելադրութիւնն ընելու քանի մը սրտաճառներ ունէր , որոց իւրաքանչիւրը սարօրինակ ոգւոյ մ'արդիւնքն՝ և անհողութեան , անձնատապաւանութեան , ստորին նենդութեան խառն ծնունդն էր : Երբ թուրը կեցող որեւոյն մաքէն կը ջանար փարատելու հրէայ Ռեպեկայի մասին ըրած անվայել և անընդունելի կատակը , նոյնպէս կ'փախաքէր Ալիսիայի հօր Աօլտմարի սիւտը շահիլ , որմէ կ'սրտակառէր , և նոյն օրն անոր դժգոհութեան սրտաճառներ առէր էր : Ասիկց զատ՝ այն օրիորդին աչքը մտնելու տենչ մը ունէր , վասն զի Ճօճն իշխանն՝ որչափ որ իր զբօսանայ մէջ վարար՝ նոյնչափ անօրէն էր իր փառասիրութեան մէջ . բայց՝ այս սրտաճառներէն զատ՝ ժառանգազուրկ ասպետին դէմ Աօլտմար տը Գիցու բսին պէս հզօր թշնամի մը գրդուելու միտք ունէր . քանի որ անոր դէմ արդէն անզուսպ հակակրօթիւն մ'զգար , և կ'յուսար որ Աօլտմար իր աղջկան եղած անիրաւութեան շպիտի ներէ եթէ երբէք յաղթողն ուրիշ տիկին մ'ընտրէ իբր թողութի , և այս ալ շատ հաւանական էր :

Եւ իրօք այսպէս եղաւ : Ասան զի ժառանգազուրկ ասպետն իշխանին կից պատշգամին քովէն անցաւ , ուր Ալիսիա օրիորդն՝ իր յաղթական գեղեցիկութեան փայլով նստեր էր , և մրցարանին մէջ ծանր ծանր քայլելով մինչդեռ առաջարտգօրէն կ'շարժէր անոր բոլորտիրը , կարծես թէ քննելու արտօնութիւնն ՚ի դորձ կ'դնէր և կ'դիտէր փառփրուն շրջապատը զարդարող չքնաղ կիները :

Հետաքրքրաշարժ բան մ'էր տեսնել թէ ինչնազեր կ'ընէին նորատի կիներն այս քննութեան ժամանակ . ոմանք կ'կարմրէին , ոմանք հարտութեան և արժանապատուութեան հովեր կ'առնուին , այլք շիտակ իրենց առջևը կ'նայէին և իբր թէ անցած դարձածին անտեղեակ էին , մէկ քանին շուարելով ետ ետ կ'քաշուէին , որ թերեւս կեղծիք էր , ոմանք ամէն ճիգ կ'թափէին որ չժպտին , մինչդեռ երկու երեք կիներ ալ սկսան քահ քահ ծիծաղիլ . կային նաև այնպիսիներ որ քողը վար առնլով իրենց գեղեցիկ երեսը ծածկեցին , բայց ինչպէս որ Աարտուրի ձեռադիրը կ'ըսէ , ասոնք այն կարդի կիներն էին որ արդէն իրենց գեղեցկութեամբ տաս տարի իշխելէն ետև՝ թերեւս նոյն օրուան սնտափ փառքէն իրենց բաժինը ստացած էին և չէին կամեր հետամուտ կանգնիլ որպէս զի ժամանակին չքնաղազեղ կանանց յաջողութեան բաղդը բաց թողուն :

Աերջապէս յաղթող ախոյեանը կանկ առաւ օրիորդ Տովէնաի նստած պատշգամին ներքեւ և հանդիսականաց հետաքրքրութիւնը յետին ծայր դրգուեց : Պէտք է խոստովանիլ որ եթէ ժառանգազուրկ ասպետն՝ իր ստացած յաջողութեամբն ամենուն համակրութիւնը գրաւեց, դարձեալ մրցարանին այն կողմն ուսկից կ'անցնէր իր նախամեծարութեան արժանի էր : Սաքսօն Սէտրիկն՝ տաճարականին սխարտութեան, նա մանաւանդ իր երկու չարակամ դրայի՝ Մարվուազէնի և Ֆրօն-տը-Պէօի պատահած փորձանքին վրայ ուրախութեամբ յափշտակուած՝ արդէն պատշգամէն դուրս մարմինը ծռելով՝ յաղթողին արշաւին կ'հետևէր՝ ոչ միայն իր աչքովն՝ այլ բոլոր սրտով և հոգւովը : Նոյնպէս օրիորդ Տովէնան մեծ ուշադրութեամբ դիտեր էր նոյն օրուան անցքերը, թէև առանց իր սրտադին հողն երևան հանելու : Մինչև անգամ անշարժ Աթէլստէյն իր դանդաղութիւնը թոթուելու նշաններ ցոյց տուեր էր, վասն զի բաժակ մը համեմատ գինի խնդրելով ժառանգազուրկ ասպետին կենաց խմեց զայն :

Սաքսօն Սէտրիկին պատշգամին ներքեւ գտնուող ուրիշ ակումբ մը դրեթէ նոյն մտադրութեամբ դիտեր էր պաշքարին ելքը :

— Հայր Աբրահամ — ըսաւ Իսահակ՝ երբ տաճարականն ու ժառանգազուրկ ասպետն առաջին արշաւն ըրին — ինչպէս վեսօրէն կ'արշաւէ այս բարբարիկ նժոյզն, ահ, ինչ ընտիր է այս երիվարն որ Պէրպէրիստանի խորերէն եկած է, ասպետը բնաւ հոյ շտանիր, որպէս թէ վայրի իշու մը մտրուկն է, հապա սա ալնիւ սպառազէնն (armour) որ այնքան ոսկի կտրեց Յովսէփ Բարէյրա, Միլանի գինադորժին, առանց հաշուելու հարիւրին եօթսուն տոկոսն, այս սպառազէնն ալ աչքին շերեիր՝ որպէս թէ ճամբուն վրայ գտած է :

— Հայր իմ — ըսաւ Ռեպելկա — եթէ ասպետն իր անձն ու անդամները վտանգի մէջ կ'դնէ՝ այսպիսի ահուելի դուսար մ'ընելով միթէ կարելի է որ իր նժոյզն ու սպառազէնը խնայէ :

— Աղջիկ — վրայ բերաւ Իսահակ քիչ մը սրտմտած — դու ըսածդ չդիտես. իր վիզն ու անդամներն իրն են, բայց նժոյզը, զէնն ու զարդը . . . Յակոբ նահապետինն են. ինչ պիտի ըսէի : Սակայն խիստ արի պատանի մ'է, նայէ անդամ մը, Ռեպելկա, նայէ, նորէն փղշտացիին հետ 'ի վէզ պիտի գայ : Աղօթէ, աղջիկս, աղօթէ քաջ պատանիին յաջողութեան համար, նոյնպէս սրբնթաց ձիուն և պերճ սպառազէնին համար : Աստուած իմ նախահարց — գոչեց նա վերստին — յաղթական ելաւ ասպետն, անթլփատ փղշտացին անոր նիզակին տակ ընկաւ :

ինչպէս որ Պազանու թագաւոր՝ Օկ, և Ամնացւոց թագաւոր՝ Սիհոն՝ մեր հարց սրին ներքե ընկան : Տարակոյս չկայ որ անոնց ոսկին, արծաթն և մարտիկ ձիանն և պղնձէ ու պողովատէ զէնն ու զարդն իբր իր կապուտն ու կողոպուտը՝ պիտի առնու գրաւէ :

Արժանի հրէայն մի և նոյն անհանգստութեան նշանը կ'ցուցնէր ամէն անգամուն որ ասպետը մրցում մը կ'սկսէր, և հաղիւ կ'մոռնար ասպետին ամէն մէկ նոր յաղթանակէն ստացած ձիուն և զինուց արժէքը շուտ մը հաշուել : Հետեւապէս ժառանգազուրկ ասպետին յաջողութեան համար ուխտ կ'ընէին անոնք որ նստեր էին մրցարանին այն մասին մէջ ուսկից նոյն պահուն յաղթողը կ'անցնէր :

Երկմտութիւն համարէ կամ վարանման ուրիշ պատճառ մը՝ յաղթող ասպետը մէկ վայրկեանէն աւելի անշարժ մնաց, մինչդեռ հանդիսականները լուռ ու մունջ անոր շարժումներուն ակնապիշ կ'նայէին . յետոյ փոքր առ փոքր և շնորհալի կերպով՝ իր նիզակին ծայրը վար իջեցնելով՝ անոր վրայի պսակը Տովէնային օտից առջև դրաւ . իսկոյն շեփորները հնչեցին՝ մինչդեռ քարոզներն օրիորդ Տովէնան միւս օրուան համար գեղութեան և սիրոյ թագուհի հրատարակեցին, սպառնալով պարտ ու պատշաճ պատիժ տնօրինել անոր իշխանութեան անսաստողներուն դէմ : Այն ասե՛ն՝ ԱՌԱՏԱԶԵՌՆՈՒԹԻՒՆ աղաղակն արձակեցին, և այս կոչման վրայ՝ Սէտրիկ իր անեղր խնդութեան մէջ՝ առատասրտութեամբ պատասխանեց, և Աթէլստէյն ալ՝ թէև աւելի ծանր կերպով մեծ պարզե մը շնորհեց :

Նօրմանեան դասու օրիորդներու մէջ տրտունջ մը լսուեցաւ նոյն պահուն, վասն զի սովորած չէին տեսնել որ սաքսօն օրիորդ մը նախադաս սեպուի, ինչպէս որ նօրման իշխաններուն համար ալ նոր բան մ'էր իրենց հաստատած ասպետական խաղերու մէջ պարտութիւն կրելը : Սակայն այս դժգոհութեան ձայները խղզուեցան ժողովրդային սա աղաղակներով . « Աեցցէ՛ օրիորդ Տովէնա, սիրոյ և գեղութեան բարեսիրտ և օրինաւոր թագուհին : » Իսկ անոնք որ ստորին դասերը կը գտնուէին՝ այս աղաղակներուն պատասխան տուին . « Աեցցէ՛ սաքսօն իշխանուհին, կեցցէ՛ ընդ երկար անմահ Ալֆրէտի սերունդը : »

Սակայն՝ որչափ որ այս ձայները ճօհն իշխանին և հետեւորդներուն անախորժ կ'երևէին, դարձեալ հարկ տեսաւ յաղթողին ընտրութիւնը հաստատել և հետեւապէս իր ձին բերել տալով՝ դահէն վար իջաւ և սպանիական երիվարը հեծնելով՝ իր սպասաւորներուն հետ՝ մրցարանը մտաւ : Ճօհն իշխանն՝ Ալիսիա օրիորդին պատշգամին տակը պահ մը

կանկ առաւ . անոր իր յարգանքը մատոյց և իր քովը զանուորներուն ըսաւ . — Աստուած վկայ , պարոններ , որչափ որ յաղթող ասպետը յայտնեց որ մենամարտութեան մէջ հաստապինդ մարմին և ջիւեր ունի , իր ընտրութեամբն ալ հասկցուց որ սրատես աչեր չունի : »

Ահա այս պարագայիս՝ ինչպէս նաև իր բոլոր կենաց մէջ՝ ճօհն իշխանին դժբաղդութիւնն էր լիովին ճանչել այն անձերն որոց հետ հաշտ լինիլ կ'փափաքէր : Առլամար Քլայուրս դժկամակութիւն զգաց քան թէ ախորժ երբ տեսաւ որ ճօհն իշխանն ամենուն առջև բացարձակ յայտնեց թէ իր աղջիկն արհամարհուեր էր :

— Ըստ իս չկայ — ըսաւ նա — ասպետական իրաւունք մ'որ այնչափ անդին և անդրժեւի լինի որչափ այն որով ասպետ մ'ազատ է ըստ հաճոյս իր սիրոյ թաղուհին ընտրելու . իմ աղջիկս մէկէ սլաաիւ չսպասեր , և իր բնաւորութեան և կարգին վայել յարկն ոչ ոք կ'զլանայ իրեն :

Ճօհն իշխանը սրատասխան չտուաւ , բայց իր ձին մտրակելով՝ իբր թէ իր սրանեղութեան հով տալ կ'ուզէր , կենդանին առաջ քշեց դէպ 'ի Բովէնայի սլատշգամն՝ որուն տրուած սլակը տակաւին ոտիցն առջև կ'կենար :

— Գեղանի տիկին — ըսաւ նա — քու վեհապետութեանդ նշանը գլուխդ դիր , նշան մ'որուն համար ես ինքս՝ Անժուի ճօհն՝ իմ անսուտ շնորհաւորութիւնս կ'ընծայեմ քեզ . իսկ եթէ այսօր հաճիս ինսամակալիդ և բարեկամներուդ հետ մեր խնջոյքը սրատել Էշպի դղիկին մէջ՝ պիտի լաւ և ս ճանչենք այն վեհապետուհին որուն պիտի նուիրենք վաղը մեր ծառայութիւնը :

Բովէնա լուռ կեցաւ , և Սէտրիկ իր բնիկ սաքսօն լեզուաւ անոր կողմէն սրատասխան տուաւ :

— Օրիորդ Բովէնան — ըսաւ նա — ձեր մարդավարութեան սրատասխանելու և ձեր խնջոյքին ատեն իրեն սրատշած դերը խաղալու համար ձեր լեզուն չլիսէ : Ես ինքս և Քօնինիսպրիկի սրայազատ Աթէլսատէյն մի միայն մեր նախահարց լեզուն կ'խօսինք , անոնց սովորութեանց միայն կ'հետեւինք : Հետևասէս շնորհակալութեամբ կ'մերժենք Ձեր վսեմութեան սիրալիբ հրաւերը : Սակայն օրիորդ Բովէնան վաղն իր վրայ պիտի առնու այն սրատուաւոր սրաշտօնն որուն կոչուած է յաղթող ասպետին ընտրութեամբ և ժողովրդեան ձայնակցութեամբ :

Այս ըսելով Սէտրիկ սլակն առաւ և Բովէնայի դլխին վրայ դրաւ , ցոյց տալու համար որ անոր տրուած առժամանակեայ իշխանութիւնը կ'ընդունի :

Handwritten note in the left margin: Գրական

— Ի՛նչ կ'ըսէ — հարցուց ճօհն իշխանը սարսօն լեզուն չհասկը-
նալ կեղծելով, թէ և շատ քաջ կ'իսուէր :

Այն ատեն Սէտրիկի պատասխանին իմաստը Ֆրանսերէն լեզու ա-
անոր բացատրեցին :

— Հատ լաւ — ըսաւ նա — վաղն անձամբ պիտի առաջնորդենք այս
լուսկաց թաղուհին իր պատուոյ դահը : Գոնէ դու — յարեց իշխանը՝
յաղթական ասպետին դառնաւով, որ պատշտամբն մօտ կ'զանուէր —
դոնէ դու պիտի հաճիս մեր խնջոյքին ներկայ գանուելու :

Ասպետն՝ առաջին անգամ բերանը բանալով ըսաւ ծանր ու կցկտուր
ձայնով մը թէ շատ յոյնած է և թէ պէտք ունի վաղուան գո պարին
պատրաստուելու :

— Հատ լաւ — վրայ բերաւ իշխանը դռողարար — թէ և այսպիսի
մերժումներու սովոր չենք, պիտի ջանանք մեր ճաշն ըստ կարի մարսել,
թէ և չէք պատուեր մեզ, ոչ դու՝ զինուոյ մէջ յաջողագոյնն, և ոչ քու
ընտրած գեղեցկու թեան թաղուհին :

Այսպէս խօսելով՝ իր շողշողուն հետևորդներուն հետ մրցարանէն
ելնելուն կ'պատրաստուէր, և այս նպատակաւ երկվարին գլուխը դար-
ձուց, որով բոլոր հանդիսականներն իմացան որ հանդիսին վերջ տրուեր
է և սկսան ցրուիլ :

Սակայն ճօհն իշխանն՝ անարդեալ հպարտութեան յատուկ քինա-
ռու ոգով մ'որ աւելի ևս կ'զրզուէր իր ստորին խելքին դիտակցու-
թեամբն, այն ինչ երեք քայլ առեր էր՝ ետ դարձաւ, վայրագ ռիսակա-
լութեան ակնարկ մը նետեց նոյն առաւօտ իրեն անհաճոյ երևցող դե-
ղացի զինուորին վրայ և իր թիկնապահ զօրականաց պէտք եղած հրա-
մանը տուաւ :

— Եթէ ձեր զլուխը կ'սիրէք — ըսաւ նա — մի թողուք որ սա
անոցամը խոյս տայ :

Գիւղացին՝ իշխանին զայրայիր ակնարկն՝ առաջին անգամուան պէս
անխառով անվհերութեամբ ընդունեց, և ժպտով մ'ըսաւ .

— Ի՛նչ միտք չունիմ Եշտիէն հեռանալու վաղուանէ առաջ, կ'փա-
փաքիմ տեսնել թէ Սղաֆֆրրաի և Լիսէսդրի աղիղնաւորներն ի՛նչպէս
կ'քաշեն իրենց աղեղը, Նիտուաի և Չէրնուաի անտառներն ան-
շուշտ քաջալարժ նետաձիղներ պիտի ունենան :

— Իսկ ես — ըսաւ ճօհն իշխանն իր սպասաւորներուն՝ առանց ուղ-
ղակի պատասխան տալու — ես ալ կ'ուզեմ տեսնել թէ ի՛նչպէս նետ կը
նետէ սա մարդն, և վնց իրեն եթէ իր շրթութիւնը ճարպիկութեամբը
չծածկէ :

— Ժամէ — ըստ տը Պրէսի — այս դեղջուկներուն ժպրհութիւնը պատժել նշանաւոր կերպով մը :

Աօլտմար Քիցուրս՝ մտածելով թերևս որ իր վեհասպետը ժողովրդեան սիրտը շահելու ճամբէն շատ հեռու կ'դանուի, իր ուսերը թոթուեց և լուծիւն պահեց : Իսկ ճօհն իշխանը մրցարանէն դուրս ելաւ և բոլոր բազմութիւնն ամէն կողմէն ցրուելու սկսաւ :

Հանդիսականներն՝ իրենց եկած զանազան թաղերուն ուղղութեամբ՝ այլ և այլ ճամբայ բռնեցին, տարբեր տարբեր խումբեր կազմելով, և դաշտին վրայ տարածուեցան : Ամբոխին մեծ մասը դէպ 'ի Էշպի քաղաքը քաշուեցաւ, ուր բազմաթիւ նշանաւոր մարդիկ գղեկին մէջ իջեւաններ էին, և ոմանք ալ քաղքին մէջ բնակարան գտեր էին : Այս կարգին մէջ շատ մ'ասպետներ կային որ արդէն գուպարին ներկայ գտնուեր, կամ հետեւեալ օրը մասնակից լինելու տրամադիր էին, և մինչդեռ ծանրաքայլ կ'յառաջանային՝ օրուան դէպքերուն վրայ խօսելով՝ խուժանը բարձր աղաղակներով զանոնք կ'բարեւէր : Նոյն կայթիւնները կ'լսուէին ճօհն իշխանին համար, թէ և այս ընդունելութիւնն իր և ողեկիցներուն շքեղ զէն ու զարդին պարտաւոր էր քան թէ իր ժողովրդասէր բնաւորութեան :

Սակայն աւելի անկեղծ և հանրական, նոյնպէս արժանաւոր բքին մը փրթաւ յաղթողին համար, որ՝ ժողովրդեան աչքէն հեռանալու մտադիր՝ մրցարանին ծայրը կեցած տաղաւարը հրաւիրուելով մարդավարութեամբ՝ ներս մտաւ : Այն ինչ վրանը մտաւ Ժառանգաղուրկ ասպետը՝ շատ մարդիկ որ զանի 'ի մօտուստ տեսնելու և ճանչելու հետաքրքրութեամբ այն կողմերը կ'գեղերէին՝ նոյնպէս ցիր ու ցան կողան :

Մի և նոյն տեղը գումարուած և նոյն դէպքերով յուզուած այն բազմութիւ ամբոխին աղմուկն ու շփոթը դադրեցան այժմ, ու այլ և այլ ճամբայ բռնող զատ զատ խումբերու հեռաւոր բզզումն ևս քիչ ատենէն մարեցաւ և խորին լուծիւն մը տիրեց : Աւրիշ շշուկ չէր լսուէր բայց միայն սպասաւորներու ձայներն որ պատշգամներուն բարձերն ու ծածկոցները կ'հանէին որպէս զի նոյն գիշերը զանոնք ապահով տեղ մը դնեն, և հանդիսականաց ձգած մնացորդ գինին և ուտելիքն իրարու ձեռքէ կ'յափշտակէին :

Մրցարանին սահմանէն անդին շատ մը դարբնոցներ կանգնեցին, և այս դարբնոցները վերջնալուսին սկսան փալփլիլ և գինազործներու աշխատութիւնը յայտնել, աշխատութիւն մ'որ բոլոր գիշեր պիտի շարունակուէր որպէս զի միւս օրը գործածելի զէնքերը նորոգեն և շտկեն :

Պահակներու մեծկակ գունդ մ'երկու ժամ անգամ մը փոխուելով՝
կրկեսին բոլորաթիքը կեցեր զիշ' ըր պահպանութիւն կ'ընէր :

Գ Լ Ո Ւ Խ Ժ

Տխուր, շարագոյծ ագուաւի նման՝
Որ գողոր կտցով կռչէ խօթին մահ,
Եւ մութ գիշերուան խոր լռութեան մէջ
Քանտախտ կը թափէ իր սև թևերէն,
Նոյնպէս վշտահար վազէ Բարարայն
Առ այն քրիստոնեայս ծանր անէծքով:
ՄԱԼԻԱԻ ՀՐԷԱՅՆ

Այն ինչ ժառանգազուրկ ասպետն իր տաղաւարը հասաւ որ շատ մը
ձիասպան ու սպասաւոր խակոյն եկան անոր ղէն ու զարդը հանելու, նոր
լաթեր տալու և յորդորեցին որ բաղնիք մանէ : Այս պարագայիս մէջ
հետաքրքրութիւնը թերևս նոր դրդիւ մը կ'տար իրենց եռանդին,
վասն զի ամէնքը կ'փափաքէին իմանալ թէ հովէր այն ասպետն որ այն-
չափ դարնիներ վաստկեր էր, թէ՛ և՛ նոյն իսկ ճօհն իշխանին հրամա-
նին հակառակ՝ մերժեր էր իր երեսը բանալու կամ անունը տալու :
Բայց ասպետը սպասաւորներուն պաշտօնասէր հետաքրքրութիւնը դո՛հ
չըրաւ, վասն զի անոնց աջակցութիւնը մերժեց, և միայն իր յատուկ
ձիասպանը կամ շինական մը կռչեց որ խեղկատակ երես մ'ունէր, թաղ-
եայ մութ վերարկուի մը մէջ փաթթուեր, զլուխն ու դէմքը կիսովին
ծածկեր էր սև մուշտակէ խոյրով մը, և կարծես թէ իր գլխաւորին
պէս սնյայտ մնալ կ'ուզէր : Երբ միւս սպաները վրանէն դուրս ելան՝
այս ծառան իր տիրոջ ղէնքին ծանր մասերը հանեց, անոր առջև կե-
րակուր և գինի դրաւ, քանի որ շատ պէտք ունէր նոյն օրուան յոգնու-
թենէն ետքը :

Ժառանգազուրկ ասպետը դեռ նոր աւարտեր էր իր պարզ ճաշն որ
իւր ծառան եկաւ յայտնեց, թէ հինգ հոգի՝ որոց իւրաքանչիւրը բար-
բարիկ երիվար մ'ունէր, իրեն խօսելու կ'փափաքէին : Ժառանգազուրկ
ասպետն իր ղէնքը հաներ, և իր դասու մարդկան յատուկ՝ սովորական
պարեպօտ մը դրեր էր որ կնգուղ մ'ունենալուն՝ իր դէմքը դոց կ'պա-
հէր՝ երբոր կամէր՝ ճիշտ սաղաւարտին պահնակին պէս ամրապինդ,
բայց նոյն պահուն վերջնալոյսին հետ մութը կոխելուն՝ ծպտեալ երե-

և իլ աւելորդ կ'երեւէր, եթէ արդէն ծանօթ չլինէր իր դէմքը զինքը
անանել փախաբողներուն:

Ուստի ժառանգազուրկ ասպետն իր վրանէն դուրս ելաւ անվեհեր
և հանդիսադիր նկուն ասպետներուն ձիապանները ճանչեց իրենց կար-
միր ու սև սլճնաղղեստէն: Ամէն մէկն իր տիրոջ երիվարը սանձէն
բռներ կ'սպասէր և անոր վրայ դրուած էր այն սպառաղէնն որով դու-
սպարին աստն նկուն ասպետը մենամարտեր էր նոյն օրը:

— Ասպետական օրինաց համեմատ — ըսաւ անոնց զլուխը կիցողն
— ես Պօսպին Օյէյ, Պրայն տը Պուա-Վիլայէր ահարկու ասպե-
տին ձիապանը, կ'ընծաւեմ քեզ, առ այժմ ժառանգազուրկ ասպետ ա-
նուանելով քեզ, այն ձին ու սպառաղէնը զոր յիշեալ Պրայն տը Պուա-
Վիլայէր դորձածեց այսօրուան դուսպարին մէջ, ձեր ազնուութեան
ընտրութեան թողլով զանոնք ընդունելու կամ փրկանք մ'որոշելու,
ըստ հաճոյս. վասն զի այս է զինուց օրէնքը:

Միւս ձիապաններն ալ դրեթէ մի և նոյն ոճով խօսեցան և ժառան-
գազուրկ ասպետին վճռոյն սպասեցին:

— Պարոններ, ձեր չորսին և ձեր սրատուաւոր և արիասիրտ տեարց
համար — սրատասխանեց ասպետը՝ վերջին խօսողներուն դառնալով —
մի և նոյն սրատասխանն ունիմ: Իմ յարդանդս մատուցէք այն ազնիւ
ասպետներուն, և իմ կողմէս ըսէք որ անվայել բան մ'ըրած պիտի լի-
նիմ զրկելով զանոնք այնպիսի երիվարներէ և սպառաղէններէ որ իրենց
պէս քաջերուն քան զամէն աւելի կ'վայլեն: Բարեբաղդ կ'լինէի եթէ
այս չափով սրատգամաւորութիւնս աւարտէի, բայց՝ ինչպէս որ անու-
նէս յայտնի է, իրօք ժառանգազուրկ լինելովս, ձեր տեարց շնորհա-
պարտ պիտի դանուիմ, եթէ շնորհ ընեն ինքնին այս ձիերուն և զի-
նուց փոխարէն դումար մը սահմանելու, վասն զի այս իմ կրած սպա-
ռաղէնս իսկ չիմ կարող ըսել թէ իմն է:

— Մեզնէ ամէն մէկը — սրատասխանեց Բէժինալտ Քրօն-տը-
Պէօի ձիապանը — սրաշտօն ունի հարիւր ոսկի դին տալ այս երիվար-
ներու և զինուց համար:

— Այդ բառական է — ըսաւ ժառանգազուրկ ասպետն: — Իմ
պիտոյքս կ'ստիպեն զիս այդ դումարին կէսն ընդունելու, իսկ մնացա-
ծին կէսը ձեր մէջ, և միւս կէսն ալ քարոզներու, հրեշտակներու,
նուագածուններու և սպասաւորներու տուէք:

Ժողով

Չիապանները՝ գլխանոց ՚ի ձեռին և յարգալի բարևներ տալով իրենց սրտագին երախտագիտութիւնը յայտնեցին անոր մարդավարութեան և առատաձեռնութեան համար՝ որուն օրինակը ստէպ չէին տեսներ, զէթ այսպէս ընդարձակ կերպով: Յետոյ ժառանգազուրկ ասպետն՝ իր խօսքը Պօտլինի ուղղեց, որ Պրայն տը Պուա-Վիլպէրի ձիապանն էր, և անոր ըսաւ.

— Իսկ քու տիրոջդ կողմէ ոչ զէն և ոչ փրկանք պիտի ընդունիմ: Ըսէ անոր որ մեր կռիւը դեռ վերջացած չէ, ոչ, չէ վերջացած, մինչև որ սրով և նիզակով, հետի և ձիով իրարու հետ չմաքառինք: Նոյն ինքը հրաւեր կարգաց ինձ այս մահազոյժ մենամարտին, և սոյն հրաւերը չպիտի մոռնամ: Սակայն թող հաւաստի լինի նա, որ զինքը չեմ կրնար նկատել այն ընկերներէն մէկուն պէս՝ որոց հետ մարդավար կերպով վարուիլ կ'ախորժիմ, այլ կ'նկատեմ զանի իբր այնպիսի մարդ մը որուն հետ մահու չափ մենամարտիլ կ'ուզեմ:

— Իմ տէրս — ըսաւ Պօտլին — պիտէ հատուցանել արհամարհանք ընդ արհամարհութեան, հարուած ընդ հարուածի և մարդավարութիւն ընդ մարդավարութեան: Քանի որ չես հաճիր ընդունիլ իր կողմէն միւս զինակիցներուն զինուոց վրայ դրած փրկանքիդ մէկ բաժինը, պարտ կ'համարիմ իր զէնքն ու երիվարն այս աեղ ձգել, ստոյգ լինելով որ ոչ մին պիտի կրէ և ոչ միւսը պիտի հեծնէ:

— Լաւ կ'իսօսիս, քաջ ձիասրան — ըսաւ ժառանգազուրկ ասպետն — այն, լաւ և համարձակ խօսեցար, ինչպէս որ վայելէ քեզ խօսիլ տարակայ տիրոջդ կողմէ: Սակայն մի թողուր այս տեղ երիվարն ու զէնքը, քու տիրոջդ դարձուր. իսկ եթէ կ'արհամարհէ զանոնք ընդունելու՝ դու պահէ և գործածէ, բարեկամ: Արչափ որ իմ ստացուածս են, քեզի կ'տամ յօժարակամ:

Պօտլին խորին բարե մը տուաւ և իր ընկերներուն հետ ձգեց դնաց. իսկ ժառանգազուրկ ասպետն իր տաղաւարը մտաւ:

— Մինչև այս ժամս, Վիւրթ — ըսաւ նա սպասաւորին — անկլիական ատպետութեան համբաւն անարատ պահեցի:

— Իսկ ես — ըսաւ Վիւրթ — թէև սաքսօն խողպան մը, նօրման ձիասրանի մը դերս լաւ խաղացի:

— Այն — պատասխան տուաւ ժառանգազուրկ ասպետը — բայց չափազանց կ'տազնապէի որ գեղջուկ կերպարանէդ չմատնուիմ:

— Ահհ — ըսաւ Վիւրթ — այդ մասին անհոգ էի, մինակ կ'վախնայի որ իմ Աամպա, միմոս ընկերս իս չձանչէ, որուն խաբեբայ կամ

խենդ լինելը դեռ ևս չհասկցայ : Սակայն իմ ծիծաղս դժուարաւ կը
բռնէի երբ իմ ծեր վարպետս իմ քովէս կ'անցնէր , կարծելով թէ
Աիւրթ իր խողերը կ'արածէ միշտ Ռօթըվուտի թփերուն և ճահիճ'նե-
րու մէջ : Եթէ յայտնուիմ . . . :

— Բաւական է — ըսաւ Ժառանգազուրկ ասպետը — դու իմ խոս-
տումս չես մոռցած անշուշտ :

— Ա՛չ , այդ չեմ մոռցած — ըսաւ Աիւրթ — Երբէք բարեկամու-
թեան դէմ չպիտի գործեմ կաշիս պահպանելու համար : Բաւական
հաստ է մորթս և կրնայ իմ երամակիս որ և է խողին չափ դանակի և
խարազանի տոկալ :

— Ապահով եղիր , Աիւրթ — ըսաւ ասպետն — որ իմ սիրոյս հա-
մար կրած վտանգիդ փոխարէնը պիտի հատուցանեմ : Առ այժմ , կ'ա-
ղաչեմ քեզ ընդունիլ սա տաս ոսկին :

— Հիմակ հարուստ եմ — ըսաւ Աիւրթ ստակը դրպանը դնելով —
և երբէք խողպան կամ սորուկ մ'ինձի չափ հարուստ եղած չէ :

— Սա ոսկիի սպարկն է՞ չափ տար — յարեց ասպետն — և զնա Բ-
սահակը գտիր , և ինձ ապառիկ տուած ձիուն և զինուց դինը թող այդ
դումարէն վար դնէ :

— Ա՛չ , Ս . Տընտղան վկայ — վրայ բերաւ Աիւրթ — այդպիսի
բան մը չեմ կրնար ընել :

— Ի՞նչ կ'ըսես , անողամ — պատասխան տուաւ ասպետը — մի՞թէ
իմ հրամանիս կ'անսաստես :

— Չեմ անսաստեր , եթէ հրամաններդ արդար , օրինաւոր և քրիս-
տոնէավայել են — պատասխանեց Աիւրթ — բայց այդ հրամանդ անի-
րաւ է : Անիրաւ՝ որովհետեւ ներել հրէի մ'որ ըստ հաճոյս այս դումա-
րէն ուղած ստակը վար դնէ , տէրս խարել է , ապօրինաւոր է , որով-
հետեւ խենդի գործ է . քրիստոնէավայել չէ , որովհետեւ հաւատա-
ցեալ մը կողոպտել և անհաւատ մը հարստացնել է :

— Գոնէ զինքը գո՛հ ընելու ջանա՛ , կամակոր ծառայ — յարեց Ժա-
ռանգազուրկ ասպետը :

— Շատ լաւ — ըսաւ Աիւրթ՝ պարկը վերարկուին տակ դնելով և
վրանէն դուրս ելնելով — և հանդիստ չպիտի լինիմ — մրմնաց նա —
եթէ պահանջումին կիսովը զինքը գո՛հ չընեմ :

Այս ըսելով՝ մեկնեցաւ Աիւրթ , և Ժառանգազուրկ ասպետը տաղ-
նապելի մտմտութի մէջ թողուց , և իրօք զանազան սլաւաճառներով տա-
ժանելի և մթին էին իր մտմտութն և դեռ ներելի չէ մեզ սոյն սլաւա-
ճառներն ընթերցողին հաղորդել :

Հարկ է արդ տեսարանը փոխել և Եշպի գիւղն անցնիլ, կամ լաւ ևս
 անոր շրջակայքը գտնուող և հարուստ խորայէլացիի մը պատկանող գիւ-
 ղատուն մը, ուր Իսահակ, իր գուստրն և մարդիկն օթեաներ էին .
 յայտնի է ամենուն՝ որ հրէայք որչափ որ իրենց կրօնակիցներու համար
 հիւրասէր և ողորմասէր էին, նոյնչափ հետտ և ժլատ ժողովուրդ մը
 կ'սեպուէին երբ հարկ լինէր նոյն վեհանձնական հիւրասիրութիւնն ի-
 րենց հեթանոս կոչած ժողովրդեան տարածել, թէև ասոնք ալ իրենց
 ընթացքով անարժան էին այն հիւրասիրութեան :

Թէև փոքր՝ բայց արևելեան ճաշակով զարդարուած սենեկի մը մէջ
 նստեր էր Ռեպեկա պճնազարդ բարձերու կոյտի մը վրայ, որոնք սե-
 նեկին բոլորաձև սատրին (platform) վրայ շարուած՝ սպանիական
 բաղմոցներու պէս՝ աթոռի և աթոռակի սեղ կ'ծառայէին : Ռեպեկա
 իր հօրը շարժումները կ'դիտէր մտատանջ և որդիական սիրով, մինչդեռ
 ծերունին՝ վշտաբեկ դէմքով և անկանոն քայլով սենեկին մէջ կ'պտը-
 տէր՝ մերթ ձեռներն իրարու կցելով՝ մերթ աչերը ձեղունին սևեռե-
 լով . այնպէս որ կարծես թէ մտային մեծ յուզմունքի մէջ կ'ծփար :

— Ա՛ Յակոբ — գոչեց նա — ո՛ր դուք, մեր ժողովրդեան տասներ-
 կու սուրբ հարք, այս ինչ կորստաբեր պատահար մ'է ինձի պէս մար-
 դու մը համար, որ Մովսիսի օրինաց ամէն պատուիրանքը պահեցի :
 Յիսուս ոսկի մէկէն կորդէ իզմէ, և ո՞վ, բռնաւորի մը մաղիլը :

— Բայց, հայր իմ — ըսաւ Ռեպեկա — ինձ այնպէս երեցաւ որ
 նոյն ոսկին ճօհն իշխանին կամովին տուիր :

— Աամովի՛ն . Եզրիպտոսի կեղը գլխին իջնէ — գոչեց Իսահակ : —
 Աամովի՛ն տուի կ'ըսես : Այո, այնչափ կամովին որչափ որ Լիօնի մէջ
 ապրանքս ծովը նետեցի նաւը թեթևելու համար, մինչդեռ ալէկոծ
 ջրերու վրայ կ'տատանէր, այո, այնչափ կամովին որչափ որ իմ աղւոր
 մետաքսներովս զայրազին կոհակները ծածկեցի, անոնց աղի փրփուրը
 զմուռսով և հալուէով օծեցի, անոնց քարանձաւներն ոսկիով և արծա-
 թով ճոխացուցի : Եւ միթէ անպատում թշուառութեան ժամ մը չէր
 այն, թէև ես իմ ձեռօքս ըրի այն զոհը :

— Բայց երկին կ'պահանջէր այն զոհը մեր կեանքն ազատելու հա-
 մար — պատասխանեց Ռեպեկա — և մեր հարց Աստուածն այնուհե-
 տև քու ինչքդ և վաստակդ օրհնեց :

— Իրաւ է — պատասխանեց Իսահակ — բայց եթէ բռնաւորն այս-
 օրուան պէս զանոնք դրաւէ, և ժպտելու ստիպէ զիս, մինչդեռ ինչք
 կ'կողոպտէ . . . : Ա՛ աղջիկս, որչափ որ անժառանգ և թափառակա-

ժողովուրդ մ'ենք, մեզի հասած շարեաց ամենէն յոռին սա է որ երբ մեզ կ'նախատեն և կ'կողոպտեն՝ բոլոր աշխարհ մեր շորս դին կ'ծիծաղի, և մենք ստիպուած ենք այս անարդանաց ոխը թաղուն պահել և երկչոտութեամբ ժպտիլ, մինչդեռ հարկ էր որ արիասկէս վրէժ լուծէինք:

— Մի մտածեր այդ խնդրոյն վրայ, հայր իմ — ըսաւ Ռեպելա — մենք ալ մեր առաւելութիւններն ունինք: Թէև այս հեթանոսներն անդուժ են և հարստահարիչ, դարձեալ կերպով մը կախում ունին Սիօնի այն աստանդական զաւակներէն զորս կ'ատեն և կ'հալածեն: Եթէ մեր հարստութեամբ անոնց աջակից չդանուինք, ոչ պատերազմի համար բանակ կրնան կազմել և ոչ խաղաղութեան ատեն յաղթութիւններ պատրաստել. և մեր փոխ տուած գումարը կ'դառնայ նորէն մեր արկղն ստուարանալով: Մենք կ'նմանինք այն խոտին որ որչափ ոտնակոխ լինի նոյնչափ կ'ծաղկի: Այսօրուան հանդէսն անգամ տեղի չպիտի ունենայր եթէ անարդեալ հրէայն՝ անոր ծախար հողալով՝ շահանէր:

— Աղջիկս — ըսաւ Իսահակ — այդ խօսքովդ տրտմութեանս ուրիշ մէկ թելը զարկիր: Այն աղւոր երիվարն և հարուստ դէնն ու զարգը՝ զոր Արեկադ ճէյրամի հետ ըրած գործէս վաստկեր էի, այժմ մահատու կորուստ մ'է ինձի համար, այն, կորուստ մ'որ մէկ շարաթուան շահս կ'ջնջէ, այն, երկու շարաթու մէջ եզած միջոցը, սակայն յուսամ որ ակնկալութեանս հակառակ վերջ մը պիտի առնու գործը, վասն զի այն պատանին ուղիղ և արիասիրտ է:

— Արդարև — վրայ բերաւ Ռեպելա — այն օտարական ասպետին քեզի ըրած ծառայութեան փոխարէն մը տալուդ համար պէտք չէ որ տրտնջաս:

— Այդպէս կ'յուսամ, աղջիկս — ըսաւ Ռեպելա — բայց կ'յուսամ նաև որ Սիօն պիտի վերաշինեն. որչափ որ իմ յատուկ աչերովս կը յուսամ տեսնել նոր տաճարին պատկերն ու պարիսպները, նոյնչափ կը յուսամ տեսնել քրիստոնեայ մը, թող ամենէն լաւն իսկ լինի, որ հրէի մը պարտքը վճարէ, միայն թէ դատաստանի և բանտապահին ահը զինքը չստիպէ:

Այս ըսելով Իսահակ իր պտոյտը շարունակեց սենեկին մէջ, և Ռեպելա՝ դիտելով որ հայրը սփոփելու համար ըրած փորձերը՝ նոր նոր գանգամներու գրգիռ տուին, խոհեմութիւն դատեց իր անարդիւն ճիւղը թողուլ, և իրօք խոհական ընթացք մ'էր այս, և նոյնին հետեւելու կ'որդորենք անոնք որ իբր միսթարար կ'կանգնին այսպիսի պարագաներու մէջ:

Արդէն մութը կոխեր էր՝ երբ հրէայ սպասաւոր մը սենեակը մտաւ և սեղանին վրայ երկու արծաթէ կանթեղ դրաւ հոտաւետ խղով լի իսկ ուրիշ մ'ալ արծաթէ դրուագեալ փոքրիկ երենոսէ սեղան մը ներկայացուց խիստ ընտիր գինիով և գողտրիկ կերակուրներով, վասն զի հրէաներն իրենց տան մէջ շոյլօրէն կ'ապրէին : Նոյն պահուն սպասաւորն իմաց տուաւ Իսահակին թէ նազովըցի մը (այսպէս կ'կոչէին քրիստոնեաներն իրենց խօսակցութեան մէջ) կ'փափաքէր հետը խօսիլ : Առուարով ապրող մարդը պէտք է որ ամէն գործ ունեցող անձի հետ տեսութիւն ընելու պատրաստ դանուի : Իսահակ՝ առանց ճաշակելու՝ սեղանին վրայ դրաւ այն ինչ շրթերուն տարած յոյն գինիի բաժակն, իր աղջկան ըսելով .

— Ռեպեկա, երեսդ ծածկէ : — Եւ ապապրեց ծառային որ օտարականը ներս հրամցրնեն :

Այն ինչ Ռեպեկա արծաթաթել բեհեզէ շարգոյր մ'երեսը ծածկեց՝ շարգոյր մ'որ մինչև ոտքը կ'իջնէր, և ահա դուռը բացուելով Աիւրթ ներս մտաւ, իր նօրման վերարկուին լայն ծալքերուն մէջ փաթթուած : Ասակածելի քան դրուիչ երեոյթ մ'ունէր, նա մանաւանդ՝ փոխանակ իր գլխարկն հանելու, զայն իր կոշտ և արեակէղ ճակտին վրայ աւելի ևս իջեցուց :

— Միթէ դու Եօրքի Իսահակն ես — հարցուց անոր Աիւրթ սաքսօն լեզուով :

— Այո՛, ես եմ — պատասխանեց Իսահակ այն լեզուով . (վասն զի իր առուտուրին բերմամբն Անկլիոյ մէջ խօսուած բարբառներուն հմուտ էր) : — Իսկ դու հմլ ես :

— Իմ հմլ լինիլս քեզի փոյթ չէ — պատասխանեց Աիւրթ :

— Ի՞նչպէս փոյթս չէ, քանի որ իմ անունս փոյթ է — պատասխանեց Իսահակ — վասն զի առանց քու անունդ ճանչելու, ի՞նչպէս կարող պիտի լինիմ քեզի հետ գործ ընելու :

— Այդ շատ դիւրին է — պատասխանեց Աիւրթ — վասն զի ես քեզի ստակ ունիմ տալու, պէտք է գիտնամ միայն թէ դու ես ճշմարիտ առնելիքի տէրը . մինչդեռ դու՝ ընդունող լինելով, կարծեմ հոգ չէ քեզի գիտնալ թէ նոյն ստակն որո՞ւ ձեռօք կ'տրուի քեզ :

— Հօ՛ — ըսաւ հրէայն — ուրեմն ստակ տալու եկեր ես : Հայր Աբրահամ, այդ խնդիրը կ'փոխէ մեր փոխադարձ յարաբերութիւնը, բայց որո՞ւ կողմէ ստակ կ'բերես ինձ :

— Ժառանգազուրկ ասպետին կողմէն — ըսաւ Աիւրթ — այսօրուան

V. 100

դու պարին մէջ յաղթողը : Քու յանձնարարութեանդ վրայ՝ Ախալաղի Աիրկաղ ճէյրամի տուած սպառազինութեան զինն է այս : Արիւարն արդէն աստուն է . հիմակ կ'ուզեմ իմանալ թէ ի՞նչ պիտի վճարեմ սպառազէնքին համար :

— Աս արդէն ըսի որ բարի երիտասարդ մ'է նա — դոչեց Խասհակ խնդազին աշխոյժով մը : — Բաժակ մը զինի չես մերժեր կարծեմ — յարեց հրէայն՝ Աիւրթին մեծարելով կենացը մէջ երբէք չխմած ընտիր զինի մը — և որչափ է բերած ստակդ — հարցուց Խասհակ :

— Սուրբ Աոյս — կոչեց Աիւրթ՝ բաժակը սեղանին վրայ գնելով — այս անհաւատ շուներն ի՞նչ ընտիր նեկտար կ'իմեն , մինչդեռ մենք քրիստոնեայքս խողերուն կերած տղմուտ և թանձր խառնուրդին պէս դարեջուր կ'տնկենք : Արչափ ստակ բերի հետս — յարեց սաքսօն խողարածն՝ այս դժպէտի կշտամբանքն ընելէն ետե — փոքրիկ դումար մ'է միայն , թերհաշիւ ստակ մը : Յուսամ , Խասհակ , որ խիղճ ունիս , թէ և հրէի խիղճ մ'է :

— Ան , բայց քու տէրդ — ըսաւ Խասհակ — ընտիր ձիեր և զէնքեր շահեցաւ իր աջ ձեռքին և նիղակին ուժովը . բայց բարի պատանի մ'է նա : Աս պատրաստ եմ այն աւարը ստակիս տեղ առնուլ և աւելորդը վճարել :

— Իմ տէրս արդէն զանոնք ծախեց — ըսաւ Աիւրթ :

— Ա՛հ , շատ զէշ ըրաւ — ըսաւ հրէայն — իրաւ որ խենդի գործ մ'ըրեր է : Չկայ այս տեղ քրիստոնեայ մ'որ այնչափ ձի և զէն ու զարդ գնելու կարող լինի , և ոչ հրէայ մ'որ իմ տալիք դումարիս կիսոյն չափ տալու հաճի . բայց դու սա պարկին մէջ հարիւր ոսկի պիտի ունենաս անշուշտ — ըսաւ Խասհակ Աիւրթին վերարկուին տակը նայելով — պարկդ ծանր կ'երևի ինձ :

— Անոր մէջ նետակալներու համար կատարներ ունիմ — ըսաւ խոկոյն Աիւրթ :

— Ան ուրեմն — վրայ բերաւ Խասհակ որ կ'հեար և կ'վարանէր թէ արդեօք իր սովորական շահասիրութեան թէ ոչ այս պարադայիս մէջ վեհանձն երևելու նոր փափաքին հետևի — ուստի եթէ ընտիր երիվարին և զէն ու զարդին համար ութսուն ոսկի ուզեմ , որով հազիւ թէ դահեկան մը կ'վաստկիմ , արդեօք այս դումարը վճարելու չափ գրամ ունիս :

— Հազիւ թէ — ըսաւ Աիւրթ , թէ և հրէին պահանջած դումարն իր ակնկալածէն աւելի չափաւոր էր — և եթէ խնդրածդ վճարեմ՝

տիրոջս թանկ մը չպիտի մնայ : Սակայն եթէ այս է վերջին խօսքը ,
պէտք է որ դո՛՛հ լինիմ :

— Բաժակդ նորէն լեցուր — ըսաւ հրէայն : — Ա՛հ , ու թսուն ոսկի
չատ քիչ է : Ստակիս շահը վրայ պիտի տամ , և ասկէ զատ իմ ազւոր
երիվարս ալ այսօրուան դուպարին մէջ շատ փնասուած պիտի լինի : Եւ
ի՛նչ դժնդակ և վտանգաւոր մըցում մ'էր այն : Ախոյեան և ասպետ
Պաղանու վայրի ցլերու պէս իրարու վրայ կ'յարձակէին : Անտարակոյս
ձին շատ նեղութիւն քաշած է :

— Իսկ ես կ'սնդեմ թէ ձիդ — սլատասխանեց Աիւրթ — կայտառ
ու անփնաս է , և այս բանս կրնաս ստուգել ախոռն երթալով այս միջո-
ցիս . և վերջապէս կարծեմ թէ եօթսուն ոսկի բաւական է զէն ու
զարդին համար , ինչպէս որ քրիստոնէի մը խօսքն աւելի կ'արժէ քան
թէ հրէի մը : Եթէ եօթսուն ոսկին չընդունիս , սրիկը պիտի առ-
նում տանիմ տիրոջս : — Եւ այս ըսելով պարկը շարժեց և ոսկիները
հնչեցուց :

— Ա՛չ , ոչ — ըսաւ Իսահակ — վար դիր քանքարներն ու սիկդերն ,
ու թսուն ոսկին համրէ , և պիտի տեսնես որ առատաձեռնութեամբ
պիտի վարուիմ հետդ :

Ի վերջէ Աիւրթ հաւանեցաւ , և ու թսուն ոսկին սեղանին վրայ
համրելէն ետե՛ հրէայն ձիուն և զէնքին համար անդորրադիր մը
տուաւ անոր : Հրէին ձեռքն ուրախութենէն կ'դողար՝ եօթսուն կտոր
ոսկին ամփոփելու ատենը : Միւս տաս կտոր ոսկին աւելի շատ մտածե-
լով համրեց և ամէն անդամուն որ սեղանին վրայէն ոսկի մ'առնլով
քսակը կ'նետէր՝ բան մը կ'ըսէր : Այնպէս կ'երևէր որ իր ազահու-
թիւնը լաւագոյն զղացումներու դէմ կ'մաքառէր , և ոսկի ոսկիի վրայ
գրպանը կ'նետէր , մինչդեռ իր վեհանձնութիւնը կ'յորդորէր զինքը
դոնէ մաս մը հանել իր բարերարին , կամ ընծայ մը տալ անոր դործա-
կալին : Իր բոլոր ճառը գրեթէ սա իմաստն ունէր :

— Եօթսունմէկ , եօթսուներկու . . . : Քու տէրդ բարի պատանի
մ'է . . . եօթսուներեք . . . ընտիր պատանի մը . . . եօթսունչորս .
. . . : Այս ոսկիին բոլորակը մաշեր է . . . եօթսունհինգ . . . այս
ալ չափէն աւելի թեթեւ կ'երևի ինձ . . . ու թսունվեց . . . եթէ
տէրդ ստակի պէտք ունենայ , թող Եօրքի Իսահակին դիմէ . . . եօթ-
սունեօթն . . . այսինքն օրինաւոր աւանդ մը տալով :

Նոյն պահուն բաւական ատեն կանկ առաւ , և Աիւրթ քաջայոյս էր
որ մնացած երեք ոսկին իրենց ընկերներուն քովը չպիտի երթան ,

✓
✓ Կ. Կ. Կ. Կ. Կ.

✓

Քայց հրէայն նորէն սկսաւ համրել. — Աւթսունութ . . . դու լաւ
տղայ մ'ես . . . ութսունինն . . . և դու վարձքի արժանի ես :

Այս տեղ հրէայն նորէն կանկ առաւ, և վերջին ոսկին դիտեց՝ ան-
տարակոյս զայն Աիւրթին տալու մտօք : Իր մատին վրայ կշռեց զայն և
սեղանին վրայ ձգելով զայն հնչեցուց : Եթէ ոսկին անախորժ ձայն մը
հանէր, կամ եթէ մազի չափ թեթեւ կշռէր, վեհանաճնութիւնը յաղ-
թանակը պիտի տանէր. բայց Աիւրթի սեբաղդէն՝ ձայնը լեցուն և
յստակ էր, ոսկին փայլուն ու նոր կոխուած և սովորական չափէն ցո-
րեն մ'աւելի ծանր : Իսահակ սիրտ շիրցաւ ընել անկից զատուելու,
այլ զայն ևս քսակին մէջ 'նետեց' իբր ակամայ՝ ըսելով. — Աւթսուն,
հաշիւը ճիշտ է, և յուսամ որ տէրդ քեզ լաւ մը պիտի վարձատրէ :
Իրաւի — յարեց նա, անկուշտ աչօք պարկին նայելով — այս սլարկին
մէջ դեռ ստակ ունիս :

Աիւրթ երեսը ծումրկեց, և այս ալ իր ծիծաղելու կերպն էր, և յե-
տոյ պատասխան տուաւ .

— Այս սլարկին մէջ այնչափ ուշադրութեամբ համրած դումարիդ
չափ դրեթէ ստակ կայ : — Աւերջն անդորրազիրը ծալլեց և գլխարկին
մէջ դնելով՝ յարեց. — Քու արեւուդ սիրոյն, հրէայ, նայէ որ այս
թուղթն ըստ կանոնի գրուած լինի : — Նոյն միջոցին ինքն իր ձեռ-
քը բաժակը դինի լեցուց երրորդ անգամ, և խմելէն ետեւ՝ առանց խօսք
ըսելու՝ սենեկէն դուրս ելաւ :

— Ռեպեկա — ըսաւ հրէայն — այս խմայելացին այս անգամ զիս
խաբեց. սակայն իր գլխաւորը բարի պատանի մ'է, և իրաւի, շատ
ուրախ եմ որ իր ձիուն արագութեամբ և նիզակին ուժովն արժաթ և
ոսկի շահեցաւ, նիզակ մ'որ՝ Գողիաթին նիզակին պէս՝ ոստայնանկի
կիողին հետ կրնար բաղդատուիլ :

Այն ինչ հրէայն Ռեպեկային պատասխանն ընդունելու համար
գլուխը դարձուց՝ որ դիտեց թէ Աիւրթին հետ խօսակցելու ատեն՝ իր
գուստրը սենեկէն դուրս ելեր էր անտես :

'Նոյն պահուն' Աիւրթ սանդղէն վար իջեր և մութ նախասենեակը,
կամ ներքնադաւիթը հասնելով շփոթեր ու դուռը չէր կարող գտնել,
երբ սպիտակ կերպարան մ'որ ձեռքը բռնած արժաթ կանթեղին լու-
սէն լուսաւորուած էր, նշան ըրաւ անոր որ քովի սենեակը մտնէ : Աիւրթ
այս հրաւերն ընդունելու նախ դժկամակութիւն ցցուց : Թէև երկրային
վտանգներու դէմ տոկուն և դիմազրաւ էր վարազի մը պէս, սակայն
սաքսոնեան բնաւորութեան յատուկ սարսափ կ'զգար շահապետներու,

անտառային դեբրու , փերիներու և այն ամէն սնասրաշտութեանց հաս-
մար զոր իր նախնիքն Ալմանեայի անտառաաներ՛ն բերեր էին : Սակայն
մնամեց որ տակա ին հրէի մը տունը կ'զանուի , այնպիսի մարդու մը
որուն ցեղը՝ բաց ՚ի այն յոսի յաակո թխններէն որով աամիկը զանի
կ'անբասանէր , կ'կալծուէր նաև որ քան զեւթ է ին և կ'ապակ'աներ
(ճածկաղէտ) : Առաի պահ մը կանկ առնէն ետև՝ որտ ականի՛ն կ'ող-
մը պատասխանեց , ցոյց տուած սենեակը մասն , և ինկային զարման-
քով զիանեց որ զի'քը կառող ճիւղաղը զեղանի հրէուհին էր , զոր նիւն-
կախող հանդիսին մէջ տեսեր և քիչ մ'առաջող իր հօրը սենեակը կը
զանուէր :

Ռեպեկա հարցոց թէ ինչ վերջ ունեցաւ իր հօրը հետ ունեցած
գործն , և Աիւրթ մանր և ճշտիւ սրտմեց :

— Հայրս քեզի հետ կառակ ընել ուղեց , բարեմիտ մարդ — ըսան
Ռեպեկա — քու տիրոջդ տանտարարիկ աւելի երախտաղէտ է քան
թէ այն զինուց և երիւարին զինն : Ինչ գումար վճարեցիր այս պա-
հուս իմ հօրս :

— Աւթսուն ոսկի — սրտասխանեց Աիւրթ՝ այս հարցման վրայ
զարմանալով :

— Այս քսակին մէջ — ըսաւ Ռեպեկա — հարիւր հատ սխախ
դանեա : Տիրոջդ դարձուր անոր տուածն ու մնացածը քեզի համար սա-
հէ : Շուտ ըրէ , դնա , շնորհակալ լինելու համար ժամանակ մ'անցներ ,
և այս բաղմամարդ քաղքէն անցնելու ատենդ զոյշ եղիր , վասն զի
կարելի է թէ բեռդ և թէ կեանքդ ՚ի կորուստ մասնես : Ռուբէն —
յարեց նա ձեռները զարնելով — այս օտարականին լուսաւորէ , և մի
մտնար գրան սրարդունակն ու ձողը քաշելու :

Ռուբէն՝ որ տրտմադէմ և սևամօրուս իսրայէլացի մ'էր , ջահ մ'ի
ձեռին Ռեպեկայի հրամանը կատարելու փութաց , տան արտաքին դու-
ռը բացաւ , և Աիւրթը քարայատակ դաւթէ մ'անցնելէն ետև՝ դռնա-
կէ մը դուրս հանեց և ապա այնպիսի սրարդունակով և շղթաներով դո-
ցեց որ բանտի ՚ը յարմար էին :

— Սուրբ Տրնագան վիայ — գոչեց Աիւրթ մութ դաւթին մէջ զայ-
թելով — ասի հրէուհի մը չէ , այլ երկնային հրեշտակ մը : Իմ նորա-
տի քաջ վարպետէս տաս ոսկի և Աիւրթի այս մարդարուն քսան ոսկի կը
շահիմ : Ինչ երջանիկ օր , եթէ այսպիսի բաղդի մ'եսս վիճակիս ,
Աիւրթ , կրնաս սարկո թեանդ փրկանքը ձարել , և քու դասիդ մէջ ա-
զատաղիր արարած մը դառնալ : Եւ այն ատեն իմ խողապանի շեփոր

ու դաւաղանս մէկզի պիտի նետեմ և աղատ մարդու վահան և սուր
առնլով՝ ցմահ տիրոջս պիտի հետեիմ առանց իմ դէմքս ու անունս
պահելու :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ա ✓

Ա. Վ Գ Գ Գ Գ Գ — Տէր իմ, կեցիր, և ինչ որ ունիս մեզի տուր :
ապա թէ ոչ քեզ պիտի նստեցնենք և կողոպտենք :

Բ. ՍԲԻԳ — Տէր իմ, մեր բանը բուսաւ, ահա ասոնք են այն
անզգամներն որ ահ ու գող կ'ազգեն բոլոր ուղեւորներուն :

Վ Ե Լ — Բարեկամներս, —

Ա. Վ Գ Գ Գ Գ Գ — Կ'սխալիս, տէր իմ, ձեր թշնամիներն ենք :

Բ. Վ Գ Գ Գ Գ Գ — Լուսթիւն, նայինք ինչ պիտի ըսէ :

Գ. Վ Գ Գ Գ Գ Գ — Այո՛, մօրուքս վկայ, մտիկ ընենք պիտի, վասն
զի աղնիւ մարդ մ'է :

ՎԵՐՕՆԱՅԻ ԵՐԿՈՒ ԱԶՆՈՒԱԿԱՆՔ

Աիւրթի զիշերային արկածները տակաւին վերջ շառեր էին. ինքնին
այսպէս լինիլը հասկցաւ, երբ՝ Էշպի զիւղին ծայրը դանուած քանի
մը հեռաւոր տուներ անցնելէն ետև՝ ինքզինքը մութ շաւղի մը մէջ
դտաւ, որ ընկուղի և մուրտի ծառերով ծածկուած երկու բլրակներու
մէջէն կ'անցնէր, մինչդեռ մենական սղտիկ կաղնի մը դէս ու դէն իր
ոստերը ճանրուն վրայ կ'տարածէր : Ասկից զատ՝ նիղակախաղ հանդի-
սին՝ զանազան բաներ տանող կառաց անիւններէն նոյն գոխը տեղ տեղ
փոսեր, խանդարեր և մութ էր, վասն զի բլուրներն ու մացառները
լուսնին նշոյլները կ'խափանէին :

Գիշերային խրախճանքի հեռաւոր ձայներ կ'լսուէին զիւղէն, որոց
ուր ուրեմն կ'միանային բարձր ծիծաղներ, երբեմն սուր աղաղակներ և
կրած շտութեան խառն 'ի խուռն եղանակներ նոյն աղմուկները կ'ընդ-
հատէին : Բոլոր այս աղմուկն՝ որ մարտիկ իշխաններով և իրենց վատ-
շուէր հետևորդներով լի քաղքի մը շփոթալի վիճակը կ'յայտնէր,
Աիւրթին քիչ մը մտատանջութիւն պատճառեց :

— Հրէայ կլինն իրաւունք ունէր — ըսաւ ինքնովին : — Երկին և Ս.
Տրնսդան վկայ, կ'փափաքէի որ այս զանձովս ուղեւորութեանս ծայրը
հասած լինէի : Այս տեղ այնքան բազմաթիւ են, շեմ ըսէր թափառա-
կան գողեր, այլ թափառական ասպետներ, թափառական սեպուհներ,
թափառական երգակներ, թափառական ձեռնածուներ և թափառական
միմոսներ, որ մարդ մը վտանդի կրնայ հանդիսիլ եթէ իր զրպանին
մէջ մարկ մ'անդամ ունենայ, թող ոսկելի պարկով խեղճ խողպան մը :

Մեր էր թէ այս դժոխային մացառներու ստուերէն հեռացած լինէի, որպէս զի իմ վրաս չյարձակած՝ տեսնէի Ս. Նիկողոսի դպիրները:

Հետեապէս Աիւրթ արտորաց որ բաց դաշտին հասնի, ուր կ'յանգէր իր բռնած շաւիղը, բայց իր փափաքը չլրցաւ կատարել դժբաղդօրէն: Այն միջոցին իսկ որ ճամբուն միւս ծայրը կ'հասնէր և այն կողմը ծառերն աւելի խիտ էին, չորս հողի իր վրայ ընկան, ինչպէս որ արդէն զուշակեր էր, երկերկու հողի շաւղին մէն մի կողմէն, և այնպէս շուտով բռնեցին զինքն որ դիմադրութիւնն՝ եթէ կարելի իսկ լինէր, ապաժամ էր:

— Աւանդդ յանձնէ մեզ — ըսաւ մէկը — մենք հասարակապետութեան աղատարարներն ենք, որ ամէն մարդու բեռը կ'թեթեւէ:

— Գուք իմս դիւրաւ չպիտի թեթեւէք — մրմնջեց Աիւրթ, որուն խրոխտ համարձակութիւնը հեշտիւ չէր ընկձեր նոյն իսկ յանկարծական բռնութեան ներքեւ — եթէ զայն պահպանելու համար քանի մը հարուած տալու կարողութիւն ունենայի:

— Հիմակ պիտի տեսնենք — ըսաւ աւազակն: Եւ իր ընկերներուն դառնալով՝ յարեց. — Սա թշուառականն առէք տարէք: Ա՛նայիմ որ կ'փափաքի գլուխն ու քսակը կտրել տալ և այսպէս երկու երակ միանդամայն բանալ:

Այս հրամանին վրայ՝ Աիւրթը քաշքշելով առին, և ճանբուն ձախ կողմի բլրին վրայ ուժղին հրելով տարին անտառակ մ'որ նոյն ճանբան դաշտէն կ'զատէր: Աիւրթ ստիպուեցաւ այս գողերուն հետեիլ մինչև անտառակին խորերը. յանկարծ կանկ առին անկանոն և անթաւ բացավայր մը, ուր հետեապէս լուսնին ճառագայթներն անարգել կ'իջնէին՝ թփերէ և տերեւերէ ազատ: Այն տեղ եկան զինքը յափշտակող մարդոց ուրիշ երկու հողի ևս միացան, որ՝ ըստ երևոյթին՝ նոյն խմբէն էին: Կարճ սրեր կախեր էին քովետի, լախտեր ունէին 'ի ձեռին, և այն ատեն միայն Աիւրթ դիտեց որ այն վեց հողին պահանակներ ունէին, որով իրենց արհեստը կ'մատնէին, եթէ արդէն իրենց ընթացքն այս մասին կասկած մը ձգած լինէր:

— Մըչափ ստակ ունիս, գեղջուկ — ըսաւ գողերէն մին:

— Երսուն ոսկի որ իմ ապրանքս է — պատասխանեց Աիւրթ խոժոռ գէմքով մը:

— Սուտ է, սուտ է — գոչեցին աւազակները: — Սաքսօն մ'երսուն ոսկի ունենայ և գեղէն ծով դառնայ: Անշուշտ ստու թիւն մ'է զոր մինակ իր քովն ունեցածովը կրնայ փոխարինել:

— Իմ աղատութիւնս գնելու համար հաւաքեցի այս գումարը —
գոչեց Աիւրթ :

— Գու աւանակ մ'ես — սրտասխանեց գողերէն մին : Աթէ երեք
թակոյկ դարեջուր խմէիր՝ քու գլխաւ որիդ շալի աղատ կ'դառնայիր, և
աւելի աղատ եթէ քիզի սէս սաքսօն մ'է հա :

— Տխուր ճշմարտութիւն մ'է — սրտասխանեց Աիւրթ — բայց
եթէ կարելի է այն երսուն ոսկիով իմ աղատութիւնս ձեզէ գնել
ձեռներս քակեցէք, և սրտրաստ եմ զանո՞ք ձեզի համկելու :

— Աեցիք — ըսաւ անոնցմէ մէկն որ կարծես թէ միսնիւրէն աւելի
իշխանութիւն մ'ունէր : — Այդ կրած պարկդ ըսածէդ աւելի ստակ
կ'պարունակէ :

— Իմ բարի տիրոջս աստիտինն է — սրտասխանեց Աիւրթ — և
անտարակոյս անոր խօսքն անգամ չսխտի ընէի, եթէ իմ ունեցածովս
միայն գոհ լինէիք :

— Գու պարկեշտ մարդ մ'ես — վրայ բերաւ աւաղակն — այդ մա-
սին սրտասխանատու կ'մնամ, և թէ և Ս. Նիկողոսի սրաշտօնարկու
գողերն ենք, դարձեայ այն երսուն ոսկին մեր աչքէն կ'հանենք թէ որ
մեզի հետ անկեղծօրէն վարուիս : Բայց առ այժմ սա ունեցած աւանդդ
մեզի յանձնէ :

Այս ըսելով Աիւրթին ծոցի՛ն հանեց կաշիէ մեծ պարկն՝ որուն մէջ
կ'դանուէր Ռեպիկայի տուած քսակը, նոյնպէս իր տիրոջ ստակները :
Յետոյ իր հարց ու փորձը շարունակեց :

— Ո՞վ է քու տէրդ :

— Ժառանգաղորկ աստեան — ըսաւ Աիւրթ :

— Ա՞յն որ այսօրուան գուպարին մէջ իր լաւ նիզակովը մրցանակը
տարաւ — հարցուց աւաղակն : — Ի՞նչ է իր և ընտանեաց անունը :

— Իր կամքն այն է — սրտասխանեց Աիւրթ — որ այս բաները
զաղանի մնան, և աներկբայ եղիք որ խնէ բան մը չսխտի կարենաք ի-
մանալ :

— Իսկ գու ըսէ նայիմ ի՞նչ է ընտանեացդ անունը :

— Այդ ըսելովս — վրայ բերաւ Աիւրթ — իմ տիրոջս անունը
յոյանած կ'լինիմ :

— Աներես սպասաւ որ մ'ես գու — ըսաւ աւաղակը — բայց այդ
խնդիրը եսքի ձգենք : Քու տէրդ ի՞նչպէս ձեռք ձգեց այդ ոսկին, մի-
թէ իր ժառանգո թեան մասն է, կամ ի՞նչ միջոցաւ անոր տէրն եղաւ :

— Իր ընտիր նիզակովը — սրտասխանեց Աիւրթ : — Այս պարկը՝

չորս աղոր ձիերու և չորս աղոր սպառազէնքի գինը կ'արարունակէ :

— Արչափ է գումարը — հարցոյց աւաղակը :

— Երկու հարիւր ոսկի :

— Մինակ երկու հարիւր ոսկի — ըստ աւաղակը : — Քու տէրդ յաղթեալներուն հետ վեհանձնօրէն վարուեցաւ և շատ չափաւոր փրկանք մը սրահանջեց : Ըսէ մեզի թէ ո՞վ վճարեց այս ոսկին :

Ախրթ հնազանդեցաւ :

— Տաճարական Պրայն տը Պուա-Աիլսէրի ձին և սպառազինու-
թիւնն ի՞նչ արժեց . . . : Անայիս որ շէս կրնար զիս խարել :

— Իմ տէրս — վրայ բերաւ Ախրթ — տաճարականէն ոչ ինչ շուղեր առնուլ, եթէ ոչ անոր կեանքը : Չեն կրնար փոխադարձ վեհանձնու-
թիւնցոյց տալ քանի որ մինչև վերջին շունչ մենամարտելու որոշած են :

— Երաւ — պատասխանեց գողն, և կանկ մ'առաւ այս խօսքն ար-
տասանելէն ետև : — Իսկ հիմակ Էշայի ի՞նչ բան ունէիր քեզի յանձ-
նուած այդ աւանդով :

— Էշայի գայի — պատասխանեց Ախրթ — որպէս զի Եօրքի Իսա-
հակ հրէին վճարեմ գողարին համար տիրոջս փոխ տուած սպառազի-
նու թիւնը :

— Հասցաւ Իսահակին որչափ վճարեցիր : Պարկին ծանրութեան նա-
յելով ինձ կ'երևի որ երկու հարիւր ոսկի պիտի դանուի անոր մէջ :

— Իսահակին ութսուն ոսկի տո՛ւի — պատասխանեց Ախրթ — և
անոնց տեղը լեցնելու համար ինձ հարիւր հատ հատոյց :

— Ի՞նչպէս, ի՞նչ ըսիր — գոչեցին բոլոր աւաղակները միաձայն :
— Ի՞նչպէս կ'համարձակիս մեր քթէն բռնել այսպիսի սուտ զրոյցներ
ընելով :

— Այս ըսածս այնքան ճշմարիտ է որքան ճշմարիտ որ լուսին կայ
երկինքը — վրայ բերաւ Ախրթ : — Ճիշտ այն գումարը պիտի դանէք
կաշեայ սրակին մէջ եղած քսակին մէջ և ոսկիէն զստ գրուած :

— Քաջ յիշէ, մարդ — ըսաւ հրամանատարն — որ խրայէլացիի մը
վրայ կ'սօսիս, և արդէն գիտե՛ք որ խրայէլացին ոսկին ետ տալու
արամադիր է, եթէ անատառի աւազն՝ ո. խտառորին իր վրայ թափած
բաժակ մը ջուրն ետ դարձնէ :

— Այնչափ անդու թէ հրէայ մը — ըսաւ որիշ աւաղակ մը — որ-
չափ թելակալ մ'որ առնելիքը ձեռք չէ ձգած :

— Սակայն իմ ըսածս ճշմարիտ է — յարեց Ախրթ :

— Շուտ լոյս բերէք — ըսաւ հրամանատարն : — Այն ըսած քսա-

կը քննել կ'ուզեմ, և եթէ ճիշտ իրողութիւնը կ'պատմէ, հրէին առա-
տաձեռնութիւնն այնքան հրաշալի պիտի թուի որչափ այն առուն որ
իր հարց ծարան անցուց անասաւին մէջ:

Իսկոյն լոյս բերին և աւազակն սկսաւ քսակը քննել: Միւսներն ա-
նոր բոլորախօս առին, և նոյն խօս այն երկու գողերն որ Արթըր բռնե-
րէին՝ անոր օձիքը թողուցին և իրենց վրին երկնցուցին այս խուզարկու-
թեան արդիւնքը դիտելու համար: Արթըր այս անհոգութենէ օգուտ
քաղելով՝ բոլոր ուժն ու արագաշարժութիւնը դորձածեց, և սաստիկ
ինքզինքը թռթռելով կրնար խոյս տալ եթէ աչքն առնուր իր տիրոջն
ստակը թողլու: Սակայն իր միտքն ուրիշ էր: Աւազակին մէկուն լախ-
տը ձեռքէն խլեց, անոնց հրամանատարն անով դետին տապալեց,
մինչդեռ այս յարձակման չէր սպասեր նա, և յաջողեցաւ գրեթէ իր
պարկն ու դանձն ետ առնուլ:

Սակայն գողերն ալ արագաշարժութեան կողմէ իրմէ վար չէին մնար
և վերստին ձեռք ձգեցին թէ պարկն և թէ հաւատարիմ Արթըր:

— Ապիրատ — ըսաւ հրամանատարը վեր ելնելով — դուխս ձեզ
քեցիր, և եթէ մեր դասու ուրիշ մարդկան հանդիպէիր՝ քու յանդգնու-
թիւնդ քեզի սուղի պիտի նստէր . . . : Բայց պահէ մը պիտի
վճռուի բաղդդ: Նախ տիրոջդ վրայ խօսինք, վասն զի՝ ասպետութեան
կարդին համեմատ՝ ասպետին դործն առաջ և ապա ձիապանինը կ'առե-
նուի: Աստի առ այժմ հանդարտ կեցիր, վասն զի թէ որ երկրորդ ան-
դամ մ'ես շարժիս, այն ատեն մինչև կենացդ վերջը հանդարտ նստելու
կերպով ձեժ պիտի ուտես: Ընկերներ — ըսաւ միւս աւազակներուն —
այս քսակին վրայ երբայական տառեր բանուած են, և այս թշուառա-
կանին խօսքին հաւատ կ'ընծայեմ: Իր տէրը, թափառական ասպետ,
առանց տուրք վճարելու կրնայ մեր մէջէն անցնիլ: Մեզի շատ կ'նմա-
նի, հետեւապէս անոր վրայ հարկ մը չենք կարող դնել, վասն զի շու-
ներն իրար պէտք չէ ջարդեն, քանի որ գայլերն ու աղուէսներն առատ
են:

— Մեզի նման է — պատասխանեց խմբէն մէկը — կ'փափաքէի
դիմնալ թէ ինչ կ'իմանաս այդ խօսքով:

— Յիմար ես — վրայ բերաւ հրամանատարը — միթէ նա ևս մեզի
պէս աղքատ և ժառանգազուրկ չէ, միթէ մեզի պէս իր հացը սրին
ծայրովը չշահիր. միթէ Գրօն-տը-Պէօն և Մալվո ապէնը չյաղթա-
հարեց, ինչպէս մենք ևս զանոնք յաղթահարել կ'ուզենք, միթէ Պրայն
տը Պուա Արլայերի անհաշտ թշնամին չէ, որոցմէ վախնալու տեղ ու-

նինք: Եւ եթէ այս ըսածներս ստոյգ չլինէին իսկ, միթէ անհաւատ
հրէայէ մ'աւելի: անխիղճ պիտի երևի ինք:

— Անշուշտ ոչ, ամօթալի բան մը կ'լինէր — միմնջեց միւս ընկերն
— և սակայն երբ քաջասիրտ ծեր Աանտլինի խմբին մէջ կ'ծառայէի,
այս սեռակ խղճի խայթեր շունէինք, և հաւաստի եմ որ այս լիբբ
դեղջուկն ալ անվնաս պիտի ճամբէք:

— Աչ, եթէ քո Էննին անոր վնասելու կարող լինիս — պատաս-
խանեց հրամանատարն: — Ինձ նայէ, դեղջուկ — յարեց նա Աիւրթին
դառնալով — լախտ դործածել պիտես, դու որ այնքան շուտով կը
շարժես:

— Ա'երևի ինձ — պատասխանեց Աիւրթ — որ դու այդ խնդիրը
լուծելու աւելի ձեռնհաս ես:

— Հնաւոտս վկայ, ծանրիկեկ հարուած մը տուիր ինձ — վրայ բե-
րու խմբապետը: — Սա թշուառականին ալ հատ մը տուր, և այն ա-
տեն անվնաս պիտի արձակեմ քեզ. բայց եթէ յաղթուիս, իրաւ որ,
քանի որ անվեհեր կրող մ'ես, այն ատեն ես պիտի պարտաւորիմ
փրկանքդ վճարելու: Առ նայիմ լախտդ, Միլր (աղօրեպան) — յարեց
նա — և դըռնիսդ պահպանէ. իսկ դուք ձեռքէք այդ մարդն, և փայտ
մը տուէք անոր ձեռքը, բաւական լոյս կայ և կրնանք հանդիսատես
լինիլ:

Երկու ախոյեանները լախտերով զինուած՝ բացավայրին կեդրոնը յա-
ռաջ եկան որպէս զի լուսնկային մենամարտին: Նոյն պահուն դողերը
սկսան ծիծաղիլ և իրենց ընկերին պռուպցին: — Միլր, դըռնիսդ պահ-
պանէ: — Միլրն ևս միւս կողմէն, լախտը մէջ տեղէն բռնած և իր
դըռնին վերեր դարձնելով ըստ դաղդիացուոց աղօրեպանի ընկելով պարծեն-
կոտու թեամբ գոչեց. — Մտ եկուր նայիմ, դեղջուկ, եթէ սիրտ ու-
նիս, աղօրեպանի մը բռան ծանրութիւնը հիմակ պիտի զգաս:

— Եթէ դու աղօրեպան մ'ես — պատասխանեց Աիւրթ անվրդով՝
մի և նոյն արագութեամբ իր վերդը դըռնին վրայ շրջաջելով — դու
կրկնակի գող մ'ես, իսկ ես իբր սրտաւ քեզ 'ի պայքար կ'հրաւիրեմ:

Այս ըսելով երկու ախոյեաններն իրարու վրայ քայեցին, և քանի
մը փայրկեան հաւասար ոյժ, քաջութիւն և ճարպիկութիւն ցոյց տուին,
անհնարին արագութեամբ հարուած տալով առնչով, մինչդեռ փոքր
ինչ հեռու դանուող անձ մ'անոնց զինուոց շառաչիւնը լսելով պիտի
կարծէր թէ մէն մի կողմէ վեցական հողի կ'պատերազմին: Այս պայ-
քարէն նուազ ծանր և վտանգաւոր պայքարները դիւցաղնական երգերով

նկարագրուած են, սակայն Ախրթի և Միլրի գուտարը չսխախտուի :
առ ՚ի չցոյէ վիտրասանի մ'որ այս պատահական մարան ՚ի հանդէս
հանէ : Սակայն որչափ որ լախտամարտի օրը հիմակ անցած է, ինչ որ
հարկ է արձակ սրտամելու, սկստի ջանամք :

Երկար ատեն աննկուն կռուեցան մինչև որ Միլը՝ այն ուժղին դիմա-
գրութենէ և իր ընկերներուն ծիծաղն ստակի բարկացաւ, վասն զի,
ինչպէս որ կ'սրտասհի ասանկ սրտացայի մէջ, անոր բարկութեան
վրայ կ'ինդալին : Սակայն մարի այս վիճակը լախտամարտի անխախտ
դին յարմար չէր, քանի որ ստիտական դատարանի խաղի մէջ անդամ
մեծ ստուտութիւն սկստ է, ասոր վրայ Ախրթ՝ որ թէև ցատկատ, հան-
դարտ և հաստուն բնաւորութիւն մ'ունէր՝ մեծ օգուտ քաղեց և իր
վարպետութիւնը դործածեց :

Միլը կատաղօրն յառաջ կ'անցնէր, իր լախտին երկու ծայրովը
հետզհետէ հարուածելով, և կ'շահար աւելի ևս մօտենալ, մինչդեռ
Ախրթ ինքզինքը կ'պաշտպանէր և իր վիրոյն երեք ոտք հեռու կը
բռնէր և մեծ շուտութեամբ իր դէնքը շարժելով դլախն ու մարմինը
կ'պահպանէր : Այս սրահարանողական դիրքը պահեց, իր աչքովն, ստ-
նով և ձեռնով չափը նշանակելով մինչև այն ատեն որ իր հակառակոր-
դը շուարած տեսնելով իր ձախ ձեռնով լախտն անոր երեսին տուաւ,
և որովհետև աղօրեպանը դիմահարելու փորձ փորձեց, Ախրթ իր աջ
ձեռնը մինչև ձախը սահեցուց և իր թշնամուցն դլխին ձախ դին զար-
կաւ կողմնակի : Աղօրեպանն ընկնելով գետինը չափեց :

Մարտ

— Շատ լաւ զարկաւ, գեղացի գինւորականի դործ — դոչեցին աւա-
ղակներն : — Աղբոր խաղ մ'է այս, և կեցցէ հին Անկլիա : Սաքսօնն
իւր քսակն և կեանքն սղասեց, աղօրեպանն իր մարդը դտաւ :

— Հիմակ կրնաս մեկնիլ, բարեկամ — ըսաւ աւաղակապետը ընդ-
հանուրին ձայնին իբր թարգման՝ Ախրթին դառնալով — և իմ ընկեր-
ներէս երկու հոգի սխախտամ որ քեզ ողիղ ձամբան ցոյց տան և մին-
չև տիրոջ տաղաւարը տանին և պահպանեն դիշերային դատարկա-
շրջիկներէ, որ թերևս մեզնէ նուազ դթասէր են, վասն զի այսպիսի
դիշեր մը շատեր դարանակալ կ'սպասեն : Սակայն խոհեմութիւն կ'սրտ-
հանջեմ քեզնէ — յարեց նա խոտիւ — յիշէ որ անունդ տալու մերժե-
ցիր ինձ, դու ալ մերկնը մի հարցներ, և մի փորձեր խմանալու թէ ով
և ինչ ենք, վասն զի եթէ այդպիսի փորձ մը փորձես, այն ատեն
գլխիդ աւելի մեծ ձիւն կ'բերես :

Աիւրթ շնորհակալ եղաւ աւազակապետին մարդավարութենէն և խօսք տուաւ անոր յանձնարարութիւնը շնորհալ : Երկու վտարակ իրենց լախտն առնելով Աիւրթին ըսին որ իրենց հետեւի, և անտառին ու անոր կից փլած հողերու մէջէն անցնող ծածուկ շաւիղ մը բռնելով յառաջ անցան : Սոյն անտառակին ծայրն երկու մարդեր իր առաջնորդներուն հետ խօսեցան, և փսփօալով պատասխան մ'ընդունելէն ետեւ, անտառը քաշուեցան և անարդել թողուցին որ անցնին երթան : Այս պարագայէն Աիւրթ դատեց որ վտարակները շատուոր էին և թէ իրենց ժամադրութեան տեղը բոլորակի պահակներ ունէին 'ի զգուշութիւն :

Թաւուտ դաշտը հասնելով՝ ուր Աիւրթ չսխտի կարենար դիւրաւ իր ճամբան գտնել, աւազակները շիտակ բլրակի մը գագաթը տարին զանի, ուսկից կարող եղաւ լուսնկային տեսնել իր առջևը պարզուած մրցարանին պատնէշները, երկուստէք կանգուն և փալփլուն տաղաւարներն, և հովածուփ դրոշակներն որ զանոնք կ'զարդարէին, նոյնպէս կ'լսէր պահակներուն մըմնջած երգն, որով իրենց տաղտուկ ժամերը կ'անցնէին :

Գողերը նոյն վայրը կանկ առին :

— Աւելի առաջ շենք կրնար ընկերակցիլ քեզ — ըսին անոր — մեզի համար վտանգ կայ : Մի մոռնար ընդունած աղդարարութիւնդ . գաղտնի պահէ այս գիշերը քեզի պատահած արկածն, և այն ատեն գոհ պիտի լինիս : Բայց եթէ մեր խորհուրդներն անգոսնես, Լոնտոնի աշտարակը չէ կարող քեզ պահպանել մեր վրէժխնդրութենէն :

— Գիշերը բարի ձեզ, բարեւէր ընկերներ — ըսաւ Աիւրթ : — Չեր պատուէրները պիտի յիշեմ, և յուսամ որ չէք վիրաւորուիր եթէ ձեզի համար աւելի ապահով և պարկեշտ պաշտօն մաղթեմ :

Այս ըսելով՝ իրարմէ բաժնուեցան . աւազակներն իրենց եկած կողմը զարկին, և Աիւրթ իր տիրոջը վրանը դիմեց, և անոր պատմեց նոյն գիշերուան բոլոր արկածներն՝ ընդունած հրամանին հակառակ :

Ժառանգազուրկ ասպետը յետին ծայր զարմացաւ, ոչ միայն Բեպեկայի վեհանձնութեան վրայ, որմէ օգուտ քաղելու մերժեց, այլև աւազակներուն վրայ, որոց պաշտօնին այն վեհանձնութիւնը բոլորովին անյարմար կ'գտնէր : Սակայն սոյն տարօրէն արկածից վրայ ըրած խորհրդածութիւններն ընդմիջեց քիչ մը հանդիստ առնլու յուսով, վասն զի անհրաժեշտ պէտք ունէր միւս օրուան դուպարին համար կայտառ երեւիլ և անխոնջ :

Հետեւապէս ասպետը վրանին տակը դտնուած ճօխ անկողնի մը վրայ երկնցաւ, մինչդեռ հաւատարիմ Աիւրթ իր զօրեղ անդամները վրանին

գորդի տեղ ծառայող արջի մորթի մը վրայ տարածեց, և դրան երկայնօքը պառկեցաւ որպէս զի եթէ մարդ մը ներս մտնէ՝ իսկոյն արթննայ ։

Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ

Քարոզներ կը դադրին, վեր վար շնն արշաւեր ։
Արդ փողեր կ'որոտան, բարձրը ձայնեն սրինգներ ։
Չըկայ բան ըսելու, այլ այս կոյս և այն կոյս ։
Շատ տեգեր կ'ծռին կաղմ, տրամօրէն և անյոյս ։
Մտրակ սուր շեշտակի թափ կ'անցնի 'ի կշտէն ։
Անդ կ'երևին մարդիկ՝ որ մրցին, ձի վարեն ։
Անդ գեղարդներ փշրին կուռ ասպարներու դէմ ։
Անդ մարտիկ կ'զգայ տեգն որ խոց բանայ, անդէն ։
Քանն ոտնի չափ բարձր կ'ոստոստեն վրիճներ, ։
Սուսերներ դուրս կ'ելնեն, շողշողուն, անստուեր ։
Սաղաւարտներն անգամ կը տրորին, կը բեկին ։
Շէկ արեան վտակներ ժանս 'ի տես, դուրս հոսին ։

20ՍԸԸ

Արշարոյսն երևան ելաւ անմռայլ ու փալփլուն, ու դեռ ևս արևը հորիզոն չհասած՝ ամենէն ծոյլ և ամենէն ժիր հանդիսատեսները դաշտն երևցան՝ դէպ 'ի մրցարան քալելով՝ իբր ընդհանուր կեդրոնն, որպէս զի յարմար վայր մը գտնեն, և ակնկալեալ խաղերուն շարունակութիւնը տեսնեն ։

Այնուհետև պարէտներն ու իրենց սպասաւորները քարոզներուն հետ եկան որ կուռելու տրամադիր դանուող ասպետներուն անուններն ընդունին և իմանան թէ իւրաքանչիւրն որ կողմը պիտի բռնէ ։ Այս զգուշութիւնը կարևոր էր, որպէս զի իրարու դէմ ելնող մարտիկներու մէջ հաւասարութիւնն ասպահովեն ։

Սովորական կանոնին համեմատ՝ Ժառանգազուրկ ասպետը պարտաւոր էր պարազլուխ կանգնիլ մէկ կողմէն, մինչդեռ Պրայն տը Պուապիլպէր, որ առաջին օրուան մէջ նախորդ ասպետէն ետև ամենէն քաջը կ'նկատուէր, միւս գնդին պետ անուանեցաւ ։ Բնապէս՝ անոնք որ Պուապիլպէրին աջակից գտնուեր էին, անոր կողմը յարեցան, Ռաֆ տը Վիրօնէն զատ՝ որ իր անկման պատճառաւ անկարող էր իսկոյն իր զէն ու զարդը հազնիլ ։ Սակայն երկու կողման պարասպ տեղերը ընլու համար անուանի և տոհմիկ հետամուտներ չէին պակսեր ։

Եւ արդարեւ՝ որչափ որ հանրական գուպարն՝ որուն մէջ բոլոր ասպետները խմբովին կ'մաքառէին, աւելի վտանգաւոր էր քան մենամարտութիւնները, սակայն ժամանակին ասպետներու կողմէ աւելի յարգ ունէր և յաճախորդ։ Շատ ասպետներ՝ որ իրենց արիութեան վրայ բաւական վտոահ չէին անուանի հակառակորդ մ'ի մենամարտ կոչելու առանձին, տրամադիր կ'երեւէին սակայն ընդհանուր մարտին մէջ իրենց ոյժը ցոյց տալու, այն յուսով որ իրենց հաւասար արիութեամբ ոսոխներ կ'դտնեն։ Նոյն պարագային մէջ արդէն յիսունի չափ ասպետներ իրենց անուանը դրել տուեր և փափաք յայտներ էին մէն մի կողմէ ոգորելու, երբ սլարէտները (հանդիսադիր) ծանուցին որ աւելի մարդ չայիտի ընդունին, և ասով շատերը՝ որ շատ ուշ հասնելով իրենց անուանը դրել տալու ժամանակ չէին գտեր, սաստիկ ցաւեցան։

Շուրջ ժամը տասնին՝ ասպետներ, հեծելակիներ և հետևակ մարդիկ բոլոր դաշտը գոցեր էին և դէս 'ի մրցարան կ'փութային. սլահ մ'ետքը՝ փողերուն որոտալիր ձայնը ճօհն իշխանին և հետևորդներուն դալուստն աւետեց, որոց հետ բազմաթիւ ձիաւորներ կային, ու մանք գուպարին մասնակցելու դիտմամբ, այլք սլարդ հանդիսատես լինելու։

Նոյն պահուն իսկ սաքսօն Սէտրիկն՝ օրիորդ Րովէնափի հետ հասաւ, թէև իրեն ուղեկից չէր Սթէլատէյն։ Այս սաքսօն իշխանն իր բարձր ու կորովի մարմինը սպառազիններ էր որպէս զի մարտիկներուն կարգն անցնի, և 'ի մեծ զարմացումն Սէտրիկի, տաճարական առպետին կողմն ընտրեր էր։ Արդարեւ՝ Սէտրիկ խստիւ յանդիմաներ էր իր բարեկամն այն դժպէտի ընտրութիւնն ընելուն, բայց նա ընդուներ էր այն տեսակ պատասխան մը զոր սովորաբար կ'տան անոնք որ այնքան յամառեալ կ'երեւին իրենց ընտրած ճանրան հետևելու որչափ անկարող՝ բանաւոր պատճառ մը տալու։

Սթէլատէյն՝ Պրայն տը Պուա-Վիլայէրի կողմն անցնելուն եթէ ոչ միակ լաւագոյն պատճառն իրեն համար սլահեց խոհեմարար։ Թէև իր եռանդոտ բնաւորութեամբն օրիորդ Րովէնափ աչքը մանծելու որ և է միջոց գործածելու անկարող էր, սակայն դարձեալ անոր գեղ ու շնորհին անդդայ չէր բնաւ, և անոր հետ միութիւնը Սէտրիկին և ուրիշ բարեկամներու հաւանութեամբ արդէն լիովին օրոշուած բան մը կ'համարէր։ Ուստի Գօնինկսպրիկի գոռոզ այլ անհոգ իշխանն իր դժգոհութիւնը հազիւ զսպեց երբ տեսաւ որ նախորդ օրուան յաղթողն օրիորդ Րովէնան ընտրեց, որպէս զի իր ստացած յատուկ արտօնութեամբը զա-

նի այն պատուոյն հասցնէ : Աթէլտոէյն՝ անոր այս նախապատուութիւնը պատժելու համար , քանի որ իր իրաւանց ներհակ կ'սեպէր , իր ոյժին վրայ վատահ , մինչդեռ իր շողոքորթներն ալ դիմուց մէջ ունեցած ճարպիկութիւնը կ'զուլէին , որոշեր էր ոչ միայն ժառանգազուրկ ասպետն իր հզօր աջակցութենէ զրկել , այլ եթէ առիթը պատահէր , իր ասպարին ծանրութիւնն իսկ անոր զգացնել :

Ճօհն իշխանին կողմնակից՝ և անոր թելադրութեան հնազանդելու տրամադիր ասպետներ և տը Պրէսի՝ հանդիսադիր ախոյեաններուն կողմն անցեր էին : Միւս կողմէն ուրիշ շատ մ'ասպետներ , բնիկ և օտարական՝ նոյն ախոյեաններու ներհակ կողմն անցան յօժարակամ , քանի որ անոնց դիմադրելու պատրաստուող խումբը ժառանգազուրկ ասպետին պէս նշանաւոր ախոյեանի մը հրամանատարութեան ներքե պիտի գտնուէր :

Երբ Ճօհն իշխանը դիտեց որ նոյն օրուան սահմանեալ թագուհին գուպարին վայրը հասեր էր՝ մարդավար կերպարան մ'առաւ՝ որուն կը վայէր յոյժ երբ այս կերպարանն առնուլ հաճէր , և յառաջ անցաւ զանի դիմաւորելու , դգակը հանեց և ձիէն վար իջնելով օրիորդ Բովէնաի օգնեց երիվարէն վար իջնելու , նոյն պահուն իր բոլոր հետեորդները գլուխնին բացին , և ամենէն երևելիներէն մին վար իջարպէս զի իշխանին նժոյգը բռնէ :

— Ահա այսպէս — քսաւ Ճօհն իշխանը — մեր անսուտ հաւատարմութեան օրինակը կ'ընծայենք գեղեցկութեան և սիրոյ թագուհւոյն՝ անձամբ այսօր բաղմելիք դահն առաջնորդելով զինքը : Տիկիներ — ըսաւ նա — եթէ ըստ կարգի դուք ևս փափաք ունիք սոյնսխի յարգանօք պատուիլ՝ ձեր թագուհւոյն հրամանները կատարեցէք :

Այս ըսելով իշխանը հանդիսապէս Բովէնան առաւ և պատուոյ գահը տարաւ նստեցուց , որ իրենին դիմացն էր , մինչդեռ ամենէն գեղանի և անուանի տիկիներն անոր չորս դին կ'իսուէին օրպէս զի իրենց ժամանակաւոր թագուհւոյն մօտագոյն նստարանները բռնեն :

Այն ինչ Բովէնա նստաւ որ՝ ամբոխին աղաղակէն կիսովին խափառուած երաժշտութեան որոտընդօսա ձայները լսելի հղան և անոր գահակալութիւնն օղջունեցին : Նոյն միջոցին տրեւը կ'բեկբեկէր շքեղօրէն երկաքանչիւր կողման ասպետներու յղկուն գիմուց վրայ , որ միջարանին երկու ներհակ ձայրերը բռներ էին խմբովին և խորհուրդ կ'ընէին թէ արդեօք ճակատ կազմելու և գոռ մղելու լաւագոյն միջոցն ի՞նչ էր :

Այն ատեն հերոսները լռութիւն պահանջեցին՝ որպէս զի նիզակախաղի կանոնները հրատարակուին : Այս կանոններն այն մտաբ շինուեալ էին որ կռուին վտանգները մեղմին , զգուշութիւն մ'որ այնքան կարեւոր էր որչափ որ գուպարը հատու սրերով և սրածայր տէգերով պիտի մղէին :

Հետեւապէս ախոյեաններուն հրաման եղաւ սուր չվարսել , այլ միայն սայրով զարնել : Ազդ ըրին որ ասպետ մը կարող է՝ ըստ հաճոյս՝ լախտ կամ տապար գործածել , բայց դաշոյնին կիրառութիւնն արդիւնեալ էր : Չիէն ընկնող մարտիկ մը կարող էր հետի շարունակել վէզն իրեն վիճակակից հակառակորդին հետ , սակայն ձիավար մարտիկներ հրաման չունէին անոր վրայ յարձակիլ : Եթէ ասպետ մը կարենար մինչև մրցարանին ծայրը քշել իր ոտին՝ այնպէս որ իր անձն կամ զէնքը պատնէշին դպին , նոյն ոտիւր սլարտաւոր էր իր պարտութիւնը խոստովանիլ և իր սարքն և երիվարը յաղթողին ստացուածքը կ'դառնային : Այս կերպով յաղթահար ասպետ մ'իրաւունք չունէր վերստին մասնակից լինիլ կռուին : Եթէ տապալ մարտիկ մ'անզօր դանուէր ոտքի վրայ ելնել , իր ախուեպանը կամ պայիկը կրնար մրցարան մտնել և իր սէրն ամբոխէն դուրս հանել , բայց այս սլարազայիս մէջ՝ ասպետը յաղթեալ կ'հրատարակուէր և իր զէնն ու ձին կ'զրաւէին : Երբ ճօհն իշխանն իր գաւազանը մրցարանին մէջ նետէր՝ դուպարն իսկոյն պիտի դադրէր , և այս ևս ուրիշ զգուշութիւն մ'էր՝ որ սովորաբար 'ի գործ կ'դրուէր՝ այնպիսի մահաբեր կռուի մ'երկարատեութենէն յառաջ դալիք անօգուտ արիւնահեղութեան վերջ տալու համար : Այն ասպետն որ նիզակախաղի կանոնաց հակառակ վարուէր , կամ որ և է կերպով ասպետութեան պատուոյ կանոնները զանց ընէր՝ իր զէնքը մերկանալու կ'դատապարտուէր , և վահանը վեր 'ի վայր շրջեալ՝ պատնէշին ձողերուն վրայ դրուելով՝ ժողովրդեան առակ նշաւալի կ'լինէր՝ իր հակասպետային վաքմունքին 'ի սլատիժ : Այս զգուշակ կանոնները յայտնելէն ետև՝ հերոսները ամէն ասպետի յորդոր կարդացին իր պարտքն անթերի կատարելու , և գեղեցկութեան ու սիրոյ թագուհւոյն շնորհին արժանի լինելու :

Այս յայտարարութիւնն աւարտելով՝ հերոսներն իրենց յատուկ կայանը դարձան : Ասպետներն՝ մրցարանին երկու ծայրէն՝ թափօրով ներս մտան , իրարու դէմ ճակատ առ ճակատ երկու երկու կարգ շարուեցան , մէն մի գնդին հրամանատարն՝ առաջին կարգին կեդրոնը կենալով , և այս վարն այն ատեն միայն եկաւ բռնեց երբ իր կողմին ամէն

Մէկ մարտիկն իրեն յատուկ տեղն ուշադրութեամբ կեցուց և ամէն բան կարգադրեց :

Շքեղ ու միանգամայն ահռելի տեսարան մ'էր տեսնել այն բազմաթիւ արիասիրտ ախոյեաններն՝ որ քաջապէս աշտանակեալ և պերճօրէն զինեալ՝ այնպիսի ահարկու դուպարի մը կազմ՝ ու պատրաստ կ'երևէին , և երկաթէ արձանի պէս իրենց ամենի երիվարներու վրայ նստած՝ պատերազմի նշանին կ'սպասէին իրենց վեհ նժոյգներու շափեռանդադին , որոնք վրնջելով և հողին վրայ դասիր զարնելով իրենց անհամբերութիւնը կ'յայտնէին :

Մինչ ջայն կէտ՝ առպետներն իրենց նիզակները շիտակ բռներ էին , որոց փալկուն ծայրերն արևուն կ'շողային , և այն դրօշներն որով զարթորուեր էին իրենց սաղաւարտներու դարդմանակներու վրայ կը ծփային : Այսպէս կանգուն կ'մնային , մինչդեռ պարէտները հետագնին աչօք կ'քննէին ախոյեաններու կարգերն , որպէս զի իւրաքանչիւրն որոշեալ թիւէն աւելի կամ պակաս մարտիկ չունենայ : Երբ հաշիւը ճիշտ դարձան , պարէտները մրցարանէն դուրս ելան և Ախլէմ որը Ախլիլ՝ որոտընդոստ մ'արտասանեց պատերազմի յայտարար սախօսքը . Թոյլ տուէք որ երթան :

Այս խօսքիս փողերը կ'դռուան , խսկոյն մարտիկներու նիզակները կը խոնարհին 'ի կայս , մտրակներն երիվարներու կողը կ'մղեն , և մէն մի դնդին յառաջապահ կարգն իրարու դէմ կ'խիզախեն ձիարձակ , և մրցաբանին կեդրոնը կ'հասնին կ'բախին այնպէս որ զինուց շկահիւնը մղոն մը հեռուէն լսելի կ'լինի : Դսկ իւրաքանչիւր կողման երկրորդ կարգն աւելի յամբաքայլ առաջ կ'անցնի , յաղթեալներուն նեցուկ և յաղթողներուն յաջողութեան աւարտ տալու համար :

Այս դուպարին արդիւնքն խսկոյն երևան չելաւ , վասն զի այնչափ ձիերու գափրէն յառաջ եկած փոշին օդը մթադնեց , և քիչ մ'ատեն անցաւ մինչև որ մտայոյզ հանդիսականները կռուին ելքն իմացան : Երբ մարտը տեսանելի եղաւ , մէն մի կողման մարտիկներու կէսը վար ընկեր էին , ոմանք՝ իրենց ճարտար հակառակորդին նիզակէն , այլք՝ իրենց թշնամիին գերազանց ծանրութենէն և զօրութենէն , որով մարդ առ ձի գետին տապալեր էին , այս՝ դիւաթաւալ զլորեր էր նորէն չվերալճեցնելու կերպով , այն՝ արդէն յօան ելեր՝ իր բաղդին վիճակող ոսոխին հետ դէմ առ դէմ կ'ոգորէր : Դսկ երկու կողմէն շատեր՝ որ ծանր վէրք առած լինելով՝ կռուելու անզօր էին , իրենց արիւնը կը սրբէին վզակասլով և այն խառնուրդէն հեռանալու կ'ջանային : Հե-

ծեալ ասպետներն՝ որոց գրեթէ ամէն նիղակներն ահեղ գոռէն խորտաչկեր էին՝ այժմ իրենց սրերով ՚ի մօտուստ կ'մաքառէին՝ իրենց մարտական աղաղակն արձակելով, և այնպիսի ուժղին հարուածներ իրարու կ'իջեցնէին որպէս թէ պատիւ ու կեանք նոյն մաքտին ելքէն կախում ունենային :

Նոյն պահուն աղմուկն ու շփոթը սաստկացաւ մէն մի կողմէն երկրորդ կարգին մարտիկներուն յառաջ խաղալովն, որոնք՝ իբր պահեառի գունդ՝ իրենց զինակցաց զօրաւիգն եկան : Պրայն տը Պուա-Վիլպէրի կուսակիցները կ'դռչէին .

— Հա՛, Պեսէա՛ն, Պեսէա՛ն . * Տաճարէ՛ն, Տաճարէ՛ն համար :

Հահառակ կուսակցութիւնն՝ ՚ի պատասխան այն աղաղակին՝ դռչեց .

— Ժառանգազո՛ւրի, Ժառանգազո՛ւրի — և այս զգուշութեան ձայնն իրենց սլարագլխին պահանին վրայ եղած նշանագրէն առեր էին :

Այսպէս ախոյեանները ծայրայեղ կատղութեամբ և այլայլակի յաջողութեամբ իրարու դէմ խոյանալով՝ կարծես թէ մարտին կշիռը մրցարանին՝ մերթ հարաւային՝ մերթ հիւսիսային կողմը կ'հակէր, այս կամ այն կողման զինուց յաջողութեան համեմատ : Նոյն միջոցին՝ հարուածներուն կոփիւնն և մարտիկներուն դրնչիւնը՝ փողերուն ահեղագոչ շուինչին միանալով՝ ձիերուն օտքն անոք ու թաւալդոր ընկնող ախոյեաններուն կոծն ու ողբը կ'սափանէր : Այժմ մարտիկներու շքեղ զարդն ու սարքն՝ արիւնով և փոշիով աղտոտած՝ սրին և տապարին մէն մի հարուածէն հատ ու կտոր կ'թռէին : Սաղաւարտներէն խզուած զուարթ ցցունքը՝ ձեան հիւսի պէս կ'տատանէին հովաշարժ : Զինուորական սպասուց ամէն գեղն ու շնորհն անհետ եղեր էին, և նոյն միջոցին աչքի զարկած զէնն ու զարդը մի միայն սարսափ կամ արդահատութիւն կ'ներշնչէր :

Սակայն դարձեալ՝ սովորութեան ոյժն այնքան մեծ է՝ որ ոչ միայն դուհիկ հանդիսատեսներ, որ բնապէս արիւնալի տեսարաններէ կը հրասլուրուին, այլև պատշգամները խունող սիզուատոհմ կիներն ըլլալի ոգւով հանդիսատես եղան, իրաւ, այս գուպարին, սակայն այն ահուելի տեսարանէն իրենց աչքը մեկուսի դարձնելու չէին փափաքեր : Արդարև՝ աստ անդ՝ դեղանի այտ մը թերևս կ'գունատէր, կամ տկար ձիկ մը կ'լսուէր, երբ սիրահար մը, եղբայր մը, կամ ամուսին

* Տաճարականաց դրօշակին անունը Պեսէան էր, որ կէս սե կէս սպիտակ գոյն ունէր, յայտնելու համարը կ'ըսեն, թէ արդար և միափառ էին քրիստոնէից, սե սև և սոսկալի անհաւատից հետ :

մը նժոյգէն տապաստ վար ընկնէր . բայց առ հասարակ՝ մրցարանին բաւորը նստող կանայք մարտիկներուն քաջալեր կ'կարդային՝ ոչ միայն ծափ զարնելով և իրենց քողերն ու թաշկինակներն օրորելով, այլև պոռալով իսկ . «Քաջ նիզակ, ընտիր սուր .» ամէն անդամուն որ զարկ մը կամ հարում մը դիտէին :

Եթէ գեղանի սեուն՝ այս արիւնարբու խաղին այսչափ հօգ կ'տանէր՝ դիւրին է երևակայել թէ մարդիկ ինչ կ'զգային . Բարձրաձայն կայ-թիւններով իրենց համակրութիւնը կ'յայտնէին ամեն անգամ որ բաղ-դին անիւր դառնար, մինչդեռ ամենուն աչքը մրցարանին վրայ այնպէս ակնապիշ սևեռած էր, որ կարծես թէ նոյն իսկ հանդիսականները կ'առնուին կ'տային ակոյեաններուն հետզհետէ բաշխած հարուած-ներն : Ապա՝ ամէն դադարի միջոցին՝ հերոսները կ'զոչէին . «Պատե-րապնեցէք, արիասիրտ ասպետներ . մարդ կ'մեռնի բայց փառքը կ'մնայ կենդանի . միշտ սլատերաղմեցէք . մահը լաւագոյն է քան պարտու-թիւնը . կռուեցէք միշտ, վասն զի գեղանի աչեր ձեր գործերը կը նկատեն :»

Պատերազմին փոփոխ ընթացքին ատեն՝ ամէն մարդ երկու գնդին պարագլուխները նշմարելու կ'ջանար, թէ և ասոնք մարտին ամենէն տաքցած ժամանակը ձայնով և օրինակով իրենց ընկերակիցները կը խրախուսէին : Երկու քնին ևս արիութեան նախճիրներ ցոյց տուին, բայց ոչ Պուա-Նիլպէր, ոչ Ժառանգազուրկ ասպետը թշնամի բանա-կին մէջ իրենց հետ զուգակշիռ չափուելու ակոյեաններ չգտան . փո-խադարձ ատելութեամբ վառ՝ քանի՛ քանի անգամ փորձ ըրին դէմ առ դէմ մենակի կռուելու, քաջ դիտնալով որ միոյն կամ միւսին անկումը մարտին բաղդը պիտի որոշէր : Սակայն գրոհն ու բոհն այնքան մեծ էր՝ որ մարտին սկիզբն՝ երկուստեք իրարու հանդիպելու համար եղած փորձերն ապարդիւն ելան, և ստէպ իրենց եռանդուն կռուակիցներուն ձեռք բաժնուեցան, վասն զի ամէն մէկը՝ հակառակ կողմին սլարա-դլիսին հետ չափուելով կ'փափաքէր անուն վաստկիլ :

Բայց երբ մարտի դաշտն սկսաւ նօսրիլ, և երկուստեք շատ մը մար-տիկներ նկուն մնալով մրցարանին ծայրը քշուեցան, կամ կռիւը շա-րունակելու անկարող դտնուեցան, Տաճարականն ու Ժառանգազուրկ ասպետը հոսկ ուրեմն դէմ առ դէմ եկան, այնպիսի կատաղութեամբ մ'որ անհաշտ ատելութիւն և փառացի հետամտութիւն մը կրնան ներ-շնչել : Այնքան մեծ էր ամէն մէկուն հարելու և ընդհարելու ճար-տարութիւնն որ հանդիսականներն ինքնայորդոր միաձայն աղաղակ մը արձակեցին իրենց զոռաթճութեան և հիացման ի նշան :

Քայց նոյն պահուն՝ ժառանգազուրկ ասպետին կողմը կ'տկարանար՝ վասն զի Ֆրօն-տը-Պէօի հսկայական բազուկն մէկ կողմէն՝ և Աթէլստէյնի վիթխարի ոյժը միւս կողմէն՝ կ'տասրալէին, ցիր ու ցան կը վանէին իրենց հարուածին հանդիպող դիմակալներն: Այս երկու հզօր մարտիկներն՝ իրենց անմիջական ոսոխներէն ազատելէն ետև՝ կ'երևի թէ նոյն միջոցին իսկ մի և նոյն խորհուրդն ունեցան, այսինքն վերջնական ծառայութիւն մ'ընել իրենց կուսակցութեան Տաճարականին թեկն տալով որ իր ոսոխին դէմ պատերազմի: Ուստի նոյն պահուն իսկ՝ իւրաքանչիւրն իր երիվարը դարձնելով՝ 'սօրմանը՝ մէկ կողմէն ժառանգազուրկ ասպետին դէմ քշեց, և Սաքսօնը միւս կողմէն: Անհնար պիտի լինէր բոլորովին որ ժառանգազուրկ ասպետն այսպիսի անհաւասար և յանկարծական յարձակման մը դիմահարելու զօրէր՝ եթէ հանդիսականները՝ միաբերան աղաղակ մ'արձակելով՝ անոր ձայն չտային, վասն զի համակիր էին բնապէս մեծ վտանգի մը ենթակայ գտնուող մենամարտիկ ասպետին:

— Զգոյշ կեցիր, զգոյշ կեցիր, ասպետդ ժառանգազուրկ — դոչեցին այնպէս հանրական ձայնով մ'որ ասպետն իսկոյն դիտեց առջևի վտանգն, և Տաճարականին երեսին շիտակ ահարկու հարուած մը տալով՝ իսկոյն նժոյգն ետ քշեց, և այս շարժումով Աթէլստէյնի և Ֆրօն-տը-Պէօի նիզակէն խոյս տուաւ: Հետևապէս այս ձիաւորներն՝ իրենց նպատակը վրիպելով՝ ներհակ կողմէ սրացան յարձակման կիտին և Տաճարականին մէջ տեղն՝ իրենց երիվարները դրեթէ իրարու դէմ դալով՝ անոնց ընթացքը սանձելէն առաջ: Սակայն հուսկ ուրեմն՝ երիվարները զսպելով և բոլորակի շրջջելով՝ երեք հակառակօրդ ասպետները միակամ ջան 'ի դործ դրին ժառանգազուրկ ասպետը գետին տապալելու մտօք:

Ոչինչ չէր կարող ազատել զանի բայց եթէ առջի օր վաստրկած աղնիւ նժոյգին նշանաւոր ոյժն ու թեթեւաշարժութիւնը:

Այս առաւելութիւնն այնքան կարևոր էր իրեն, որչափ որ Պուա-Սիլպէրի ձին վիրաւոր, և Ֆրօն-տը-Պէօի ու Աթէլստէյնի երիվարները միանգամայն յողնած էին իրենց հսկայաձև տէրերուն ծանրութենէն, որոնք կատարելապէս սպառազինեալ էին, և իրենց արդէն ըրած ջանքէն: ժառանգազուրկ ասպետն՝ իր հիանալի ձիավարժութեամբն, և իր աշտանակած պատուական նժոյգին ժրութեամբը կարող եղաւ՝ քանի մը վայրկենի շափ՝ իր ոսոխները սրին ձայրէն յայսկոյս շփտեցընել, յոլաթև բաղէի պէս սրարշաւ՝ կ'դառնար հոլովակի:

ըստ կարի իր թշնամիներն իրմէ հեռու և զատ կ'պահէր, և մերթ միոյն, մերթ միւսին վրայ կ'սրանար, և իր սրովն ահարկու հարուածներ կ'իջեցնէր, և չէր սպասեր որ իրեն դէմ նշան առնուած հարուածներն ընդունի:

Եւ մրցարանը կ'թնտար իր ճարպիկութեան համար տրուած ծափարութիւններով, սակայն ակն յայտնի էր որ 'ի վերջէ պիտի ընկճէր, և ճօհն իշխանին բոլորը կեցող աւագանին միաբան կ'աղերսէին զինքն որ դաւաղանը մրցարանը նետէ և չթողու որ այնպիսի արիասիրտ ասպետ մը եռասպատիկ զօրութենէ պարտուի:

— Աչ, այդպիսի բան մը չեմ ընէր ես, Երկնից լոյսը վկայ — սլատասխանեց ճօհն իշխանն — այս պատանեկիկն՝ որ իր անունը կ'պահէ և մեր հիւրընկալութիւնը կ'մերժէ, արդէն մրցանակ մը շահեցաւ, և հիմակ կրնայ թողուլ որ ըստ կարգի ուրիշներն ալ շահին: — Այսպէս խօսելու ատեն՝ անակնունելի դիպուած մը մարտին կերպարանը փոխեց:

Ժառանգազուրկ ասպետին դնդին մէջ սեւազէն ախոյեան մը կար, յաղթանդամ սեւթոյր երիվար մը հեծած, որ՝ ըստ երևոյթին՝ ձկնավարժին պէս հուժկու էր և զօրեղ: Այս ասպետն՝ որ իր վահանին վրայ նշան մը չունէր բնաւին, մինչ ցայն կէտ անտարբեր աչօք դիտեր էր մարտը, և կերպ մ'անհոգութեամբ իր վրայ յարձակող մարտիկները վաներ էր, առանց կռուէն օգուտ քաղելու և ինքն ալ ուրիշի վրայ յարձակելու նշան մը ցոյց տալու: Մէկ խօսքով, ինքն աւելի հանդիսատեսի մը դերը խաղացեր էր քան թէ մրցող ախոյեանի, և այս պատճառաւ՝ հանդիսականներն անոր Սէրտորիկապորտ մակդիրը տուեր էին:

Յանկարծ այն ասպետը՝ կարծես թէ իր անհոգութիւնը թոթուեց՝ երբ իր կուսակցութեան պարագլուխն այնպէս նեղն ընկած տեսաւ, վասն զի իր երիվարն՝ որ լիովին անվաստակ էր, մտրակեց, կայծակի պէս անոր օգնութեան հասաւ, և փողի պէս ձայն մը հանելով պոռաց.

— Ժառանգազուրկ, աղատում:

Եւ արդարեւ ժամ էր օգնութեան, վասն զի մինչդեռ ժառանգազուրկ ասպետն 'ի մօտուստ Տաճարականը կ'նեղէր՝ Քրօն-տը-Պէօ անոր մօտեր էր սուրը բարձր բռնած, բայց տակաւին հարուածը չիջած՝ Սէրտորն գլխին տուաւ այնպիսի ուժղին հարուած մ'որ յղկուն սաղաւարտէն սահելով՝ այն ինչ մեղմեալ՝ երիվարին գլխակրին վրայ իջաւ, և Քրօն-տը-Պէօ իր ձիուն հետ թաւաղլոր գետին

ընկաւ, թէ ձի և թէ ձիաւոր զարկին բռնութենէն միտպէս ան-
 զգայ դարձած : Յետոյ՝ Սև Գառաբէկապորտն իր ձին Գօնինկսպրկի
 Աթէլստէյնի վրայ դարձուց, և իր սուրը Քրօն-տը-Պէօի հետ ու-
 նեցած կռուին մէջ կոտորած լինելուն՝ հսկայաձև Սաքսօնին ձեռքէն
 տապարը խլեց, և, այս զէնքին դործածութեան ընտել մարդու մը
 պէս, այնպիսի ուժգին հարուած մ'իջեցուց որ Աթէլստէյն ևս շնչա-
 սպառ գետին ընկաւ : Այս կրկնակի շահատակութիւնն կատարելէն ե-
 տե՛ որ անյուսալի լինելուն աւելի ևս ծափահարութեան արժանի
 դատուեցաւ, Սև ասպիսը նորէն իր բնածին անհոգութիւնն առաւ և
 մրցարանին հիւսիսային ծայրը դարձաւ հանդարտիկ՝ թողլով որ իր
 հրամանատարն ըստ հաճոյս պայքարի Պուա-Վիլպէրի հետ : Այս
 պայքարն առաջուան պէս դժուարին չէր : Տաճարականին երիվարը
 շատ արիւն կորուսեր էր, և ծառանգազուրկ աստեղտին բախումէն
 տապալ ընկաւ : Պրայն տը Պուա-Վիլպէր կրկէսին մէջ թաւալզոր ե-
 կաւ, ոտներն ասպատաններու մէջ խառնուելով՝ ուսկից չէր կարող քա-
 շել հանել : Իր ոտին երիվարէն վար ցատկեց և իր ահարկու սուրը
 Տաճարականին գլխին վերևը շողացնելով՝ անոր կ'հրամայէր որ անձ-
 նատուր լինի, երբ ճօհն իշխանը՝ Տաճարականին վտանգաւոր վիճա-
 կին աւելի կարեկիր գտնուելով քան թէ յառաջագոյն անոր ոտխին,
 որպէս զի ինքզինքը յաղթեալ խոստովանելու ամօթէն ազատէ, իր
 գաւազանը մրցարանը նետեց և գուպարին այսպէս վերջ տուաւ :

Իրաւ է որ նոյն միջոցին մարդիկ ասպետներուն բեկորները միայն կը
 տեսնուէին մրցարանին մէջ, վասն զի բաց ՚ի մէկ քանի ասպետներէ
 որ տակաւին կ'գեղեցերէն անդ, մեծ մասը՝ լռին հաւանութեամբ,
 մարտէն քաշուեր էին, թողլով որ պարագլուխներն անոր վերջին
 վճիռը տան :

Չիսպաններն՝ որ գուպարին ատեն՝ իրենց գլխաւորներուն հետևե-
 լու վտանգ և դժուարութիւն տեսեր էին, նոյն պահուն մրցարանը
 մտան խմբովին որպէս զի վիրաւորները խնամեն, որոնք հոգատար
 զգուշութեամբ մօտաւոր վրանները, կամ զիւզը կանխաւ պատրաս-
 տուած վայրերը փոխադրուեցան :

Այսպէս վերջացաւ Էշպի-տը-լա Չուշ ըսուած երևելի զինամար-
 տը, գուպար մ'որ այն դարուն մէջ ամենէն աւելի արիական մարտե-
 րու տեսարան եղաւ, վասն զի՝ որչափ որ մինակ չորս ասպետ սպա-
 նան, որոց մին իր սպառազինութեան ծանրութենէն խղդուեր էր,
 դարձեալ երսունէն աւելի կարեվէր վիրաւորեցան, և այս վերջիննե-

րէն չորս կամ հինգ հողի կարող չեղան լիովին կազմու ըիլ : Աւրիշ շատերցմահ հաշմտ մեացին , իսկ անոնք որ բարեբաղդ պրծան՝ գուպարին նշաններն իրենց հետ գերեզման տարին : Ահա այս պատճառաւ հին տարեգիրներն այս գուպարը Եշպիի աղոր և զուարթուն գուպարը կ'անուանեն :

Արդ՝ ճօհն իշխանին պարտ լինելով երևելի հանդիսացող ասպետն անուանել , որոշեց որ նոյն օրուան մրցանակը պէտք է շնորհել այն ասպետին զոր ժողովրդեան ձայնը Սև Գատարկապորտ կոչեց : Սակայն ճօհն իշխանին տուած վճռոյն հակառակ՝ անոր ըսին թէ յաղթութիւնն արդեամբ նոյն ինք ծառանդազուրկ ասպետը տարած է , որ նոյն օրն՝ իր ձեռօք վեց ոսոխ ընկճեր և 'ի վերջէ հակառակ կուսակցութեան պարագլուխը ձիէն տասպատ ձգեր էր : Բայց ճօհն իշխանն իր առջի որոշման վրայ պնդեց , սա պատրուակաւ որ ծառանդազուրկ ասպետն ու իր կողմը յաղթանակը չպիտի տանէին եթէ Սև սպառազէնն անոնց օգնութեան չհասնէր . հետեւապէս մրցանակն այս վերջնոյն շնորհելու որոշման մէջ անսասան կ'մնար :

Սակայն՝ 'ի զարմացումն բոլոր ներկայից՝ այս նախադասեալ ասպետն և ոչ տեղ մը չգտան : Գուպարն աւարտելէն անմիջապէս ետքը մրցարանէն հեռացեր , և քանի մը հանդիսականներ տեսեր էին անոր մեկնիլն անտառին մէկ ցանցառին մէջէն այն յամր քայլով և դանդաղ կերպով որոց պատճառաւ Սև Գատարկապորտ կոչուեր էր : Շեփորին շփնչն և հերոսներուն աղաղակը զինքն երկու անգամ կոչելէն ետե՛հարկ եղաւ անոր ընծայելի պատիւը տալու համար ուրիշ ասպետ մը ընտրել : Ճօհն իշխանն այնուհետեւ պատճառ մը չունէր ծառանդազուրկ ասպետին իրաւունքը մերժելու , և հետեւապէս զանի օրուան գուպարին շահատակն անուանեց :

Պարէտներն երկրորդ անգամ շահատակն առնլով՝ արխնտտ և սահուկ ճամբէ մ'որ զինուց բեկորներով և սպանեալ ու վիրաւոր ձիերով փակուեր էր , անցուցին և ճօհն իշխանին գահին առջևը բերին :

— Ծառանդազուրկ ասպետ — ըսաւ ճօհն իշխանը — քանի որ այդ անուամբ միայն կ'հաւանիս յայտնուիլ մեզ , երկրորդ անգամ կ'շնորհենք քեզ այս գուպարին մրցանակն , ու կ'իմացնենք քեզի թէ իրաւունք ունիս սիրոյ և գեղեցկութեան թագուհւոյն ձեռքէն ընդունիլ պատուոյ պսակը , որուն արժանացար արիութեամբդ : — Ծառանդազուրկ ասպետը մեծարելի և շնորհալի խոնարհութեամբ բարեկեց , բայց պատասխան մը չտուաւ :

Մինչդեռ փողերը կ'որոսային և հերոսները բարձրագոյ կ'սրոային — սլատիւ քաջերուն , փառք յաղթողներուն — մինչդեռ կանայք իրենց մետաքսէ թաշկինակներն ու նկարակերտ շարգոյլները կ'տատանէին , և մինչդեռ ամէն դասու հանդիսականներն միաբերան ցնծութեան որսորնդօստ աղաղակներ կ'արձակէին , սլարէտները մրցարանէն առաջնորդեցին ծառանդազուրկ ասպետը մինչև սլատույ գահն ուր կ'բազմէր օրիորդ Յովէնա :

Սոյն գահին յետին աստիճանին վրայ ծուռը դնել տուին յաղթող շահատակին : Արդարեւ՝ դուպարին վախճանէն վեր՝ ծառանդազուրկ ասպետին բոլոր վարմունքը՝ կարծես թէ ոչ այնչափ իր յատուկ կամքը քան թէ չորս կողմը գտնուողներուն տալաորութիւնը շարժառիթ ունէր . և ամէն մարդ դիտեց որ երկրորդ անգամ մրցարանէն անցնելուն կ'գայթէր : Յովէնա՝ շնորհալի և արժանի քայլով մ'իր գահէն վար իջնելով՝ ձեռքը բռնած սլակը շահատակին սաղաւարտին վրայ դնելու վրայ էր , երբ սլարէտները միաձայն գոչեցին .

— Այդպէս վարուիլ պէտք չէ , հարկ է գլուխը բանալ :

Ասպետը քանի մը խօսք արտասանեց որ իր սաղաւարտին խորշին մէջ կորան , բայց կ'երևէր թէ կ'փափաքէր որ սաղաւարտը գլխէն չհանեն :

Կանոնապահութիւն համարէ կամ հետաքրքրութիւն , սլարէտներն անոր դժկամակութեան նշաններն անտես ըրին , և սաղաւարտին ու վզակին կասկերը քակելով՝ գլուխը բացին : Երբ սաղաւարտը հանեցին , քսանհինգ տարեկան երիտասարդի մը բարեձև այլ արեակէզ գէմքը՝ կարճ և դեղձանիկ առատ մազերով երևան ելաւ : Իր երեսը մեռելատիս դեղնութիւն մ'ունէր և քանի մը տեղ արատներ կային :

Այն ինչ Յովէնա տեսաւ երիտասարդին գէմքն որ ճիկ մը հանեց , բայց իր ընդարոյս զօրութիւնն ամփոփելով՝ ինքզինքը զսպեց որպէս զի իր սլաշտօնը կատարէ , մինչդեռ բոլոր մարմինը յանկարծահաս այլայլութեանէն կ'դողդողար . ուստի յաղթողին ակնկոր գլխին վրայ դրաւ մարտին յատկացեալ մրցանակն եղող շքեղ սլակն , և սլայծառ ու յստակ ձայնով այս խօսքերն արտասանեց .

— Աետ ասպետ , այս սլակը քեզի կ'նուիրեմ , որ այսօրուան դուպարին մէջ յաղթական կանգնող քաջին վարձատրութիւնն է :

Պահ մը կանկ առաւ և սպա անվրդով յարեց .

— Եւ երբէք դափնեայ սլակ որ չէ բոլորած այս ճակատէն առելի վեհ ճակատ մը :

Ասպետն իր զլուխը ծռեց և իր արիութիւնը վարձատրող գեղանի քամբիշին ձեռքը համբուրեց . ապա ևս քան զևս կորանալով՝ անոր ոտքն ընկաւ շնչասպառ :

Ընդհանուր սարսափ մը գրաւեց ամէնքը : Սէտրիկ՝ որ իր տարազիր որդւոյն յեղակարծ երևոյթէն ապուշ կրթեր էր, առաջնետուեցաւ որպէս թէ Տովէնաէն զանի բաժնէ : Բայց արդէն պարէտներն այս գործը կատարեր էին, վասն զի Իվանօէի նուազման պատճառը գուշակելով՝ շտապեր էին անոր զէն ու զարդը հանել և դիտեր էին որ նիզակի մը սայրն իր զրահէն թափ անցնելէն ետև՝ իր կողը վիրաւորեր էր :

Գ. Լ. Ո Ւ Խ Ժ. Գ.

«Արիք մօտ, դիւցազունք :» Խօսէր բարձր Ատրիդ,
«Օն ընդ առաջ եկէք՝ երևելիք գոհճիդ,
Դուք՝ որ արիական ճարտարութեամբ պանծաք
Ձեր ոսոխներ ընկճել և ստանալ մեծ հռչակ .
Արիք : տրիտուր է կովս, քսան եզանց է գին,
Այն՝ որ քան զամեն հեռու արձկէ փքին,

ԵՂՒԱԿԱՆ

Սյն ինչ Իվանօէի անունը հնչեց՝ որ բերնէ բերան թռաւ եռանդազին հետաքրքրութեան մ'ազդած արագութեամբ : Շատ շանցաւ նոյն անունը մինչև իշխանին շրջանակը հասաւ, անոր ճակտին վրայ մռայլ մ'իջաւ այս լուրն ընդունելուն, բայց իր չորս կողմը նայելով արհամարհանօք,

— Իմ լորտերս — ըսաւ նա — և մանաւանդ դու, պատուարժան վանահայր, ի՞նչ կ'իտորհիք բնածին համակրութեան և հակակրութեան վրայ զոր գիտունները կ'դաւանին : Սյնպէս երեցաւ ինձ որ եղբօրս մտերիմը ներկայ էր՝ երբ այն ինչ կ'կասկածէի իսկ թէ այն զարդն ու սարքը հագնող ասպետն իմ է :

— Պէտք է որ Ֆրօն-տը-Պէօ պատրաստուի Իվանօէին դարձնել լու իր աւատական հողն — ըսաւ տը Պրէսի, որ դուպարին ժամանակ իր դերն արժանապէս կատարելէն ետև՝ իր վահանն ու սաղաւարտը մէկդի ձգեր և իշխանին հետևորդներուն նորէն միացեր էր :

— Այն — պատասխանեց Աօլտմար Ֆիցուրս — այս գեղադէմ
ասպետը թերևս Տիչարտին իրեն տուած դղեակն ու կալուածը պա-
ճանջէ, թէև Ձեր վսեմութիւնը վեհանձնօրէն Քրօն-տը-Պէօին
պարգևեց :

— Քրօն-տը-Պէօ — պատասխան տուաւ Ճօհն — այնպիսի մարդ
մ'է որ Իվանօէի կալուածոց պէս երեք հատ կուլի'տայ քան թէ մէկն
իսկ ձեռքէ հանէ : Սակայն, սլարոններ, ես կարծեմ թէ զիս շրջա-
պատող հաւատարիմ սպասաւորներու հողեր բաշխելու իրաւունքս ոչ ոք
կրնայ այս տեղ վէճի տակ ձգել, այն սպասաւորներս որ պատրաստ են
երկրիս զինուորական պահպանութիւնն ընել ըստ սովորութեան, այն
անձանց տեղ որ օտար աշխարհներ կ'թափառին և երբ կոչուին՝ ոչ
հնազանդութիւն և ոչ ծառայութիւն կրնան մատուցանել :

Ունկնդիրներն այս խնդրոյն մէջ այնքան շահ ունէին որ միաբերան
յայտնեցին թէ Ճօհն իշխանին ստանձնած իրաւունքը բոլորովին ան-
դրժեւի էր : — Ինչ վեհանձն իշխան, ինչ ազնիւ տէր մ'որ այսպէս
իր հաւատարիմ ծառաները վարձատրելու հողն իր վրայ կ'առնու :

Ահա ասոնք եղան բոլոր հետեւորդներուն արտասանած խօսքերը .
վասն զի ամէնքնին ալ մի և նոյն տեսակ պարգևներ ստանալու յոյս ու-
նէին 'ի վնաս Տիչարտի պաշտօնէից և մտերիմներու, եթէ արդէն չէին
տտացած :

Էյմէր վանահայրն այս ընդհանուր հաւանութեան ձայնակից եղաւ,
սա դիտողութիւնն ընելով միայն որ Սուրբ Երուսաղէմ իրօք օտար աշ-
խարհ մը չէր կրնար սեպուիլ : Այն communis mater, այս է հա-
սարակաց մայր էր ամէն քրիստոնէից : Բայց ինքը չէր կրնար — կ'ըսէր
— ըմբռնել թէ ինչպէս Իվանօէ ասպետն իբր խաչակիր կ'պարծէր,
քանի որ ինքը վանահայրը՝ վստահ էր որ Տիչարտի խաչակիր զինուոր-
ներն Ասկալօնէն անդին անցած չէին, քաղաք մ'ինչպէս ամէն մարդ
գիտէր, փղշտացւոց ձեռքն էր և չէր կրնար սուրբ քաղաքի արտօնու-
թիւն վայելել :

Աօլտմար՝ որ հետաքրքրութենէ շարժեալ մինչև Իվանօէի ընկած
վայրը գացեր էր, նոյն պահուն դարձաւ և ըսաւ .

— Այն շահատակն՝ ըստ երևոյթին՝ Ձեր վսեմութեան անհան-
գստութիւն չպիտի տայ, և կարծեմ թէ Քրօն-տը-Պէօն ալ պիտի
թողու որ վաստակը վայելէ, վասն զի կարեւելք վիրաւորուած է :

— Ինչ որ լինի — ըսաւ Ճօհն իշխանն — այսօրուան յաղթողն է,
և եթէ տասն անգամ մեր թշնամին կամ մեր եղբօրն անձնուէր բարե-

կամը լինի, և այս թերևս նոյն բանն ըսել է, դարձեալ պէտք է անոր վերջին դարման տանիլ. մեր յատուկ բժիշկն անոր պէտք եղած խնամքը պիտի տայ:

Այս խօսքերն ըսելու ատեն իշխանին շրթերուն վրայ չարանիշ ժպիտ մը սահեցաւ: Աօլտմար խկոյն պատասխանեց որ արդէն Իվանոէ մրցարանէն առեր սարեր են, և իր բարեկամաց պահպանութեան ներքե կ'դտնուի:

— Ես քիչ մը վշտացայ — ըսաւ նա — սիրոյ և գեղեցկութեան թաղուհւոյն վիշտը տեսնելով, որ միօրեայ վեհապետութիւնն այն պատահարէն սցոյ օր դարձաւ: Իր սիրահարին վրայ կնկան մ'ըրած ողբէն շուտով շարժող մարդ մը չեմ, բայց այն օրիորդ Բովէնան այնպէս մեծանձնութեամբ զսպեց իր վիշտը՝ զոր միայն կարելի էր նշմարել իր պրկած ձեռքէն և անարտօսը աչքէն, որ կ'գողղողային այն անկենդան մարմնոյն վրայ նայելու ատեն:

— Ա՛վ է այն օրիորդ Բովէնան՝ որուն անունը ստէպ լսեցի — հարցուց Ճօհն իշխանը:

— Ընդարձակ կալուածոց աէր սաքսօնուհի մը — պատասխանեց Էյմէր վանահայրը — շնորհաց վարդ մ'ու ճօխութեան դոհար մը, բիւրոց մէջ գեղազոյնն, զմուռսի փունջ մ'ու քամփուրի հոտաւետ հիւթը:

— Անոր վիշտը տիտիելու ճար մը կ'դտնենք — ըսաւ Ճօհն իշխանն — և զանի նօրման ազնուականի մը հետ կարգելով արիւնը բարելաւել: Ա՛երեւի թէ անչափահաս աղջիկ մ'է, և հետեւապէս սարտաւոր է մեր արքայական հրամանին համեմատ ամուսնանալ: Բնչ է կարծիքդ այս մասին, տը Պրէսի, միթէ փափաք ունի՞ս՝ Ալիլյէմյաղթ թողին սովորութեան համեմատ՝ հողեր և հասոյթներ ստանալ, սաքսօնուհւոյ մը հետ կարգուելով:

— Եթէ հողերն իմ բանիս դան — պատասխանեց տը Պրէսի — կարելի չէ ինձ չհաւնիլ այն նշանածն, և Ձեր վսեմութեան մեծապէս շնորհասպարտ պիտի լինիմ այդ երախտեաց համար որով ձեր ծառային և հպատակին ըրած խոստմունքդ պիտի կատարուին:

— Չպիտի մոռնանք այդ բանն — ըստ Ճօհն իշխանն և որպէս զի անյապաղ դործն ապահովի, հրաման առէք մեր սալարին որ խոկոյն պատուէր տայ օրիորդ Վովէնայի և իր ուղեկիցներուն այս երեկոյեան խնջոյքին մեր առջևն երևելու, այսինքն իր խնամակալ կոշտ զեզջուկին, և գուպարին մէջս ասպետին զետին տասպալած սաքսօն կովին հետ: Պիկօդ — յարեց նա սալարին ուղղելով խօսքը — պէտք է որ այս մեր հրաւերին երկրորդ մասը բաւական մարդավարութեամբ ընես որպէս զի այն դուռը սաքսօնները շահուին և հրաւերս չմերժեն, թէև Պէքէգի օսկրներուն վրայ կ'երդնում որ խողերու մարդարիտ նետել է:

Ճօհն իշխանն այսպէս խօսելով մրցարանէն հեռանալու նշան պիտի տար, երբ սլզտիկ տոմսակ մը բերին և անոր ձեռքը տուին:

— Արմէ է այս տոմսակը — հարցուց Ճօհն իշխանը թղթաբերին երեսը նայելով:

— Օտար երկրէ կ'դայ, տէր իմ, բայց չչիտեմ որ կողմէն — պատասխանեց սոյասաւորը: — Գաղղիացի մը բերաւ այդ թուղթն՝ ըսելով թէ զիշեր ցորեկ ձիավարեր է որպէս զի զայն Ձեր վսեմութեան ձեռքը հասցնէ:

Իշխանն ուշի ուշով զննեց հասցէն, ասլա կնիքն, որ զայն պատող մետաքսի լարը սնդելու կերպով կոխուած էր և երեք շուշանի գրոշմ կ'կրէր, վերջը Ճօհն տոմսակը բանալով՝ ակներև այլայլութեամբ կարդաց և աւելի մեծ յուզմունք մ'զգաց, տոմսակը սա խօսքը կ'սլարունակէր.

✓ // «Զգոյշ կեցե՛ք, վասն զի սասանան շքեպարտերժ է:»

Իշխանը մեռելի դոյն առաւ, նախ զետին նայեցաւ և ասլա երկին, իբր մարդ մ'որ մահուան վճիռը կ'իմանայ: Իր առաջին սոպաւորութիւնը փարատելով՝ Աօլտմար Ֆիցուրսն և ար Պրէսին մէկգի կանչեց և տոմսակը հետզհետէ անոնց ցցուց:

— Այս կ'նշանակէ — ըսաւ նա դողդոջ ձայնով մը — թէ իմեղբայրս Տիշարտ իր ազատութիւնը ձեռք ձգեր է:

— Այդ կրնայ սուտ զրոյց մը կամ սուտ նամակ մը լինիլ — ըսաւ ար Պրէսի:

— Ֆրանսայի թագաւորին ինքնագիր նամակն ու կնիքն է — պատասխանեց Ճօհն իշխանը:

— Աւրեմն ժամ է արդ — ըսաւ Ֆիցուրս — համախմբել մեր զօրքը կամ 'ի Եօրք կամ ուրիշ կեդրոնական վայր մը: Եթէ քանի մ'օր ևս

անցնենք, արդարև այն ատեն բանը բանէն պիտի անցնի : Չեր վսեմութիւնը պէտք է որ այս Եշպիի միմոսական խաղերուն վերջ տայ :

— Գեղացիք և ժողովուրդը դժգոհ պիտի լինին — ըսաւ տը Պրէսի — եթէ այս խաղերուն իրենք ևս մասնակից չլինին :

— Տակաւին օրը տարածամ չէ — ըսաւ Աօլտմար — [Թող աղեղնաւորները քանի մը նետ նետեն նշանադրին (target) և մրցանակը սահմանուի : Այս կերպով իշխանն իր խոստումը լիովին կատարած պիտի սեպուի այս սաքսօն ստրուկներու դասակին առջև :

— Շնորհակալ եմ քեզ, Աօլտմար — ըսաւ իշխանն — ասով կ'յիշեցրնես նաև ինձ որ երէկ զիս նախատող գեղջուկին հետ հաշիւ մ'ունիմ կարգադրելու : Ինչպէս որ տրամադրեր էինք, այս դիշեր մեր խնջոյքը պիտի ընենք : Եթէ այս ժամս իմ իշխանութեանս յետին ժամս իսկ լինի, պէտք է զայն նուիրել վրէժխնդրութեան և զուարճութեան : Թող նոր հոգերը վաղուան մնան :

Փողերուն ձայնը նորէն կոչեց այն հանդիսականներն որ դաշտէն հեռանալու սկսեր էին, և քարոզներ իմաց տուին որ՝ կարևոր ստիպողական գործեր ճօհն իշխանը յանկարծ այլուր կ'կոչեն, հետևապէս վաղուան հանդիսին զբօսանքն ընդհատելու կ'պարտաւորի : Այլ սակայն՝ չուզելով որ այնչափ բարեմիտ գեղացիներ մեկնին առանց իրենց արիութեան փորձը ցոյց տալու, յօժարամիտ կ'հրամայէ՝ մեկնելէն առաջ՝ վաղուան համար սահմանուած նետաձգութեան խաղերն անմիջապէս սկսիլ : Արիադոյն աղեղնաւորին մրցանակ մը պիտի տրուէր, որ էր արծաթակապ շեփոր մը, պճնաղարդ մետաքսէ կամար մը, և անտառաց պաշտպան՝ Ս. Հիւպէրդի մէկ շքադրամը :

Երսունէն աւելի շինականներ ներկայացան իբր հետամուտ, որոց շատերը Նիսովուտի և Շարնովուտի արքունի անտառներու որսորդապետներ և պահնորդներ էին : Սակայն՝ երբ աղեղնաւորներն իմացան թէ որոց հետ պիտի պայքարին, քսանէն աւելին կուռէն քաշուեցան, գրեթէ անվրէպ պարտութեան մ'անպատուութիւնը կրել չուզելով : Ասան զի այն ժամանակներն ամէն երևելի նետաձգի համբար շատ հեռու տեղեր ծանօթ էր, ինչպէս են այժմ ծանօթ Նիւմարքէդ մարդուած նժոյգի մը յատկութիւնները՝ նոյն ժողովապետին յաճախող անձերուն :

Հետամուտները թէև նուազեցան, սակայն դարձեալ ութ նետաձիգ կային : Ճօհն իշխանն իր աթոռէն ելաւ այն ընտիր գեղացիներն ՚ի մօտուստ քննելու համար, որոց շատերն արքունի նշանազգեստ հոգեր

Handwritten note in the left margin, partially obscured by a bracket.

էին : Այս քննութեամբ իր հետաքրքրութիւնը զօհ ընելով իր վրիժու առարկան փնտուեց , և տեսաւ որ նոյն տեղը կեցեր էր և առջի օրուան հանդարտ կերպարանը կ'պահէր :

— Թշուառական — ըսաւ անոր ճօհն իշխանը — քու լրբենի շատախօսութենէդ գուշակեցի որ աղեղի ճշմարիտ սիրահար չես , և կը հայիմ որ արիութիւն չունիս վարը կեցող անվէհեր աղեղնաւորներու հետ չափուիլ :

— Ա սեմափայլ տէր — պատասխանեց շինականը — ներուի ինձ ըսել որ ձախորդութեան և պարտութեան երկիւղէն զատ պատճառ մը ունիմ պայքարէն ետ կենալու :

— Եւ ի՞նչ կրնայ լինիլ այդ միւս պատճառդ — ըսաւ ճօհն իշխանն , որ իրեն իսկ անմեկնելի դրզիւով մտայոյզ հետաքրքրութիւն մը կ'զգար այս մարդուն նկատմամբ :

— Ա ասն զի — պատասխանեց անտառի որսորդը — չգիտեմ թէ արդեօք այս շինականներն և ես մի և նոյն կէտ նպատակին նշան առնելու սովոր ենք , վասն զի չգիտեմ նաև թէ ինչպէս Ձեր վսեմութիւնը պիտի ախորժի տեսնել որ երրորդ մրցանակն անխոհեմարար ձեր տհաճութեան հանդիպող մարդ մը շահի :

Ճօհն իշխանին երեսը կարմրեցաւ սա հարցումն ընելով ,

— Ի՞նչ է քու անունդ , զեղացի :

✓ Լօքսլէյ — պատասխանեց զեղացին :

— Ուրեմն , Լօքսլէյ — ըսաւ ճօհն իշխանը — դու ևս ըստ կարգի նշան պիտի առնուս՝ երբ այս շինականներն իրենց ճարպիկութիւնը յայտնեն : Եթէ մրցանակը տանիս , քսան օսկի աւելի ևս պիտի տամ , բայց եթէ կորուսանես Ա ինքօնի կանաչ չուխայէ զգեստդ պիտի հանել տամ և իբրև շողակրատ և լիրբ խարերայ մը պիտի վանել տամ քեզ աղեղներու լարերով :

— Բայց եթէ այս պայմանները չընդունիմ և աղեղս չլարեմ . . .

— Հարցուց որսորդը : — Ձեր վսեմութեան իշխանութիւնն՝ որուն այսչափ զօրականներ նեցուկ են , ՚ի հարկէ կրնայ զիս դիւրաւ կապտել և գանահար ընել , բայց չէ կարող իմ աղեղս լարելու կամ նետ նետելու զիս բռնադատել :

— Եթէ իմ արդար առաջարկութիւնս մերժես — ըսաւ իշխանը — մրցարանին վերատեսուչն աղեղիդ լարը պիտի կտրէ , աղեղդ և նետերդ պիտի խորտակէ և քեզ մեր առջևէն պիտի վճնտէ իբր թուլասիրտ վատ մը :

— Բայց, մեծդ իշխան, օրինաւոր պահանջում մը չէ այդ — ըստ որսորդն — և անհամեմատ կռուի մը կ'դնէք Ախտսդրի և Ստաֆօրսի լաւագոյն աղեղնաւորներու դէմ հանելով զիս, սպառնալով միանգամայն վատահամբաւել եթէ պարտուիմ: Սակայն դարձեալ ձեր կամքը պիտի կատարեմ:

— Զօրականներ, սա մարդուն վրայ հսկեցէք — ըսաւ Ճօհն իշխանը — սիրար դողահար կ'տատամսի, կ'վախնամ որ փորձ չփորձէ խոյս տալու կռուէն: Իսկ դուք, կտրիճներս, անվեհեր և լաւ նշանառէք, երբ մրցանակը շահիք՝ եղծեամ մը և դինիի տակառ մը վարը տաղաւարին ներքեւ ձեզի համար պիտի պատրաստ լինին:

Նշանագիր մը դրին մրցարանը տանող հարաւային ճամբուն ծայրը: Մարտիկ աղեղնաւորները կարգաւ հարաւակողման դրան առջև կեցան՝ այս կայանին և նշանին մէջ բաւական ձգավայր թողլով: Աղեղնաւորները յառաջագոյն վիճակաւ որոշելով թէ ինչ կարողով պիտի արձակեն՝ յաջորդաբար երեքական նետ նետել պարտաւոր էին: Նետաձողութեան վերատեսչին կողմէ սահմանուած երկրորդական սպայ մը պիտի հսկէր այս խաղերուն վրայ, վասն զի մրցարանին պարէտներն իրենց աստիճանին նուաստութիւն կ'համարէին շինականներու խաղերը կարգադրելու զիջանիլ:

Աղեղնաւորները՝ մի առ մի ընդ առաջ գալով իբր արիասիրտ շինականներ իրենց նետերն արձակեցին: Հետզհետէ նետուած քսան և չորս սլաքներէն՝ տաս հատը միայն նշանագրին վրայ կեցան, իսկ միւսներն այնքան քովէն անցան, որ նշանին հեռաւորութիւնը նկատելով ընտիր նետաձիգներ համարուեցան: Նշանագրին դպող տաս նետերէն, երկուքն որ ներքին շրջանակին վրայ մտուեցան՝ Հիւպէրդի կողմէն արձակուեր էին, Մալվուագէնի ծառայող որսորդ մ'էր այն և հետեւապէս յաղթող հռչակուեցաւ:

— Հիմակ, Լօքսլէյ — ըսաւ Ճօհն իշխանը յանդուզն շինականին՝ հեղնալի ժպիտով մը — կ'ուզե՞ս Հիւպէրդին հետ մրցիլ թէ ոչ կ'ուզե՞ս աղեղդ, կամարդ և կասարձդ վերատեսչին յանձնել:

— Քանի որ ուրիշ ճար չկայ — ըսաւ Լօքսլէյ — չեմ դժկամակիր բողբս փորձելու, սա պայմանաւ որ երբ ես Հիւպէրդի սա վարի նշանին դէմ ելկու նետ նետեմ, ինքն ալ պարտաւոր լինի իմ առաջարկելիք նշանիս զարնել:

— Այդ խնդիրդ արդար է — սլատասխանեց Ճօհն իշխանն — և պիտի կատարուի: Եթէ սա պարծենկոտ մարդուն յաղթես, Հիւպէրդ, շեփորդ արծաթէ տասնոցներով պիտի լեցնեմ:

— Մարդ մը ձեռքէն եկածը միայն կրնայ ընել — պատասխանեց
Հիւսէրդ — քայց իմ հաւս Հէստինկսի ճակատամարտին բաւական մեծ-
կակ աղեղ մը լարեց, և յուսամ որ անոր յիշատակին արատ մը չպիտի
բերեմ :

Հետեւապէս առջի նշանակէտը վերցնելով՝ նոյն մեծութեամբ ուրիշ
նշանադիր մը դրին : Հիւսէրդ՝ որ նախորդ մրցումին մէջ իբրև յաղթա-
կան, իրաւունք ունէր առաջ նետելու, ուշադիր նշան առաւ, աչքով
հեռաւորութիւնը չափելով, մինչդեռ իր լայնալիճ աղեղը ձեռքը բռներ
էր : Ի վերջէ քայլ մ'առաւ ընդ առաջ, և աղեղն իր ձախ թևին բոլոր
երկայնութեամբը վեր վերցնելով՝ մինչև որ կեդրոնն իր երեսին հարթ
հաւասար եկաւ, լարն ականջին քաշեց. օդին մէջ սրանալով նետը
սուլեց և գնաց սևեռեցաւ նշանադրին ներքին բոլորակին մէջ, քայց
չէ թէ լիովին կեդրոնը :

— Հովին բաժինը չհանեցիր, Հիւսէրդ — ըսաւ անոր ստիսն՝ իր
աղեղը լարելով — ասպա թէ ոչ լաւագոյն նշան մը պիտի առնուէր :

Այս ըսելով և առանց առնելիք նշանին վրայ թեթև անձկութիւն
մ'իսկ ցոյց տալու, Լօքսլէյ որոշեալ տեղը գնաց և իր նետը նետեց
այնպիսի երևոյթական անհոգութեամբ՝ որպէս թէ բնաւ նշանն ան-
գամ չէր գիտած : Նետը լարէն թռելու ատեն՝ դրեթէ դեռ ինք կը
խօսէր, և սակայն նետը կիտին հասաւ՝ քան Հիւսէրդի նետն երկու
բթամատ կեդրոնին մօտե՛նալով :

— Երկնից լոյսը վկայ — գոչեց ճօհն իշխանը Հիւսէրդին — եթէ
թողուս որ այս ուրացող անօրէնը քեզ յաղթէ, կախաղանի արժանի
ես :

Հիւսէրդ ամէն առթի համար մէկ ձև խօսք ունէր :

— Եթէ դիս կախել կ'ուզէք, վստմափայլ իշխանդ — ըսաւ նա —
իշխանութիւն ունիք, մարդ մը ձեռքէն եկածը կրնայ միայն ընել :
Սակայն իմ հաւս լայնածիր աղեղ մը լարեց . . . :

— Սատանան քանի հաւդ և բոլոր սերունդդ — ընդմիջեց ճօհն
— լարէ և դու, անպիտան մարդ, և քաջապէս լարէ, թէ ոչ զլխիդ
փորձանք պիտի դայ :

Այս յորդորն ընդունելով Հիւսէրդ նորէն տեղն անցաւ, և իր ստ-
իին տուած խրատէն օգտելով՝ նոյն պահուն ելնող թեթև հովին բա-
ժինը հանեց և այնպէս վարպետութեամբ նետեց նետն որ եկաւ ճիշտ
նշանադրին կեդրոնը թափանցեց :

— Հիւսէրդ, Հիւսէրդ — աղաղակեց խուժանն, որ աւելի համա-

Պիր էր ծանօթ անձի մը քան թէ օտարականին — կեդրոնը դտար զ
կեդրոնը, կեցցէ Հիւպէրդ :

— Լօքսլէյ, այս հարուածէն շեւ կարող անցնիլ — ըսաւ իշխանը
նախատական ժպիտով մը :

— Սակայն անոր նետը պիտի ցտեմ — սրատասխանեց Լօքսլէյ :

Եւ առաջուանէ աւելի մտադրութեամբ իր սլաքն արձակելով՝
ճիշտ իր ոտիսին սլաքին վրայ իջեցուց և զայն կտոր կտոր ըրաւ : Բո-
լորտիքը կեցող ժողովուրդն այս հիանալի ճարտիկութեան վրայ այն-
քան ապշեցան որ սովորական աղաղակներով իսկ չկրցան իրենց զար-
մանքը յայտնել : — Այս սատանայ մ'է, ոսկրէ և մսէ մարդ չպիտի
լինի — կ'իսպիսային շինականներն իրարու — վասն զի առաջին անգամ
Բրիտանիայ մէջ աղեղ մը լարուելէն վեր՝ այսպիսի աղեղնաւոր մը տես-
նուած չէ :

— Իսկ հիմակ — ըսաւ Լօքսլէյ — հրաման պիտի խնդրեմ Ձեր
Վսեմութենէն որ մեր հիւսիսային երկրին ոճով նշան մը սրատրաս-
տեմ, և թող որ և է քաջ շինական փորձ փորձէ անոր զարնելու և իր
ամենէն աւելի սիրած էակէն ժպիտ մ'իբր վարձ ընդունի :

Այս միջոցին որ մրցարանէն դուրս ելնելու կ'սրատրաստուէր,

— Թող ձեր զօրականներն ինձի հետ դան — ըսաւ նա — եթէ կը
հաճիք, պիտի երթամ մօտաւոր ուռիէ փայտ մը կտրել :

Ճօհն իշխանը նշմայր մ'ըրաւ որ իր զօրականներէն մէկ քանին ա-
նոր ուղեկից լինին որ խոյս չտայ, բայց երբ ամէն կողմէ, «Ամօթ է,
ամօթ է» գոչեցին, իր դիտաւորութիւնը փոխեց :

Լօքսլէյ շուտ մ'ետ դարձաւ՝ վեց ոտք երկայն ուռիի ճիւղ մը
քերելով, որ լիովին շիտակ և մարդու բթամատի հաստութեամբ էր :
յետոյ սկսաւ զայն քերել սլաղ արիւնով, և նոյն միջոցին կ'ըսէր թէ
որսորդի մը՝ արդէն դրուած մեծ վահանի մը վրայ նշան առնուլ ա-
ռաջարկել՝ մեծ նուաստութիւն կ'համարուէր : — Իմ մասիս — կ'ըսէր
նա — և հայրենի երկրիս մէջ, մարդիկ նոյնպէս կրնան նշան դնել
Արթիւր թագաւորին սեղանն՝ որուն բոլորը վաթսուն ասպետ կ'նստե-
ին, եօթ տարեկան տղայ մը կրնայ սա վարի վահանն անսայր սլաքով
հարնել, բայց — յարեց նա, մրցարանին միւս ծայրն երթալով ծանրա-
քայլ և ճիւղը շիտակ գետինը մխելով — այն որ հարիւր կանգուն հե-
ռուէն այս ճիւղը կարող է զարնել թագաւորի մը, նոյն իսկ Տիշարտ
կորովի թագաւորին առջև իսկ՝ աղեղ և կապարձ կրելու արժանի ա-
ղեղնաւոր պիտի անուանեմ :

— Իմ հաւս Հէստի'նկսի ճակատամարտին նետ նետած ունի — ըստ
 աս Հիւսէրդ — բայց երբէք իր կենաց մէջ այսպիսի նպատակի մը
 նշան առած չէ, և ես ալ նշան չպիտի առնում: Եթէ այս շինականը
 կարող լինի ճեղքել այս դաւազանը, պիտի տամ անոր այս կամարը,
 կամ լաւ ևս իր բաճկոնակին մէջ եղած սատանային անձնատուր կ'լի-
 նիմ, բայց չէ թէ մարդկային հնարագիտութեան, մարդս ձեռքէն
 եկածը միայն կրնայ ընել, և չեմ ուզեր նետ քաշել երբ ստոյգ եմ որ
 նպատակիս չպիտի դպիմ: Այս դրեթէ անտեսանելի սպիտակ ոստին
 նշան առնուլ այնքան դժուարին է, որչափ է՝ մեր երէցին զմե լինն
 սայրին, յարդի մը շղին, կամ արեւուն մէկ նշոյլին նշան առնուլը:

— Աստ շուն — ըսաւ ճօհն իշխանը:

— Քաշէ ուրեմն, Լօքսլէյ. բայց եթէ այս նպատակին զարնես, պիտի
 ըսեմ որ դուն ես առաջին մարդն որ այսպիսի բան մ'ըրիր: Ինչ
 և է, չեմ ուզեր որ դու խրոխտաս այդպէս արիութեանդ վրայ սար-
 ծենալով:

— Ձեռքէս եկածը պիտի ընեմ, ինչպէս կ'ըսէ Հիւսէրդ — պա-
 տասխանեց Լօքսլէյ. այս միայն կարող է ընել մարդ մը:

Այս ըսելով նորէն աղեղը լարեց, բայց այս անգամ ուշի ուշով իր
 զէնքը քննեց, նոր լար մ'առաւ, վասն զի առաջինն երկու վտաւա-
 նէն քիչ մը թուլցած լինելով իրեն բաւական կլոր չէր երևէր: Յե-
 տոյ մտադրութեամբ նշանն առաւ, և բոլոր բազմութիւնն անշշունչ
 լռութեամբ այս գործողութեան ելից կ'սպասէր: Աղեղնաւորն իր վը-
 րայ ամենուն ունեցած կարծիքն արդարացուց, իր նետը դնաց նշան
 առած ուռիի ոստը ճեղքեց: Արոտալիր կայթիւն մը լսելի եղաւ խ-
 կոյն, և նոյն ինք ճօհն իշխանը՝ Լօքսլէյի ճարտարութեան վրայ
 զմայլելով մտցաւ սրահ մ'անոր դէմ ունեցած ատելութիւնը:

— Այս քսան արծաթ դրամներն և շեփորը զոր իրաւամբ շահե-
 ցար, քուկդ են — ըսաւ թաղաւորը — նոյն դրամը յիսուն պիտի ը-
 նեմ եթէ յանձն առնուս մեր ծառայութեան մտնել և մեր զօրական-
 ներու նշանազգեստը հանելով մեր քովը մնաս: Ասան զի երբէք զօ-
 րեղադոյն ձեռք մ'այդպէս աղեղ չէ լարած, երբէք անվրէպ ակն-
 արկ մ'այդպէս նետ մը չէ ուղղած:

— Ներէ ինձ, աղնիւ իշխան — ըսաւ Լօքսլէյ — բայց ուխտ ը-
 րեր եմ որ, եթէ երբէք զինւոր դրուիմ, ձեր սլայազատ եղբօրը, Տի-
 չարա թաղաւորին դրուիմ: Այս քսան արծաթ դրամները Հիւսէր-
 դին կ'բաշխեմ, որ այսօր այնպէս արիարար աղեղ լարեց որչափ ից

Հաւր Հէստինկսի ճակատամարտին մէջ : Եթէ համեստութենէ այժ
փորձը չմերժէր, ինձի պէս այն փայտը պիտի ճեղքէր :

Հիւպէրդ դլուխն օրեց օտարականին տրիտուրն ընդունելով աւա-
մայ, և Լօքսլէյ ուրիշ դիտողութիւններ չլսելու համար՝ ամբոխին
մէջ մտաւ կամացուկ մը և քիչ ատենէն աներևոյթ եղաւ :

Յաղթող աղեղնաւորը թերևս այնչափ շուտով ճօհն իշխանին ու-
շադրութենէ դիւրաւ չպիտի խուսէր, եթէ նոյն պահուն իշխանին
միտքն աւելի կարևոր և ստիպողական հողերով պաշարուած չլինէր :
Իր սենեկապետը կանչեց՝ մրցարանը պարսկելու հրաման տալով, և
պատուիրեց անոր որ անմիջապէս ճանբայ ելնէ դէպ ՚ի Էշպի և Իսա-
հակ հրէայն գտնէ :

— Ըսէ այն շունին որ արևը մարը մտնելէն առաջ՝ ինձի չորս հա-
րիւր ոսկի դրկէ : Արդէն աւանդը դիտէ, բայց սա մատնին ցոյց տուր
անոր իբրև պարմանեալ նշան մը : Գումարին մնացորդն ասկէ վեց օր
եաքը պիտի վճարուի Եօրք քաղաքն : Եթէ զանց ընէ այս հրամանս,
այն անհաւատին դլուխը պիտի առնում : Նայէ որ այս թլփատեալ գե-
րին ճանբէն չանցնես, որ մեր մէջ իր կողոպտած զարդերը քիչ մ'ա-
ռաջ կ'պարզէր :

Այս ըսելով՝ իշխանը ձի հեծաւ և Էշպի դարձաւ :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ

Երբ հին ասպետներ՝ շքեղ, փառաւոր
Պճնեալ պարզէին հանդէս ահաւոր
Դիւցային խաղուց՝ պերճութիւն անհարթ,
Բեկաւոր պետեր, աիկնայք երկնազարդ՝
Սրնդաց, ձայնին՝ դային ՚ի գումար
Մէջ մի սրահի՝ պերճ, բարձրակամար :
ՎԱՐԻԸՆ

Ճօհն իշխանն իր մեծ խնջոյքը տուաւ Էշպիի գղեկին մէջ : Այս չէ
այն շէնքն՝ որուն փառաւոր աւերակները դեռ ևս ուղեորին ուշը կը
գրաւեն, և որ վերջին ժամանակներն՝ արքունի սենեկապետ՝ լօրտ
Հէստինկսի ձեռօք կանգնեցաւ, այն անձին՝ որ Գ. Տիշարտի բռնու-
թեան զոհ ընկաւ, և աւելի ծանօթ է նա Շէքսպիրի իբր գիւցազնե-

րէն մին, քան թէ իր սլաւութեան համբաւէն: Այն ատեն Եշպի
 քաղաքն ու դղեակն Խինչըսդրի կոմս՝ տը Քուինսի Ռօժէրի կալուածքն
 էր, և այս կոմսը մեր սլաւութեան ժամանակ՝ Պալէստին կ'զտնուէր:
 Նոյն պահուն՝ Ճօհն իշխանն անոր դղեակն ու կալուածքն ըստ հա-
 ճոյս կ'զործածէր, և իր հիւրասիրութեամբն և սերճութեամբը ժո-
 ղովրդեան աչքը շլացնելու տրամադիր լինելով՝ հրաման տուեր էր
 որ մեծ սլատրաստութիւններ տեսնեն, որպէս զի խնջոյքն ըստ կարի
 շքեղ կերպով կատարուի:

Իշխանին տնտեսներն որ՝ այս և ուրիշ պարագաներու մէջ՝ արքա-
 յական իշխանութիւն մը կ'վարէին՝ իրենց վեհապետին սեղանին հա-
 մար ինչ քան որ յարմար գտան առին ժողվեցին: Շատ մարդիկ հրա-
 ւիրուեր էին խնջոյքին, և որովհետև նոյն միջոցին Ճօհն իշխանը ժո-
 ղովրդեան սէրը դրաւելու պէտքը կ'զգար, Սաքսօն և Գանեցի ազնիւ
 ընտանիքներ, նոյնպէս շրջակայ Նօրման աղնուականներ հրաւիրել
 տուեր էր: Որչափ որ Անկլօ-Սաքսօն ժողովուրդը սովորական սլարա-
 գաներու մէջ միայն նախատինք և նուաստութիւն կ'կրէին, սակայն ի-
 րենց բազմութեան պատճառաւ ահարկու սխտի դառնային ՚ի հարկէ
 քաղաքային յուզմանց մէջ որ՝ ըստ երևոյթին՝ կ'մօտենային, և քաղա-
 քականութեան կարևոր մէկ հարկ մ'էր անոնց պարագլուխներուն հա-
 մակրութիւնն ասպատակել:

Հետևապէս՝ Ճօհն իշխանին դիտաւորութիւնն էր, և այս դիտաւո-
 րութիւնը բաւական ատեն պահեց, անսովոր հիւրերու հետ այնպի-
 սի մարդավարութեամբ վարուիլ որուն օրինակը ստէպ չէին տեսներ:
 Թէև ոչ ոք իշխանին չափ անխիղճ կերպով իր յատուկ սովորութիւններն
 և զգացումներն իր շահերուն չէր զոհեր, սակայն իր կոյր բաղզն այն-
 պէս կ'բերէր որ թեթևամտութիւնն և ստահակութիւնն անդադար ե-
 րևան գալով՝ իր նախորդ կեղծաւորութեամբ շահածը լիովին կ'ջնջէր:

Եր այս թեթև բնաւորութեան նշանաւոր մէկ օրինակը ցոյց տուաւ,
 երբ իր հօրն՝ Բ. Հէնրիի կողմէն Երլանտա գնաց՝ որպէս զի Անկլիոյ
 թագին այս նոր և կարևոր երկրին բնիկներուն միտքն ու սիրտը շա-
 հի: Այս սլարաղայիս մէջ՝ իրլանտացի ցեղապետներ իրար կ'անցնէին
 որ նորասի իշխանին իրենց հաւատարմութեան և խաղաղութեան
 նուէրը մատուցանեն, բայց փոխանակ անոնց շնորհաւորութիւնները
 մարդավարութեամբ ընդունելու, Ճօհն իշխանն և իր ժպիրհ սպասա-
 ւորները չկրցան համբերել և իրլանտացի ցեղապետներու երկայն մօրու-
 քը քաշեցին, այսպիսի վարմունք մը, ինչպէս որ յուսալի էր, սաստիկ

գրգռեց այն նախատեալ աւաղանին , և Անկլիոյ տիրապետութեան յորլանտա՝ աղէտաբեր հետեանքներ ունեցաւ : Պէտք է որ ընթերցողը ճօճն իշխանին այս այլանդակ բնաւորութիւնը չմոռնայ որպէս զի նոյն իրկունը բռնելիք ընթացքը լաւ ըմբռնէ :

Հասուն խորհրդածութեամբ ըրած որոշման համեմատ՝ ճօճն իշխանը խիստ քաղաքավար կերպով ընդունեց Սէտրիկն և Աթէլստէյնն , և իրցաւ յայտնեց անքէն՝ երբ Սէտրիկ իմացուց թէ օրիորդ Տովէնա՝ իր անհանգստութեան պատճառաւ՝ չկրցաւ նորին վսեմութեան շնորհալի հրաւերին դալու : Սէտրիկ և Աթէլստէյն հինօրեայ սաքսօնեան հազուստ հաղեր էին . հազուստ մ'որ թէև տձև չէր , և հանդիսին առթիւ մեծագին կերպասէ շինուեր էր , սակայն տեսքի և կտրուածի կողմէն այնքան տարբեր էր միւս կոչնականներու զգեստէն որ ճօճն իշխանը՝ Աօլտմարի առջև իսկ շախաւորութեան մեծ օրինակ մ'ընծայած եղաւ իր ծիծաղը բռնելուն 'ի տես այն հազուստին որ նոյն օրուան տարազին (fashion) մօտ ծիծաղելի էր : Սակայն՝ լուրջ դատողութեան առջև՝ այն ժամանակի Սաքսօններու կարճափակ պարեգօան և երկար վերարկուն աւելի շնորհալարդ և հեշտ էին քան նօրմաններու հանդերձն , որոց դրասն այնքան լայն կրկնոց մ'էր որ սայլօրդի մը քաղէնին կ'նմանէր . իսկ կրկնոցը դարձեալ նեղ վերարկուով մը ծածկուած էր , անձրևէ կամ հովէ չէր կրնար պահպանել կրողն , և միակ նպատակ ունէր , դերձակին հնարագիտութեամբ անոր վրայ դնուած մուշտակ , բանուածք և դոհարներ ցոյց տալ : Շարլմանյը կայսրն՝ որուն օրովն առաջին անգամ այս հազուստները մտտ առին , կ'երևի թէ քաջ զգաց անոնց անպատեհութիւններն : Աւտի կ'ըսէր . « Յանուն Աստուծոյ , ի՞նչ բանի կ'ծառայեն այս կրճատ զգեստներն : Անկողնի մէջ մեղ չեն ծածկեր , ձիուն վրայ մեղ հովէ և անձրևէ չեն պահպաներ , իսկ երբ նստինք՝ մեր սրունքը խոնաւութենէ և ցրտէ չեն պատսպարեր :

Սակայն՝ այս կայսերական քննադատութեան հակառակ՝ կարճ վերարկուները մինչև մեր խօսած ժամանակ յարդ ունէին , մանաւանդ Անժուի տան իշխաններու մէջ : Հետեապէս ճօճն իշխանին դրանիկներն առ հասարակ նոյն հանդերձը կ'գործածէին , և երկար վերարկուն՝ որ Սաքսօններուն դերազանց հազուստն էր՝ աւելի ևս ծաղր կ'ընէին :

Առչնականները նստեր էին սեղանի մը բոլորն որ ընտիր կերակուրներու բեռին ներքև կ'ճնշուէր : Շատ մը խոհակերներ՝ որ իշխանին ուղևորութեան ժամանակ՝ անոր կ'հետևէին , իրենց բոլոր զխառութիւնը

Թափեր էին՝ որպէս զի սովորական համադամներուն տեսակը շատցը-
 նեն, և յաջողէր էին՝ դրեթէ մեր արդի հմուտ խոհարարներուն պէս,
 անոնց բնական երեւոյթը լիովին կերպարանափոխ ընելու: Առ անին
 կերակուրներէ զատ՝ օտար երկիրներէ եկած ուտելիքներ ևս կային, և
 շատ մ'ընտիր պլակինդ, նոյնպէս համեղ բոկեղներ և բլիթներ՝ որ մի-
 նակ ազատանուոյն սեղանին վրայ կ'տեսնուէին: Բնիկ և օտար պա-
 տուական զինիներ այն շքեղ խնջոյքը կ'պսակէին:

Սակայն՝ թէև հեշտասէր՝ նօրման աւաղանին սովորաբար անժուժ-
 կալ մարդիկ չէին: Սեղանի համադամները վայելելու ատեն՝ փափուկ
 բաներ կ'փնտուէին, ըստ կարի զեղխու թենէ կ'խորչէին, և սովոր էին
 նկուն սաքսօններու զինեմոլութիւնն ու որկրամոլութիւնն անդոսնել,
 իբրև նոյն ստորին ազդին յատուկ մոլութիւններ: Արդարև ճօհն իշ-
 խանն և անոնք որ աչքը մտնել կ'ուզէին թերութիւններն օրինակելով
 կեր ու խում կ'օիրէին, և արդէն յայտնի է որ այս իշխանին մահուան
 պատճառը դեղձի ու նոր դարեջրի անմարսութիւնն եղաւ: Բայց իր
 վարմունքը հայրենակիցներու մօտ բացառութիւն մ'էր:

Նօրման ասպետներն ու ազատանին նենդամիտ ծանրութեամբ մը՝
 զոր միայն մասնաւոր նշմայրներ ընելով իրարու կ'ընդմիջէին՝ Աթէլս-
 տէյնի և Սէտրիկի կոշտ ընթացքը կ'դիտէին խնջոյքի ատեն, որուն
 բնաւ վարժ չէին: Եւ այսպէս մինչդեռ անոնց կերպերը հեզութեան
 նիւթ էին, անկիրթ սաքսօններն ընկերութեան բարեկարգութեան հա-
 մար հաստատուած շատ մը բուն կանոններու դէմ վարուեցան սղի-
 տաբար: Արդ՝ ամենուն յայտնի է թէ մարդ մ'այնքան յանցաւոր չդա-
 տու իր բարեկրթութեան կամ բարոյական օրինաց դէմ շարժելովն որ-
 չափ արտաքին քաղաքավարութեան մանր մէկ ձևն անդխտելովն: Սյս-
 պէս Սէտրիկ՝ որ իր ձեռները լաթով մը կ'սրբէր, փոխանակ օդին մէջ
 զանոնք տատանելու որ խոնաւութիւնը ցածքի, սուրի ծաղր ու ծանակ
 եղաւ քան իր ընկերն Աթէլստէյն՝ երբ ինքը միայն կ'լլեց ահադին
 պլակինդ մ'որ օտարոտի դողորիկ անուշներով շինուած էր և այն ժա-
 մանակ karum-pie (պղակունդ) կ'կոչուէր: Բայց երբ աւելի հասուն
 քննութեամբ տեսան թէ Քօնինկսպրիկի ցեղապետը (կամ Ֆրէնքլին,
 ինչպէս որ նօրմանները կ'անուանէին) բնաւ կ'լլած բանին դադարաբար
 չունէր, և կարծեր էր թէ պղակունդին մէջիները լոկ արտուաներ և
 աղանիներ էին, մինչդեռ իրօք թղկերուկներ և սոխակներ էին, իր
 սղխտութեան համար ծաղրելի դարձաւ, թէև աւելի իրաւացի կ'ը-
 շէր եթէ որկրամոլութեանը համար նշուակ դառնար:

արտաքին

Ա երջասպէս երկար հացկերոյթը լմնցաւ , և մինչդեռ բաժակն ան-
 արդել սեղանին բոլորը կ'դառնար , հիւրերը կ'խօսէին նախորդ նիզա-
 կախադին շահատակներուն վրայ , անձանօթ աղեղնաւոր յաղթողին
 վրայ , Սև ասպետին վրայ , որ անշահախնդրութենէ շահած պատիւէն
 հրաժարեր էր , և արիասիրտ Իվանօէի վրայ , որ այնչափ սուղ գներ
 էր օրուան մրցանակն : Այս ամէն խօսակցութեան նիւթերուն վրայ
 ամէն մարդ զինուորական ազատութեամբ իր կարծիքը կ'յայտնէր , և
 կատակն ու ծիծաղը սրահին ամէն կողմը կ'շրջէին : Ճօճն իշխանին
 ճակատը միայն ամպոտ էր այս վիճաբանութեան ժամանակ , կարծես
 թէ ծանր հող մ'իր միտքը կ'յուզէր , և երբ գրանիկներն իր ուշը կը
 գրգռէին՝ այն ատեն միայն իր բոլորտիքն անցած դարձածին մտադրու-
 թիւն կ'ընէր : Այն ժամանակ յանկարծ ոտք կ'ենէր , իր զուարթու-
 թիւնը գրգռելու համար բաժակ մը զինի կ'ըմպէր և անպատեհ կամ
 օտարոտի հարցում մ'ընելով խօսակցութեան կ'խառնուէր :

— Խմենք այս բաժակն — ըսաւ նա — Ալլֆրիտ Իվանօէի կենաց ,
 մեծ գուպարին շահատակը , վշտանալով որ իր վէրքին պատճառաւ
 մեզ սեղանակից չդաճուիր : Թող ամէն մարդ իր բաժակը ընու , մանա-
 ւանդ Ռօթրվուտի Սէտրիկն , այն յուսադիր որդւոյն արժանի հայրը :

— Աչ , տէր իմ — պատասխանեց Սէտրիկ ոտք ելնելով և իր անձա-
 շակ բաժակը սեղանին վրայ դնելով — Իչ , չեմ կարող որդի անուանել
 անհնազանդ որդի մ'որ իմ հրամաններս կ'անարդէ և միանդամայն իր
 հարց բարոյքն ու սովորոյթը կ'թողու :

— Անհնարին բան է — գոչեց Ճօճն իշխանն զարմանք կեղծելով
 — որ այնպիսի արի ասպետ մ'անարժան և անսաստ որդի մը լինի :

— Եւ սակայն , տէր իմ — պատասխան տուաւ Սէտրիկ — Ալլ-
 ֆրիտի համար ըսածս ճիշտ է : Իր հօրենական տունը թողուց քու եղ-
 բօրդ արքունեաց զուարթ ազատանիին միանալու , և այն տեղ ուսաւ
 այն ձիավարութեան խաղերն որոց դու մեծ արժէք կ'տաս : Իմ փա-
 փաքիս և հրամանիս հակառակ ձեզեց դնաց , և Ալլֆրէտ թաղաւորին
 օրովն այսպիսի ընթացք մ'անհնազանդութիւն , և մանաւանդ խստի-
 պատժելի յանցանք կ'համարուէր :

— Ափսոս — պատասխանեց Ճօճն իշխանը՝ սուտ համակրութեան
 հառաչով մը — քանի որ որդիդ իմ ասպերջանիկ եղբօրս մէկ հետևորդն
 եղաւ , աւելորդ է հարցնել թէ ո՞ր և որմէ՞ ուսաւ որդիական անհնա-
 զանդութեան դասը :

|| Այսպէս կ'խօսէր Ճօճն իշխանը՝ մոռնալով մտադիւր , որ Հէնրի Բ.՝

✓

✓

Մտրւ

ին բոլոր զաւակներէն , թէ և ամէնքն անսպարտ չէին , ինքն ամենէն աւելի իր հօրն առջև նշանաւոր եղաւ ապստամբութեան և ապերախտութեան կողմէ :

— Ա՛րեւի ինձ — ըսաւ նա պահ մը վարանելէն ետեւ — որ եղբայրս միտք ունէր Նվանօէի հարուստ վիճակն իր մտերմին ընծայել :

— Իրօք ընծայեց զայն — պատասխան տուաւ Սէտրիկ — և այս ալ մեր դժտութեան մէկ մեծ գրդիուն եղաւ , քանի որ խոնարհեցաւ իբր աւատական ստրուկ իշխան ընդունիլ այն երկիրներն որոց ազատ և օրինաւոր տէրերն էին իր նախնիքը :

— Աւրեմն լիովին հաւանութիւն պիտի տաս , բարի Սէտրիկ — ըսաւ Ճօհն իշխանն — եթէ սոյն երկիրն այնպիսի անձի մը տամ որուն արժանիքը չպիտի նուազի բրիտանական թագէն հող ստանալով : Բէ՛ւ ժինալտ տը Ֆրօն-տը-Պէօ — յարեց նա դէպ ՚ի պարոնին դառնալով — յուսամ որ Նվանօէի պարոնութիւնը այնպէս լաւ պիտի պահես , որ Ալիֆրիտ իր հօրը տհաճութիւն չպիտի պատճառէ վերստին նոյն աւատական հողը կոխելով :

— Ս. Անտոնինոս վկայ — պատասխանեց արեակէ զճակտով հակայն — որ Չեր վսեմութիւնը թող զիս սաքսօնի մը տեղ դնէ , եթէ երբէք այս Սէտրիկը կամ Ալիֆրիտ , կամ Անկլիոյ լաւագոյն արխնը կրող մարդ մ'ելնէ ձեր շնորհած հողային պարզէն իցնէ կորզէ :

— Ա՛վ որ քեզ սաքսօն անուանէ , պարոն — պատասխանեց Սէտրիկ՝ դժարելով այս ոճէն որով ստէպ նօրմաններն իրենց սովորական քամահանքը կ'յայտնէին անկլիացոց — այնպիսի մեծ պատիւ մ'ըրած պիտի լինի քեզի որուն անարժան ես :

Ֆրօն-տը-Պէօ պիտի պատասխանէր , բայց Ճօհն իշխանն իր թեթեամտութեամբն ու ժպրհութեամբն անոր խօսքը կանխեց և ըսաւ .

— Իրաւի , լորտեր , ազնիւ Սէտրիկ ճշմարիտը կ'խօսի և իր ցեղը կրնայ պարծիլ որ առաջնութիւնն ունի մերինին վրայ թէ տոհմային երկայնութեան և թէ վերարկուին երկայնութեան կողմէ :

— Արդարեւ պատերազմի դաշտին մէջ մեր առջևէն կերթան , ինչպէս եղծեամները կ'վաղեն շուներուն առջևէն — ըսաւ Մարվուաղէն :

— Եւ իրաւունք ունին մեզնէ առաջ քալելու — ըսաւ Էյմեր վահահայրը — մի մոռնաք իրենց կերպերուն վայելչութիւնն ու դերազանց ազնուութիւնը :

— Մանաւանդ իրենց նշանաւոր ժուժկալութիւնն ու չափասիրութիւնն — ըսաւ Պրէօի մոռնալով սաքսօն օրիորդի մը հետ նշանուելու խորհուրդը :

Թաճարէն՝ որ տակաւին իր պարտութեան բոլոր պէտքը կ'քաշէ՝ յաղթողին դավեստներն երդել, սակայն դարձեալ նօրման մը պիտի անուանեմ, զինուց և աստիճանի մէջ առաջինն, իր տոհմին մէջ լաւագոյն և ազնուագոյն մարդն: Եւ այն շրթերն որ պիտի մերժեն անոր բարի համբաւին վկայելու, սուտ և անպատիւ շրթեր պիտի անուանեմ և իմ խօսքս կենացս չափ պիտի պաշտպանեմ: Ուստի այս բաժակը կը պարպեմ 'ի կենդանութիւն Առիւծասիրտ Տիշարտի:

Ճօճն իշխանն՝ որ կ'յուսար սաքսօնին ճառին վերջն իր անունը լսել, սարսուռ մ'զգաց երբ իր անարդեալ եղբօրն անունը յանակնկալս յիշուեցաւ: Մեքենապէս բաժակը շրթերուն տարաւ, ապա խսկոյն վար դրաւ՝ որպէս զի այս անյուսալի առաջարկութեան մասին կոչնականներու բռնելիք ընթացքը դիտէ, և իրօք շատեր այս առաջարկութեան թէ հաւանիլն և թէ դիմադրելը միօրինակ վտանգաւոր սեպեցին: Սակայն ոմանք, հին և փորձառու պալատականներ, գրեթէ Ճօճն իշխանին օրինակին հետեւեցան՝ նախ բաժակն իրենց բերնին մօտեցնելով և ապա սեղանին վրայ դնելով: Այլին նաև այնպիսիներ՝ որ աւելի վեհանձն զգացումէ շարժեալ՝ գոչեցին. — Ընդ երկար կեցցէ Տիշարտ թագաւորն, և երանի թէ շուտով մեզի վերադառնայ: Իսկ մէկ քանի հիւրեր ալ, որոց մէջ Ֆրօն-տը-Պէօ և Տաճարականը կ'դանուէին՝ տխուր արհամարհանօք իրենց առջևը դրին բաժակները: Բայց ոչ ոք կրցաւ քաղէ 'ի բայ մերժել իշխող թագաւորին կենդանութեան համար առաջարկեալ բաժակը:

Սէտրիկ մէկ վայրկենի չափ իր յաղթութիւնը վայելելէն ետև՝ իր ընկերին ըսաւ. «Ելիր, ազնիւ Աթէլտէյն, այս տեղ բաւականատեն մնացինք, վասն զի Ճօճն իշխանին մարդասէր հիւրընկալութեան ճաշակն առինք: Անոնք որ մեր սաքսօնեան կոշտ սովորութիւններն աւելի լաւ իմանալ կ'փափաքին, պէտք է որ դան մեր հարց տունը փնտռեն մեզ, վասն զի բաւական արբունի խնջոյքներ, բաւական նօրմանեան մարդավարութիւն տեսանք:

Այս ըսելով ոտք ելաւ Սէտրիկ և խնջոյքին սրահը թողուց Աթէլտէյնի և ուրիշ բազմաթիւ հիւրերու ընկերակցութեամբ, որ սաքսօն ցեղէն լինելով՝ Ճօճն իշխանին և պալատականներուն երդիծական խօսքերէն ինքզինքնին անարդեալ կ'սեպէին:

— Ս. Թումասի ոսկերաց վրայ կ'երդնում — ըսաւ Ճօճն իշխանն՝ այն միջոցին որ անոնք կ'քաշուէին — այս նօրման դեղջուկներն այսօրուան բոլոր առաւելութիւնները վայելեցին և յաղթական կ'դառնան:

— Conclamatum est, poculatum est — ըսաւ Էյմէր վանաս
հայրը — խմեցինք և պուացինք, ժամ է գինիի ամանները մէկդի թո-
ղուլ :

— Այս դիշեր կրօնաւորը գեղանի մեղաւոր մը խոստովանել տալ
կուզէ, և ահա այս պատճառաւ մեկնելու կ'շտապի — ըսաւ տը Պրէ-
սի :

— Ա'սխալիս, ասպետ — պատասխանեց վանականը — բայց պէտք
է որ քանի մը մղոն ճամբայ քալեմ այս իրկուն դէպ 'ի բնակարանս :

— Մեղնէ կ'բաժնուին — ըսաւ Ճօհն իշխանը կամացուկ մը Աօլտ-
մարին — իրենց երկիւղը դէպքերուն գուշակն է, և այս վատասիրտ
վանահայրն ամենէն առաջ զիս կ'թողու :

— Մի վախնար, տէր իմ — ըսաւ Աօլտմար — այնպիսի պատ-
ճառներ պիտի սլարդեմ անոր առջև որ պիտի ստիպուի մեզի միանալու
երբ Եօրք քաղաքը գումարուինք : Մեծաւոր — ըսաւ վանականին —
քեզ առանձին խօսիլ կ'ուզեմ ձիդ հեծնելէն առաջ :

Միւս կոչնականները շուտ մը ցրուեցան, և մինակ Ճօհն իշխանին և
հետեւորդներուն յարող մարդիկ մնային :

— Ահա այս է քու խորհրդիդ արդիւնքն — ըսաւ Ճօհն իշխանը՝
զայրալիբ ակնարկ մ'ուղղելով Աօլտմարին — արբշիռ սաքսօն գեղ-
ջուկ մը զիս կ'նախատէ սեղանիս վրայ, և իմ եղբօրս անուան իսկ իմ
սուտ բարեկամներս զիս երեսի վրայ կ'թողուն որպէս թէ բորոտ եմ :

— Համբերէ, աէր իմ — պատասխանեց խորհրդականը — կարող
եմ ամբաստանութիւնդ քեզ դարձնել և քու դժպճի թեթեամտու-
թիւնդ պարսաւել որ իմ խորհուրդս 'ի դերև հանեց և քու լաւազոյն
դատողութիւնդ վրիպեցուց : Բայց իրար մեղադրելու ատեն չէ . Պրէ-
սի և ես պիտի երթանք իսկոյն այն անհաստատ վատերը գտնելու և
պիտի համոզենք որ չեն կարող այսուհետև ետ քաշուիլ քանի որ այն-
քան յառաջացած են :

— Անօգուտ բան է — ըսաւ Ճօհն իշխանը սենեկին մէջ քայլամու-
լոր պտրտելով և այնպիսի յուզմամբ խօսելով որուն խմած գինին ան-
մասն չէր — անօգուտ բան է . պատին վրայ դիւր տեսան, առիւծին
թաթն աւաղին վրայ տեսան, լսեցին անոր շտապիւնն որ անտառը կը
գլրդէր, ոչ ինչ չէ կարող անոնց արիութիւնը դրդուել :

— Երանի թէ — ըսաւ Աօլտմար Պրէսիին — սր իր արիութիւնը
նախ ինքը դրդուէր : Եր եղբօրն անունն իսկ իրեն սարսուռ կ'ազդէ :
Իշխանի մը խորհրդականները դժբաղդ են, երբ թէ 'ի բարին և թէ 'ի
չար հաստատամտութենէ և յարատեւութենէ զուրկ է նա : 21

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ե

Իւ սակայն — հա՛, հա՛, հա՛ — նա կ'մտածէ
 թէ եմ իր կամաց գործին և սպասաւոր :
 Լա՛ւ, թող պղպէս լինի. շինթութեան այս բաւղէն :
 Որ իր դաւերուն և վատ բռնութեան է արդիւնք :
 Բարձրագոյն վիճակի ես հասնելու տի ճգնիմ :
 Եւ ո՛վ ըսէ պիտի որ անիրաւ եմ :

ՊԱՋԻԼ, Ողբերգութիւն ԳԸ

Երբէք մամուկ մ'այնքան աշխատ չէ եղած իր պատառուն ուտայնի
 թեւերը հիւսելու, որչափ աշխատ եղաւ Վօլտմար Ֆիցուրս՝ ճօհն իշ-
 խանին դաղտնի կուսակցութեան ցիր ու ցան անդամները միաբանելու և
 ՚ի մի վայր դումարելու : Քիչեր համակրութենէ շարժեալ յարած էին
 անոր, և ոչ ոք անձնական ակնածութենէ : Հետեասկէս հարկ եղաւ որ
 Վօլտմար անոնց աչաց առջև շահու նոր նոր յոյսեր տայ և իրենց արդէն
 վայելած օգուսնները յիշեցնէ : Նորատի և վայրենամիտ անուականին՝
 ապագային մէջ, անպատիժ աղատութեան և անսանձ շուայտութեան
 յոյս տուաւ, փառասիրին՝ իշխանութեան, ընչասիրին՝ անչափ հա-
 րստութեան և լայնածաւալ հողերու տիրապետութեան : Արձիաններ
 ըստ պարագլուխներ ոսկի պարղեններ ընդունեցան, որ իրենց համար ա-
 մենէն համոզակեր փաստն էր, և առանց որոյ միւս միջոցներն ապար-
 դիւն պիտի մնային : Այն ժիր գործակատարին կողմէն խոստումներն
 աւելի առատ տրուեցան քան թէ դրամ, և մէկ խօսքով՝ ոչ ինչ զանց
 չըրաւ երկմիտն ամրասնդելու կամ վհատ մարդը քաջալերելու : Քի-
 շարտ թաղաւորին վերադարձն իբր անհաւանական դէպք մը ներկա-
 յացուց, սակայն երբ կասկածելի ակնարկներէ և անորոշ պատասխան-
 ներէ դիտեց որ այս երկիւղն իր դաւադիրներուն միտքն ևս քան զևս
 կ'յուզէ, բացէ ՚ի բաց խօսեցաւ թաղաւորին վերադարձին վրայ՝ իբրև
 իրական դէպք մը, և յայտնեց թէ այս բանս իրենց քաղաքական հա-
 շիւները չէր կրնար խանդարել :

— Եթէ Քիշարտ թաղաւորը վերադառնայ — ըսաւ Վօլտմար — իր
 ինուրացիկ և չքաւոր խաչակիրները հարստացնելու համար է, ՚ի մնաս
 անոնց որ իր ետեէն չղացին Սուրբ Երկիրը : Ա՛վերադառնայ նա՛ ահ-
 ւելի դատաստան մ'ընելու այն անձերու մասին, որ՝ իր բացակայու-

Թեան ժամանակ՝ երկրին օրինաց կամ թագին արտօնութեանց դէմ ան-
 իրաւութիւն կամ բռնաբարութիւն մ'ըրած են : Ա՛վերադառնայ նա՛
 Տաճարական և Հիւրասէր ասպետներէ վրէժ լուծելու՝ Սուրբ Երկրի
 պատերազմներուն ժամանակ՝ Քրանսայի Ֆիլիպ թագաւորին կողմն անց-
 նելուն համար : Աերջասպէս, կ'վերադառնայ նա՛ իր եղբօր՝ Ճօհն
 իշխանին կուսակից եղողն՝ իբրև ապստամբ՝ պատժելու համար : Միթէ
 անոր զօրութենէ կ'երկնչի՞ք — շարունակեց Ճօհն իշխանին հնարա-
 դէտ մտերիմը : — Քաջ զիտենք որ ուժեղ և արիասիրտ ասպետ մ'է ,
 բայց Արթիւր թագաւորին օրերը չենք ապրիր , երբ ատոյեան մը բա-
 նակի մը գիմագրաւ կ'կենար : Եթէ իրօք Տիշարտ վերադառնայ , ան-
 տարակոյս միայնակ , առանց հետևորդի և բարեկամի կ'դառնայ : Եր-
 քաջարի բանակին ոսկորները Պալէստինի աւազները սպիտակ դործե-
 ցին . իր կողմնակիցներէն փոքրիկ մաս մ'որ տառապաղին ընկան հայ-
 րենի հողն , այն Ալիֆրիտ Իվանօէին պէս , աղքատ և վշտարեկ մար-
 դիկ են : Եւ ի՛նչպէս մէջ կ'բերէք Տիշարտի ծննդեան իրաւունքը —
 յարեց նա՛ այս մասին առարկողներուն կասկածները ջրելու համար :

— Միթէ Տիշարտի անդրանկութեան իրաւունքը , Նօրմանտիայի
 դուքս , Յաղթողին առջինեկ որդի , Ռօսլէրդին իրաւունքէն աւելի
 հաստատուն է : Եւ սակայն Աշխէտն Ալիլիմ և Հէնրի , իր երկրորդ
 և երրորդ եղբարքն , ազգին ձայնով հետզհետէ իրմէ նախադաս հա-
 մարուեցան : Ռօսլէրդ՝ Տիշարտին վերողբեալ ամէն արժէքն ունէր ,
 անվեհեր ասպետ , քաջ պարազու խ մ'էր , վեհանձն առ բարեկամն
 և առ եկեղեցին , և այս ամէն ձրից իբրև պսակ՝ խաչակիր էր և սուրբ
 Պերեղմանին տիրապետ , բայց և այնպէս Պարաիֆի բերդին մէջ իբրև
 թշուառ և կոյր կալանաւոր մը մեռաւ , վասն զի ժողովրդեան կամաց
 դէմ կ'շարժէր , որ անոր իշխանութիւնը կ'մերժէր : Մեր իրաւունքն է
 այնպիսի արքունի տան իշխան մ'ընտրել որ կարող լինի վեհապետա-
 կան իշխանութիւնը լաւ պահել , այսինքն — յարեց նա առջի ըսածն
 ուղղելով — այնպիսի արքայազն մ'որուն ընտրութեամբն անուակա-
 նաց շահերն աւելի ևս զարդանան : Թերևս անձնական ձրից կողմէ՛
 Ճօհն իշխանն իր եղբօր՝ Տիշարտէն ստորին լինի , բայց երբ անգամ
 մը նկատենք որ այս վերջինը վրէժխնդրութեան սուրն 'ի ձեռին Անկ-
 չիա կ'դառնայ , մինչդեռ միւսը վարձք , արտօնութիւն , մասնաւոր
 շնորհներ , հարստութիւն , փառք , պատիւ կ'պարդէ , վարանելու
 պէտք չկայ հասկնալու համար թէ ազնուականներն առ խոհեմութեան
 իր թագաւորը պաշտպանել պարտաւոր են :

Այս և ուրիշ պատճառներ՝ որ ունին գիրներուն յատուկ վիճակին կը յարմարէին՝ ճօճն իշխանին կուսակից ազատանիին վրայ մեծ կշիռ ունեցան : Շատեր հաւանեցան Եօրք դումարուելիք ժողովին ներկայ գտնուելու , որպէս զի պարտ ու պատշաճ սնօրէնութիւններն ընեն ճօճն իշխանը թաղաւոր պսակելու :

Գիշերը տարածամ էր , երբ Աօլտմար՝ թախած ճգանց արդիւնքը տեսաւ թէ և , բայց յողնած դադրած Էշպի դղեակը գնաց տը Պրէսիս դտաւ , որ խնջոյքի հագուստը փոխեր և կանաչ կարճ բաղէն հագեր էր , նոյն գոյն շուխայէ տախատով մը , դլուխը մօրթէ դլխարկ մը դրեր , մէջքը կարճ սուր մը , ուսէն շեփոր մ'անցուցեր , ձեռքն աղեղ մ'առեր և կամարէն սլաքներու կապարճ մը կախեր էր : Եթէ Աօլտմար առանձին սենեկի մը մէջ հանդիպէր այս կերպարանին , առանց ուշադրութեան պիտի անցնէր երթար՝ զանի պահակ դեղջուկ մը սեւ պելով , սակայն զանի ներքին սրահին մէջ գտնուեն՝ աւելի մտադիր դիտեց անոր դէմքն և նօրման ասպետն՝ անկլիացի դեղջուկ գինւորի մը հագուստով ծպտեալ , ճանչեց :

— Ի՞նչ կ'նշանակէ այդ խեղկատակութիւնը , Պրէսի — ըսաւ Աօլտմար՝ փոքր ինչ սրտմտելով : — Միթէ բարեկենդանի օրեր են որ դիմակ դրեր՝ խաղեր կ'ընես , մինչդեռ մեր ճօճն իշխանին բաղդն որոշուելու վրայ է : Ինչո՞ւ համար դու ալ չեկար շմտար այն անսիրտ վատերուն մէջ , որ լոկ Տիշարտ թաղաւորին անունէն գող կ'ելնեն , ինչպէս որ կ'գողան Սարակինայւոյ որդիքը :

— Ես ալ իմ գործովս զբաղեցայ — պատասխան տուաւ Պրէսի հանդարտօրէն — ինչպէս դու ալ քու գործիդ հետ էիր :

— Ե՛ս , իմ գործիս հետ լինիմ — գոչեց Աօլտմար : — Ընդ հակառակն՝ մեր ամենուն տէր՝ ճօճն իշխանին գործին կ'սրարապէի :

— Որպէս թէ այդ ընելով , Աօլտմար — ըսաւ Պրէսի — ուրիշ նպատակ մ'ունենայիր , քան քու անձնական շահուղ հոգն : Արի , մի կեղծեր , Աօլտմար , մենք իրար կ'ճանչենք , փառասիրութիւնն է քու գրողիւդ , զուարճութիւնն է իմս , և մեր փոխադարձ հասակին յարմար են : Դու ևս իմ կարծիքս ունիս ճօճն իշխանին վրայ , այսինքն շատ տկարամիտ է և անվեհեր թաղաւոր մը շիրնար լինիլ , շատ բռնասէր է՝ հետեապէս անզուսպ , շատ ստահակ և ինքնահաւան՝ հետեւապէս ժողովրդասէր լինելու անկարող , և շատ յեղյեղուկ և վեհերոտ՝ հետեապէս որ և է միապետ ընդ երկար մնալու անյարմար : Սակայն դարձեալ այնպիսի իշխան մ'որուն ձեռօք Աօլտմար և Պրէսի կը

յուսան բարձրանալ և իրենց բաղձը շինել, ուստի դու քաղաքագիտութեամբդ կ'օգնես անոր և ես իմ ազատ ընկերներուս տէգերով:

— Հատ յուսատու օգնական մ'ես — ըսաւ Աօլտմար անհամբեր — քանի որ այս ճգնաժամի պահուն յիմարի դեր կ'խաղաս: Ըսէ նա յիմ, այս անձուսի ծարուամովդ ինչ կ'մտադրես ընելու այսպիսի ստիպողական վայրկեան մը:

— Աին մը ձեռք ձգելու — պատասխանեց պաղութեամբ Պրէսի — Բենիամինի ցեղին սովորութեան համեմատ:

— Բենիամինի ցեղն — ըսաւ Աօլտմար: — Միտքդ չեմ իմանար:

— Միթէ երէկ երեկոյ խնջոյքին ներկայ չէի՞ր — ըսաւ Պրէսի — երբ էյմէր վանահայրը վէպ մը պատմեց 'ի պատասխան վիպասանին երդած տաղին: Պատմեց նա թէ ինչպէս, շատ տարիներ առաջ, 'ի Պալէստին՝ սոսկալի վէճ մը ծագեր է Բենիամինի ցեղին և Իսրայէլացւոց ազգին մէջ, թէ ինչպէս ասոնք նոյն ցեղին պրէթէ բոլոր ասպետները ջարդ ու բուրդ ըրեր են, և թէ ինչպէս երդում ըրեր են, մեր Տիրամօր վրայ՝ թէ չպիտի թողուն որ մնացողներն այն ցեղէն տղայ առնուն և կարդուին, և թէ ինչպէս իրենց ուխտին վրայ զղջալով մարդ զրկեր են սրբազան Պապին խորհուրդ հարցնելու համար որ իրենց ուխտէն ազատ մնան, և թէ ինչպէս սուրբ Հօր խորհրդով՝ Բենիամինի ցեղը փառաւոր նիզակախազ դուստրի մ'ատեն ներկայ գտնուող կիները յափշտակեր տարեր են և այսպէս՝ առանց անոնց նշանածին կամ ընտանիքին հաւանութեան, նոյն կանանց ամուսին եղեր են:

— Այդ վէպը մտիկ ըրի — ըսաւ Աօլտմար, թէ և վանահայրն ու դու թուականի և գէպքի այլանդակ փոփոխութիւններ ըրիք:

— Ես քեզի կ'ըսեմ — յարեց Պրէսի — որ միտք ունիմ՝ Բենիամինի ցեղին պէս՝ կին մը ստանալ, և ըսածէս սա կ'իմացուի որ այս հաճութեամբ սաքսօն եղներու երամակին վրայ պիտի յարձակիմ, որ երէկ գիշեր գղեկէն ելան, և սիրագեղ Տովէնան սլիտի յափշտակեմ տանիմ:

— Յիմար ես, Պրէսի — հարցուց Աօլտմար: — Քաջ միտքդ որ թէ և այն մարդիկ սաքսօն են, բայց հարստութիւն և զօրութիւն ունին, և այնքան աւելի յարդ և պատիւ կ'ընդունին իրենց հայրենակցաց կողմէ որչափ որ այն հարստութիւնն ու մեծութիւնը մինակ սակաւութիւ սաքսօններու բաժինն են:

— Բայց հարկ է որ և ոչ մէկուն բաժինը լինի — ըսաւ Պրէսի — պէտք է աշխարհակալութեան դործը լիովին 'ի կատար հանել:

— Սակայն այս ընտրած ժամանակդ անպատեհ է — ըսաւ Աօլտմար — գալիք տաղնապին համար ժողովրդեան համակրութիւնն անհրաժեշտ է ձեզ, և ճօհն իշխանն՝ իր մտերիմներն անարդողները դատասպարտելու չպիտի մերժէ :

— Թող դատասպարտէ, եթէ բաւական յանդուգն է — ըսաւ Պրէսի — այն ատեն պիտի տեսնէ թէ ինչ տարբերութիւն կայ իմ կորովի տիրաւորներու և աջակցութեան և դէզ մ'անսիրտ սաքսօն գեղջուկներու օգնութեան մէջ : Սակայն միտք չունիմ ինքզինքս անմիջապէս յայտնել : Միթէ անտառային որսորդ մ'այսպիսի անաս կերպարան մը ցոյց տուած է որչափ ես այս հազուստով և շեփորով : Պիտի կարծուի թէ այս բռնաբարութիւնն Եօրքշայրի անտառներու վտարակներն ըրած են : Անենդ լրտեսներ ունիմ որ սաքսօններու շարժումները կ'ընտեն : Այս գիշեր սուրբ Աիդօլի կամ Աիդօլտի վանատունը պիտի պառկին, և միթէ այսպէս չէն անուաներ Պրիօն-ի-Պրէնդ գտնուած սաքսօն գեղջուկ սուրբը : Հետեւեալ օրն որ ճանբայ ելնեն մեզի պիտի մօտենան, և այն ատեն՝ իբրև բաղէներ, իսկոյն անոնց վրայ պիտի յարձակինք : Աերջն իմ յատուկ ձեւերովս պիտի երևիմ, մարդավար ասպետի դեր պիտի խաղամ, պիտի երթամ ազատեմ դժբաղդ և վշտազին օրիորդն իր կոշտ առեանդողներուն ձեռքէն, Քրօն-տը-Պէօի գղեակը կամ Նօրմանտիա, եթէ հարկ լինի, պիտի տանիմ, և իր ծնողաց չպիտի յանձնեմ մինչև որ Մօրիս տը Պրէսի նշանածը կամ կենակիցը չդառնայ :

— Այդ ինչ հիանալի և իմաստուն խորհուրդ մ'է — ըսաւ Աօլտմար — և ինչպէս որ կ'նայիմ, բոլորովին քու մտքի ծնունդդ չէ : Արի, բացէ՛ի բաց խօսէ, տը Պրէսի, այս հնարաղիսութիւնն իմ սորվեցուց քեզ, և իմ պիտի ձեռնտու գանուի գործադրութեան, վասն զի, ինչպէս որ զիտեմ, քու գունդդ հեռու, Եօրք քաղաքը կ'ըտնուի :

— Այս Մարիամ, եթէ զիտնալ կ'փափաքիս — ըսաւ տը Պրէսի — ասա յայտնեմ քեզ որ այս խորհուրդը Պրայն տը Պուա-Աիլպէր տաճարականը նիւթեց, իսկ Բենիամինի որդւոց արկածը զայն ինձ թերադրեց : Պրայն տը Պուա-Աիլպէր՝ իր զօրականներուն հետ վտարակներ պիտի ձևանան, և ինձ պիտի օգնեն յարձակման ժամուն, յետոյ՝ ես հազուստս փոխելով պիտի ներկայիմ և կորովի բազուկովս օրիորդը պիտի ազատեմ :

— Երկին վկայ — գոչեց Աօլտմար — որ այս յատակաղիծը ձեր երկուքին իմաստութեան արժանի է, իսկ քու խոհեմութիւնդ յատկապէս

կ'երևի այն խորհրդին մէջ որով օրիորդը քու արժանընտիր դաճակցիդ ձեռքը պիտի թողուս : Աարծեմ թէ պիտի յաջողիս սաքսօն բարեկամներուդ ձեռքէն օրիորդն առնուլ , բայց վերջն ինչպէս պիտի կարենաս Պուա—Աիլպէրի ճանկէն զանի աղատել , ահա այս բանս ինձի շափազանց կասկածելի կ'երևի : Ասան զի կաքաւը յափշտակելու և իր որսը սնգապէս սլահելու վարժ բազէ մ'է :

— Տաճարական մ'է նա — ըսաւ տը Պրէսի — և հետեապէս չէ կարող իմ նախանձորդս դառնալ սոյն ժառանգուհին կին առնելու , տը Պրէսիի ասպաղայ նշանածին դէմ անսպառիւ բան մ'ընելու մտօք : Յանուն երկնից , եթէ ինքը միայն իր ուխտին ատեանն իսկ լինէր անձամբ , չպիտի ժպրհէր այսպիսի նախատինք մ'ինձ ընելու :

— Արովհետեւ ինչ որ ըսեմ — վրայ բերաւ Աօլտմար — չպիտի կարենամ այդ յիմար խորհուրդդ մտքէդ վանել (վասն զի գիտեմ թէ որչափ բնութեամբ յամառ ես) զոնէ կարելի եղածին չափ քիչ ժամանակ վատնէ , նայէ որ այդ յիմարութիւնդ որչափ դժպհի նոյնչափ տեղողական չլինի :

— Հաւաստի եղիր — պատասխանեց տը Պրէսի — որ քանի մը ժամուան դործ պիտի լինի միայն , իսկոյն Եօրք պիտի դամ հասնիմ , իմ անվեհեր և արի զօրագնդիս գլուխն անցնիմ , և քու քաղաքականութեանդ թելադրած որ և է յանդուզն ձեռնարկ մը պաշտպանելու , զիս պատրաստ պիտի գտնեո : Բայց ընկերներուս ձայնն՝ որ կ'հաւաքուին , և արտաքին բակն՝ երիվարներուն դափրն ու վրնջումը կ'ըսեմ :

Մնաս բարև , իբրև ճշմարիտ ասպետ՝ ահա կ'երթամ գեղեցկութեան թպիտները շահելու :

— Իբրև ճշմարիտ ասպետ — կրկնեց Աօլտմար՝ անոր ետեէն նայելով — լաւադոյն է ըսել , իբրև ճշմարիտ յիմար , կամ իբրև մանուկ մ'որ ամենէն կարևոր և անհրաժեշտ դործը կ'թողու մէկդի , որ իր չորս դին թռթռող ալքանին ասուին բռնէ : Բայց ես այսպիսի գործիներով պիտի աշխատիմ , և որոն օգտին , այնպիսի իշխանի մ'որ թէ անխոհեմ է և թէ լկտի , և թերևս ապաշնորհ տէր մը դառնայ , ինչպէս որ արդէն ցոյց տուաւ որ հետտ որդի և տմարդի եղբայր մ'է : Բայց սա , սա ևս իմ գործածած գործիներէս մին է , և որչափ որ դռնող , եթէ երբէք իր շահերն իմինէս բաժնէ , այս ալ գաղտնիք մ'է զոր քիչ ատենէն պիտի իմանայ :

Քաղաքագիտին մտմտութենէն իշխանին ձայնէն այն միջոցին ընդհատեցան , վասն զի իշխանը ներքին սենեկէ մը կ'պոռար . — Ազնիւդ

Ձօլտմար Ֆիցուրս : — Եւ զգալը ձեռքը՝ մեր ասպաղայ գիւանասպե-
տը՝ (վասն զի խորագէտ նօրմանն այս բարձր պաշտօնին կ'տե՛նչար)
փութաց ասպաղայ վեհասպետին հրամաններն ընդունելու երթալ :

Գ Լ Ո Ի Խ Ժ Զ

Մնչէն, վայրի մի տեղ, մարդու աչքէ հեռու,
Կ'ապրէր մանկութենէն ճգնաւոր ծերունի.
Պարզ լու էր իր խշտին, քարայր՝ իր հեզ հիւղիկ,
Ուտեստը ընկ միրգեր, ըմպելին ակնի ջրիկ.
Մարդերու անհաղորդ՝ հեա Աստուծոյ՝ օր անցնէր,
Միայն գործն էր աղօթք, միայն խինդ գովեստներ :
ԲԱՐՆԷԼ

Ընթերցողը մտքէ հանած չէ անշուշտ որ անծանօթ ասպետի մը
ճիղը նախորդ դուստրին մրցանակն որոշեց : Այս ասպետը՝ կուռին
առջի օրէն ցոյց տուած անհոգ և անտարբեր վարմունքին համար՝ Սև
Գանդաղիոյ անունը ստացաւ հանդիսականաց կողմէ : Ինչպէս յայտնի
է, Սև ասպետը յանկարծ կրկէսէն հեռացաւ երբ յաղթանակը տարին,
և երբ իր արիութեան մրցանակը ստանալու համար ասդին անդին
փնտռեցին, տեսան որ աներևոյթ եղեր էր : Նոյն միջոցին՝ մինչդեռ
հերոսները փողերու ձայնով ասպետը կ'կոչէին, սա դէպ ՚ի հիւսիս կը
դիմէր՝ բանուկ ուղիներէ խորշելով՝ և անտառներու մէջէն ամենէն
կարճ ճանրան բռնելով : Գիշերն անցնելու համար՝ արահետէն հեռու՝
փոքրիկ օթեան մ'իջաւ, իւր սակայն, թափառաշրջիկ դուստնէ մ'ի-
մացաւ դուստրին ելքը :

Հետեւեալ առտու՝ ասպետը կանուխկեկ ուղի ընկաւ՝ երկար ուղեո-
րութիւն մ'ընելու մտօք, ըստ որում իր երթվարին առջի առտու պէտք
եղած հողը տարած վիճելուն՝ պիտի կարենար անդադար իր շուիղը
շարունակել : Սակայն իր յոյսերն ՚ի գերեւ ելան, վասն զի ճանրաներն
արտուղի վիճելով՝ ուշացաւ և երբ մութը կոխեց, ինքզինք Վէսա
Ռայտինկի կողմերը գտաւ ՚ի Եօրքշայր : Նոյն պահուն՝ թէ ձիաւոր և
թէ ձի հանդասի պէտք ունէին, և հետեւապէս չորս կողմը նայեցաւ
որ մօտալուտ գիշերն անցնելու տեղ մը գտնէ :

Ուղեորին եղած վայրը՝ պատասպարան կամ ուտելիք գտնելու անցարձ

Ետար կ'երևէր, և թերևս պիտի ստիպուէր թափառական ասպետներու սովորական ընթացքը բռնելու, որոնք՝ այսպիսի պարագաներու մէջ՝ իրենց ձիերն արածելու թողլով՝ դետինը կ'պառկէին իրենց սիրուհւոյն վրայ խորհելու, իբր ամպհովանի ունենալով միայն՝ կաղնի մը: Քայց կ'երևէր թէ Սև ասպետը կամ մտածելու սիրուհի մը չունէր, կամ ինչպէս պատերազմի՝ նոյնպէս սիրոյ անտարբեր լինելով, սիրատենչ զգացումներով չէր բորբոքէր ըստ բաւականին՝ անոր գեղեցկութեան և անդթութեան վրայ, որպէս զի կարենայ իր յոգնութեան և նօթութեան արդիւնքը մեղմելով՝ անկողնի և ընթրիքի հաստատուն վայելքի տեղ՝ սիրով գոհ լինիլ: Ուստի դժգոհ կ'երևէր, երբ չորս դին նայելով՝ դիտեց որ բոլորտիքը միայն անտառներ կ'դտնուին, որոց մէջ ցանցառներ և քանի մը շաւիղներ կային իրաւ, բայց սոյն շաւիղներն՝ անտառին մէջ արածող բազմաթիւ արջառներ, որսական կենդանիներ, կամ անոնց ետեէն վազող գողորսակներ յօրիներ էին:

Արևն՝ որուն նայելով ուղղեր էր ասպետն իր ընթացքն՝ աջ կողմէն Տէրպիշայրի բլուրներուն ետեւն իջեր էր արդէն, այնպէս որ եթէ Սև ասպետը փորձ փորձէր իր ճանքան շարունակելու՝ թերևս աւելի մոլորեր քան յառաջանար: Ուստի ամենէն բանուկ շաւիղն ընտրելու աշխատելէն ետեւ՝ որպէս զի հովուի մը հիւղը հասնի կամ անտառի պահնորդի մը բնակարանը, սակայն լիովին անարդիւն ելնելով իր փորձերը, ասպետը յարմար դատեց իր ձիուն ուշիմութեան վստահիլ, վասն զի ՚ի փորձ դիտէր՝ ուրիշ պարագաներու մէջ, թէ այս կենդանիներն ինչ հիանալի յատկութիւն ունին իրենց ձիաւորները տալնապալից վտանգներէ ազատելու համար:

Ընտիր երիւլարը՝ սպառազէն ձիաւորի մը ներքեւ՝ երկարատե օրուան մ'ուղևորութենէ յետին ծայր յոգնած՝ այն ինչ թոյլ սանձէն զգաց՝ որ ինքն իր գլխին երթալու արտօնութիւնն ունի, որ կարծես թէ նոր ոգի և ոյժ առաւ, և մինչդեռ առաջ՝ հազիւ ուրեմն և մի միայն հեծումով՝ մտրակին ներքեւ կ'շարժէր, այժմ, որպէս թէ իրեն վրայ եղած վստահութենէն հպարտացած, իր ականջները տնկեց, և ինքնայորդոր՝ աւելի վառվռուն շարժում մ'առաւ: Օրուան մէջ՝ ուղևորին բռնած ընթացքէն թէև կ'շեղէր փոքր ինչ երիւլարինը, բայց որովհետև կենդանին անվրդով կ'շարունակէր այն ուղին, ձիաւորը լիովին ինքզինքն անոր յանձնեց:

Արդիւնքն արդարացուց ասպետին ընթացքը, վասն զի, քիչ մ'ետքը, շաւիղը հետզհետէ աւելի լայնցաւ և աւելի բանուկ երևցաւ, և

փոքրիկ զանգակի մը դռնչիւնն իմացուց ասպետին որ մատուռի մը կամ ճգնարանի մը մօտ կ'գտնուի :

Եւ արդարեւ, նոյն հետայն ասպետը հարթ արօտ մը հասաւ, որուն դիմացի կողմը՝ դար ՚ի վար դաշտի մը վրայէն կ'բարձրանար ժայռ մը՝ որ իր սպիտակ և հողմնահար ճակատը կ'ընծայէր ուղեորին : Քաղեղն՝ որ այս ժայռին քանի մը կողմերը կ'պատէր, իսկ ուրիշ տեղեր ալ մրտենիի թփեր, որոց արմատները ժայռին փապերուն մէջ սնունդ կ'գտնէին, վարի վիհերուն վերևը կ'տատանէին, մարտիկ ասպետին սաղաւարտին փետուրներուն պէս, շնորհ տալով այն բանին որուն երևոյթն իրօք սարսափ կ'ազդէր : Ժայռին դոզն, և իբր թէ անոր յենած՝ կոշտ հիւղ մը կ'տեսնուէր, որ ըստ մեծի մասին մօտակայ անտառին կոճղերէն շինուեր էր և օդէն կ'պատսպարուէր՝ լօռախառն կաւով իր ծեպերը տողորուած լինելուն : Նորատունկ եղենի մը ոստաշատ բունին ծայրը շեղակի փայտ մը կապուած՝ դրան առջև տնկեր էին, իբր անշուք նշան սուրբ խաչի : Աջ կողմէն՝ քիչ մը հեռու՝ ակնավճիտ աղբիւր մը ժայռէն կ'վիթէր դողաւոր քարի մը մէջ, որ աշխատութեամբ դեղջական աւազան մը դարձեր էր : Անկից հոսելով՝ վտակը կարկաչատահ կ'իջնէր իր այն ջրուղին զոր ընդ երկար փորեր էր, և այսպէս կ'թափառէր փոքրիկ դաշտավայրին մէջէն մօտաւոր պուրակին մէջ անհետ լինելու համար :

Այս աղբիւրին մօտ՝ պղտիկ մատուռի մը փլատակները կային, որուն տանիսը մասովին փլեր էր : Այս շէնքն, երբ ամբողջ էր, միայն տասն վեց ոտք երկայն և տասն երկու ոտք լայն էր, և իր տամալին՝ որ համեմատաբար ցած էր, շէնքին չորս անկիւններէն վեր ելնող չորս համակերպոն կամարներու վրայ կ'կենար, մէն մի անկիւն կարճ և ծանր սիւնով մը բռնուած : Երկու կամարներուն կողերը դեռ կ'մնային, թէև տամալին անոնց միջևը քայքայեր էր, բայց միւսներուն վրայ անուեր կ'կենար : Այս հնամի մատուռին դուռը կլոր և ստոր կամարի մը տակ էր, որուն մանուածասրատ զարդերն ու խուրձերը՝ շանաձիկի մը ակուսներուն կ'նմանին, և սաքսօնեան խիտ հին ճարտարասպետութեան մէջ շատ անգամ կ'երևին : Չորս սիւնակի վրայ աշտարակ մը կ'բարձրանար դաւթին վերևն, անկից կախուած էր ժանդահար և օդավար զանգակն՝ որուն մեղմիկ հնչիւնը քիչ մ'առաջ Սև ասպետին ականջը զարկեր էր :

Այս անդորրաւետ տեսարանն՝ որ վերջալուսով կ'փալիլէր, ուղեորին առջև կ'պարզէր հանդարտիկ, և յոյս կ'տար անոր նոյն գիշերն ապահով խշտեակ մը գտնելու, վասն զի անտառարնակ ճգնաւորներու

յատուկ պարտքն էր ուշամնաց կամ մոլորեալ անցորդներուն աստիճանութիւն շնորհել :

Հետեապէս՝ ասպետը մեր նկարագրած բաները մանր քննելու համար ժամանակ չանցուց, այլ ուղևորներու պաշտպան՝ սուրբ Յուլիանոսի փառք տալով՝ իր նժոյգէն վար ցատկեց և մենարանին դուռը զարկաւ իր նիզակին ծայրովն, որպէս զի մենաւորին ուշադրութիւնը գրգռէ և հիւրընկալութիւն խնդրէ :

Բաւական ժամանակ անցնելէն ետեւ՝ ներսէն ձայն մ'ելաւ, և այս պատասխանն իրեն նպատաւոր չէր :

— Ո՛վ որ ես, ճանբազ գնահ — ըսաւ հիւղէն խոր և խռպոտ ձայն մը — և իր երեկոյեան աղօթից ատեն՝ մի վրդովեր Աստուծոյ և սուրբ Տրնսդանի ծառան :

— Արժանի հայր — պատասխանեց ասպետն — այս անտառներուն մէջ մոլորեալ հէք ուղևոր մ'եմ, և քեզի առիթ մը կ'տամ ողորմասիրութեան և հիւրասիրութեան գործ մ'ընելու :

— Բարի եղբայր — պատասխանեց մենարանին բնիկը — Տիրամայրն ու սուրբ Տրնսդան հաճեցան զիս սոյն առաքինութիւններու առարկան քան թէ գործադիրն ընել : Այս տեղ չունիմ ուտելիք՝ որուն շուն մը անդամինձի հետ մասնակից լինելու կամենայ, և փափկասուն երիվար մ'իմ խշտիս պիտի անդոսնէ, ուստի ճանբազ շարունակէ, և թող Աստուած հետդ լինի :

— Բայց ի՞նչպէս կարելի է ինձ — պատասխանեց ասպետն — այս թաւուտին մէջէն ճանբաս գտնել, մինչդեռ մութը կ'կոխէ : Ա՛ղաչեմ քեզ, տէր հայր, քանի որ քրիստոնեայ ես, դուռը բաց և գոնէ ճանբաս ցոյց տուր :

— Եւ ես կ'աղաչեմ քեզ, քրիստոնեայ եղբայր — պատասխանեց ճգնաւորն — որ զիս աւելի չնեղես : Արդէն շիթեցիր միտքս մէկ հայր, երկու ողջոյն և մէկ հասարակ ըսելու ատենս, քանի որ՝ իբրև թշուառ մեղաւոր մը պարտաւոր էի, իմ ուխտիս համեմատ, լուսնին ելնելէն առաջ այս աղօթքս ըսել :

— Ճանբան, ճանբան — աղաղակեց ասպետը — ճանբան ցոյց տուր ինձ, եթէ ուրիշ բան մը կարելի չէ քեզնէ ստանալ :

— Ճանբան — վրայ բերաւ ճգնաւորը — դիւրին է գտնել : Անտառին ուղին մօրատի մը կ'տանի, և անկից հուն մ'որմէ կրնաս անցնիլ, քանի որ անձրևները դադրեր են : Հունէն անցնելէն ետեւ պէտք է հոգ տանիս՝ ձախ դետափէն վեր ելնելու ատեն, ոտքդ լաւ կոխելու,

վասն զի գետափը սեպաձև է, և ուղին՝ որ գետին վրայ կ'նայի՝ մօտ օրերս քանի մը տեղէն քայքայեր է, ինչպէս որ իմացայ, վասն զի ուր ուրեմն կ'հեռանամ իմ մատուռէս: Ուստի այնուհետև կրնաս շիտակ երթալ . . . :

— Քայքայուն ուղի մը, վի՛հ մը, հո՛ւն մը և մօրնա մը — ըսաւ ասպետը՝ ճգնաւորին խօսքն ընդհատելով: — Տէր ճգնաւոր, եթէ դու մօրուք ունեցող և վարդարան համրող ճգնաւորներուն մէջ ամենէն սուրբն անդամ լինէիր, չպիտի յորդորէիր զիս այն ճանքան շարունակել այս գիշեր: Ուստի ահա կ'յայտնեմ քեզ, քեզ որ տեղացւոց ողորմութեամբը կ'ապրիս թէև և ինչպէս կ'կասկածիմ անոր անարժան ես, որ իրաւունք չունիս ուղևորին ապաւէն մը մերժելու, քանի որ նեղութեան մէջ է: Շուտ դուռը բաց, թէ ոչ՝ խաչին վրայ կ'երդնում, որ զայն պիտի կործանեմ և ես բռնի մուտ պիտի դանեմ:

V 704

— Բարեմիտ ուղևոր — պատասխանեց ճգնաւորն — այդչափ մի շտապիր, եթէ իմ պահպանութեանս համար մարմնաւոր զէնք դործածելու ստիպես զիս, բան մը չպիտի շահիս:

Նոյն պահուն՝ ուղևորին քիչ մ'առաջ լսած հաջելու և ոռնալու հեռաւոր ձայները կատաղօրէն սաստկացան, և ասպետը մտածեց որ բռնի դուռը բանալու համար ըրած սպառնալիքէն շուարելով՝ ճգնաւորը շուները կանչեր էր օգնութեան, որ թերևս ներքին օթեկէ մ'ելեր էին, ուր կ'գտնուէր իրենց շնարկն: Ասպետը՝ ճգնաւորին այս պատրաստութիւններէն աւելի բորբոքելով, որ ըստ երևոյթին իր հիւրատեաց խորհուրդն 'ի դործ դնելու պիտի ծառայէին, իր ոտքովն այնքան ուժգին զարկաւ դրան որ գերաններն ու ծխնինները դղրդեցան:

Ճգնաւորն՝ իր դուռը կրկին հարուածէ մը վտանդի մէջ դնել չուզելով, պռուց բարձրաձայն.

— Համբերութիւն, համբերութիւն, բարի ուղևոր, ոյժդ խնայէ, և ահա իսկոյն դուռը պիտի բանամ, թէև կարելի է շատ դո՛հ չլինիս այսպէս վարուելուս վրայ:

Հետևապէս դուռը բացուեցաւ, և ճգնաւորն, ստուար, հաստակազմ մարդ մ'որ անտաշ կտաւէ պարեղօտ և կնդուղ հագեր, մէջքը պրտուէ պարան մը կապեր էր, ասպետին առջև ելաւ: Մէկ ձեռքը ջահ մը և միւսը վարակոտ վիրդ մը բռներ էր, այնքան հաստ և ծանր որ լախտի տեղ կրնար անցնիլ: Երկու մազոտ շուներ, կէս բարակ, կէս դամիւ՛ կազմ ու պատրաստ էին ճանբորդին վրայ յարձակելու դուռը բացուելուն: Բայց երբ ջահը շողաց ասպետին բարձր կատարին և ոս-

կի մտրակներուն վրայ, մինչդեռ գունէն դուրս կանգուն կ'կենար, ճգնաւորն՝ առջի խորհուրդը փոխելով՝ իր օգնականներուն կատողութիւնը զսպեց, և իր վարմունքը գեղջուկ մարդավարութեան մը դարձրնելով՝ ասպետին հրաւէր կարգաց իր հիւղը մտնելու: Յետոյ արևը մարը մտնելէն ետև՝ դուռը բանալու գծկամակութիւնն արդարայնելուղեց, սրտաճառելով թէ շատ մ'աւազակներ և վտարակներ դուրսը կ'թափառին և ոչ միայն մեր Տիրամօր կամ սուրբ Տրնագանի յարգու պատիւ շունին, այլև այն անձերու համար որ իրենց կեանքն անոնց սպասաւորութեան կ'նուիրեն:

— Բարի հայր, քու հղիկիդ աղքատութիւնն — ըսաւ ասպետը՝ չորս դին նայելով՝ և լոկ տերևէ անկողին մը, կաղնիէ անշուք խաչ մը, խորհրդատետր մը, խորտուքորտ սեղան մ'ու երկու աթոռակ, և ուրիշ մէկ քանի հնուտի կարասիներ տեսնելով — քու հղիկիդ չքաւորութիւնը բաւական պաշտպանութիւն մ'է քեզի որ և է գողերու դէմ, թող այս երկու հաւատարիմ շուներու աջակցութիւնն, որ բաւական խոշոր և ուժեղ են, և կարծեմ թէ կրնան այժեամ մը տապալելու, և բնապէս քանի մը մարդու դէմ դնելու:

— Անտառին բարի պահնորդը — վրայ բերաւ ճգնաւորը — թոյլ տուաւ ինձ այս կենդանիները գործածելու, որպէս զի ինքզինքս պաշտպանեմ այս ամայութեան մէջ մինչև որ ժամանակները շտկուին:

Այս ըսելով ճգնաւորն աշտանակի տեղ բռնող ոլորած երկաթի ձողի վրայ մխեց ջահն, և կաղնիէ եռոստանին խարոյկներուն առջև դնելով, զոր չոր փայտով փոքր ինչ արծարծեց, սեղանին մէկ կողմը տեղաւորեց աթոռակ մ'ու ասպետին ըսաւ որ նոյնն ընէ միւս կողմը:

Յետոյ նստան և իրարու երես նայեցան յետին ծանրութեամբ՝ իւրաքանչիւրն ինքնին մտածելով որ հազիւ ուրեմն տեսած է կեանքին մէջ իր առջև գտնուող կերպարանին պէս աւելի կորովի և ըմբշային կերպարան մը:

— Պատուելի ճգնաւոր — ըսաւ ասպետն՝ անոր երեսն ընդ երկար ակնապիշ դիտելէն ետև — եթէ քու բարեպաշտիկ մտմտութիւնդ վրդովելու չվախնայի, երեք բան պիտի խնդրէի իմանալ սրբութենէդ. նախ՝ ո՞ր պիտի դնեմ իմ երիվարս, երկրորդ՝ ի՞նչ ընթրիք պիտի ընեմ, երրորդ՝ այս զիշեր ո՞ր պիտի սպառկիմ:

— Ես մատուց պիտի պատասխանեմ քեզի — ըսաւ ճգնաւորը — քանի որ իմ սովորութիւնս չէ խօսիլ, երբ նշմայրը նախատակիս կ'օգտէ: — Այս ըսելով յաջորդաբար հիւղին երկու անկիւնները ցցուց.

— Ահա ախտն այն տեղէ — ըստ նա — իսկ անկողինդ այս տեղ :
— Եւ ապա մօտակայ դարակէն երկու ափ ոլոս պարունակող սնակ մը
առնլով՝ սեղանին վրայ դրաւ և յարեց . — Եւ այս քու ընթրիքդ է :

Ասպետն իր ուսերը թօթուեց և հիւղէն դուրս ելնելով՝ գնաց երի-
վարը ներս բերաւ , զոր նոյն պահուն ծառի մը կապեր էր , թամբը
հանեց խնամօք և իր յատուկ վերարկուն ուժաթափ նժոյզին կունակը
ծածկեց :

Ճգնաւորն՝ ըստ երևոյթին՝ քիչ մը կարեկից եղաւ՝ տեսնելով թէ օ-
տարականն ինչ հողով և ճարտարութեամբ իր նժոյզը կ'իմնամէր , վասն
զի՛ պահնորդին ձիուն պահեստի ուտելիքին վրայ քանի մը խօսք
քրթմնջելէն ետե՛ պատին մէկ սորէն յարդի խուրձ մը հանեց , աս-
պետին երիվարին առջև նետեց , և անմիջապէս ետքը՝ բաւական չոր
խոտ թափեց այն անկիւնն որ ձիուն խշտին պիտի լինէր : Ասպետն ա-
նոր մարդավարութենէ շնորհակալ եղաւ , և այս դործն աւարտելէն ե-
տե՛ եկան նորէն իրենց յատուկ աթոռները նստան սեղանին մօտ՝ որուն
վրայ ոլոսի սնակը կ'գտնուէր : Ճգնաւորն՝ երկար աղօթքէ մ'ետքն՝
որ երբեմն լատիներէն էր , թէև անոր նախնի հետքն այն ինչ մնացեր
էր , բաց ՚ի քանի մը բառի և խօսքի երկայնաձիգ մասնիկներէ , իր
հիւրին օրինակ տուաւ համեստօրէն՝ իր ահագին բերնին մէջ գնելով ե-
րեք չորս հատ ոլոսն , բերան մ'որուն ակռաները վարաղի մը ճիրան-
ներուն կրնային բաղդատուիլ սրութեան և սպիտակութեան կողմէ , և
հետեւապէս բերանը դրածն իբր սին ցորենի հատիկներ էին այնպիսի
լայն ու զօրաւոր աղօթի մը համար :

Գործը

Ասպետն այս դովելի օրինակին հետեւելու համար , սաղաւարտը ,
զրահն և ղէն ու զարդին մեծ մասը հանեց մէկդի դրաւ , և Ճգնաւո-
րին ցցուց դանդրալի և ոսկեհեր դլուխ մը , վսեմ կերպարան , կապոյտ
աչեր , որ հիանալի փայլ և փայլակ ունէին , վայելուչ բերան մը , որուն
վերին շուրթը մաղերէն աւելի մութ գոյն պիտի ունէր , և բոլորը
մէկէն՝ ժպիւրհ , անվեհեր և դիմադրաւ երես մը կ'ցույնէր , որուն հետ
զուգակշիռ էր իր հուժկու կազմո թիւնը :

Ճգնաւորն՝ որպէս թէ իր հիւրին վստահութեան սրտատխտանել կա-
մենալով՝ իր կնիւղն ետին ձղեց և զնդաձև դլուխ մը ցցուց որ ծա-
ղիկ հասակի տէր մարդու յատուկ էր : Եր լերկ ածիլուած դանկն , որ
գուռ ու հաստ սև մաղերու բոլորակ մ'ունէր՝ գրեթէ ցանկապատ
բլրակի մը կ'նմանէր : Եր գէմքը վանական խստամբերութեան կամ
Ճգնաւորի զրկանաց երևոյթ մը չունէր , ընդ հակառակն՝ վէս և կայ-

տառ կերպարան մէր, սե ու լայն ունքերով, վայելչակազմ ճակատով
և կլոր ու կարմրուն այտերով, փողահարի այտերուն նման, որմէ եր-
կայն, գոռու սե մօրուս մը վար կ'իջնէր: Այսպիսի դէմք մը՝ սրբակրօն
մարդուն մտեղ կազմուածին միանալով՝ կ'վկայէր թէ նա աւելի եղի
զիստ և մասն կ'ուտէր քան թէ ոլոռն և ընդեղէն: Այս հակասու-
թիւնն օտարականին աչքին զարկաւ: Չոր ոլոռը դժուարաւ ծամելէն
ետե՛ անհրաժեշտ համարեց իր բարեպաշտօն տան տէրէն քիչ մ'ըմ-
պելի խնդրել, և ճգնաւորն անոր խնդիրը կատարեց վճիտ ջրով լի
թակոյկ մ'անոր առջև դնելով:

— Այս ջուրը սուրբ Տրնագանի աղբիւրէն կ'բղխի — ըսաւ նա — և
անով՝ երկու երէւու մէջ, հինգ հարիւր Գանեցի և Բրիտոն կռապաշտ-
ներ մկրտեց: Օրհնակ լինի իր անունն: — Եւ իր սե մօրուսը կոյժին
մօտ բերելով՝ շտիէն աւելի ումայ մը կլլեց՝ իր տուած գովեստն ար-
դարայնելու համար:

— Պատուելի հայր, կ'երևի ինձ — ըսաւ ասպետն — որ այդ կե-
րած հատիկներդ, նոյնպէս այն ինչ ըմպած նուիրական այլ սին ըմպե-
լիդ հիանալի կերպով կ'օղտեն քեզ: Գու ինձ աւելի յարմար մարդ մը
կ'երևիս ճակատ առ ճակատ խոյ մը, կամ լախտամարտի մէջ՝ մատանին,
և կամ սրամարտութեան մէջ՝ վահան շահիլ՝ քան թէ այս անապատին
մէջ՝ պատարագ ըսելով և ոլոռն ու սլաղ ջուր ճաշակելով ժամանակ
սպառել:

— Ազնիւ ասպետ — պատասխանեց ճգնաւորը — քու մտածմունքդ՝
ամէն տղէտ աշխարհականի խորհրդին պէս՝ լոկ մարմնոյ կ'վերաբերին:
Տիրամայրն ու իմ սուրբ պաշտպանս շնորհ ըրաւ այս իմ յանձն առած
ապաշխարութիւնս օրհնել, ինչպէս որ բանջարեղէնն ու ջուրն օրհ-
նուեցան երբեմն Սէդրաք, Միսաք և Արէզնադով որդւոց համար, որ
նոյն ջուրը խմել լաւաղոյն համարեցին քան թէ Սարակինացւոց թա-
ղաւորին մեծարած դինին և կերակուրները վայելել:

— Սուրբ հայր — ըսաւ ասպետը — դու, որուն կերպարանին վը-
րայ Երկին այդ հրաշքը գործեր է, ներէ ինձի պէս հէք մեղաւորի մը
հարցնել թէ ի՞նչ է անունդ:

— Գու կրնաս կոչել զիս Գօբմէնհրրատի կրօնաւորը — պատասխա-
նեց մե՛նաւորը — վասն զի այս կողմերն այնպէս կ'անուանեն զիս: Ի-
րաւ է որ սուրբի մակղիւր ալ կ'յարեն անունիս, բայց ասոր կարեորու-
թիւն չեմ տար, քանի որ անարժան մէկն եմ: Արդ, քաջդ ասպետ,
կրնամ արդեօք հարցնել քեզ իմ պատուաւոր հիւրիս անունը:

— Իրաւի — ըսաւ ասպետը — Գօրմէնհըրատի կրօնաւոր , այս կողմերը մարդիկ զիս Սե Ասպետ կ'անուանեն : Շատեր այս անուան Գանդաղկոտ ածականն ալ կ'աւելցնեն , ածական մ'որով նշանաւոր հանդիսանալու փառասիրութիւնը բնաւ չունիմ :

Ճգնաւորը հազիւ կրցաւ իր ժպիտը բռնել իր հիւրին տուած պատասխանին վրայ :

— Ա'նայիմ — ըսաւ նա — պարոն Գանդաղկոտ ասպետ , որ դու զոն և բարեխորհուրդ մարդ մ'ես , ասիէ զատ՝ կ'ըխտեմ որ իմ վանական անշուք խնջոյքս քեզի ախորժելի չեն , թերևս սա պատճառաւ որ արքունեաց և բանակի շուայլութեան և քաղաքներու ճոխութեան սովորած ես : Սակայն հիմակ միտքս կ'զայ , պարոն Գանդաղկոտ , որ երբ այո անտառին ողորմասէր պահնորդն այս շուներն իմ պաշտպանութեան համար , նոյնպէս սա յարդի խուրձերն այս տեղ ձղեց , ձղեց նաև քիչ մ'ուտեստ , որ իմ վիճակիս անյարմար լինելուն , անոր յիշատակն անդամ իմ ծանրադոյն խորհրդածութեանցս մէջ , մտքէս ելեր էր :

— Ա'համարձակիմ երդնուլ որ այդպէս է — ըսաւ ասպետը — վտտահ էի որ հղիկիդ մէջ լաւադոյն ուտելիք պիտի դտնուի , սրբակրօն հայր , երբ առաջին անդամ կ'նդուղդ զլիսէդ վար առիր : Այն պահնորդդ կայտառ պատանի մ'է , և իմ որ այդ ծամելիքդ տեսնէր որ սա ոչուններուն հետ կ'մաքառէին , և քու կոկորդդ սա անարժան ջրով ողողեալ , չպիտի կարենար հաւտալ որ այս պարէնին և ըմպելիին դատապարտուած ես , որոնք մի միայն ձիերու յարմար են , (և նոյն պահուն յիշած պարէնը սեղանին վրայ յոյց տուաւ) և զթասիրութեամբ պիտի ջանար այդ անունդ փոխելու : Աւրեմն խկոյն նայինք թէ բարեւսէր պահնորդին ձգած ուտեստն ի՞նչ է :

Ճգնաւորն ասպետին վրայ հետազնին ակնարկ մը նետեց , այս ակնարկը ծիծաղաշարժ երևոյթ մ'ունէր , որպէս թէ կ'վարանէր թէ իր աստիճան խոհեմութիւն էր իր հիւրին վտտահելու : Սակայն կարելի եղածին չափ ասպետին կերպարանին վրայ անսուտ անկեղծութիւն կ'երևէր : Իր ժպիտն ևս անդիմադրելի ծաղու նշան մ'ունէր և հաւատարմութեան ու անկեղծութեան կողմէ այնպիսի ասպահովութիւն մը լայանէր , որուն առ հարկի Ճգնաւորը կարեկիր կ'դտնուէր :

